

դրամատուրգիա

գրական - գեղարվեստական հանդես

56²⁰¹⁹57

ՊԻԵՄՆԵՐ

Արտաշես ՇԱՀԲԱԶՅԱՆ	2	ՄԵՂԱԴԻՅԱԼՆԵՐԸ
Կարինե ԽՈԴԻԿՅԱՆ	14	ԵՍ ԵՄ ՔՈ ՇԱՀԱՆԵՆ
Գագիկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	35	ՎԵՐ ԿԱՑ ՈՒ ԳՆԱ
Լևոն ԽԵՉՈՅԱՆ	96	ՍՊԱՍՈՒՄ
Յարոսլավ ՍՏԵԼՄԱԽ	122	ԿԱՊՈՒՅՏ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ
Անի ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ	162	ԽԱՂԱՂ ԵՎ ԱՌԱՆՑ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Արտաշես ՇԱՀԲԱԶՅԱՆ

Ներկայացվող պիեսի հերոսն ասում է. «Կարծես դրսի կյանքը, երկրաշարժի պես, մեր տունն էլ էր տակնուվրա արել: Հայրս, մայրս, եղբայրս, քույրս, փոքր երեխաներս, կինս... Բոլորը փոխվել էին, երևի ես էլ էի փոխվել»:

Այսօրվա իսկ օրով կարող ենք փաստել, որ ժամանակն ու մթնոլորտը ունակ են տակնուվրա անել հասարակությունը, վերափոխել մարդուն՝ արթնացնելով ներսում, իր իսկ համար, անճանաչելի կրքեր: Այնուամենայնիվ, կան մեծ, հավերժական և անմեռ արժեքներ, որոնք զսպում են մարդու գազանացումն ու կանխում են դրանով աշխարհի դուրս շարտվելն իր շավիղից: Կարծում եմ, մշակութային յուրաքանչյուր դրսևորման գերիմդիրը աշխարհի առանցքը կազմող մարդուն ինչ-որ չափով փրկելն է, այլապես ամեն ինչ ինքնանպատակ է և անիրևատ:

ՄԵՂԱԴԻՅԱԼՆԵՐԸ

Գրամա մեկ գործողությանը

Գործող անձինք

ԱՐՄԵՆ - մեղադրյալ, 36 տարեկան

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - դատապաշտպան, 55 տարեկան

**Քեմը քննչական մեկուսարանի կալանասենյակ է: Խորքում՝ վանդա-
կապատ պատուհան: Կենտրոնում՝ հին սեղան, երկու կողմերում՝
երկու աթոռ: Չախ աթոռին նստած է Արմենը, նայում է վեր՝ անորոշ
կետի, երբեմն գլուխն առնում է ավերի մեջ: Ծանր կողպեքի մեջ
պտտվում է բանալին՝ երկաթե դռան ճռնչոց, ներս է մտնում Լալա-
զարյանը: Արմենը տեղից բարձրանում, ապա նստում է, դարձյալ
բարձրանում է, ձեռքով բարևում են, նստում են իրար դիմաց:
Խոսակցության ընթացքում նրանք ելնում են տեղից, քայլում են
սենյակում, կրկին նստում են:**

ԴԱՏԱՊԱՇՏՊԱՆ - *(սեղանին դնելով
թևատակի թղթապանակը):* Ծա-
նոթանանք:

ՄԵՂԱԴԻՅԱԼ - Անունս Արմեն է:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ես Լալազարյանն
եմ:

ԱՐՄԵՆ - Ծատ ուրախ եմ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ուրախանալու բան
չկա, սպանության փորձի վերա-
բերյալ մեղադրանքն ապացուց-
ված է փաստական ու իրեղեն
ապացույցներով և մանավանդ են-
թակայիդ խոստովանական ցուց-
մունքի հիման վրա: Ինչևէ... Քանի
որ այստեղ անելիք չունենք՝ անց-

նենք առաջ, հիմա մանրամասնո-
րեն պատմիր տեղի ունեցածը:

ԱՐՄԵՆ - Հարցաքննության ժամա-
նակ ամեն ինչ գրի են առել...

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Այդ գրի առածը
ցույց կտաս... դատարանին, իսկ
ինձ անհրաժեշտ է իմանալ ողջ
ժշմարտությունը. ինչո՞ւ, ի՞նչ
հանգամանքներում, ի՞նչ նպատա-
կով և այլն:

ԱՐՄԵՆ - Իսկ ինչո՞ւ է այդ ամենը ձեզ
հետաքրքրում:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Հետաքրքրում...
(Բարձր ծիծաղում է:) Գիտե՞ս,
հարգելի՛ս, ես այնքան քստմնելի
ու սահմոկեցուցիչ պատմություն-

ների եմ առնչվել, որ միջին քաղաքացու ուղեղը ճաք կտար: Մարդ արարածի հետ կապված պատրանքներս վաղուց հոդս են ցնդել, և չկա մի բան, որը դեռ կարող է զարմացնել, բայց ես փաստաբան եմ ու պետք է տեղյակ լինեմ ամբողջական գործին՝ պաշտպանական մարտավարությունը կառուցելու համար: Որևէ մոռացված մանրամասն, թաքցված հանգամանք եթե հանկարծ բացահայտվի դատարանում՝ մշակածս մարտավարությունը կարող է փլուզվել: Պարզ է:

ԱՐՄԵՆ - Պարզ է:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Այսինքն՝ պատկերացրու, թե միասին ենք հանցագործությունը կատարել ու ինձանից գաղտնիք չունես. հասկացմանք իրար:

ԱՐՄԵՆ - Ոնց որ թե հասկացանք:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ի դեպ, թեև համապատասխան գումարի դիմաց հարազատների վարձել են իմ ծառայությունը, բայց, ի վերջո, իրար հետ ենք աշխատելու. համաձայն օրենքի՝ ցանկացած պահի կարող ես ինձանից հրաժարվել և ուրիշ դատապաշտպան ընտրել:

ԱՐՄԵՆ - Ինչի համար, միևնույն է:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Դե, քանի որ մեր

վերաբերմունքը փոխադարձ է, կարելի է սկսել: Բնականաբար, մինչ այստեղ գալս, ուշադիր կարդացել եմ քննիչին տված ցուցմունքը: *(Խոսելուն հրնթացս բացում է սեղանին դրված թղթապանակը, նայում է դուրս բերված թղթերին:)* Ափսոս, որ «երգելուց» առաջ դատապաշտպան չես պահանջել, բայց եղածը եղած է: Ավելորդ մանրամասների վրա, իհարկե, կարելի է կանգ չառնել, ծնվել ես Երևանում, հայ ես, 36 տարեկան, փայտագործ ես, կահույքի մասնավոր պատվերներ ես կատարում, երկու երեխաների հայր ես՝ ներկայումս՝ ամուրի, ամուսնալուծվել ես չորս տարի առաջ... ահա՛ տեղ հասանք, ինչո՞ւ ես ամուսնալուծվել...

ԱՐՄԵՆ - Իսկ կինս... նախկին կինս դեռ ո՞ղջ է, երեխաներիցս ինչ նորություն կա...

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Դեռ ողջ է, այո՛, բայց, գիտես, էլի... Ինչևէ, նախ ասա, թե ինչու ես կնոջիցդ բաժանվել, հետո էլ կանդրադառնանք նրան, թե ինչու ես որոշել զրկել կյանքից...

ԱՐՄԵՆ - Որովհետև անհասկացող էր, եսասեր, հաստակող, լաչառ...

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Անբարոյական:

ԱՐՄԵՆ - Ինչ... Չէ, անբարոյական
չէր:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Գիտէն ինչ, բարե-
կամ, բարո-անբարոյի առեղծվա-
ծը փիլիսոփայոյթան ոլորտից է
և, մանավանդ, ցեխի պես կաշում
է ցանկացածին: Իսկ մեզ տվյալ
հանգամանքը շատ պետք կգա:
Իրավագիտոյթան տեսանկյու-
նից խանդը ծանրակշիռ հիմք է
սպանոյթան հիմնավորման հա-
մար, այնպես որ, մենք կասենք՝
անբարոյական է եղել, ցանկացո-
ղը թող փորձի հակառակն ապա-
ցուցել:

ԱՐՄԵՆ - Չէ, պետք չէ այդպիսի բան
ասել:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Եղբայր, բա ինչ-
պէս հիմնավորենք սպանոյթան
փորձը, նրանով, որ նախկին
կինդ հաստակող ու լաչա՞ն է եղել:
Է, բոլորիս կանայք էլ այդպիսին
են, բայց ոչ միայն չենք սպանում,
այլև վիզներս ծռած, կյանքներս
քարշ ենք տալիս կողքներից:

ԱՐՄԵՆ - Այնուամենայնիվ, կինս
անբարոյական չէր: Մի բան կա-
րող եմ խնդրել ձեզ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Խնդրեք:

ԱՐՄԵՆ - Այնպես արեք, որ ինձ ա-
զատ արձակեն, գնամ երեխանե-
րիս տիրոյթուն անեմ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Վատ ցանկոյթուն

չէ... Լավ, ուրիշ հարց տամ, ա-
մուսնալուծված ժամանակ տեղե-
կոյթուններ ունեցնլ ես կնոջդ
մասին:

ԱՐՄԵՆ - Հանդիպում էի հետը:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Հաճախակի էիր
հանդիպում:

ԱՐՄԵՆ - Ծաբաթը մեկ անգամ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Նախկին կինդ դեմ
չէր:

ԱՐՄԵՆ - Որ դեմ լիներ, հո զոռով
չէի հանդիպելու:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Տրամաբանական
է: Ինչպէս էին անցնում հանդի-
պումները, ինչի մասին էիք խո-
սում:

ԱՐՄԵՆ - Ծաբաթ օրերին էի այցե-
լում: Այդ օրերին տոնավաճառը
շուտ էր փակվում, օգնում էի, հա-
վաքում էինք ապրանքը, կողպում
էինք խանութը, հաց էինք ուտում,
երեխաների ապագայի մասին
էինք խոսում...

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Այս գիշեր լավ չեմ
քնել, հետն էլ խումհարն է տան-
ջում... Լսիր, որ պիտի հանդի-
պեիք, ինչո՞ւ էիք բաժանվում:

ԱՐՄԵՆ - Ինձ չէր հասկանում, կար-
ծես պատրվակ էր ման գալիս, որ
վիճեր, համատեղ կյանքը դարձել
էր անտանելի:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ի սկզբանե՞ այդ-
պես էր:

ԱՐՄԵՆ - Չէ, ամենասկզբում վիճելու պատճառ չունեիք: Ծանոթացանք իրենց տանը, երբ եղբոր պատվերով, ընկերոջս հետ, ննջարանի պատի մեջ պահարան էինք հավաքում: Ամեն ինչ շատ արագ կատարվեց, չէի ասի, թե սիրահարվեցիք, բայց... Բայց հո բոլորը սիրահարվելով չեն ամուսնանում: Ամուսնանում են, որովհետև վաղ թե ուշ ամուսնանալու են... *(Լռում է:)*

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Անցիր առաջ, հասիր ամուսնական կյանքին:

ԱՐՄԵՆ - Սկզբում ամեն ինչ այնպես էր, ինչպես պիտի լիներ, ընտանեկան առօրյա, երեխաներ... Կինս սովորական մարդ էր թվում՝ ուրիշների նման: Ես հետո միայն պիտի հասկանայի, որ սխալվել եմ: Դուք ինչ կարծիքի եք, կարելի է մարդու հետ ապրել ու չճանաչել նրան:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - *(հոգոց հանելով):* Դժբախտաբար, կարելի է:

ԱՐՄԵՆ - Հետո մութ ու ցուրտ տարիները հաջորդեցին, հատուկենտ պատվերներ էի ունենում, մարդիկ հազիվ հացի խնդիր էին լուծում, կնոջս կարի ֆաբրիկան փակվեց, ինքն սկսեց տոնավաճառում առևտուր անել: Դարձել էր հոգնած ու նյարդային, հաճախ

հիվանդանում էր: Մի թալանվող հիմնարկում գիշերային պահակ էի ձևակերպվել, անգամ շաբաթ, կիրակին չէինք կարող իրար հետ անցկացնել, միասին եղած ժամանակ էլ հաճախ վիճում էինք:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Վիճելու լուրջ պատճառներ կային:

ԱՐՄԵՆ - Չգիտեմ... Կարծես դրսի կյանքը, երկրաշարժի պես, մեր տունն էլ էր տակնուվրա արել: Հայրս, մայրս, եղբայրս, քույրս, փոքր երեխաներս, կինս... Բոլորը փոխվել էին, երևի ես էլ էի փոխվել:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Հետո բաժանվեցիք:

ԱՐՄԵՆ - Հեշտ բաժանվեցիք, այն ժամանակ ամեն ինչ հեշտ էր քանդվում, բոլորի պես մտածում էինք՝ ինչ լինելու է, թող լինի, միայն թե փոխվի եղած վիճակը:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Բաժանվեցիք, բայց շարունակեցիք հանդիպել...

ԱՐՄԵՆ - Մոտ երկու տարի կնոջս տեսել եմ միայն երեխաներիս այցելելու օրերին: Առանց երեխաների չեմ դիմանում:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Հետո սկսեցիք հանդիպել...

ԱՐՄԵՆ - Ծաբաթ օրերին՝ շուկայում: Զրուցում էինք երկար, պարզվեց, մինչ այդ չէինք ճանաչել իրար:

Չգիտեմ, ժամանակը չէր հերիքել, հոգսերը թույլ չէին տվել, թե՛ մարդիկ սովորություն չունեն լսելու միմյանց, մարդիկ սիրում են լսել միայն սեփական ձայնը: Սկսեցինք հանդիպել, երեխաների ապագայի ծրագրեր էինք կազմում՝ ընդհանուր երազանքները մերձեցնում էին մեզ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Նաև վիճում էիք:

ԱՐՄԵՆ - Հազվադեպ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Իսկ ինչ պատահեց դեպքի օրը:

ԱՐՄԵՆ - Խոսեցինք երեխաներից, ասաց՝ ցանկանում է կյանքը նորից սկսել. լեզվի տակ ուրիշ բան կար:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Հետո՞:

ԱՐՄԵՆ - Հետո վիճեցինք, կարծես ցանկանում էր հունից հանել ինձ...

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Դանակը որտեղից ծարեցիր:

ԱՐՄԵՆ - Ձեռքիս էր, երջիկ էի կտրում, պատրաստվում էինք հաց ուտել:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ծանո բարկացրեց:

ԱՐՄԵՆ - Ծանո, ոտքերս ծալվեցին, հազիվ էի շնչում:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ուզեցիր վերջ տալ այդ վիճակին:

ԱՐՄԵՆ - Ուզեցի ձերբազատվել, չգիտեի, թե այլևս ինչպես եմ ապ-

րելու, ինձ էլ պետք է սպանեի, բայց... Երեխաներիս հիշեցի... Չէ, վախեցա, ստոր մարդ եմ ես...

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Հասկանալի է, իսկ հիմա ճիշտն ասա, թե ինչու ես դանակահարել նախկին կնոջդ, ինչ արեց կամ ասաց այդ պահին, որ այլևս չէիր կարող հանդուրժել:

ԱՐՄԵՆ - *(գլուխն առնում է ավերի մեջ, երկար լռում է):* Ասաց՝ շուկայից ինչ-որ տղամարդ ամուսնության առաջարկ է արել, և ինքը մտորում է:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Վիճեցի՞ք:

ԱՐՄԵՆ - Չէ, չենք վիճել, երբ մտածեցի, թե վերջնականապես կկորցնեմ նրան, հասկացա, որ դիմանալու ուժ չունեմ, երբեք այդպես անզոր չէի զգացել ինձ, ուզեցի փախչել իրականությունից... Եթե վիճակված չէր ապրել իր հետ, գերադասելի էր միասին մեռնելը... Ինքս էլ չհասկացա, թե ինչ եմ անում, ախր, ես նույնիսկ հավ մորթած չկամ...

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Լավ է, շատ լավ է...

ԱՐՄԵՆ - *(զարմացած):* Ի՞նչն է լավ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ճիշտ ես կառուցում պաշտպանությունը՝ հանցանքը, ըստ ամենայնի, գործել ես աֆեկտի վիճակում, խանդի զգացումն է բորբոքվել, երեխաներիդ ապագայի հարցը մթազանել է ուղեղդ, չես հասկացել՝ ինչ ես անում:

ԱՐՄԵՆ - Չէ, հասկացել եմ, ուրիշ ելք չունեի:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Դու ինձ լսիր, եթե կարողանանք դատարանին համոզել... Հոգեկան անհավասարակշռության վիճակ, խանդ, մղձավանջային ցնորքներ երեխաների ապագայի վերաբերյալ՝ օտար տղամարդու իշխանության ներքո...

ԱՐՄԵՆ - Ճիշտ եք, շատ եմ խնդրում, համոզեք դատարանին, ախր, խոստացել եմ, որ երեխաներիս համար ամեն ինչ անելու եմ, Ռուզանին խաբել չեմ կարող:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ռուզանն ո՞վ է:

ԱՐՄԵՆ - Դե, կինս, այսինքն՝ նախկին կինս:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Լսիր... Դու ինչո՞ւ ես ցանկացել սպանել կնոջդ:

ԱՐՄԵՆ - Որովհետև շատ էի սիրում: Մենք նույնիսկ սկսել էինք միասին փող հավաքել, որ բնակարան գնեինք:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ինչի՞ համար:

ԱՐՄԵՆ - Որպեսզի մեր սեփական տունն ունենայինք, ծնողներիս, եղբորս, քրոջս կողքին նեղվածք էր: Որոշել էինք, որ երեխաներն իրենց առանձին սենյակները պետք է ունենան: Աղջկասս համար պետք է դաշնամուր գնեինք:

Ռուզանն ասում էր, որ կարող է ասեղնագործությամբ զբաղվել, իսկ ես խոստացա կիսատ թողած ուսումը շարունակել: Փող էինք հավաքում, Ռուզանն ուզեց, որ հավաքվող գումարն ինձ մոտ պահվի: Ցանկանում էինք հաջորդ ամառ երեխաներին Հունաստան տանել, թանգարաններ այցելել: Ռուզանն ասում էր՝ լավ մարդ դառնալու համար գեղեցիկի հետ պիտի շփվես, մեր երեխաները շատ խելացի են... Ինչ որ բան եք ուզում հարցնել:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ուզում եմ հարցնել, բայց վախենում եմ՝ այդպես էլ ոչինչ չհասկանամ: *(Հեռախոսազանգ, գրպանից հանում է հեռախոսը):* Բարև ձեզ, այո, իր մոտ եմ: Հետո կասեք կարևոր բանը, չե՞ք հասկանում, որ զբաղված եմ... Ինչ, ինչպես, ինչպես, ինչպես թե... Ինչպես թե, ինչպես թե... Ինչպես թե՝ հասկացա... Ոչինչ չհասկացա, այո, ո՛չ, ամեն ինչ հասկացա, ամեն ինչ հրաշալի հասկացա... *(Այս ընթացքում քայլում է սենյակում՝ կրքոտ շարժումներ անելով, հետո հեռախոսը դանդաղ դնում է գրպանը):* Ոչինչ չհասկացա... Քույրդ էր զանգում:

ԱՐՄԵՆ - Երեխաներս ինչպե՞ս են:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Կինդ դուրս է եկել մահաքնի վիճակից, նույնիսկ գիտակցությունն է վերականգնվել, սարսափելի է...

ԱՐՄԵՆ - Ինչպե՞ս թե... չի՞ կարող պատահել, ուրեմն չի՞ մահանա... իսկ ի՞նչն է սարսափելի...

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Բրոզդ պատմել է այդ օրվա ձեր խոսակցությունը, ասել է, որ ամուսնության առաջարկ արած տղամարդու պատմությունը հորինել է. քանի որ ձգձգել ես վերամիանալու պահը, ուզել է ստուգել՝ չե՞ս փոշմանել արդյոք...

ԱՐՄԵՆ - Ինչպե՞ս թե՛ փոշմանել, հազիվ էի գտել երջանկությունս, ախր, այդ ընթացքում վարձու բնակարան էի ման գալիս, նեղ պայմանները մեկ անգամ արդեն խաթարել էին համատեղ կյանքը: Ուզում էի անակնկալ մատուցել, այ, միշտ այսպես անհամբեր է եղել, միշտ վատ է մտածել իմ մասին, բայց... Ինչ հիմարություններ եմ դուրս տալիս, ուրեմն Ռուզանը անհանգստացել է, թե գուցե անկեղծ չեմ, խաբում եմ իրեն... Տեր Աստված, սարսափելի է:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Դրանից սարսափելի բան էլ կա...

ԱՐՄԵՆ - Է՛լ ինչ... *(Տեղից վեր է*

թռչում:) Ի՞նչ կա, որի մասին դեռ տեղյակ չեմ, ասեք շուտ, մի տանջեք:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Սարսափելին այն է, որ կինդ՝ նախկին կինդ, ում սպանելու դիտավորությամբ դանակահարել ես, ներողություն է խնդրում քեզանից, որ չի հավատացել, անտեղի հունից հանել է:

ԱՐՄԵՆ - Ռուզանը... ինքն է ներողություն խնդրում ինձանից: Ուժերիցս վեր է այս ամենին դիմանալը, այս ինչ դաժան փորձություն է բաժին ընկել... Ներողություն, կարո՞ղ եք ինձ օգնել:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Կարծես թե դրա համար էլ այստեղ եմ:

ԱՐՄԵՆ - Խնդրում եմ, այնպես կառուցեք պաշտպանական մարտավարությունը, որ ինձ դատապարտեն մահապատժի:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Չեմ կարող:

ԱՐՄԵՆ - Ինչո՞ւ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Որովհետև Հայաստանի Հանրապետությունում առավելագույն պատժաչափը ցմահ բանտարկությունն է:

ԱՐՄԵՆ - Ափսոս, ես ավելիին եմ արժանի: Լավ, ինչ արած, այնպես արեք, որ գոնե ցմահ բանտարկեն:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Չեմ կարող:

ԱՐՄԵՆ - Է՛լի ինչն է խանգարում:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Մասնագիտական առաքելությունս: Դատապաշտպանը կոչված է առավելագույն նվազեցնելու մեղադրանքի ծավալը և նվազագույնի հասցնելու պատժաչափը, և ոչ հակառակը: Վերջապես մի մոռացիր, որ ես քո պաշտպանն եմ, ոչ թե մեղադրողը...

ԱՐՄԵՆ - Դատապաշտպանը կոչված է առավելագույն չափով բավարարելու մեղադրյալի ակնկալիքը. ես ձեզանից պահանջում եմ ապահովել իմ ցմահ բանտարկության իրավունքը:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Դարձյալ չեմ կարող: Հեղինակություն ունեցող դատապաշտպանի համար դա կլինի կատարյալ ձախողում, այլևս ո՞վ կցանկանա նման մարդուն գործ վստահել, հո քար չեմ գցելու կարիերայիս վրա:

ԱՐՄԵՆ - Ուրեմն, հանուն ձեր կարիերայի պատրաստ եք դժբախտացնել մարդուն: Մի՞թե դուք սիրտ չունեք, այն ամենից հետո, ինչ իմացաք, մի՞թե ձեր խիղճը չի թելադրում, որ ես պետք է ամբողջ կյանքում պատասխան տամ արածիս համար: Նույնիսկ ողջ կյանքը բավարար չէ, որպեսզի տանջվեմ ու գործածս մեղքի համար ապաշխարեմ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ախր, դու ի՞նչ մեղադրյալ, գոնե ինձ մոտ քեզ մի դիր մեծ ոճրագործի տեղ: Հազար ու մի մեղմացուցիչ հանգամանքներ գոյություն ունեն՝ օրինակելի կենսագրություն, հանցագործությունը կատարել ես առաջին անգամ, տուժածին հասցրել ես հիվանդանոց ու ինքդ էլ հանձնվել ես ոստիկանությանը... Ախր, նույնիսկ քրեական հողվածը թույլ չի տալիս ցմահ պարտակել քեզ ճաղերի ետևում: Եթե կուզես իմանալ, այստեղ նույնիսկ կաշառքը չի օգնի: Իսկ ամենակարևորն այն է, որ կինդ ոչ միայն ողջ է մնացել, այլև իրեն համարում է հանցանքը սադրող, հետևաբար չի բողոքի: Որքան էլ ցանկանամ լավություն անել քեզ, հո չեմ կարող անհնարինը հնարավոր դարձնել:

ԱՐՄԵՆ - Ինչպե՞ս եմ ապրելու սրանից հետո:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Հանգիստ կապրես, պարտք ունես երեխաներիդ նկատմամբ: Այս ամենից հետո պարտավոր ես կնոջդ երջանկացնել: Ես մի բան եմ մտածել, լսիր, ինչ եմ ասում, միայն ուշադիր լսիր և միանգամից չարձագանքես: Ես կնստեմ քո փոխարեն:

ԱՐՄԵՆ - Ի՞նչ: Կատակո՞ւմ եք:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ուշադիր լսիր ինձ, այս ընթացքում շատ լրջորեն կշռադատել եմ որոշումս...

ԱՐՄԵՆ - Բայց ինչպե՞ս կարող է նման բան լինել:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Եթե քննիչի պես հարցախեղդ չանես՝ ամեն ինչ կբացատրեմ: Ասացի, որ տարիների փորձառության տեր փաստաբան եմ, բազմաթիվ քրեական գործերի եմ առնչվել: Ինձ հանդիպած ցանկացած ոճրագործի, համապատասխան իրավիճակներում, կգերազանցեի խելքով ու խորամանկությամբ, երբեմն նույնիսկ ափսոսացել եմ, որ նրանց փոխարեն ես չեմ մեղադրյալի աթոռին: Ես ամեն ինչ կսարքեմ այնպես, որ բոլորը կհավատան...

ԱՐՄԵՆ - Դուք իսկապե՞ս ծաղրում եք ինձ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Լսիր, ինչ եմ ասում, հանկարծ բացահայտվելու է, որ կնոջդ հետ ֆինանսական կամ այլ բնույթի հարցեր եմ ունեցել: Օգտվել եմ հանգամանքից, որ կասկածը քեզ վրա է ընկնելու, իմ նախաձեռնությամբ էլ ստանձնել եմ դատապաշտպանի գործը, որպեսզի կարողանամ ամրապնդել մեղավորությանդ վարկածը: Իսկ ինքդ քո դեմ ցուցմունք ես տվել քննիչների ճնշմամբ: Դատարանում բոլորն այդպես են ասում:

ԱՐՄԵՆ - Ես ոչինչ չեմ հասկանում... Իսկ ձեր ինչի՞ն է պետք այդ ամենը:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Եթե կուզես իմանալ, բանտը հենց իմ տեղն է: Ի դեպ, ոչ միայն իմ: Բայց չկարծես, թե արթնացած խիղճն է մղում ապաշխարանքի, այդպիսի բան կարծեմ ինձ չի սպառնում: Ճշմարտությունն այն է, որ ապրում եմ ապրելու համար, առանց նպատակի ու երազանքի: Դու ամուսնացել ես առանց զգացմունքի, բայց հետո նույն կնոջ հետ գտել եք ձեր սերը, իսկ ինձ կնոջս հետ միացրեց սերը, բայց հետո հոգեկան կապը վերածվեց ծանր պարտականության: Կինս ասում է՝ պատճառը եղավ իմ հարբեցողությունը, իսկ ես համոզված եմ, որ դարդից սկսեցի խմել: Քանի սկսել եմ, խոստովանեմ, որ ինձ նույնիսկ երեխաներս չեն սիրում: Դու դժբախտ ես եղել կյանքի նեղ պայմաններից, իսկ իմ խնդիրների պատճառը եղել են լայն պայմանները: Մեր մեծ տան մեջ կինս ու ես այսօր ապրում ենք հանրակացարանի հարևանների պես, տղաներիցս մեկը Մեղրիում է, մյուսը՝ հեռացավ Ռուսաստան, իսկ դուստրս այցելում է մորը, երբ ես տանը չեմ: Սրանով հանդերձ,

նրանց միավորում է մեկ ընդհանուր բան՝ ինձանից ակնկալվող փողը: Գոյությունս այդքանով է արժևորված հարազատներիս համար: Եվ այդ ամենի դեմ ըմբոստությունս արտահայտվում է բացարձակ անտարբերությամբ ամեն ինչի նկատմամբ, բացի, իհարկե, նույն զագրելի փողից ու նրա ընձեռած հնարավորություններից: Հասկանում ես, ինձ մտածելու ժամանակ է պետք՝ շատ ժամանակ, որ պարզեմ, թե որ պահին է սխալը տեղի ունեցել, այդ դժբախտ էր, որ առաջինը ծուռ դրվեց պատի վրա: Հոգնել եմ կյանքից: Հարազատ-մտերիմներից առանձնանալ՝ հանգստանալ եմ ուզում:

ԱՐՄԵՆ - Մտնում եմ ձեր դրության մեջ, բայց ոչնչով չեմ կարող օգնել՝ այդ ամենը ինձ հետ կապ չունի:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ես դեռ ամենակարևորը չեմ ասել: Կյանքն ինձ համոզել էր, թե մեծ զգացումները թատրոնի համար են, իսկ մարդկանց միավորում են կենդանական բնագոյները: Մարդկային վարքը ուղղորդվում է քրեական օրենսգրքի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Հավատացած էի, որ երազանք ասվածը խա-

բերություն ու մանավանդ ինքնախաբերություն է, իսկ մարդկային հասարակության հավերժական շարժիչը եսասիրությունն է, ուրիշների հաշվին սեփական հավակնությունները բավարարելու տենչը: Դու և կինդ այսօր ինձ ուրիշ դաս տվեցիք: Սերը, նվիրվածությունը, զոհաբերվելու պատրաստակամությունը, երազանքը այսչափ կեղծվելուց, արժեզրկվելուց, չարչրկվելուց հետո, պարզվում է՝ դեռ կարող են ծիլ տալ անարատ ու մաքուր ճնծադիկի պես՝ ստվերոտ ու պաղ միջավայրում: Պարզվում է՝ այն մեծ բաները, որ մերան են դարձել աշխարհի գոյության համար, դեռ ունեն իրենց հավատացյալները: Դու այդ հետևողներից ես, գնա ու քեզ պես հավատացյալի հետ բորբոքիր այդ կրակը, ջերմությունը փոխանցիր քո զավակներին, քո շրջապատին: Քարոզիր բոլորին, որ աշխարհում սիրուց հզոր ու վեհ բան չկա, որ հանուն սիրո ոչ միայն ապրել արժե, այլև կարելի է մեռնել: Իսկ ինձ համար անհոգ եղիր: Երեսուն տարուց ավելի իմ օրերի մեծ մասն անցել են այս պատերի մեջ: Պատկերացրու, այստեղ ինձ ավելի լավ եմ զգում, քան դրսում: Գուցե անհավատալի թվա, բայց հաճախ

եմ նախանձել իմ պաշտպանյալներին՝ իրենց խոհերի, կրթերի, կարոտների, ըմբոստացումների ու տագնապների համար: Ցանկացել եմ իմ ներսի անհույզ դատարկությունը փոխել նրանց հոգեկան ալեկոծումների հետ...

ԱՐՄԵՆ - Ո՛չ, իմ տեղը չեմ զիջի ձեզ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ախր, ի՞նչ կտա դա քեզ, ի՞նչ ես ցանկանում ապացուցել դրանով: Փոխարենը քո դեպքը կլինի իմ շահած ամենափայլուն գործը: Մինչ այսօր, ստանձնած բոլոր գործերի պարագայում, ինձ հուզել է միայն մասնագիտական նախանձախնդրությունը, արհեստավարժի կիրքը, էլ չասեմ՝ ակնկալվող հոնորարը: Մարդկային ճակատագրերը ոչինչ չեն արժեցել, ես տեսել եմ ոչ թե մարդուն, այլ մեղադրյալին, հաճախորդին: Սա կլինի այն դեպքը, երբ ուրիշի դրաման կվերապրեմ ինչպես սեփականը, հանուն այլոց երջանկության կգնամ ինքնագոհողության: Տո՛ւր ինձ այդ հնարավորությունը...

ԱՐՄԵՆ - Հնարավոր չէ: Անհնար է սեփականել ուրիշի ճակատագիրը. ես՝ ձեր ազատությունը, իսկ դուք՝ իմ մեղքը: Ամեն մարդ իր խաչը պետք է կրի:

Պատապաշտպանը հեռանում է, լսվում է ծանր բանալիներով բացվող ու փակվող դռան ճնշոցը, Արմենը անշարժ գամված է տեղում:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ամեն մարդ պետք է կրի իր խաչը...

Մեղադրյալն ու դատապաշտպանը լուռ նստած են դեմ դիմաց:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Մեղադրյալ, դատապաշտպան, դատավոր, դատարան: Պայմանականություն է այս ամենը, լավ բեմականացված ներկայացում, որի դերակատարներն ենք, բայց բացասական հերոսի ճակատագրից փորձում ենք խուսափել: Խուսափում ենք ոչ թե մեղքից, այլ հատուցումից: Այնինչ, իրական հավատաքննությունն ու դատարանը պատերից դուրս են՝ այնտեղ են, ուր անտեսանելի իրավարարը, վաղ թե ուշ, կայացնում է բոլորի դատավճիռը: *(Այս ընթացքում դատապաշտպանը հավաքում է սեղանին փռված թղթերը, տեղավորում է թղթապանակում, ոտքի է կանգնում: Ոտքի է կանգնում նաև մեղադրյալը, նրանք մոտենում են իրար:)* Ես ամեն ինչ կանեմ ձեզ համար: Ինքս ինձ հետ առերեսվելու հարց ունեմ, ուրիշներին ևս բան պիտի ապացուցեմ:

ԱՐՄԵՆ - Ես ձեզ հավատում եմ:

ԼԱԼԱԶԱՐՅԱՆ - Ցտեսություն:

ԱՐՄԵՆ - Ցտեսություն:



Կարինե ԽՈՂԻԿՅԱՆ

*Քանիսը գիտեն, որ
աշխարհին հայտնի
եսենիդյան Շահանեն
հայտնի է, արմատներով՝
Էրզրումից, ծննդավայրը՝
Ախալցխեն...*

*Մի օր ռեժիսոր Կարո Բայլանը ծանոթացրեց հիասքանչ
Տատա Խաչատրյանի հետ, Տատան էլ, առանց պահը կորցնելու,
ասաց իր երազանքի մասին՝ լինել Շահանե բեմում:
Շուտով կսկսվեն փորձերը, հետո (աչքով չտամ), պրեմիերա:
Բայց սա չէ կարևորը:
Կարևորը՝ տաղանդավոր դերասանուհի Տատա Խաչատրյանը խաղալու
է ռուսական բեմերում, պատմելու է հայտնի Շահանեի մասին...*

*Հ. Գ. Ժամանակ առ ժամանակ համացանցում մեր հարևանները
վայնասուն են զցում, թե՛ Շահանեն... հա, իրենցն է: —
Պիեսի մի մասը իմն է՝ իմ երևակայությամբ ու
էմոցիոնալ իմացությամբ ստեղծված Շահանեն:
Երկրորդ՝ կարևոր մասը փաստական,
վավերագիր նյութերն են, որ ամիսներ
չարունակ փնտրել գտել են,
այս կերպ ամրացնելով պիեսի կենսական ամբողջությունը:
Ու մի համոզում, որ եկավ պիեսը գրելու ընթացքում.
Եսենիսի միակ մաքուր ու անապական հիացմունքը եղել է Շահանեն:*

ԵՍ ԵՄ՝ ՔՈ ՇԱՀԱՆԵՆ

Մենախաղ

Երկաթուղային կայարանի հատուկ սպասարկման սրահն է՝ 1960-ական թվականների ստանդարտ կահավորանքով. բազմոց, երկու բազկաթոռ՝ ծածկված մոխրավուն քաթանով, սեղանիկ, վրան՝ հեռախոս ու սկահակով խնձորներ: Անկյունում ֆիկուսի թաղարն է, կողքը՝ կլոր, եռոտանի բարձր սեղանիկ, վրան հանրահայտ «Թիակով աղջիկը» (Девушка с веслом) քանդակը: Աղջիկը գիպսից է, իսկ փայտե թիակը այնպես է թեքված, որ հրաշքով ցած չի ընկնում: Կառամատույցին նայող պատուհանի մի կողմում պատի ռադիոն է ու մեծ օրացույցը, որի վրա պարզ երևում է 1965 թվականը և հոկտեմբերը, իսկ «1»-ը շարժական կարմիր շրջանակի մեջ է:

Պատի մյուս կողմում ժամացույցն է՝ անշարժ սլաքներով:

Լսվում են գնացքի շշակի, մարդկանց անորոշ, խուլ ձայներ: Անսպասելի բարձր հնչում է հայտարարություն հերթական ժամանող գնացքի մասին...

- Внимание! Прибыл поезд Москва-Рязань-2. Встречущих просим подойти к 1-му перрону.

Այս պահից բեմն ու դահլիճը լցվում են կայարանին հատուկ բարձր աղմուկ-ձայներով:

Բացվում է դուռը, ներս է մտնում Շահանեն՝ 65 տարեկան, ներկայանալի արտաքինով կին: Հագին աշնանային վերարկու է, գլխին՝ փոքրիկ ֆետրե գլխարկ: Աջ ձեռքում փոքրիկ ճամպրուկ է,

ձախ թևից կախված է կանացի պայուսակը՝ ռեդիկլյուրը:

Նա գնում է սրահը, ապա շրջվում է դեպի դուռը:

ԾԱՀԱՆԵ - (դեպի դուռ): Ծնորհա-

կալություն, այստեղ էլ կսպասեմ:

Դրսից ինչ-որ մեկը փակում է դուռը: Չայները քիչ խլանում են: Շահանեն առաջ է գալիս, ճամպրուկը դնում է բազկաթոռին, ինքը նստում է բազմոցին՝ պայուսակը թևից կախ: Նրա դիրքը հուշում է, որ ականջ է դնում դրսի ձայներին: Ահա տղամարդու ու կնոջ մոտեցող, անորոշ խոսակցության ձայներ... Շահանեն տեղից կարուկ բարձրանում, դուռս է գնում: Դրսի ձայներին միանում է նրա ձայնը... Կարճատև

խոսակցությունից հետո ներս է գալիս Շահանեն՝ շփոթված է: Նստում է բազմոցին նախկին դիրքով, հետո, ասես նոր նկատելով, թևն ազատում է պայուսակից, այն դնում է կողքը: Նայում է պատի ժամացույցի անշարժ սլաքներին, հետո՝ իր ձեռքի ժամացույցին: Նորից է գնում սենյակը՝ այս անգամ ավելի ուշադիր ու հանգամանորեն: Երբ հայացքը հասնում է պատուհանին, տեղից ելնում, մոտենում, դուռս է նայում: Ռադիոն խոսպոսկենդանանում է, հնչում է հերթական գնացքի ժամանման հայ-

տարարությունը: Շահանեն ի-
ջեցնում է ռադիոյի ձայնը, նայում
է օրացույցին:

ԾԱՀԱՆԵ - *(դիմելով ռադիոյին):*

Ռյազանում դեռ հոկտեմբերի
մեկն է... Հիմա կստուգենք: *(Բա-
ցում է պատուհանը, դիմում
դրսում գտնվող մեկին:)* Ներե-
ցեք... այո, այո, ձեզ եմ դիմում...
չեք ասի, այսօր ամսի քանիսն է...
Համոզված եք: Ընտրակալու-
թյուն: *(Փակելով պատուհանը: Ռա-
դիոյին.)* Պատկերացնում ես, ինչ
մտածեց իմ մասին խեղճ աղջի-
կը: Այո, մտածեց ամեն ինչ՝ բա-
ցի մեկից՝ երբ ինձ կորցնում եմ,
սկսում եմ կատակել: Հիմնակա-
նում՝ անհաջող: Բայց ոչինչ,
կարևորը պարզեցի՝ Ռյազանում
նույնպես հոկտեմբերի 2-ն է...
ինչպես Մոսկվայում ու նույնիսկ
Երևանում: *(Օրացույցի կարմիր
շրջանակը տեղափոխում է «2»-ի
վրա: Ռադիոյին.)* Նկատի ունե-
ցիր, ես ժամանել եմ նշված օրն ու
նշված ժամին: *(Կարճ երկմտան-
քից հետո:)* Թեև... ստուգելը չէր
խանգարի...

**Նստում է բազմոցին, պայուսա-
կից հանում է ծրար, այնտեղից՝
հրավիրատուն: Կարողում է կի-
սաձայն, մեկումեջ բարձրաձայն
մեկնաբանելով:**

ԾԱՀԱՆԵ - «Դուք հրավիրված եք...

(Իհարկե, հրավիրված եմ:)...

«Ձեզ կդիմավորի մեր աշխա-
տակցուհին»... *(Երևանում երբ*

կարողում էի հրավերը, հատկա-

պես այս տողը ինձ ոգևորեց:

Այդպես էլ չսիրեցի մենակ ծամ-

փորդել:) «Արարողությանը կհաս-

նեք ժամանակին»... *(Մի բան*

գիտեն, որ այսքան վստահ են

գրում, իզուր էլ անհանգստանում

եմ:) Ընդունեք մեր լավագույն...

(Բարձրաձայն:) Ամեն ինչ հստակ

ու պարզ գրված է: Կդիմավորեն

կառամատույցում, Կոնստանտի-

նովո կհասցնեն մեքենայով,

աշխատակցուհին էլ՝ վրադիր:

Միայն թե որտեղ է այդ սիրելի

աշխատակցուհին: *(Նայում է ձեռ-*

քի ժամացույցին:) Բայց ինչո՞ւ եմ

այսպես խուճապի մատնվել, այն

էլ՝ ժամանակից շուտ: Տղաս քար-

տեզով ստուգեց՝ այստեղից գյուղ

50 կմ չկա, մեկ ժամից էլ շուտ

կհասնենք... *(Նայում է պատի*

ժամացույցին՝ այն կանգնած է,

նորից՝ ձեռքի ժամացույցին:) Դեռ

կեսօր է, թանգարանի բացումը՝

երեկոյան, դրա համար էլ չեն

շտապում: Կամ էլ՝ ծանապարհ է,

ամեն ինչ կարող է պատահել, ա-

սենք՝ մեքենայի անիվն է պայ-

թել... Իսկ ես թուպեներն եմ

հաշվում: *(Ինքնահեզնանքով:)* Թե՛, թանկագինս, այնքան բաց թողեցիր երևակայությանդ սանձերը, որ արդեն պատկերացնում էիր՝ իջնում ես վագոնից, և իսկույն քեզ են մեկնվում ծաղկեփնջեր ու նույնիսկ փողային նվագախումբն է դիրիժորի հետ շարված կառամատույցին՝ ի պատիվ քո հայտնության... անհայտությունից: *(Թեթև ժպտում է:)* Ըհը, անհաջող կատակից անցար ինքնաճաղարանքի, ուրեմն վերականգնվում է նորմալ հոգեվիճակդ... *(Անսպասելի խիստ:)* Ու հերիք է քեզ լարես: Հիշիր ծնշումիդ մասին ու խորը շունչ քաշիր... *(Մի երկու անգամ խորը շնչում է: Արդեն՝ դառը ինքնահեզնանքով:)* Դու 40 տարի գալիս էիր այստեղ ու կարծես թե շատ չես շտապել, եթե դեռ կեսձամփին ես, իսկ հիմա ինչ-որ բոպենների ու մի քանի կիլոմետրի համար համբերությունդ սպառվեց, այո՞... *(Դադարից հետո:)* Ի դեպ, այսպես նույնիսկ լավ է՝ ժամանակ ունես կարգի բերելու էմոցիաներդ ու դեմքիդ արտահայտությունը: Լավ թե վատ, ժամադրության ես գնում քո... Ստոպ, թանկագինս, էլի չոգևորվես, դու գնում ես մասնակցելու միութենական մասշ-

տաբի պաշտոնական միջոցառման: Եվ բոլոր առումներով պիտի համապատասխանես այդ կարգավիճակին:

Պայուսակից հանում է դիմափոշու տուփը, բացում, նայում է հայելուն, իրենից դժգոհ՝ տուփը զցում է պայուսակը: Վերցնում է լսափողը:

ԾԱՀԱՆԵ - *(սպասում է մի պահ, հետո):* Բարև ձեզ, կարո՞ղ եմ այստեղից գանգել Երևան: Ծնորհակալություն: Ինչ ասացի՞ք... դե իհարկե, խոսելուց հետո անմիջապես կվճարեմ ադմինիստրատորին... Այո՛, այո՛, ես գիտեմ՝ նա որտեղ է նստում: Երևանի կողն էլ գիտեմ: Ինչպե՞ս... Հասկացա, սկզբում կհավաքեմ 9-ը, հետո՝ մնացածը... Ծնորհակալ եմ:

Համար է հավաքում, սպասում է:

ԾԱՀԱՆԵ - Կանոյա, ես եմ... Այո՛, հասել եմ... Առայժմ՝ մինչև Ռյազան... Ինչ եմ անում Ռյազանում... Սպասում եմ, ինձ պետք է դիմավորեին... Որտեղ եմ սպասում... Հատուկ հյուրերի սրահում: Պատկերացնում ես, հենց ասացի, որ ես էլ եմ հրավիրված, անմիջապես ուղեկցեցին այստեղ... Այստե՞ղ... համարյա շքեղ է՝ փափուկ կահույք, միջքաղաքային հեռա-

խոս, նույնիսկ չչորացած ֆիկուս ու համակրելի «Թիակով աղ-ջիկ»... Ինչու թիակով... Որովհետև արձանիկ է... (Նյարդային ծիծաղում է:) Չէ, հուզված չեմ: Ոչ էլ վախեցած, ինչ է պատահել... Այո, չեմ սիրում մենակ ճամփորդել... Ինձ կորցնում եմ անծանոթ վայրում, բայց այստեղ ուրիշ է... Քույրիկս, ծայրահեղ դեպքում տաքսի կվերցնեմ ու ինքս կգնամ... Ու կգնամ: Կատյա, ես շատ նորմալ եմ... Համարյա նորմալ, որովհետև, ինքդ ես հասկանում, ինքնաթիռ, գնացք, հետո՝ քնել չկարողացա... Որովհետև մտքովս չէր անցնում, որ այսքան տարի հետո հոգիս այսպես տակնուվրա կլինի... Այո, որովհետև վերապրում եմ այն օրերը... վերհիշում եմ բաներ, որոնք, կարծում էի, ընդմիշտ էին մոռացվել... Իմ տարիքում հոգու մասին են մտածում, իսկ ես սրտիս զարկերն եմ լսում... ինչպես այն օրերին: Ու գիտե՛ս, տարօրինակ բան է կատարվում ինձ հետ, երբեմն թվում է՝ հիմա ոչ թե 65 թվականն է, այլ 25... 1925-ը: Ու դա այնքան իրական է, որ նույնիսկ սարսափելի չէ... Դե լավ, արդեն շատախոսում եմ, դու էլ հիմա ինչ ասես՝ կմտա-

ծես: Այնպես որ, խոսակցությունն ավարտելու ժամանակն է... Ու դեռ հարց է, թե ինչ կարժենա այս զանգը: Կատյա, զանգիր տղայիս, ասա, որ ամեն ինչ նորմալ է: Ինչ... հույս չունենաս, ճնշումս չափելու կարիք չունեմ:

Լսափողը դնում է, ու նույն պահին՝ զանգ:

ԵԱՀԱՆԵ - (լսափողի մեջ): Այո՞...

Ինչքան... Հենց հիմա կվճարեմ:

Պայուսակից հանում է դրամապանակն ու դուրս է գնում:

Պատուհանին է մոտենում ԻՆՉՈՐ ՄԵԿԸ, նրա ուրվագիծը հիշեցնում է Եսենինին: Նա դեմքը հպում է ապակուն, ներս է նայում: Բայց երբ բացվում է դուռն ու զալիս է Շահանեն, նա շտապ ետ է քաշվում ու հեռանում է:

ԵԱՀԱՆԵ - (կիսաձայն՝ ինքն իրեն):

Չսնանկացա: Հատուկ հյուրերի համար երևի թե տարիֆն էլ ուրիշ է: Եթե ինձ դիմավորողները շարունակեն ուշանալ, տղայիս էլ կհասցնեմ զանգել:

Հանում է վերարկուն, զգում բազկաթռիչ, զգույշ հանում է գլխարկը, որ սանրվածքը չփչանա: Հագնված է խիստ ճևլածքի կոստյում, փարթամ մազերը ազուցված են ծոծրակին: Մոտենում է Թիակով Աղջկան, փորձում է ուղղել թիակը:

ԾԱՀԱՆԵ - *(արձանիկին):* Այս թիակը վաղուց քեզ հենարան չէ, ինչիդ է պետք, որ պահում ես: Ավելի շուտ՝ նա ունի քո կարիքը, իսկ դու չես հրաժարվում նրանից: Այդքան բարի ես, թե՛ սովորույթի ուժն է պահում... *(Երրորդ փորձից հետո թիակը ուղղում է:)* Ահա, թեկուզ ժամանակավոր, բայց նախկին հավասարակշռությունը ստացաք: Փոխարենը կասեն, թե ինչ ես անում այստեղ... *(Ասես նրա լուրջությունից հուսախաբ:)* Ինչ եմ ասում, դու նույնիսկ անունդ չես հայտնի: Մնում է հուսալ, որ իմ ներկայությունը քեզ չի խանգարի... Իսկ քո ներկայությունը նույնիսկ հաճելի է:

Նստում է, սկահակից խնձոր է վերցնում, նայում է, հոտ է քաշում...

ԾԱՀԱՆԵ - Իմ մանկության հոտն է... *(Ձննում է խնձորը:)* Տարօրինակ է ու տարօրինակ չէ այս զգացողությունը՝ վերջին օրերին անընդհատ մեզ կապող բաներ եմ փնտրում, այ՛, հենց այս խնձորի պես: *(Փակ աչքերով շոյում է խնձորը:)* Դու իմ մանկության քաղաքը հիշեցրիր, իմ Ախալցխեն... Մեր տունը: Երկհարկանի հայկական տուն՝ կառուցած

ծանր, սրբատաշ քարով՝ հիմնավոր, դարերի համար, կամարակապ պատուհաններով ու դռներով, իսկ փայտյա պատշգամբը ասես ասեղնագործած էր՝ մեր արհեստավորների համբավը վաղուց է քաղաքի սահմաններից դուրս եկել: Բա մեր այգին... Ինչ մրգատու ծառեր ասես ունեինք, բայց խնձորի ծառերը այգու պարծանքն էին: Մայրս խնձորները շարում էր արծաթե մեծ սկուտեղին ու դնում էր հյուրասենյակի կաղնեփայտ սեղանի ուղիղ մեջտեղում: Ու խնձորի բուրմունքը տարածվում էր տնով մեկ: *(Բացում է աչքերը, խնձորը դնում է սեղանին:)* Տասնմեկ տարեկան էի, երբ այդ բուրմունքը մեր տնից անհետացավ: Դա... մորս մահից հետո էր:

Տեղից բարձրանում, նայում է իր ժամացույցին, մոտենում, պատի ժամացույցի սլաքներն է ուղղում ու արագ դուրս գնում: Պատուհանի մոտ նորից հայտնվում է ԻՆՉՈՐ ՄԵԿԻ ուրվագիծն ու նորից անհետանում, երբ վերադառնում է Շահանեն:

ԾԱՀԱՆԵ - *(արձանիկին):* Պատկերացնում ես, ինձ հարցնող չի եղել: *(Թիակը թեքվում է:)* Դու էլ անհանգստացար: Բայց ադմի-

նիստրատորն ասաց՝ հանգիստ սպասեք, հենց եկան՝ տեղյակ կպահեմ: Փորձեմ հանգիստ սպասել, իսկ ավելի ճիշտ... *(Ուղղում է արձանիկի թիակը:)* Ինձ նման քանի-քանիսին ես տեսել այստեղ՝ սպասող, շտապող, անհամբեր, ու բոլորին նայել ես այս նույն, անփոփոխ, ոչ մի տեղ չշտապող հայացքով... *(Միացնում է ռադիոն, մետաղական ձայնը ինչ-որ բան է հայտարարում: Անջատում է: Արձանիկին:)* Այնտեղ հիմա այնպիսի իրարանցում է՝ մայրաքաղաքային չինովնիկներ, բարձրաստիճան հյուրեր... Ո՞ւմ հոգսն է այդ խառնաշփոթում հիշել ինձ նման մեկին: Դժվար չէ պատկերացնել այդ տեսարանը՝ մի կողմում հյուրերն են, մյուսում՝ տանտերերը, ու նրանց մեջ ես... Եվ ինձ ոչ ոք չի ձանաչում:

ԽԱՂ

Արխիվի աշխատակիցը

ԾԱՀԱՆԵ - *(նմանակում է թանգարանի երևակայական աշխատակցին):* Երկրում մարդ մնացել է, թե՛ բոլորն էստեղ են հավաքվել: Ասենք, էդպես էլ պիտի լիներ՝ մեր Սերյոժային աշխարհն էր

ձանաչում... Ճանաչողներից ով մնացել է՝ էստեղ է: *(Ինչ-որ մեկին.)* Հա՛, բոլորի մասին գիտեմ ու բոլորին ձանաչում եմ, որովհետև դա իմ աշխատանքն է: Արխիվն իմ ձեռքի տակ է, ու հավաքվածներից ամեն մեկի մասին էնքան բան կպատմեմ, ինչքան իրենք էլ չգիտեն: Բայց սպասիր, էդ կինն ո՞վ է... Դե, էն մեկը, որ կողքի է քաշվել, բայց աչքիս լավ էլ հուզված է երևում... Ոնց որ հրավիրվածներից պիտի լինի, ըհը, հրավիրատոմսը ամուր սեղմել է ձեռքի մեջ ու կարծես նեղ է զգում իրեն... Մեր քարտադարանում նրա մասին ոչ մի բան չկա, լուսանկար էլ չունենք... *(Լույն ինչ-որ մեկին.)* Ի՞նչ, տեղը չե՞մ բերում: Մոռացել ես պրոֆեսիոնալ հիշողությանս մասին... Եթե դեռ հիշում ես, ուրեմն չընդհատես, որովհետև նրա կանանց մասին էնքան բան գիտեմ՝ լինեն նրանք թուրքական հրապուրանք թե մշտական սրտակեր... Ասացի՛ սրտակեր, ու Զինային հիշեցի... Հա՛, նախկինին, որ հայտնի ռեժիսորի հետ ամուսնացավ ու նույնիսկ նրա թեթև ձեռքով դերասանուհի դարձավ, բայց, միևնույն է, մեր տղային էր սիրում ու տառապեցնում էր ուզածին

պես: Եթե ուզում ես իմանալ՝ էս մեկն էլ հենց էնպես չի հայտնվել. հաստատ ինչ-որ պատմություն կա... ջահել օրերին լավիկն է եղել, ասենք, հիմա էլ ոչինչ... Իսկ մեր պոետը գեղեցկությունը գնահատել կարողանում էր... Չէ, մեր անծանոթուհին հաստատ պատմելու բան կունենա: Բացատրել չեմ կարող, բայց զգում եմ, որ օտար չէ: Մոտենամ-հարցնեմ... կամ համբերեմ, մինչև իրեն ներկայացնեն... Մեկ էլ տեսար՝ պատմեց:

Դադար:

ԽԱՂՆ ավարտվեց:

ԾԱՀԱՆԵ - (մտախոհ): Մեկ էլ տեսար՝ պատմեցի:

Մոտենում է պատուհանին, դուրս է նայում, ասես փնտրում է մեկին: Երբ շրջվում է դահլիճին՝ մետամորֆոզն արդեն սկսվել է: Նրա դեմքը, ժպիտը, աչքերը... քիչ առաջվա ինքն է ու ինքը չէ: Թեթև քայլվածքով մոտենում է արձանիկին:

ԾԱՀԱՆԵ - (արձանիկին): Դու էլ ես ուզում հարցնել, թե՞ կհամբերես, մինչև ինքս պատմեմ... Խոստովանեմ՝ ինձ նեղ եմ զգում, ինչպես չեմ զգացել երբևէ: Այս չոր ու

ցամաք սենյակը, դռան ետևում նստած աղմինիստրատորը... Թանգարանի աշխատակցուհին, որ մինչև հիմա չկա... Իսկ պարզապես նստել ու սպասել չեմ կարող, ներիր, իրոք չեմ կարող: Հենց գնացքից իջա, ինձ միակ մի ցանկություն համակեց՝ բարձր, ամբողջ ծայնով ասել քո անունը: Մի բան, որն ինձ արգելել եմ տասնյակ տարիներ... (Շշուկով:) Սերյո՛ժա... (Բարձր:) Սերգեյ...

Ասես տենդի մեջ՝ քանդում է կոճակներն ու մի կողմ է շարտում կոստյումը: Հագին 20-րդ դարասկզբի բլուզ է՝ բարձր օձիքով: Արագ ու ճարպիկ քանդում է մագերի հանգույցն ու բարձրացնում՝ մնամվելով դիմանկարին:

ԾԱՀԱՆԵ - (խոստովանության պես): Սերյոժա, ես եմ, քո Ծահանեն...

ԴԱԴԱՐ

Կիսախավարի մեջ հնչում է երգը:

*Не жалею, не зову, не плачу,
Все пройдет, как с белых яблонь дым.
Увядания золотом охваченный,
Я не буду больше молодым...*

Բենը լուսավորվում է: Ծահանեի ուսերին նուրբ հյուսված շարֆ է:

ԾԱՀԱՆԵ - 17-ամյակիս հայրս ու քույրերս պատրաստվել էին շաբաթներ առաջ՝ բաց չթողնելով ոչ մի մանրուք: Աշխեն քույրս ժանյակներ էր հյուսել ու կարել տոնական զգեստիս, Կատյա քույրս այս շաբթն էր գործել, իսկ հայրս Թիֆլիսից պատվիրել էր իմ սիրած բանաստեղծի հատորյակը: Եվ ահա նստած են նրանք տոնական սեղանի շուրջը, իսկ սենյակի մեջտեղում կանգնած եմ ես՝ իմ նոր զգեստով, շաբֆով, կրծքիս եմ սեղմել գիրքն ու... լռություն: Մերոնք, բնական է, սպասում են իմ արձագանքին՝ դե, որ հիացական խոսքեր կասեմ, կգրկեմ նրանց, կհամբուրեմ, շնորհակալություն կհայտնեմ... Իսկ ես նայում եմ նրանց, մտածում եմ մորս մասին, որ ինձ հետ չէ այս պահին, մտածում եմ հորս մասին, որ իրեն զոհաբերում է մեզ համար, քույրերիս մասին, որ իրենց սիրով փորձում են մեղմացնել որբությունս... ու ոչինչ ասել չեմ կարող: Վերջապես հայրս բարձրացրեց բաժակն ու կենաց ասաց. «Իմ գեղեցկուհի ու խելացի աղջիկը թերություն չունի: Ճիշտ է, ինչ-որ մեկը կարող է հակաձառել ու որպես թերություն նշել, որ նա վախենում է իր զգա-

ցածն արտահայտել: Իսկ ես կասեմ՝ դա թերություն չէ, դա վախ չէ, այլ իր խաչն է, որ նա պիտի կրի ամբողջ կյանքում»: Երկու տարի հետո մահացավ հայրս: Վերջին հրաժեշտի վերջին րոպեներն են, իսկ իմ աչքի առաջ հայրս է՝ բաժակը ձեռքին... այդ ժամանակ միայն հասկացա, թե որքան երջանիկ էի իմ 17-ամյակի օրը և ինչպես, Ինչ խոսքերով պիտի շնորհակալությունս ու հիացմունքս հայտնեի նրան...

ԴԱԴԱԲ

(Արձանիկին.) Հիմա մտածում ես՝ ինչո՞ւ հիշեցի այս պատմությունը: Գուցե և չգիտեմ: Բայց հենց այնպես չհիշեցի, քիչ հետո երկուսս էլ կհամոզվենք:

Մոտենում է պատուհանին, դուրս է մայրս: Դուռն անաղմուկ բացվում է: ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ ներս է մտնում ու անցնելով բեմով՝ անհետանում է դիմացի կուլիսնեղում:

ԾԱՀԱՆԵ - (չի շրջվում, բայց դիրքը հուշում է՝ զգում է ՆՐԱ ներկայությունը): Տեսիլքներն են վերադառնում, թե՛ ես եմ տեղափոխվում տեսիլքների աշխարհ: Այնտեղ, ուր ներկայանալու կարիք չունեմ, որտեղ բոլորը գիտեն

իմ ու քո պատմությունը, որ այնքան պատմություն է չէր, որքան արթմնի երազ... Հավատա, ես զգում եմ քո ներկայությունն այստեղ ու չեմ զարմանում, ոչ էլ վախկա... Ես այնքան երկար եմ եկել քեզ մոտ, որ հիմա ամեն ինչ հնարավոր է՝ և՛ իմ վերադարձը այն հեռավոր դեկտեմբերը, և՛ քո ներկայությունը այսօր ու այստեղ... Հենց նոր դու անցար սենյակով, այդպես չէ... Ու հիմա լսում ես ինձ ու երևի զարմանում շատախոսությանս վրա: Չէ՞ որ այն օրերին ես ավելի շատ լռում էի: Մինչև մեր հանդիպումը լռությունն ինձ համար պաշտպանական միջոց էր: Մեր հանդիպումից հետո դարձավ այն տարածքը, որտեղ կարող էի խոսել քեզ հետ, ու ոչ ոք չէր իմանա այդ մասին: Ու կշարունակեի լռել, եթե արխիվային զգրոցներից մեկում պատահաբար չգտնվեր իմ լուսանկարը, և քո կենսագիրներից մեկը նրա հետքով չգար-չհասներ Երևան... Եվ տասնամյակներ շարունակ խնամքով պահված մեր պատմությունը ջրի երես ելավ...

Մոտենում է արձանիկին:

ՇԱՀԱՆԵ - (արձանիկին): Բախտդ բերել է՝ ոչ ոք չի կարող քո

զաղտնիքն իմանալ: Դրա համար էլ կհասկանաս, թե ինչ էի զգում, երբ առաջին անգամ օտար մեկին պատմում էի մեր մասին: Չէ, քոյրերս ու էլի մի երկու հոգի գիտեն մեր պատմությունը, բայց նրանք շատ նրբանկատ են ու ընդունել են իմ լռության ուխտը: *(Մի պահ կորցնում է կենտրոնացումը):* Ինչ էի ասում... ամիս, հա՛, երբ այդ օտար մեկին պատմում էի Սերգեյի մասին, ասես ինքս ինձ էի թալանում, կյանքիս ամենալուսավոր ու թանկ գանձն էի նրան հանձնում... Բայց նա իր գործի մասնագետն էր ու հետևողակա՜նորեն ինձնից դուրս էր քաշում մեր հանդիպման մանրամասները: Նա կարծես հետքը գտած քերծե լիներ, ու ես գուցե չասեի ոչինչ, բայց նա Սերգեյի անկեղծ ու անդառնալի նվիրյալն էր, այնպես էր ուզում լրացնել նրա կյանքի այդ փոքրիկ բացը, որ ես բարեխղճորեն նրան պատմեցի՝ ինչ հիշում էի: *(Արձանիկին.)* Այո՛, ամեն ինչ, չե՛ս հավատում... այն ամենը, ինչ հիշում էի: Թեև... մեր հիշողությունը երբեմն նույնիսկ մեզանից է թաքցնում այն, ինչ ուզում ենք պատմել...

ԴԱԴԱՐ

ԾԱՀԱՆԵ - (գնում, նստում է բազմոցին): Ինչո՞ւ են ուշանում: Երանի հասկանային, թե ինչքան եմ շտապում... Վերջապես կտեսնեմ նրա հայրական տունը, խնձորենին, այն ամենը, ինչի մասին պատմել է ինքը... Իսկ ինչը չի պատմել, այնքան եմ կարողացել այդ մասին, որ թվում է՝ դրանք էլ իր պատմածն են: (*Դադարից հետո:*) Մեկն ինձ ասեր, թե ինչո՞ւ եմ համոզված, որ հիմա լսում ես ինձ... (*Դառը ժպտով:*) Երանի այդպես լիներ, երանի կարողանայիր լսել, ու ես խոսեի, ասեի այն ամենը, ինչ այդպես էլ չկարողացա ասել քեզ այն օրերին: Միայն իմանաս, թե քանի անգամ եմ փորձել ավելի անկեղծանալ, ավելի բաց ու վստահող լինել, բայց... (*Նայում է արձանիկին:*) Հիմա հասկացա՞ր, թե ինչու պատմեցի 17-ամյակիս ու հայրիկիս ասած խոսքերի մասին...

Տեղից ելնում է, առաջ է տանում ժամացույցի կանգնած սլաքները: Մտռնում է արձանիկին:

ԾԱՀԱՆԵ - (*արձանիկին*): Որքան էլ տարօրինակ հնչի քեզ համար, բայց հիմա, այժ, այստեղ ես կարող եմ լինել այնպիսին, ինչպիսին չկարողացա լինել 40 տարի

առաջ: Էլի՞ չես հավատում: Դե իհարկե, քո այդ գիպսե աչքերով ինչերի ասես, որ ականատես չես եղել ու վերջնականապես կորցրել ես ապրումակցելու ունակությունդ: Դրա համար էլ ես կկարողանամ վերադարձնել անցյալն ու հիշել՝ ինչ հոգեվիճակում, ինչեր անցած ու ապրած հանդիպեցի՞նք ես և նա:

ԵՍ

24 տարեկան, բայց արդեն այրի, երկու տարեկան տղայի մայր: Տղայիս խնամում էր քույրս, Թիֆլիսում, իսկ ես Բաթումում ապրում էի մյուս քրոջս հետ ու թվաբանություն դասավանդում 4-5-6-րդ դասարաններում: Այսքանը՝ ի տես բոլորին: Իսկ թե ինչ էր կատարվում իմ հոգում... Ոչինչ էլ չէր կատարվում: Ինձ թվում էր՝ ես ապրել եմ իմ բաժին կյանքը, ու մնացածը միայն օրեր են՝ կանոնավորված ու անիմաստ: Ժպտացի՞ր, թե՞ ինձ թվաց... Այդքան անհավատալի է, որ 24 տարեկան կինը կարող է ավարտված համարել իր կյանքը: (*Նայում է արձանիկին: Հասկացող շեշտով:*) Ստիպված եմ բացատրել: Պատկերացրու ինձ՝ ամուսնուս հուղարկավորությունից հետո,

նստած եմ հոգեհացի սեղանի մոտ, աշխարհը մթնել է գլխիս, իսկ հանգուցյալի ազգականներից մեկը, իբր դարդոտված, զգուշացնում է. «Անմարդ կինը դարպասը բաց այգի է, ով ասես կուզի մտնի-թալանի ու խայտառակ անի»: Ու ես, մի պահ ցավս մոռացած, փորձում եմ հիշել, թե որտեղ եմ կորցրել ինչ-որ այգու գրողի տարած դարպասի բանալին... Հարևաններս էլ զգոն էին, վերջին բաժակը խմեցին իմ կենացն ու պատվիրեցին. «Դու հիմա մի հոգս ունես՝ պատվով մեծացնես տղայիդ»: Այնպես շեշտվեց «պատիվ» բառը, որ նույնիսկ դժբախտությունից մթագնած իմ ուղեղով հասկացա՝ գոյատևել ինձ թույլատրված է, բայց ապրել՝ ոչ մի դեպքում: (Արձանիկին.) Չհամոզեցի՞... Լավ, ավելի հեռվից գամ: Ես ավանդապահ գավառական պստիկ քաղաքի արդյունք եմ: Երկար չճավալվելու համար մեջքերեմ տատիս սիրած ասացվածքը՝ «Ես գիտեմ, թե որ հարևանիս տան մուկը ինչ գույնի է»: Իմաստը սա է՝ լիակատար պարտիզանություն: Մտքերի ու զգացմունքների շրջափակում: Որովհետև իմ տատից բացի, մեր քաղաքում ուրիշ

տատեր էլ կային, որոնք նույնպես կփորձեին իմանալ մեր տան մկների գույնը... (Արձանիկին.) Դատելով թեթև ժպիտիցդ՝ սկսում ես գլխի ընկնել: Ուրեմն՝ խոսքս իմի բերեմ՝ հայրիկիս ասած «իմ խաչը», ազգականի ակնարկած «դարպասի բանալին», հարևանների պատգամած «պատիվը», տատիս ասացվածքը... և էլի շատ բաներ, ինձ վերցրել էին իրենց փակ շրջանի մեջ: Իսկ ես համոզված եմ, որ նույնիսկ դու գիտես, որ փակ շրջանից ելք չկա: Երբ Թիֆլիսից Բաթում եկա, փակ շրջանը իմ մեջ էր:

ԴՈՒ

ԾԱՀԱՆԵ - Մինչև Բաթում գալն էր գրել այս տողերը...

Улеглась моя былая рана,

Пьяный бред не ложжет сердце мне.

Синими цветами Тегерана

Я лечу их нынче в чайхане.

Сам чайханицик с круглыми плечами,

Чтобы славилась пред русским чайхана,

Угощает меня красным чаем

Вместо крепкой водки и вина...

ԾԱՀԱՆԵ - Գրում էր շատ, տպագրվում՝ բոլորից շատ ու ավելի հաճախ: Այդպես էլ չունեցավ իր մշտական անկյունը: Փառքը,

հիացմունքը, կանանց սերերը՝ իրար հաջորդող ու միանման դառնալու հակված... գինարբուքներն ու դրանց հաջորդող դեպրեսիաները: Հոգին ձգտում էր դեպի հարազատ գյուղը, բայց մայրաքաղաքը կարող էր նրան հանրաժանաչ դարձնել: Ամբողջ կյանքում նրան հետապնդում էր հուսալքությունը, ամբողջ կյանքում նա փախչում էր հուսահատությունից... Անգամ Այսեդորան և Արևմուտքը նրան չազատեցին այդ հետապնդումից: Իսկ բաժանումը Դունկանից միայն ծանրացրեց հոգու ցավը: Մոսկվայում՝ կրկին քոչվոր ապրելակերպը, շուրջը վխտացող բաժակակիցները, աղմկոտ սկանդալներն ու նաև՝ ոստիկանություն, հարցաքննություններ, կալանավորում... Այնինչ նրա հոգին ձգտում էր անդորրի: Մաքրության կարոտն էր նրան համակել: Արևմուտքը զրկեց վերջին պատրանքից, իմաստուն Արևելքը կարող էր դարմանել նրա վիրավոր հոգին... Ու նա եկավ Կովկաս: Որպեսզի մի օր էլ հայտնվեր Բաթումում: *(Արձանիկին.)* Գոնե մի քիչ պատկերացրի՞ր, թե ինչքան նման էինք իրար ու նույնքան տարբեր էինք իրարից: Նման

էինք մեր մենակությամբ: Տարբեր՝ մեր ապրած կյանքով: Երկրային տրամաբանության բոլոր օրենքներով մեր հանդիպումն անկարելի էր: Բայց երկրային տրամաբանությունից բացի, կանաև ճակատագիր: Ու մենք հանդիպեցինք: Դասերից հետո տուն եմ գնում: Ճանապարհին, փողոցի անկյունում կանգնած էր մի երիտասարդ՝ միջառասակ, բարեկազմ, ոսկեգույն մազերով, գլխին՝ փափուկ ֆետրե գլխարկ, մոխրագույն կոստյումի վրա հագել էր արտասահմանյան մակինտոշ... Այնպես չէ, որ ամեն անձանոթի այդքան մանրակրկիտ զննում ու նաև հիշում եմ: Պարզապես նա առանձնանում էր իր արտասովոր արտաքինով, ու ես մտածեցի, որ նա անպայման մայրաքաղաքից կլինի... Հարավային, թեկուզ կուրորտային, բայց փոքրիկ քաղաքում նման բաները աչքից չեն վրիպում: Բաթումում սենյակ էինք վարձել՝ ես ու քույրս... *(Արձանիկին.)* Զիչ առաջ հեռախոսով նրա հետ խոսեցի: Կատյան ինձ համար... նա ավելին է, քան քույրը: Մեր հարևանը Ելիզավետա Իոֆֆեն էր, նա հրաշալի մերսող էր, հաճախորդի պակաս չուներ: Քանի

անգամ է մտքովս անցել՝ եթե Լիզան չապրեր հարևան սենյակում... և ամեն անգամ այստեղ ինձ ստիպել եմ չչարունակել միտքս, չէ՛ որ եթե նա չապրեր հարևան սենյակում, կարող էր չլինել դեկտեմբերյան այն օրը: Սիրելի իմ Լիզան... և նրա ծանոթներից մեկը՝ լրագրող Պովիցկին: *(Արձանիկին.)* Գիտե՞ս, մարդկային հիշողությունը հաճախ զուգորդվում է բույրերի, գույների, անորսալի շարժումների, ու ինչ իմանամ՝ էլի ինչ անշուշափելի զգացողությունների հետ: Օրինակ՝ այդ օրն ինձ համար դարչինի հոտ ուներ, բայց վստահ չէի ասի, որ պատճառը քրոջս թխած դարչինով բուլկիներն էին: Զարմացած նայում ես... հասկանում եմ քեզ, բայց սա է իրողությունը... Դե լավ, էլ քեզ չեմ տանջի նման ավելորդություններով, կխոսեմ փաստերով: Այդ նույն օրվա երեկոյան սենյակ ներխուժեց Լիզան, ու վրա է տալիս. «Կանտրա, Կանտրա, հայտնի ռուս բանաստեղծը ուզում է ծանոթանալ մեր Ծահանեի հետ»: Հավատա, ոչ մի կանխագագում կամ հրաշքի սպասում, ես շարունակեցի ստուգել աշակերտներիս տետրերը... թեև... Իհարկե, հա-

ձելի էր լսել նրա խոսքերը: Իսկ Լիզան, ոչ մի վայրկյան դադար չտալով, հայտնեց, որ Պովիցկին Եսենինի հետ իր սենյակում է ու մեզ «հավաքեց ու տարավ»-, հենց այդպես, այլ կերպ չեմ կարող նկարագրել այդ տեսարանը: Ներս մտանք, չէ՛, դեռ շեմը չանցած՝ տեսա նրան, ցերեկվա անծանոթին... տեսա նրա աչքերը, որոնք անթաթթ նայում էին ինձ: *(Արձանիկին.)* Ծունչդ պահել ես, ինչ ես ուզում լսել... տարիներ առաջ ասվածին նոր բան ավելացնել չեմ կարող... Նաև՝ չեմ ուզում: Ընդամենը կրկնեմ, որ Լիզայի սենյակում շարժվելու տեղ չկար, ես էլ առաջարկեցի դուրս գալ փողոց, իսկ փողոցում արդեն առաջարկեցի զբոսնել պարկում: Գիտե՞ս, չեմ հիշում, որքան տևեց այդ առաջին զբոսանքը, չեմ հիշում՝ ինչ էինք խոսում: Չէ՛, մի բան լավ եմ հիշում, ես հիմնականում լուռ էի: Ինչպես միշտ: Մյուս օրը Եսենինն ու Պովցկին նորից եկան ու առաջարկեցին մասնակցել գրական երեկույթին, ու որպեսզի մերժում չստանան, խոստացան, որ այնտեղ կարող ենք հանդիպել մեր ծանոթներից շատերին: Դե, մենք էլ որոշեցինք մասնակցել: Հաջորդ օրը դպրո-

ցից դուրս եկա ու նույն անկյունում նորից տեսա նրան: Գիտե՞ս, ինչ պարզ եմ հիշում այդ օրը՝ ամպամած էր, ծովը սկսում էր փոթորկվել, մեկ էլ հիշում եմ օդի համը՝ խոնավ ու աղակալած սառնաշաքար... Մենք բարևեցինք, Եսենինն առաջարկեց քայլել ճեմուղիով... Այնքան բնական հնչեց առաջարկը, որ անմիջապես համաձայնեցի, իսկ երբ հայտարարեց, որ տանել չի կարող այդպիսի եղանակն ու ավելի լավ է՝ ինձ համար կարդա իր բանաստեղծությունները, ես կարողացա ընդամենը գլխով հավանության նշան անել, որովհետև... խոսելու ունակությունս կորցրել էի: Ինչպե՞ս, Եսենինը ինձ համար, հասկանա՞ում ես, միայն ինձ համար պիտի կարդա իր բանաստեղծությունները: Եվ այդքանից հետո փորձիր պատկերացնել զարմանքս... չէ, ես պարզապես ապշեցի, երբ հնչեցին առաջին բառերը՝ «Շահանե, դու իմ Շահանե»... Չգիտեմ, ժամանակի որ պահին գիտակցեցի, որ բանաստեղծությունը նվիրված էր ինձ... կամ առնվազն՝ իմ անվանը... Երկրորդ տարբերակն ավելի հավանական թվաց, որովհետև մեր ծանոթության երրորդ օրն էր, ըն-

դամենը երրորդ օրը... Մտքերս խառնվում են իրար, անծանոթ ու սքանչելի բանաստեղծության տողերը գլխապտույտ առաջացնելու աստիճան պարուրում են ինձ ու միայն վերջին քառատողին գիտակցեցի, որ Շահանեն Երանն է... Միայն լսեիր, թե ինչպես էր կրկնում՝ դու իմ Շահանե... *(Արձանիկին, խոստովանության շեշտով:)* Կհավատամ, կյանքիս մի քանի տարիները կտայի, միայն կարողանայի այդ բառերին տեսնել ինձ, որովհետև մինչև հիմա չեմ կարող գոնե բառերով ինքս ինձ նկարագրել իմ զգացածը... Ասենք, ինչի՞ մասին եմ խոսում, երբ չգիտեմ, թե ինչպիսին էր նա բանաստեղծությունը կարդալիս ու կարդալուց հետո: Չգիտեմ, որովհետև չէի նայում նրան... Այսքանը՝ քեզ համար, իսկ լայն հասարակության համար... *(Համապատասխան տոնով:)* Կպատմեմ, որ բանաստեղծությունը կարդալուց հետո Եսենինն ինձ նվիրեց վանդակավոր տետրի երկու թերթերը, որոնց վրա գրված էր բանաստեղծությունը: Իսկ ներքևում ստորագրությունն էր՝ «Ս. Եսենին»: Ես երկու բանաստեղծություն էլ կարդաց,

որոնք գրել էր Թիֆլիսում՝ «Улеглась моя былая рана...», «Я спросил сегодня у менялы...»: Ես, մոռանալով տարրական էթիկայի մասին, հարցրի՝ իսկ ո՞վ է Լալան: Պատասխանեց, որ անունը հորինված է: Այն ժամանակ չհավատացի, բայց տարիներ հետո հասկացա, որ նա ասել էր ճշմարտությունը: *(Արձանիկին.)* Ինչու այդքան ո՞չ հասկացա... իմ հերթական թերությունն է՝ կարևորը հասկանում եմ տարիներ հետո:

ԳԱԴԱՐ

Մեր ամենօրյա դարձած հանդիպումներից մեկի ժամանակ կարդաց նոր բանաստեղծությունը՝ «Ты сказала, что Саади...»: Ես անակնկալի չեկա՝ այդ անգամ էլ տողերի մեջ լսելով սեփական անունս: Ի՞նչ... այդքան շուտ երես առա... Կարելի է և այդպես ասել, բայց, հասկանում ես, իմ թիակավոր ընկերուհի... այսքան ու այս տեսակ խոստովանություններից հետո կարո՞ղ եմ քեզ այդպես դիմել... Դեմ չե՞ս: Լռությունը համաձայնության նշան է: Ուրեմն, շարունակենք մեր միակողմանի բազմաշերտ զրոյցը: Ես երես չէի

առել, որովհետև որքան էլ առաջին բանաստեղծության մեջ Շահանեին սեփականացներ, նրա սիրտը Հյուսիսում էր, ինձ վստահելով՝ նա պարզապես իր սիրտն էր բացել... Այո՛, տարված էր իմ հարավային գեղեցկությամբ, բայց ինձ նմանեցնում էր հյուսիսային գեղեցկուհուն: Այնպես որ, անունս լսելով՝ կարողացա հայացքս չփախցնել, բայց երբ ավարտեց բանաստեղծությունը, հասկացա, որ այդ թուպենների ընթացքում մի ամբողջ կյանք եմ ապրել, մինչև այդ ինձ անծանոթ կյանք, երբ քեզ զգում ես կատարյալ ու ցանկալի, աստվածային ու մեղսավոր... *(Արձանիկին՝ մտերիմ:)* Այս պատմածս էլ միայն քո ականջների համար էր: Իսկ հասարակության համար... Դե ո՞չ, այս անգամ ես կասեմ այն, ինչ եղել է: *(Հաղթական շեշտով:)* Պատահել է, որ կոլեգաներիս հետ եմ եղել, Եսենինը մոտեցել, ծանոթացել է ամեն մեկի հետ, բայց ամեն անգամ ու անպայման հեռացել է ինձ հետ:

Շահանեին մոտենում է պատուհանին, քիկունքով՝ դահլիճին:

Ներս է մտնում ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ:

ՇԱՀԱՆԵ - Դու ամեն անգամ գալիս էիր ծաղիկներով, երբեմն դրանք վարդեր էին լինում, բայց ավելի հաճախ՝ մանուշակներ:

ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ մանուշակի փոքրիկ փունջը դնում է սեղանի վրին:

ՇԱՀԱՆԵ - Սերգե՛յ, քո նվիրած ծաղիկները ես ընդունում էի հավուր պատշաճի և ապուշության աստիճան զուսպ՝ «Շնորհակալություն... ի՛նչ գեղեցիկ են... ինչ լա՛վ են բուրում...»: Ամեն մի բառս ու ժեստս՝ ինչպես ընդունված է բարեկիրթ հասարակությունում: Ի՛նչ իմանայիր, որ տուն հասնելուն պես, հուզմունքից դողացող ձեռքերով ծաղկամանի մեջ էի դնում քո հերթական փունջը, իսկ արդեն թառամածը խնամքով պահում էի գրքի էջերի մեջ... Ինչո՞ւ չկարողացա գոնե մեկ անգամ խոստովանել, որ մինչև ծաղկամանի մեջ դնելը համբուրում էի դեռ ձեռքերիդ ջերմությունը պահող ծաղիկները անթիվ անգամներ ու չէի կարողանում հավատալ, որ դրանք դու ես նվիրել՝ Ռուսիայի ամենամեծ բանաստեղծը: Գիտե՛ս, տարիները շատ բան են մոռացրել, բայց հիմա էլ տեսնում եմ հայացքդ, երբ վերց-

նում էի մանուշակները՝ աչքերդ այնպե՛ս էին ծիծաղում... Հիմա եմ հասկանում, որ դու լավ էլ զգում էիր հուզմունքս ու հիանում էիր իմ ապուշային չափավորված ուրախությամբ: *(Թեթևակի շրջվում է... ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ անհանգիստ շարժվում է տեղում... Շահանեն նորից շրջվում է դեպի պատուհանը:)* Չեմ խախտի մեր պայմանավորվածությունը ու չեմ շրջվի... Բայց սա էլ ասեմ ու լռեմ: Զո նվիրած առաջին ծաղկեփունջը այդպես էլ ծաղկամանին չհասավ. ամբողջ երեկո այն ձեռքերիս մեջ էր, հետո՝ բարձիս վրա... Ահա, ասացի, ու սիրտս թեթևացավ:

ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ դուրս է գնում:

Շահանեն շրջվում, տեսնում է մանուշակի փունջը, առանց զարմանքի վերցնում, դեմքը թաքցնում է ծաղիկների մեջ:

ՇԱՀԱՆԵ - Հունվարի չորսն էր: Բերեցիր քո բանաստեղծությունների գիրքը՝ «Москва кабацкая»... Հիշո՞ւմ ես, ինչ էիր մատիտով գրել գրքի շապիկին՝ «Дорогая моя Шаганэ, Вы приятны и милы мне. С. Есенин. 4.1.25 г., Батум». *(Արձանիկին.)* Սերյոժան շատ բարի ու զգայուն մարդ էր: Այն օրերին անապաստան երեխաները սով-

րական բան էին մեր կյանքում: Իսկ նա հանդիպած ոչ մի երեխայի առանց ուշադրության չէր թողնում՝ կանգնում, հարցուփորձ էր անում՝ որտեղից է, ինչպես է ապրում, փող էր տալիս ու գուրգուրում... Հենց՝ գուրգուրում էր, դա ամենաճիշտ բառն է, որ կարող եմ ասել հիմա: Այդ պահերին նա հիշում էր իր մանկությունը, ասում էր, որ ինքն էլ է ժամանակին երեխա եղել, անհոգ ու չարածձի: Իսկ մի անգամ, տեսնելով նրանց խմբով, ասաց... մոտավորապես այսպես ասաց. «Շահանե՛, նայիր, նրանց մեջ և՛ Պուշկինն է, և՛ Լերմոնտովը, և՛ ես»:

ԴԱԴԱԲ

ՇԱՀԱՆԵ - Սերյոժա, գիտեն, ինչ հիշեցի... Այո, այո, այն ձյունառատ օրը...

Պատուհանից այն կողմ սկսում է ձյուն տեղալ: Շահանեն բացում է պատուհանը, ձյունը պատուհանից լցվում է սրահ: Շահանեն փորձում է բռնել ճախրող փաթիլները, զրնգուն աղջկական ձայնով բարձր ծիծաղում է:

Դեկտեմբերի վերջին օրերն էին, հո ձյուն չէր գալիս, դա հազվադեպ բան էր Բաթումում: Դու

հայտնվեցիր սահնակով, այնպես աշխույժ էիր, ուրախ... Մենք գնում էինք Մախինջաուրիի ճանապարհով: Ես ու Կատյան առաջին անգամ էինք սահնակ նստել, ու դու երևի ուզում էիր մեզ ցույց տալ սահնակով սլանալու հմայքն ու հրապուրանքը: Կես ճանապարհին սահնակը կանգնեցրիր ու ներողություն խնդրելով՝ նստեցիր կառապանի տեղը... *(Արձանիկին.)* Դու միայն պիտի տեսնեիր, թե ինչպես էր ծիծաղում, ինչպես էր ուրախացել, ասես երեխա լիներ...

Այդպես էլ չհիմացա ու հիմա էլ չգիտեմ՝ սահնակի արագ ընթացքից շունչս կտրվեց, թե՛ ինձ ուղղված քո լայն ժպիտից, որ ես վախեցա փակել աչքերս թեկուզ մի վայրկյան, որովհետև փակ աչքերով ինձ թույլ կտայի տեսնել ինձ՝ քո գրկում... Դրա համար էի անթարթ նայում քեզ, ու դու այդպես էլ չհիմացար, որ այդ րոպեներին քեզ էի ծուլվել իմ ողջ էությանմբ՝ համարձակ, զգացմունքից չվախենալով, այնպիսին, ինչպիսին քո հերոսուհին էր...

*Ты сказала, что Саади
Целовал лишь только в грудь.
Подожди ты, Бога ради,
Обучусь когда-нибудь!*

*Ты пропела: «За Ефратом
Розы лучшие смертных дев».
Если был бы я богатым,
То другой сложил напев.*

*Я б порезал розы эти,
Ведь одна отрада мне —
Чтобы не было на свете
Лучше милой Шаганэ*

*И не мучь меня заветом,
У меня заветов нет.
Коль родился я поэтом,
То целуюсь, как поэт.*

ԳԱԴԱՐ

ԾԱՀԱՆԵ - (արձանիկին՝ պաշտոնական շեշտով): Սերգեյ Ալեքսանդրովիչը սիրում էր հյուր գալ երեկոները և մանդարինի մուրաբայով թեյ խմել: Երբ նրան ուղարկում էի բանաստեղծություն գրելու՝ «Ի՞նչ եք այստեղ ժամանակ մսխում, ձեր չգրված գլուխգործոցները ձեզ են սպասում», - իսկ նա ասում էր, որ արդեն բավականաչափ աշխատել է ու հիմա հանգստանում է: (*Դադարից հետո*): Աստված իմ, հո չե՞մ մոռացել... (*Արագ բացում է ծամպրուկը, հանում է մուրաբան:*) Դեռ չգիտեմ, թե ում կտամ

այս մուրաբան: Գուցե դնեմ ձեր խոհանոցի սեղանին: Եվ արևային այս հատիկների հետ հայրական տունդ կմտնի քո կյանքի մի պատմություն ևս, երբ այնքան հաշտ էիր ինքդ քեզ հետ, երբ լավ աշխատելուց հետո գալիս էիր մեր փոքրիկ բնակարանը, նստում էիր մեր փոքրիկ սենյակի փոքրիկ սեղանի մոտ, վաստակած հաճույքով վայելում էիր մանդարինի հատիկներն ու պատմում քո պատմությունները՝ հեռվում թողած սերերիդ մասին... Իսկ ես, չհավատալով իմ երջանկությանը, չափած-ձևած շարժումներով թարմացնում էի բաժակիդ թեյն ու աչալուրջ հետևում, որ ափսեիդ միջի մուրաբան չպակասի: Հետո դու, նույնքան խստաոճ հրաժեշտ էիր տալիս ինձ ու գնում, իսկ ես հերթական անգամ մտածում էի, թե ինչքան լավ ենք հասկանում իրար, և ինչքան հիմարն եմ ես, որ հենց սկզբից պարտադրեցի այդպիսի հարաբերություններ: (*Արձանիկին*.) Ես կեղծավոր չեմ... ոչ էլ կեղծ բարոյախոս: Ու հեզնական չնայես, ինչ է, թե նրա նման սրտակերը առիթը բաց չէր թողնի... Հա՛, դու տեղացի ես ու շատ բան գիտես, անգամ՝ նրա մասին,

և ավելի, քան որևէ մեկը, բայց ստիպված ես հավատալ իմ խոսքերին: Չե՛ն կարող հավատալ... Ուրեմն, կպատմեմ, ու դու կհամոզվես... Հիվանդացա, հարբուխ... Քույրս գնում էր ծառայության, խնամակալի դերը իր վրա վերցրեց Սերգեյը: Առավոտ շուտ գալիս էր, թեյ էր պատրաստում, գրուցում էինք... «Հայ պոեզիայի անթոլոգիայից» բանաստեղծություններ էր կարդում: Հիմա չեմ հիշում՝ ինչ էինք խոսում... ի՛նչ ես նայում, այո՛, չեմ հիշում մեր գրույցների բովանդակությունը: Բայց հիշում եմ, որ սովորական, հանդարտ թեմաներ էին: Գուցե դրա՞մ համար չեմ հիշում... Այդ երեք օրերին մեկ անգամ չէ, որ մտածել եմ՝ սա այն նույն Եսենինն է, որի սիրային արկածները, ամուսնություններն ու սկանդալները հաճույքով ծամում է հասարակությունը: Ինքը չէ՛, որ խոստովանել է այդ ամենը՝ իր տողերով, իր անկրկնելի բանաստեղծություններով... Իսկ հիմա թեյ է սարքում ինձ համար ու գրուցում... հայ պոետներին է կարդում ու ասում, որ շատ է ուզում հանդիպել Չարենցի հետ... (Արձանիկին.) Եվս մի խոստովանություն, ու մտքովդ չանցնի

ժպտալ... (Ծոնչ է քաշում՝ համարձակություն հավաքելու համար:) Ամեն անգամ, նրա գնալուց հետո, ես զգում էի՝ ինչպես եմ բարձրանում ինքս իմ աչքում՝ «Օ՛, ինչպիսի՛ բարձր ու վեհ հարաբերություններ»... Բայց էյֆորիան անցնում էր, ու ես ինձ անվանում էի կատարյալ հիմար: Բարոյական հաղթանակը լավ է հնչում, երբ բարձրածայն ես ասում: Իսկ փորձիր մտքում ասել... համարյա վիրավորանք է դառնում: Լավ, այդ թեման փակեցինք մեկընդմիջտ: Հիմա... տես, թե քեզ ինչ եմ ցույց տալու: (Պայուսակից հանում է իր լուսանկարը:) Որպես հիշատակ վերցրեց իմ լուսանկարը, ինքը ընտրեց: 1919 թվականին էի լուսանկարվել, գիմնազիստուհու համազգեստով: Լուսանկարի հակառակ երեսին մի քանի բառ գրեցի: Մի ուրիշ անգամ ասաց, որ կտպագրի «Պարսկական մոտիվներն» ու գրքում կդնի իմ լուսանկարը: Խնդրեցի, որ դա չանի, ասելով, որ իր բանաստեղծությունները առանց այդ լուսանկարի էլ հիասքանչ են, իմ լուսանկարը դրանց ոչինչ չի ավելացնի:

ԴԱԴԱՐ

**Մուրաբան դնում է ճամպուկը,
լուսանկարը՝ պայուսակը: Շար-
ֆը հանում է ուսերից, դնում կող-
քի:**

Մեկնելուց առաջ ավելի ու ավելի հաճախ էր տրվում գինարբուքների, այցելություններն էլ աստիճանաբար նվազեցին... Դա բնական էր՝ այդպես էլ պիտի լիներ: Նրա կյանքի այդ շրջափուլում ես տեղ չունեի: Դրա համար էլ հանգիստ... համենայնդեպս՝ արտաքուստ հանգիստ ընդունեցի նրա վերջին այցը մեր տուն: Հունվարի այդ երեկոն... Մեկնելուց առաջ եկավ ու հայտնեց գնալու մասին: Ասաց, որ երբեք ինձ չի մոռանա, քնքշորեն հրաժեշտ տվեց ինձ, բայց չուզեց, որ ես ու քույրս նրան ձանապարհեինք: Նամակներ էլ նրանից չստացա: (Արձանիկին.) Տխրեցի՞ր... Իզուր: Նման վերջաբանը նախանշված էր մեր առաջին հանդիպման առաջին պահից: Բայց մեր առաջին ու վերջին հանդիպումների մեջտեղում անսահման ու աննկարագրելի իմ երջանկությունն էր, որը չունի ո՛չ բանաձևում, ո՛չ էլ բացատրություն: Ունի միայն պոետական հաստատում: Ի վերջո, մի մոռանա, թե ո՛ւմ են նվիրված այս տողերը... Սերյոժա՛, ես

գիտեմ, թե հիմա ինչ ես ուզում լսել դու... (Ասմունքում է:)

**Պատուհանից այն կողմ՝ ԻՆՉ-
ՈՐ ՄԵԿՆ է:**

Шаганэ ты моя, Шаганэ!

Потому, что я с севера, что ли,

Я готов рассказать тебе поле,

Про волнистую розь при луне.

Шаганэ ты моя, Шаганэ.

Потому, что я с севера, что ли,

Что луна там огромней в сто раз,

Как бы ни был красив Шираз,

Он не лучше рязанских раздолий.

Потому, что я с севера, что ли.

Я готов рассказать тебе поле,

Эти волосы взял я у ржи,

Если хочешь, на палец вяжи -

Я нисколько не чувствую боли.

Я готов рассказать тебе поле.

Про волнистую розь при луне

По кудрям ты моим догадайся.

Дорогая, шути, улыбайся,

Не буди только память во мне

Про волнистую розь при луне.

Шаганэ ты моя, Шаганэ!

Там, на севере, девушка тоже,

На тебя она страшно похожа,

Может, думает обо мне...

Шаганэ ты моя, Шаганэ.

Մրաիը մքնում է:

Շրք լուսավորվում է, Շահանեն

այնպիսին է, ինչպիսին առաջին տեսարանում էր: Նստած է բազմոցին՝ պայուսակը թևից կախ: Դրսից ձայներ են մոտենում, մաարագ ելնում է տեղից, գնում, բացում է դուռը, անորոշ խոսակցություն, որից հետո վերադառնում է, վերցնում է ճամպրուկը և ուղղվում դեպի դուռը: Կես ճանապարհին կանգնում, վերադառնում է արձանիկի մոտ:

ԾԱՀԱՆԵ - *(արձանիկին):* Իզուր էլ անհանգստանում էի, պարզվում է՝ կայարաններն են շփոթել: Գնացել են Ռյազան-1 կայարանը, իսկ ես նրանց Ռյազան-2-ում եմ սպասում: Ի դեպ, աշխատակցուհին շատ հաճելի աղջիկ է... *(Դավադիր:)* Իսկ դու լեզուդ քեզ կպահես... Ասենք, իզուր ասացի, երկուսս էլ լռելու արվեստին լավ ենք տիրապետում: *(Նայում է արձանիկին:)* Էլ ինչի՞ ես սպասում, այսքան խոստովանությունից հետո... Ինչ ես ուզում, որ ասեմ: *(Թիակը հանում, դնում է կողքի:)* Քեզ չե՞ն ասել, որ սրա կարիքը չունես: Թիակը վաղուց է ավելորդ դարձել, որովհետև լինի ամուր ու անփոխարինելի, թե կողքի թեքված ու անհուսալի, քեզ համար

նույն հաշիվն է: Չէ՞ որ մեկ անգամ ու ընդմիշտ նա գրավել է իր տեղը թո՛՛՛՛՛ ձեռքի մեջ, և նրա ջերմության հիշողությունը երբեք չի լքի քեզ: Խոստովանիր, որ շատ նման ենք իրար... *(Սեղանիկից վերցնում է մանուշակի փունջը, գնում է դեպի դուռը, նորից կանգ առնում, շրջվում է դեպի արձանիկը:)* Վստահ եմ, որ հասկացար՝ որն է եղել իմ անսահման ու աննկարագրելի երջանկությունը: Ես ենիսը կա ու մինչև օրերիս ավարտը կմնա կյանքիս լուսավոր հիշողությունը: Ու մի փաստ՝ ի գիտություն ոչ միայն քեզ: Բաթումից մեկնելուց հետո նա փորձ անգամ չի արել վերականգնելու մեր ծանոթությունը, որը, հավատացած եմ, ժամանակ հետո ինչ բացահայտման ասես՝ կարժանանա: Բայց բաժանումից հետո, ամիսներ անց Շահանեն նորից հայտնվեց նրա բանաստեղծություններում, որոնք գրվել էին 1925 թվականի մարտին, իսկ հետո՝ օգոստոսին: Միայն իմանաս, թե այդ փաստը ինչպես է ջերմացնում իմ հոգին:

Շահանեն դուրս է գնում: Սրահը մթնում է:

Պատուհանից այն կողմ անէանում է մահ ԻՆՉ-ՈՐ ՄԵԿԸ:

ՄԵՐ ՆԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՆԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՆԵՂԻՆԱԿԸ



Գագիկ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

*Երբեմն թատրոնը նման է քրքջացող ծաղրածուի,
դե ես էլ սասցի՝
ժամանակն է՝ ես էլ քրքջամ:*

ՎԵՐ ԿԱՑ ՈՒ ԳՆԱ

Գործող անձինք

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - մեծ էներգիայի տեր անձնավորություն

ՀԱՍՄԻԿ - մինչև 30տարեկան

ԳԵՎՈՐԳ - Հասմիկի ամուսինը

ՎԱՂՈ - հարևան

ԶՈՔԱՆԶ

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պատկեր առաջին

Բեմը շրջապատված է կիսաքանդ պարիսպով: Կան անցքեր, որտեղով մարդը կարող է մտնել բեմ: Սենյակի աջ դուռը տանում է խոհանոց, ձախը՝ լոգարան: Աթոռներ, բազմոց, ջրի ծորակից ջուր է կարծում: Բազմոցին պատկած է Հասմիկը: Գևորգը խնամում է նրան: Ներս է մտնում Կարպ Կարպիչը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - *(Գևորգին):* Ահա թե որտեղ եք թաքնվել. ամբողջ քաղաքը պատվեցի, վերջապես գտա քեզ, չէ՛՝ ձեզ: Նկատի ունեմ նաև կնոջդ: Բարև ձեզ:

ԳԵՎՈՐԳ - Այսքան վաղ հյուր չեմ ընդունում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ես հյուրի նման եմ:

ԳԵՎՈՐԳ - *(հորանջում է):* Պարոն, ժամը վեցն է: Դուք մտել եք իմ տուն:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Սա ձեր տունն է:

ԳԵՎՈՐԳ - Իսկ դու՞ն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Պատահում է՝ ապրում են, բայց տունն իրենցը չէ:

ԳԵՎՈՐԳ - Կարող եմ ցույց տալ սեփականաշնորհման վկայականը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Դուք կարծում եք, որ դա կարող է ապացույց լինել:

ԳԵՎՈՐԳ - Համատիրությունից տեղեկանք եք ուզում: *(Դադար:)*

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ո՛չ: Ինչո՞ւ պիտի ինձ խաբեք: Ես ձեզ հավատում եմ:

ԳԵՎՈՐԳ - Ծնորհակալություն: Ներեցեք, դուք ո՞վ եք, ծանոթներ ենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ծանոթներ...

ԳԵՎՈՐԳ - Որտեղ ենք ծանոթացել, հաճախ եմ գնում թատրոն:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես դերասան չեմ:

ԳԵՎՈՐԳ - Գուցե դրամատուրգ եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ոչ էլ դրամատուրգ եմ:

ԳԵՎՈՐԳ - Հանդիպել ենք սրճարանում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛չ, մենք ծանոթներ չենք, ոչ էլ բարեկամական կապ ունենք: Կարևորը, որ տեղ եմ հասել:

ԳԵՎՈՐԳ - Գուցե ջրմուղից եք, մեկ շաբաթ է՝ սպասում եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այո՛, ես կարող եմ ջրմուղից լինել: *(Պայուսակից հանում է թուղթ ու գրիչ:)* Հիմա ես կգրեմ ցուցիչի թվերը: Դրանք շատ կարևոր թվեր են: Ես կարող եմ իմանալ, ինչքան ջուր եք խմել ամսվա ընթացքում:

ԳԵՎՈՐԳ - Այնտեղ է, լվացարանի տակ, տուփի մեջ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - *(մոտենում է լվացարանին):* Դուք էլ կարող եք մոտենալ, խնդրում եմ: *(Գևորգը մոտենում է:)* Ծնկի... Ես ասում եմ՝ ծնկի իջեք և ասեք ցուցիչի թվերը:

ԳԵՎՈՐԳ - Բայց դա ձեր պարտականությունն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես պիտի ծնկի գամ, ձե՛ր առջև... Դու, ինչ է, տերտե՛ր ես: Ես միայն նրանց առջև եմ ծնկի գալիս: Նա բարեկամաբար բամփում է գլխիս ու ասում,-

ստացար քո բաժին օրինանքը: Սա քո տունն է, բնականաբար, ցուցիչն էլ է քոնը: Ախր, ես կարող եմ այնպիսի թվեր գրել, որ տունդ վաճառես, տակից դուրս չգաս: Ծնկի իջիր ու ասա թվերը:

ԳԵՎՈՐԳ - *(ծնկի է գալիս):* 1, 7, 8, 4, 5, 4, գրեցի՞ր:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կրկնիր, մահկանացո՛ւ: Ես սովոր չեմ արագ տիրապետել մտքերին:

ԳԵՎՈՐԳ - 1, 7, 8, 4, 5, 5:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչո՞ւ վերջին թիվը փոխվեց:

ԳԵՎՈՐԳ - Որովհետև ջուրը հոսում է: Մեկ շաբաթ է, սպասում եմ՝ ջրմուղից մարդ գա: Չգիտեմ ինչու, ծորակից ջուր է կաթում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուզում եք, որ օղի կաթա: Դա բացառվում է:

ԳԵՎՈՐԳ - Պարո՛ն, ուզում եմ, որ կաթոցը կտրվի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ի՞նչ պիտի անեմ:

ԳԵՎՈՐԳ - Կտրե՛ք կաթոցը, նյարդերիս վրա ազդում է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մի կողմ քաշվիր: Ես հիմա նրա կաթոցն այնպես կտրեմ, որ խոխոռոցը գա: *(Փորձում է կաթոցը կտրել. չի ստացվում:)* Կաշառակեր սրիկա, մինչև կոկորդը մի բան չխցկեմ, բերանը չի փակի: *(Դրամը մտցնում է ծորակի անցքը, կաթոցն ուժեղանում է:)* Սրիկայի ախորժակը մե-

ծացավ: Ինչ ես ինձ նայում, 20 հազարանոց տուր:

ԳԵՎՈՐԳ - Չգիտեմ՝ ինչ մտածեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ դու մի մտածիր, փողը տուր: *(Գևորգը փող է տալիս:)* Երկու քայլ ետ գնա ու չփորձես թաքուն նայել: Ծորակը շփոթմունքի մեջ կընկնի:

ԳԵՎՈՐԳ - Ես չգիտեի, որ ծորակն այդքան նրբազգաց է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իհարկե, չես իմանա, բայց ես հո գիտեմ: *(Փորձում է կաթոցը կտրել, չի ստացվում: Պայուսակից հանում է խոշորացույցը, զննում է:)* Սրանից հանցագործության հոտ է գալիս... Ահա՛ թե ինչ... Ո՞վ է մուրձով խփել ծորակի գլխին: Խոստովանիր, քանի դեռ ուշ չէ:

ԳԵՎՈՐԳ - Ես տանը չեմ լինում, հավանաբար կինս է գայրացել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կարո՞ղ եմ նրա մատնահետքերը վերցնել:

ԳԵՎՈՐԳ - Ո՛չ, նա քնած է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ ինչպե՞ս բացահայտեմ հանցագործությունը:

ԳԵՎՈՐԳ - Լսեք, վերադարձրե՛ք իմ դրամը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչ, քո կինը մուրձով անշնչացրել է ծորակը, իսկ դու ինձնից փող ես ուզում: Լավ, խոստանում եմ արձանագրություն չկազմել... և վերջ: Գնա՛, նոր

ծորակ գնիր: Ես քեզ համար փականագործ չեմ:

ԳԵՎՈՐԳ - Ծատ լավ: Այսօր ևեթ կգնեմ ու ինքս էլ կտեղադրեմ: Հիմա կարող եք գնալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այսինքն՝ ինչպե՞ն... պայուսակս վերցնեմ ու գնամ:

ԳԵՎՈՐԳ - Այո՛:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լսիր, ինչո՞ւ ես միամիտ ձևանում: Զո խաղը մեզ փակուղի կտանի:

ԳԵՎՈՐԳ - Ձեզ չեմ հասկանում: Լերխուժեցիք բնակարանս, չկարողացաք վերանորոգել ծորակը, հիմա էլ ինչ-որ խաղի մասին եք ակնարկում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իմ գալստյան մասին քեզ չե՞ն տեղեկացրել:

ԳԵՎՈՐԳ - Ինձ ոչ ոք չի նախազգուշացրել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչ է ասում էս մարդը: Կարծում ես, Կարպ Կարպիչը հենց այնպես կգա ձեր տուն: Կներեք, ես այնքան զբաղված մարդ եմ, որ շնչել ու արտաշնչել չեմ հասցնում:

ԳԵՎՈՐԳ - Կներեք, ովքե՞ր էին ինձ զգուշացնելու:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նրանք:

ԳԵՎՈՐԳ - Նրանք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նրանք գիտեն՝ ինչ են անում... Այնպես եմ զայրացած, որ տեղս չեմ գտնում:

ԳԵՎՈՐԳ - Դուք իմ տանն եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բնական է, որ պիտի քո տանը լինեի: Էլ որտեղ, զարմանալի մարդ ես:

ԳԵՎՈՐԳ - Ես էլ եմ զայրացած, բայց եկեք հանգիստ վերլուծենք առկա վիճակը: Օղի կխմեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Վատ չէր լինի: Սթափ մարդուն օղին օգնում է:

ԳԵՎՈՐԳ - Տնական օղի ունեմ, 70 աստիճան, կդիմանամ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես 100 աստիճանի էլ կդիմանամ: Դա իմ բնավորության դրական գծերից մեկն է: *(Գևորգն օղի է լցնում:)* Էհ, թող քո մառանում օղին շատ լինի: *(Խմում են:)*

ԳԵՎՈՐԳ - Հը՞, ո՞նց էր, էլի կխմեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես աշխատանքի ժամանակ չեմ խմում:

ԳԵՎՈՐԳ - Ուտել ուզում եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛չ: Ինձ հետ միշտ մի բան է պատահում... Գիշերը չէի կարողանում քնել, գլուխս անտանելի ցավում էր: Երկու բաժակ օղի խմեցի, որ քնեմ: Նոր էին աչքերս փակվել, հանկարծ արթնացրին, ասացին՝ վեր կաց ու գնա: Ես էլ հագնվեցի, վերցրի պայուսակս ու դուրս եկա: Ժամը չորսն էր, անձրև էր գալիս: Պատկերացնում ես, ես անձրևի տակ քայլում էի գլխաբաց: Հիմա ժամը քանիսն է:

ԳԵՎՈՐԳ - Ութը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուղիղ չորս ժամ է քայլում եմ:

ԳԵՎՈՐԳ - Առավոտյան քայլելն օգտակար է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ամեն օգտակար բան չէ, որ գեղեցիկ է: Լրիվ ցեխոտվել եմ... Մի՞թե ամոթալի չէ այս տեսքով ներկայանալը: *(Դադար, իրար են նայում:)* Այն ճանապարհը, որով գալիս էի, ոչ մի կենդանի շունչ չկար, միայն ուրվականներ էին թափառում: Եվ երբ գնացքի ռելսերը տեսա, ուրախացա՝ որտեղ գնացք, այնտեղ էլ մարդիկ:

ԳԵՎՈՐԳ - Մեր կողմերում գնացքի գծեր չկան:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Վերջ տուր, աչքովս եմ տեսել:

ԳԵՎՈՐԳ - Ես այս տանն եմ ծնվել, կարող եմ հաստատել, որ գնացքի գծեր չկան:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չեմ սիրում, երբ ինձ հակաճառում են: Ամայի վայր էր: Քայլում էի ռելսի վրայով ու մտածում՝ այստեղ կարող են թաքնվել բոլոր հանցագործները:

ԳԵՎՈՐԳ - Դուք ուստիկան եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես ուստիկան եմ... Մի՞թե իմ դեմքից չի երևում: *(Սարսափելի դեմք է ընդունում:)* Ձեռքերդ վեր, հանցագործ:

ԳԵՎՈՐԳ - *(ձեռքերը բարձրացնում է):* Պարոն լեյտենանտ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չէ մի չէ, լեյտեն-

նանտ, ես գնդապետ եմ: Ո՞վ չգիտի գնդապետ Կարա Կարապիչին:

ԳԵՎՈՐԳ - Պարոն գնդապետ, երդվում եմ, ես հանցանք չեմ գործել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Զո տեսքն իսկական հանցագործի է: Մեկ-մեկ քեզ հայելու մեջ նայիր: Եվ այսպես, ինչ հանցանք ես գործել: Եթե ինձ ուղարկել են այստեղ, ամենաքիչը մեկ մարդ ես սպանել:

ԳԵՎՈՐԳ - Դուք չեք կարող ինձ մարդասպանի տեղ դնել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես, եթե ես չկարողանամ, ապա ոչ ոք չի կարող... Որտե՞ղ ես թաքցրել դիակը:

ԳԵՎՈՐԳ - Ես չեմ կարող դիակ թաքցնել, որովհետև դիակ չկա: Ուշքի եկեք, պարոն, դա արդեն ծիծաղելի չէ: *(Օղի է լցնում:)* Խմե՛ք, դա ձեզ կօգնի: *(Խմում է:)*

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ափսոս, ես էլ մտածեցի, գուցե ոստիկան եմ:

ԳԵՎՈՐԳ - Չգիտեմ, դուք ոստիկան եք, թե ոչ, բայց ես մարդասպան չեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ախր, հենց այնպես չէի կարող հայտնվել այստեղ... Ինձ նման մարդը, խելացի ու հավասարակշռված անձնավորությունը չէր հայտնվի հիմար վիճակում: Ուրեմն, մարդ չեք սպանել, բայց թաքնվել եք այս ծուղակում: Այստեղ հարկային

տեսուչն էլ չի համարձակվի գալ: *(Ծանր լռություն:)*

ԳԵՎՈՐԳ - Ահա թե ինչ, ես կանխագուշակում էի, որ գալու եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուրեմն դու ինձ սպասում էիր... Ասա՛, որ այդպես է:

ԳԵՎՈՐԳ - Հարկայինից ո՞ր կարող ես փախչել: *(Չայրացած:)* Ձեր պետը հիմարի մեկն է, համարձակվել է ձեզ առավոտ վաղ ուղարկել իմ տուն:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իմ պետը գիշերցերեկ քուն չունի: Մարդն աշխատանքով է ապրում:

ԳԵՎՈՐԳ - Ապո՛ւշ, հիմար:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կներեք, բայց իմ պետը բարձրագույն կրթություն ունի: Ճիշտ է, տարօրինակություններ էլ ունի, բայց ապուշ չէ: Նրանից բոլորն են վախենում: Նույնիսկ ես եմ վախենում:

ԳԵՎՈՐԳ - Դուք գիտե՞ք, ինձ ինչու՞մ են մեղադրում. փող լվանալու մեջ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Երջանի՛կ մարդ, շատ եք փող լվանում:

ԳԵՎՈՐԳ - Ես ազնիվ բիզնեսմեն եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես լավ գիտեմ ձեր նմաններին: Փողերը որտե՞ղ ես չորացնում: *(Դադար:)*

ԳԵՎՈՐԳ - Ձեր փաստաթղթերը...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կարծում ես, առանց գրքույկի՞ եմ եկել: *(Փորփ-*

րում է գրպանները։) Պետիս հրամանը կատարելը ինձ համար մեծ պատիվ է։ (Բացում է պայուսակը, ոչինչ չի գտնում։) Դատարկ չեմ գնալու պետիս մոտ։ Բայց ոնց որ հարկայինից չեմ։

ԳԵՎՈՐԳ - Փառք Աստծո, ամեն ոք, բայց ոչ նրանք։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Կարծում եք, նրանք չարյաց մեծագոյնն են։

ԳԵՎՈՐԳ - Մինչև կոկորդս կուշտ եմ։ Չեն թողնում՝ մի կտոր հաց վաստակեմ։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Նրանք ընդամենը ժողովրդի փողերով սնվող մարդիկ են։

ԳԵՎՈՐԳ - Նրանք մեր արյունն են ծծում։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ձեր ասածները գրի կառնեմ ու կներկայացնեմ՝ ուր որ պետք է։

ԳԵՎՈՐԳ - Խնդրեմ։ Ուզում ես, մի երկու արտահայտություն էլավելացնեմ։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Սա էլ բավական է։ (Դադար։) Բայց ես լրտես չեմ։

ԳԵՎՈՐԳ - Եվ այսպես՝ դու ջրմուղից չես։ (Կարպ Կարպիչն օրորում է գլուխը։) Ոստիկան չես, հարկայինից չես։ Գրողը քեզ տանի, ո՞վ ես, ինչո՞ւ ես եկել իմ տուն։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ես հեռվից եմ գալիս, հոգնած եմ և ուժասպառ։ Չհասցրի սուրճ խմել, իսկ տեսքս

անտանելի է։ Ինձ ժամանակ տուր, մինչև խելքի գամ։

ԳԵՎՈՐԳ - Հինգ րոպե քեզ ժամանակ։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ի դեպ, ես էլ կվրդովվեի, եթե առավոտ վաղ ինչ-որ մեկը մտներ իմ բնակարան։ Նրա վզակոթից կբռնեի ու ծեծելով դուրս կանեի։

ԳԵՎՈՐԳ - Ես համբերող մարդ եմ, կդիմանամ քո ներկայությանը հինգ րոպե։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Կծեճնս։

ԳԵՎՈՐԳ - Կխնդրեմ, որ սուսիկ-փուսիկ ուղղա քաշես։ (Փլուզման ձայն։ Կարպ Կարպիչը ոտքի է թռչում, նայում է Գևորգին։) Իմ մառանն է։ Մրջյունները կերան հենասյունները։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ինչպե՞ս թե՛ կերան. և դու ոչինչ չե՞ս ձեռնարկում։

ԳԵՎՈՐԳ - Ստիպված եմ համակերպվել։ (Բեմով սպիտակ խոզի բող է շարժվում։ Կարպ Կարպիչը հետևում է շարժմանը։) Տեսնո՞ւմ եք, ինչպես են մրջյուններն ավարը տանում։

Բուլմն անհետանում է պատի ետևում։ Կարպ Կարպիչը գլուխը մտցնում է անցքից ներս և տեսնում է, որ հարևանը, բուլը դրած ուսին, տանում է։

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ախ դու հաստավիզ մրջյուն, ես քո գլուխը կջարդեմ։

ԳԵՎՈՐԳ - Տեղական բարձր որակի մսից էր պատրաստված: Ամեն առավոտ մի կտոր ուտում էի ու գնում աշխատանքի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մրջյունները հենց այնպես չեն հայտնվում:

ԳԵՎՈՐԳ - Ինչ եք ուզում ասել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այդ հաստավիզ մրջյունները սուր հոտառություն ունեն: Ոչնչի առջև կանգ չեն առնում, բեղիկները մտցնում են ամեն տեղ, նույնիսկ ննջասենյակ, սավանի տակ, նայում են ու կրծոտում: Դրանց դեմն առնելու միակ ծանապարհը ծծմբաթթուն է՝ բռնում ես մրջյունների գլխից ու բերանի մեջ կաթեցնում, վայրկենապես սատկում են:

ԳԵՎՈՐԳ - Լավ է, որ կինս քեզ չի լսում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես քեզ կօգնեմ: Այդ հաստավիզ մրջյունների գլխին այնպիսի օյիններ խաղամ, այնպես թրխկացնեմ քամակներին, որ ձեր տան ծանապարհը մոռանան:

Հասմիկը գառանցում է ու ոտքի թռչում: Գևորգն ու Կարպ Կարպիչը մտռեցնում են նրան:

ՀԱՍՄԻԿ - Գևորգ, գնացքը գալիս է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես ասում էի, որ գնացքը ձեր տուն է գալիս:

ՀԱՍՄԻԿ - Նրանք ուզում են մեզ բաժանել:

ԳԵՎՈՐԳ - Հանգստացիր, սիրելիս, մեզ մոտ գնացք չկա:

ՀԱՍՄԻԿ - Ես լսում եմ: Գնացքը սուլելով ու փնջացնելով գալիս է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կուզե՞ս դուռը փակեմ:

ԳԵՎՈՐԳ - Վերջ տուր: Չե՞ս տեսնում, գառանցում է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կարծում ես, ես եմ գառանցում: Մի՞թե չես լսում գնացքի սուլոցը՝ այու-չուբու-չուբու, այու-չուբու-չուբու ֆշշալով գալիս է:

ՀԱՍՄԻԿ - Բռնիր ինձ, ես չեմ ուզում գնալ: Մրջյունները, մրջյունները...

ԳԵՎՈՐԳ - *(ծեռքը դնում է նրա ծակատին)*: Կարծես ջերմություն ունի: Խնդրում եմ, ջերմաչափը բերես:

Կարպ Կարպիչը վստահ մտռեցնում է պահարանին, դարակից հանում է ջերմաչափը: Գևորգը զարմացած հետևում է նրան:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - *(թափ տալով ջերմաչափը)*: Խնդրեմ:

ԳԵՎՈՐԳ - Դու առաջին անգամ ես մեր տանը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իմ կարծիքով, այո: Թեև... ո՞վ գիտի:

ԳԵՎՈՐԳ - Իսկ փողերիս տեղը գիտե՞ս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դժվար չէ կռահել:

Մարդիկ փողը պահում են դռա-
կի տակ:
ԳԵՎՈՐԳ - Սխալվեցիր: *(Ուզում է
ջերմաչափը դնել կնոջ թևի տակ,
նա դիմադրում է:)* Ինչ ես կանգ-
նել, բռնիր ձեռքերը:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Փոքրիկս, հանգս-
տացիր:
ԳԵՎՈՐԳ - Միայն ես եմ նրան
«փոքրիկ» ասում:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես էլ եմ կանանց
փոքրիկ ասում, բայց այս մեկը
դիմադրում է:
ԳԵՎՈՐԳ - Կին ունե՞ք:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուզում եք իմանալ՝
ամուսնացած եմ: Չդիմացավ ինձ,
ամուսնացավ հարևանի հետ: Ես
արքայավայել տարա իմ ան-
պատվությունը: Օ՛, այդ կինը տա-
րօրինակ հայացքներ ուներ
կյանքի վերաբերյալ: Նա չընդու-
նեց, որ տղամարդու ասածն ասած
է և ենթակա չէ բացատրության: Ես
չէի կարողանում ինձ զսպել:
ԳԵՎՈՐԳ - Դուք սիրո՞ւմ եք նայել
ամպերին:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հազվադեպ, երբ
խմած եմ լինում:
ԳԵՎՈՐԳ - Ինչո՞ւ եք նայում:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նայում եմ նայելու
համար:
ԳԵՎՈՐԳ - Բայց ես չեմ կարող աշ-
խատանքս թողնել, նստել կնոջս
կողքին ու նայել, թե ինչ գեղեցիկ
ամպեր են:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Պարտադրո՞ւմ է:
ԳԵՎՈՐԳ - Ամեն օր վիճաբանութ-
յան մեջ եմ:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ փող ստանա-
լիս շնորհակալություն չի՞ հայտ-
նում:
ԳԵՎՈՐԳ - Փողը ձեռքի կեղտ է,
լսել ես: Վերցնում է, դա է ասում:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չափն անցել է:
Կնոջը հնազանդեցնելու միակ ձ-
ևը ծեծն է:
ԳԵՎՈՐԳ - Հիմա ո՞վ կհամարձակվի
կնոջ վրա ձեռք բարձրացնել:
Զարշ կտան դատարան:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այո՛, ողբալի վի-
ճակում եք: Չէ՛, ստրկական դա-
րաշրջանում ենք ապրում:
Տղամարդիկ խաշ ուտող ստրուկ-
ներ են, երբևէ հասկանալու են,
որ իրենք նույնպես իրավունքներ
ունեն:
ԳԵՎՈՐԳ - *(հանում է ջերմաչափը):*
Փա՛ռք Աստծո, ջերմությունն իջել
է:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նա գեղեցիկ է
քնած ժամանակ, բայց լավ կա-
նես՝ փաստաբան վարձես: Այդ-
պիսի կնոջ հետ ապրելն առանց
փաստաբանի անհնար է: *(Դա-
դար: Իրար են նայում:)*
ԳԵՎՈՐԳ - Անխոհեմ քայլ է կատա-
րել: Դիմումը ձեզ մո՞տ է:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դիմո՞ւմը... հնա-
րավոր է:
ԳԵՎՈՐԳ - Ինչո՞ւմ է ինձ մեղադրում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դե, դժվար չէ գուշակել... Ինքդ լավ գիտես...

ԳԵՎՈՐԳ - Ամեն օր սպառնում էր ապահարզանով: Ձեր գրասենյակը քաղաքի կենտրոնում է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բնական է: Այնպիսի տարօրինակ հարցեր ես տալիս:

ԳԵՎՈՐԳ - Ուրեմն փաստաբան է վարձել...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այն էլ ինչ փաստաբան... Տեսնում եմ, որ ձիշտ ժամանակին եմ եկել:

ԳԵՎՈՐԳ - Պարոն, ես ուզում եմ ծանոթանալ նրա մեղադրանքներին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այդ մասին կխոսենք, երբ տիկինն արթնանա: Ինչ ես արել նրան, որ մինչև հիմա քնած է:

ԳԵՎՈՐԳ - Լա հիվանդ է, գիշերը մրսեց:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչո՞ւ չէիր տաքացնում նրան: Որտե՞ղ էիր, թափառական կնամուլ... Ո՞ւմ փեշի պոչն էիր բռնել: (*Դադար:*)

ԳԵՎՈՐԳ - Հինգ բուպեն լրացավ, հեռացեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իմ փաստաբանական կենսագրությունում չի եղել դեպք, որ ինձ կարողանան տնից դուրս հանել:

ԳԵՎՈՐԳ - Իսկ իմ կենսագրությունում չի եղել դեպք, որ օտար մարդը մտնի իմ տուն, ու ես չկարողանամ նրան դուրս վռնդել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լսեք, ես չեմ գնա:

Մասնագիտական հոտառությունս ինձ հուշում է, որ ես անհրաժեշտ եմ այս տանը:

ԳԵՎՈՐԳ - Ես այդ կարծիքին չեմ:

Մկսում եմ կռվել, հետո հոգնած ընկնում եմ աթոռներին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Առավոտյան այնքան էի շտապում, որ չհասցրի սուրճ խմել... Գլուխս պայթում է: Խնդրում եմ, սիրի՞ր թշնամուդ ու ինձ սուրճ տուր:

ԳԵՎՈՐԳ - Ոչ մի դեպքում:

ՀԱՍՄԻԿ - Ես սուրճ կդնեմ: (*Մտնում է խնհանց*):

Մթություն:

Պատկեր երկրորդ

Գևորգը և Կարպ Կարալիչը նստած են դեմ դիմաց:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տաք կին է:

ԳԵՎՈՐԳ - Կարծես վառարան լինի: Վառում է ու մոխրացնում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես պարտավոր եմ նրա հետ առանձին խոսել: Դե, հասկանում եք, փաստաբաններն այդ իրավունքն ունեն:

ԳԵՎՈՐԳ - Չվիճեք: Ինչ էլ որ ասի, ասացեք, որ ինքը ձիշտ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչպե՞ս թե՛ ինքն է ձիշտը: Ես տղամարդու արժանապատվություն ունեմ:

ԳԵՎՈՐԳ - Իսկ երբ կատաղած հարձակվի, փախենք զուգարան և դուռն ամուր փակենք: Ինչքան էլ սպառնա կամ աղաչի, չբացենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Լսիր, դու կնոջդ հրեշ ես ներկայացնում:

ԳԵՎՈՐԳ - Բայց և այնպես, ես նրան սիրում եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Այդքանից հետո՞:

ԳԵՎՈՐԳ - Սերը աթարին էլ կարող է կանել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Բայց նա շատ գեղեցիկ կին է:

ԳԵՎՈՐԳ - Կարծում ես, գեղեցիկ աթար չի՞ լինում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ծատ բարդ գործ է սա: Կքրտնենք մինչև վերջին շապիկը:

ԳԵՎՈՐԳ - Երեկ թունդ վիճեցինք, ասացինք իրար, ինչ որ սրտներումս կար: Առիթը չնչին բան էր, նույնիսկ չեմ հիշում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Այդ չնչին բանը, ինչպես ներկայացնում եք, մեծ վիհ է, թռչել նրա վրայով հեշտ չէ:

ԳԵՎՈՐԳ - Ինձ զայրացնում է նրա տարօրինակ սերը մրջյունների նկատմամբ: Ամբողջ օրը նստում է դռան շեմին ու նայում մրջնանոցից ներս ու դուրս անող մրջյուններին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Սերը կենդանիների նկատմամբ այնքան էլ վատ չէ:

ԳԵՎՈՐԳ - Երեկոյան գալիս եմ

տուն, տեսնում եմ, ընթրիքը պատրաստ չէ, իսկ նա մրջյունի հետ խոսում է: Ասում եմ, սիրելիս, ինչո՞ւ ընթրիքը պատրաստ չէ, ինչո՞ւ օղին սեղանի վրա չէ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Տղամարդկանց ուղեղի աշխատանքն անմիջական կապ ունի ստամոքսի հետ: Դա նրան պիտի բացատրեիր:

ԳԵՎՈՐԳ - *(սեղանի վրայից վերցնում է մի մրջյուն):* Այս միջատի պատճառով ընտանիքս քայքայվում է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ցած դիր մրջյունին:

ԳԵՎՈՐԳ - Ինչ ասացի՞ք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Նրան ցավ ես պատճառում:

ԳԵՎՈՐԳ - Այս հաստագլուխ միջատը ցավ է զգում: Դու էլ ես լսում նրա ոռնոցը:

Ներս է մտնում Հասմիկը:

ՀԱՍՄԻԿ - Անմիջապես բաց թող մրջյունին:

ԳԵՎՈՐԳ - Խնդրեմ, խնդրեմ... *(Դնում է սեղանին):* Փոքրիկս, գնա մամայի մոտ:

ՀԱՍՄԻԿ - Դու նրա ոտքը ջարդել ես:

ԳԵՎՈՐԳ - Կտանեմ հիվանդանոց, ոտքը գիպս կդնեն:

ՀԱՍՄԻԿ - Ամբողջ օրը ցավից կմռմռա:

ԳԵՎՈՐԳ - Եկեք շտապ օգնություն զանգահարենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձանգահարելու կարիք չկա: Նա փախավ:

ԳԵՎՈՐԳ - Փառք Աստծո, ծախսի տակ էի ընկնելու: *(Դադար:)* Տիկին, սուրճը պատրաստ է:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, ես քեզ համար խոհարար չեմ:

ԳԵՎՈՐԳ - Պարզ է, ես սուրճ կդնեմ: Դանձր, թե՛ քաղցր եք խմում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Սև շոկոլադով, պոպոք-պնդուկով և կոնյակով:

Գևորգը մտնում է խոհանոց:

Պատկեր երրորդ

Հասմիկը և Կարպ Կարպիչը:

ՀԱՍՄԻԿ - Գիտե՞ք, նա իմ ամուսինն է: Հինգ տարի է, միասին ենք ապրում: Հենց առաջին օրը նա ինձ ծուղակը օգեց, ասաց, որ ինձ սիրում է: Ոչ մի կին չէր դիմանա նրա հմայքին: Դժբախտաբար, ես էլ հավատացի: Իսկ հիմա չեմ հավատում, երբ ասում է՝ ուշ եմ տուն գալու... Աչքերիս առջև հայտնվում է շիկահեր քարտուղարուհին... Ասացեք, ինձ նման կնոջը կարելի՞ է դավաճանել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եթե ես լինեի ձեր ամուսինը... Եթե միայն կարողանայի ամուսին լինել:

ՀԱՍՄԻԿ - Իսկ ինչո՞ւ պիտի լինեիք: Խոսքն իմ ամուսնու մասին է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Օ՛, նա... Ամեն տղամարդ ունի իր ճաշակը:

ՀԱՍՄԻԿ - Նրա ճաշակը փոխվել է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հնարավոր է, տիկին: Նրա նման տղամարդուն չես կարող փակի տակ պահել:

ՀԱՍՄԻԿ - Ավանդ... Ես չգիտեմ՝ ինչ անել: Բոլոր տղամարդիկ ստախոսներ են: Ես հպարտ եմ, որ կին եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես էլ հպարտ եմ, որ կին չեմ: Բայց դա՛ մեր մեջ ասած: *(Դադար:)*

ՀԱՍՄԻԿ - Ձեր դեմքն ինձ ոչինչ չի ասում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուզում եք, որ նա երգի՞:

ՀԱՍՄԻԿ - Ուզում եմ իմանալ՝ մենք ծանոթներ ենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Առիթ չի եղել, որ հանդիպենք:

ՀԱՍՄԻԿ - Իսկ ի՞նչ գործ ունեք մեր տանը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչպե՞ս թե՛ ինչ գործ ունեմ... Իսկ ինչո՞ւ պիտի գործ չունենամ: Տիկին, ես ձեր պահապան հրեշտակն եմ, եկել եմ կանխելու հանցագործությունը: Տիկին, հաշվի առնելով վերլուծելու իմ ընդունակությունը, ձեր կյանքին վտանգ է սպառնում:

ՀԱՍՄԻԿ - Մեր տանը... և ո՞ւմ կողմից:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Գրողը տանի, ի-
հարկե, ամուսնուդ: Եւ քեզ չի՞
սիրում: Ասացեք, նա ո՞նչ է տուն
գալիս:

ՀԱՍՄԻԿ - Այո՛, ես նրան ատում եմ,
այնպես եմ ատում, որ կորցնում
եմ բանականությունս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ահա՛ թե ինչ...
Սարսափելի է հայտնվել բանա-
կանությունը կորցրած կնոջ փա-
փուկ թևերի մեջ:

ՀԱՍՄԻԿ - Մի՞թե դա անբնական է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛չ, տիկին, դա
չափից շատ բնական է, այնքան
բնական... Բայց չեք նկատում,
ծեր ոտքերի տակ հողը շարժվում
է:

ՀԱՍՄԻԿ - Երկրաշարժ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ավելի վատ բան.
Ծեր ընտանիքն է քայքայվում: Ա-
սացեք, գիշերն ի՞նչ էր անում այդ
ողորմելի ամուսինը:

ՀԱՍՄԻԿ - Ընկել էր իմ ետևից... Մի
կերպ ազատվեցի նրա ծանկերից
ու թաքնվեցի մրջնանոցի ետևում:
Պառկել էի խոնավ գետնին,
ցրտից դողում էի, իսկ նա ընկավ
բազմոցին ու քնեց:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Գուցե հոգնած էր:

ՀԱՍՄԻԿ - Ինչի՞ց էր հոգնել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Աշխատանքից,
տիկին, հոգնած գալիս է տուն, որ
քնի, հանգստանա, ի վերջո, սեքս
անի: Հո դեմ չեք:

ՀԱՍՄԻԿ - Ես կողմ եմ, բայց նա մեկ
շաբաթ է՝ ինձ չի մոտենում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հրաժարվում է
ձեզ նման գեղեցկուհուց: Անհնա-
րին է:

ՀԱՍՄԻԿ - Դուք կարծում եք, որ ես
գեղեցկուհի՞ եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նյարդային հա-
մակարգս սկսեց լարվել, բայց
անցնենք առաջ: Հետո ի՞նչ եղավ:

ՀԱՍՄԻԿ - Մի՞թե մրջյունները կեն-
դանի արարածներ չեն, ինչպես
ես ու դուք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, Աստված
մրջյուններին հենց այնպես չի
ստեղծել: Նրանք երկրագնդի լի-
իրավ բնակիչներ են:

ՀԱՍՄԻԿ - Իսկ նա ուզում էր քանդել
մրջնանոցը: Եթե չեք հավատում,
հարցրեք Վաղոյին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Վաղոն ո՞վ է:

ՀԱՍՄԻԿ - Մեր հարևանը: Ճանա-
չում եք:

**Պատի կողմից լսվում է հագի
ձայն:**

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ա՛յս, հա՛, ո՞նց չեմ
ճանաչում այդ սրիկային:

ՀԱՍՄԻԿ - Ուզում եք, պատը ծեծեմ,
ներս մտնի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛չ, մեկ ուրիշ ան-
գամ: Ես ինքս նրա հարցերը կլու-
ծեմ: Եվ այսպես, ի՞նչ էր մտքինը:

ՀԱՍՄԻԿ - Եւ ատում էր, որ մրջյուն-

ները խանգարում են մեր երջանկությանը: Ինչպե՞ս են այդ փոքրիկ մրջյունները խանգարելու:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նույնիսկ մի փոքրիկ, աննշան արարած կարող է պատճառ դառնալ ապահարզանի:

ՀԱՍՄԻԿ - Բայց մեր երջանկության համար չենք զոհաբերելու ամբողջ մրջնանոցը: Գիշերն ուզում էր ծծմբաթթու լցնել մրջնանոցը: Միայն լսեիք, ինչպես էին ոռնում մրջյունները, մարդու նման լաց էին լինում: Այսքանից հետո ես նրա հետ ինչպե՞ս ապրեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուրեմն ձիշտ ժամանակին եմ եկել: (*Պայուսակից հանում է թուղթ ու գրիչ:*) Եվ այսպես, ինչի՞ց սկսենք:

ՀԱՍՄԻԿ - Մի ժամանակ մենք այնպես էինք իրար սիրում: Անկողինը կարծես դրախտավայր լիներ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, տղամարդկանց ձեր պատճառով դրախտից արտաքսեցին: Մոռանանք եդեմական աշխարհն ու անցնենք երկրային գործերին: Դուք նրան չե՞ք սիրում:

ՀԱՍՄԻԿ - Անգամ դեմքն եմ ուզում մոռանալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք ձիշտ ուղու վրա եք: Բնական է, նա էլ ձեզ չի սիրում:

ՀԱՍՄԻԿ - Ինչո՞ւ: Պատճառն իր քարտուղարուհին է: Տեսնլ եք նրանց միասին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես նրանց ամենօր եմ տեսել: Նույն կաբինետում են սուրճ խմում:

ՀԱՍՄԻԿ - Ինչքան տգեղ է ու հակահիգիենիկ սեքս անել բազմոցի վրա: Պարոն, դուք նրանց թույլ չպիտի տայիք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կարծում եք, իմ աչքերի առա՞ջ էին այդ բանն անում: Կներեք: Ես՝ Կարպ Կարպիչս, թույլ չէի տա: Ես կողմ եմ բարոյականությանը:

ՀԱՍՄԻԿ - Նա գեղեցիկ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՞վ:

ՀԱՍՄԻԿ - Հիմար պատասխան: Սիրուհին ինձնից գեղեցիկ է: Իսկ մարմինը գե՞ր է, թե՞ նիհար: Ես շաբաթը երեք անգամ գնում եմ շեյփինգի: Տեսնո՞ւմ եք, ինչքան պիրկ են կրծքերս: Կարող եք ձեռք տալ: Մի ամաչեք, դուք առաջինը չեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, համոզված եմ, որ չեք ստում: Ձեր ամբողջ մարմինն է պիրկ:

ՀԱՍՄԻԿ - Առանց ձեռք տալու ինչպե՞ս իմացաք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - (*ձեռք է տալիս*): Ձեր կրծքերն իսկական զսպանակներ են:

ՀԱՍՄԻԿ - Իսկ նա չի նկատում: Խղճուկ, ողորմելի, կնամուլ... Ու-

րեմն, ասում եք, որ նա սիրուհի ունի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես այդպիսի բան չասացի: Ես ասացի՝ նրանք նույն կաբինետում են սուրճ խմում:

ՀԱՍՄԻԿ - Պարոն, դուք ստախոս եք: Ա՛, նա ձեզ կաշառե՞լ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք ինձ վիրավորում եք: Ես անկաշառ փաստաբան եմ: Ինձ հետաքրքրում են միայն փաստերը: Եվ այսպես, նրա հետ չե՞ք ուզում ապրել:

ՀԱՍՄԻԿ - Այսքանից հետո... երբեք: Ես ինձ արժանի չեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - (*գրում է*): Կարո՞ղ եք ասել, երբվանից են սրվել ձեր հարաբերությունները:

ՀԱՍՄԻԿ - Երբ նոր քարտուղարուհին ոտք դրեց օֆիս: Ուշ է տուն գալիս, միանգամից մտնում է անկողին ու քնում: Երբ նույնիսկ «բարի գիշեր» չի ասում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նրան չե՞ք վստահում:

ՀԱՍՄԻԿ - Իսկ տղամարդիկ արժանի են վստահության... Բավական է փեշ տեսնեք, ամեն սրբություն մոռանում եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Անձամբ ես իմ մասին այլ կարծիքի եմ:

ՀԱՍՄԻԿ - Զիչ առջջ ի՞նչ էիք անում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Փորձում էի տեսնել «զսպանակի» պրկությունը: Դա աշխատանք է, տիկին:

Աշխատանքն է մարդուն մարդ դարձնում:

ՀԱՍՄԻԿ - Համենայնդեպս, ոչ ձեզ:

Դադար: Կատաղած իրար են նայում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեր ամուսինը ուշ է տուն գալիս, որովհետև աշխատում է:

ՀԱՍՄԻԿ - Ես ուշ է տուն գալիս, որովհետև սիրուհու հետ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛չ, աշխատում է:

ՀԱՍՄԻԿ - Սիրուհու հետ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Համառությունը ձեզ չի սազում:

ՀԱՍՄԻԿ - Լավ էլ սազում է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հետո ասում են՝ նորից ամուսնացիր... Երկու օրում ինՖարկտ կստանամ:

ՀԱՍՄԻԿ - Ա՛, դուք նույնիսկ ամուսնացած չեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եվ մտադրություն չունեմ: Խելացի տղամարդը չի ամուսնանա:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, խելացի կինը չպիտի ամուսնանա:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Խելացի կինը պիտի զիջի ամուսնուն:

ՀԱՍՄԻԿ - Խելացի տղամարդը պիտի հարգի կնոջ իրավունքները:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ճիշտ են անում մահմեդականները, որ կնոջը չադրա են հագնում:

ՀԱՍՄԻԿ - Կեցցեն ազատասեր ամազոնուհիները:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեզ հետ անհնար է ապրել: Ամուսինդ ձիշտ է անում, որ բաժանվում է:

ՀԱՍՄԻԿ - Իսկ... իսկ դուք չեք ամուսնանում, որովհետև անզոր եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, ինձ հունից մի հանեք, հակառակ դեպքում ինձ չեմ տիրապետի:

ՀԱՍՄԻԿ - Անզոր, անզոր...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նորից կրկնվեց... Այն անառակը գլխիս նույն բանն էր անում: *(Ձեռքը տանում է գրպանը:)* Ձեռքերդ վեր, թե չէ կկրակեմ:

ՀԱՍՄԻԿ - *(ձեռքերը բարձրացնում է):* Ո՞ւմ եք սպասում, կրակե՞ք: Հանուն կանանց ազատության պատրաստ եմ ինձ զոհաբերել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ափսոս, ատրճանակս չեմ բերել: Բայց դա քո վիճակը չի թեթևացնի: Կխեղդեմ այս մատներով:

ՀԱՍՄԻԿ - Եթե մոտենաք, կծչամ... Ամուսինս քեզ չի ների: Անմիջապես ներողություն խնդրեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ներեցեք, տիկին, խոստանում եմ, որ ձեզ չեմ սպանի:

ՀԱՍՄԻԿ - Դա բավական չէ, դուք ինձ այնպես վախեցրիք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կարող եմ ձեր վախը չափել:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, դուք պրոֆեսիոնալ վախեցնող եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նորից չսկսենք...

Դուք ամեն ինչում ձիշտ եք: Եվ այսպես, համաձայն եք ապահարզան տալ քաղաքացի Գևորգին, այսինքն՝ ձեր ամուսնուն:

ՀԱՍՄԻԿ - Ես ասում եմ... ո՛չ, ո՛չ, ո՛չ: Նա ապահարզան չի ստանա: Ես կբաժանվեմ բոլոր տղամարդկանցից, բայց ոչ նրանից: Նա պիտի տառապի: Համենայնդեպս, ես կստիպեմ, որ զգա տառապանքի գինը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Զմահաձ տիկինը վերջնական խոսքն ասաց:

ՀԱՍՄԻԿ - Այո՛:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դե որ այդպես է, ես այստեղ անելիք չունեմ: Ցտեսություն, տիկին: *(Վերցնում է պայուսակը, ուզում է գնալ:)*

ՀԱՍՄԻԿ - Սպասե՛ք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այո՞:

ՀԱՍՄԻԿ - Գուցե տրամադրությունս փոխվի: Ես իմ տրամադրության գերին եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ի դեպ, ձեր ամուսինն ասում էր, որ խանդում եք իրեն, չափից շատ եք խանդում:

ՀԱՍՄԻԿ - Այդ ե՛ս եմ խանդում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նա ասում էր, որ դուք թեթևամիտ եք, ինքնահավան, տրամաբանությունից զուրկ, միահեծան տնային տնտեսուհի եք:

ՀԱՍՄԻԿ - Ի՞նչ, ես թեթևամիտ եմ, միահեծան... Հայտնե՛ք նրան, որ

ինքը դաժան ինկվիզիտոր է: Եւ էլ ինձ չի սիրում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Երազելն իսկ ավելորդ է:

ՀԱՍՄԻԿ - Չգում եմ, որ արյուն է հեղվելու: Կսպանեմ...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բայց ինչո՞ւ, տիկին, կբաժանվե՞ք, ամեն մեկդ նոր կյանք կսկսեք:

ՀԱՍՄԻԿ - Արյան գետեր են հոսելու, կառաջանա արյան լճակ, ու ես լող եմ տալու, որ հոգիս հանգստանա:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չգրո՞ւյշ, չխեղդվե՞ք:

ՀԱՍՄԻԿ - Փրկագոտի կհագնեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բաժանումն անխուսափելի է:

ՀԱՍՄԻԿ - Անդառնալի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեզ ի՞նչ պատահեց:

ՀԱՍՄԻԿ - Լսում եք, գնացքը սուլում է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ նա ասում էր, այստեղ ռելսեր չկան:

ՀԱՍՄԻԿ - Այդ գնացքով եմ հեռանալու: Կգնամ, կկորչեմ: Եւ կարող է հազար սիրուհի պահել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իմ կարծիքով, նրան մեկն էլ բավական է: *(Թղթեր է լրացնում:)*

ՀԱՍՄԻԿ - Ես ձեզ եմ հարցնում, այսքան ժամանակ խոհանոցում ի՞նչ է անում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, սուրճ է եփում:

ՀԱՍՄԻԿ - Եվ դուք հավատո՞ւմ եք: *(Դադար:)* Մեր բոլոր դանակներն այնտեղ են:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հետո՞ ինչ:

ՀԱՍՄԻԿ - Եւ ինձ ատում է, հետևաբար, կուզենա ինձնից ազատվել: Զեզ էլ կսպանի որպես վկայի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չեմ հավատում:

ՀԱՍՄԻԿ - Նրա ատելությունը սահմաններ չի ծանաչում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինձ թվում է, նա խելացի մարդ է, հումանիստ:

ՀԱՍՄԻԿ - Եւ ինչ հումանիստ... Իսկ որ ուզում էր մրջնանոցը ծծմբաթթու լցնել, սիրո արտահայտության ձև է: Ես իմ մարմնով փակեցի ծանապարհը: Տեր Աստված, նա ատելությունից կորցրել է մարդկային դեմքը: Ես նրան չեմ ծանաչում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ամեն ինչ չափազանցնում եք: Ընդհակառակը, նրա դեմքը համակրելի է, պահվածքը՝ բարեկիրթ, թեև նրա մոտ տարօրինակություններ նկատեցի, բայց դա գործին չի առնչվում:

ՀԱՍՄԻԿ - *(Մոտենում է խոհանոցի դռանը):* Չեք լսում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես չեմ լսում: Ինչպե՞ս կարող եմ չլսել... Բայց ի՞նչ պիտի լսեմ:

ՀԱՍՄԻԿ - Լա դանակ է սրում: Չէ՞ք լսում խզզոցը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այո՛, խզզում է կամ էլ՝ բզզում:

ՀԱՍՄԻԿ - Խնդրում եմ, կողքիցս չհեռանաք: Դուք պարտավոր եք ինձ պաշտպանել, խոստացեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Խոստանում եմ: Ես այնպես եմ խոստանում, ինչպես ոչ մի արարած չի կարող ինձ պես խոստանալ:

ՀԱՍՄԻԿ - Դե, պատրաստվե՞ք վատթարին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ժամանակին ֆուտբոլ եմ խաղացել, քացով քամակին՝ և գոլ:

ՀԱՍՄԻԿ - Պատրաստվիր, գալիս է... Հիմա դանակը ձեռքին ներս կմտնի ու մեզ կսպանի: Գրկիր ինձ:

Գրկախառնվում են: Ներս է մտնում Գևորգը՝ դանակը ձեռքին, տեսնում է կնոջը Կարպ Կարպիչի գրկում:

ԳԵՎՈՐԳ - Չխանգարեցի՛:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չմտածե՞ք այն, ինչ տեսնում եք:

ԳԵՎՈՐԳ - Ես ոչինչ չեմ տեսնում: *(Մատը քսում է դանակի սայրին:)*

Ես կույր եմ, իրավունք չունեմ աչքիս տեսածին հավատալու: Տիկին, դու պարոնի գրկում չե՞ս: Ասա՛ ինչ: *(Մոտենում է: Նրանք սեղանի շուրջը պտտվում են:)*

Դուք մոռացել եք, որ ես տանն եմ, որ դու դեռ իմ կինն ես:

ՀԱՍՄԻԿ - Չմոտենանս, մարդասպան:

ԳԵՎՈՐԳ - Ձեր արարքը, մեղմ ասած, անպարկեշտ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ցած դիր դանակը: **ԳԵՎՈՐԳ** - Մեկ ժամ է՝ սրում եմ, մեկ ժամ է՝ մտածում եմ մեր անցած կյանքի մասին: Հինգ երկար տարիներ իրար հետ ենք ապրել... Սա վերջն է...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լսե՞ք, պարոն, մենք գիտակից մարդիկ ենք:

ԳԵՎՈՐԳ - Դու մրջյուն ես, հայտնվում ես ամենաանցանկալի տեղում: Բաց թող կնոջս:

ՀԱՍՄԻԿ - Չթողնեն, խոստացել ես: *(Պտտվում են:)*

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես կկատարեմ իմ խոստումը... Լսե՞ք, պարոն, ի տարբերություն մրջյունների, մենք կարող ենք նստել սեղանի շուրջ և վերլուծել իրավիճակը: Ես համաձայն եմ, ողբերգություն է, բայց ի՞նչ անդառնալի: Ես ձեր կնոջը կվերադարձնեմ, եթե դանակը դնեք ցած:

ԳԵՎՈՐԳ - *(երևում է, ինչպես է ապխտած ձուկ գնում):* Ասետրինա է, 100 000 դրամ եմ ծախսել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեր հարևանի անունն ի՞նչ է:

ԳԵՎՈՐԳ - Վաղո:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - (*մոտենում է պատին*): Վաղո անունը կրող միջանո, ապա դուրս եկ պատի արանքից: (*Պատի միջից երևում է Վաղոյի դեմքը: Կարպ Կարպիչը բռնում է նրա քթից:*) Ծպի՛րն, համարձակվում ես գողանա՛լ ուրիշի ունեցվածքը:

ԳԵՎՈՐԳ - Նա՛ է գողանում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Էլ ո՛վ: Անհեռատեն կապիկ, գող, սրիկա, հաստավիզ մրջյուն:

ՎԱՂՈ - Չհամարձակվես ինձ վիրավորել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Դու գիտե՛ս, ես ով եմ:

ՎԱՂՈ - Չէ՛:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Հիմա կիմանաս...

Քիթը նրա համար է, որ գտնվի դեմքի վրա, ձակատից ներքև, շուրթերից վերև, երկու թշերի արանքում: Դու ինձ մի ստիպիր, որ քիթը տեղադրեմ ներքևի թշերի արանքը, հասկացա՛ր, հարևա՛ն: Գլուխդ ետ տար, վաղը ոստիկանությունը քեզնով կգբաղվի:

ՎԱՂՈ - Վաղոյին վախեցնողը չի ծնվել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Դե՛, փախիր, փրկվիր, հաստավիզ մրջյուն: Ինչպե՛ս ինձ գայրացրեց... (*Գևորգին.*) Դե բավական է դանակը թափահարես, մարդ սպանելն այդքան հեշտ բան չէ, նստիր:

ԳԵՎՈՐԳ - Ես պատրաստ եմ ծայրահեղ քայլի դիմել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ուզում ես մնացած կյանքդ բանտում անցկացնել: Կինդ դուրդ չի գալիս, գնա սիրուհուդ մոտ: Պարտադիր չէ, որ նրան սպանես:

ԳԵՎՈՐԳ - Ես սիրուհի չունեմ:

ՀԱՍՄԻԿ - Իսկ քարտուղարուհիդ:

ԳԵՎՈՐԳ - Նա ինձ մոտ աշխատում է, սուրձ է եփում:

ՀԱՍՄԻԿ - Ներքնաշորերդ չի՞ լվանում:

ԳԵՎՈՐԳ - Չհամարձակվես ինձ ծաղրել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Պարո՛ն, նստիր: (*Գևորգը նստում է:*) Դուք էլ նստեք, տիկին: Դե բավական է ինձ գրկեք, բաց թողեք:

ՀԱՍՄԻԿ - Նա ինձ կսպանի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Տիկին, էլ ինչո՞ւ եմ ես այստեղ: Ես թույլ չեմ տա, որ նա ձեզ մատով դիպչի:

ԳԵՎՈՐԳ - Նա իմ կինն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ո՛չ, հարգելի՛ս, այս պահից սկսած դուք օտարներ եք: Ես ձեզ բաժանել եմ օրենքի ամբողջ խստությամբ:

ԳԵՎՈՐԳ - Դու նրան չես ստանա: (*Ոտքի է կանգնում, նրանք էլ են կանգնում:*)

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Պարո՛ն, ինձ տուր դանակը: Քրեական օրենսգրքով կնոջը սպանելը դատապարտելի է:

ԳԵՎՈՐԳ - Չեմ տա, իմ սեփականությունն է: *(Մտնում է խոհանոց: Կարպ Կարպիչն ու Հասմիկն իրար են նայում:)*

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տանն ատրժանակ ունե՞ք:

ՀԱՍՄԻԿ - Չգիտեմ, ավելի լավ է փախչենք: Նա մեզ կսպանի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինձ վրա սթափ մարդու տպավորություն էր թողնում, բայց, ափսոս, սխալվեցի: Մենք իրավունք չունենք հանձնվելու: Միջին դարերում եռացած ջրով էին պաշտպանվում:

ՀԱՍՄԻԿ - Վառարանը խոհանոցում է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բա լավ, էս տանը մի գենք չկամ: Ախր, նրա ձեռքով զոհվելը վիրավորական է:

Ներսէ մտնում Գևորգը:

ԳԵՎՈՐԳ - Եկա ասելու՝ վերցրե՞ք դանակը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դրեք սեղանին: *(Գևորգը դնում է:)* Մեկ քայլ ետ գնացեք: *(Գևորգը ետ է գնում: Կարպ Կարպիչը վերցնում է դանակը:)* Սա իսկական մարդասպանի դանակ է: Նստե՛ք: Եկեք քննարկենք ձեզ հուզող բոլոր հարցերը: Դուք այսպես չեք կարող ապրել, մի օր իրար կսպանեք: Որպեսզի կանխեն ողբերգությունը, ձեզ և ձեր ունեց-

վածքը կբաժանեմ հավասար մասերի: *(Դանակով փորձեր անելով քայլում է, Հասմիկն ու Գևորգը վախեցած նրան են նայում:)* Եվ այսպես, այս տունն իմ է պատկանում:

ԳԵՎՈՐԳ - Սա իմ հայրական տունն է:

ՀԱՍՄԻԿ - Ես այստեղ եմ գրանցված, ես այստեղ եմ ապրում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այն կբաժանենք երկու մասի: *(Հանում է կավիճը և գծում բաժանման գիծը:)* Աջ մասում կապրի տիկինը, ձախում՝ պարոնը:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, ես ուզում եմ ձախ մասում ապրել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Պարոն, դեմ չե՞ք:

ԳԵՎՈՐԳ - Ինձ համար միևնույն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկինը կապրի ձախ մասում:

ՀԱՍՄԻԿ - Բայց ես ուզում եմ ապրել աջ մասում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկինը ապրում է աջ մասում:

ՀԱՍՄԻԿ - Տիկինն ուզում է ապրել ձախ մասում: Ո՛վ է ջրելու իմ ծաղիկները:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հանգստացե՛ք, տիկին, մենք այն կիսելու ենք: Պարոն, ծաղկամանը դիր բաժանման գծի վրա: *(Գևորգը դնում է:)* Այս կողմից կարող եք ջրել:

ՀԱՍՄԻԿ - Ծնորհակալություն, իսկ

որտեղ ենք քնելու: Մենք մի մահ-
ձակալ ունենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Պարոնը կքնի
բազմոցին:

ԳԵՎՈՐԳ - Ոչ մի դեպքում, ես մահ-
ձակալը չեմ զիջի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք տղամարդ
եք:

ԳԵՎՈՐԳ - Հետո՞ ինչ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Պիտի զիջող լի-
նեք փափկասուն կնոջը:

ԳԵՎՈՐԳ - Ո՛չ, այս մահձակալին
քնել են հայրս ու մայրս, հիմա ես
եմ քնելու:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, գուցե դուք
քնեք բազմոցին:

ՀԱՍՄԻԿ - Այդ էր պակաս: Մահձա-
կալը ես եմ օժիտ բերել: Ուրիշ
բացատրություն չի կարող լինել:
Մայրս կարող է հաստատել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այդ ժամ մենք այն
կկիսենք: Կացին ունե՞ք:

ԳԵՎՈՐԳ - Ո՛չ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Օգնիր, մահձա-
կալը դնեմ բաժանարար գծի
վրա: *(Մահձակալը տեղափոխում
են:)* Էլ ի՞նչ արժեքավոր բան ու-
նեք: Ա՛, մատանիները... *(Վերց-
նում է մատանիները:)*

ՀԱՍՄԻԿ - Այս մատանին այնքան
էր սազում իմ մատին: Ես թանկ
հիշողություններ ունեմ դրա հետ
կապված:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեզ ոչ ոք չի խան-
գարում, որ ապրեք թանկ հիշո-

ղություններով: Ես, որպես իրա-
վաբան, ձեզ հայտարարում եմ ա-
մուսնալուծված: Տիկին, պարոն,
կյանքը շարունակվում է: Դուք
ստացաք ձեր ուզած ազատութ-
յունը: Ձեր առջև նոր դռներ են
բացվում, նոր հորիզոններ:
Մտածե՛ք նոր կյանք սկսելու մա-
սին: Օ՛ֆ, գլուխս այնպես է ցա-
վում, մի բաժակ սուրճ էլ
չտվեցիք:

ՀԱՍՄԻԿ - Գնա՛մ, սուրճ պատրաս-
տեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛չ, շնորհակալ
եմ:

ԳԵՎՈՐԳ - Կարո՞ղ եմ ես դնել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կանգնեք ամեն
մեկդ ձեր տարածքում: Ես ինձ
համար սուրճ կեփեմ: *(Վերցնում
է դանակը:)* Ի դեպ, դանակը խո-
րությամբ չեք սրել: *(Մտնում է
խոհանոց:)*

Պատկեր չորրորդ

**Հասմիկն ու Գևորգը կանգնած
են բաժանարար գծի տարբեր
կողմերում:**

ԳԵՎՈՐԳ - Մի բաժակ ջուր տուր,
խնդրում եմ:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ:

ԳԵՎՈՐԳ - Դու բարի սիրտ ունես:

ՀԱՍՄԻԿ - Մի՞ շողոքորթիր, ջուր չեմ
տա:

ԳԵՎՈՐԳ - Խնդրում եմ, մի կործանիր մեր ընտանիքը:

ՀԱՍՄԻԿ - Բաժանումից հետո հիշեցիր, որ ընտանիք ունես:

ԳԵՎՈՐԳ - Ես չգիտեմ, որն է իմ մեղքը: Անիմաստ կասկածանքների պատճառով դու ուզում ես բաժանվել:

ՀԱՍՄԻԿ - Վերջ տուր:

ԳԵՎՈՐԳ - Բայց չէ՞ որ ինձ ծանաչում ես:

ՀԱՍՄԻԿ - Այո, ծանաչում էի, կարծում էի՝ ինձ սիրում ես, բայց սխալվեցի:

ԳԵՎՈՐԳ - Ես կփորձեմ հասկանալ քեզ: *(Անցնում է գիծը:)* Մենք կնստենք դեմ դիմաց, առանց վկայի ու կքննարկենք: Մենք հաշտվելու հնարավորություն ունենք, սիրելիս:

Ներս է մտնում Կարպ Կարապիչը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեռքերդ հեռու տար օտար մարմնից: Դու չես պատկերացնում գործի լրջությունը: Ես քեզ դատի կտամ ոտնձգության համար: Սա սահման է՝ արյունով գծված, միջազգային օրենքով հաստատված:

ԳԵՎՈՐԳ - Ես ուզում եմ խոսել կնոջս հետ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լախկին, նախկին կնոջ հետ: Իսկ դա կախված է իմ բարի ցանկությունից, բայց ես ասում եմ՝ ո՛չ: Տիկին, ինձ հետ հա-

մաձայն եք: Լռությունը համաձայնության նշան է:

ԳԵՎՈՐԳ - Մինչև ձեր հայտնվելը մենք ապրում էինք խաղաղ ու երջանիկ: Ո՞ւմ ընտանիքում թյուրիմացություն չի լինում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Պարոն, սա կոչվում է թյուրիմացություն: Դանակով հարձակվել եք թույլ ու անպաշտպան կնոջ վրա: Եթե ես չլինեի, նրան կսպանեիք:

ԳԵՎՈՐԳ - Ես պատահաբար բարձրացրի դանակը: Փոքրիկս, դու հավատում ես, որ ես կարող եմ քեզ սպանել:

ՀԱՍՄԻԿ - Իսկ ինչո՞ւ էի փախչում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լա սարսափահար էր, նա հասկացավ, որ թույլ արարած է ու փախավ քեզանից, ընկավ ուղիղ իմ գիրկը: Բնական է, ես, որպես տղամարդ, պարտավոր էի պաշտպանել նրան: Պարոն, հասկացեք, այս գիծը ես չեմ գծել, օրենքն է գծել: Խնդրում եմ պահպանել գծված սահմանը: Մի ստիպեք փշալարեր անցկացնեմ ու միացնեմ հոսանքին: Տիկին, խոստանում եմ անշարժ գույքի գործակալ ուղարկել, որ գնի ձեր մասնաբաժինը, հակառակ դեպքում կհայտնվեք նախկին ամուսնուդ որոգայթում: Ես գնամ, տեսնեմ սուրճը եփել է: *(Մտնում է խոհանոց:)*

Հասմիկը հավի միս է ուտում:

ԳԵՎՈՐԳ - Ես էլ եմ քաղցած: Լավ կանեիր, տաքացնեիր, նոր ուտեիր: Բուրդ դո՞ւ ես ուտում, դա իմ սիրած կտորն է:

ՀԱՍՄԻԿ - Ժամանակին տուն գալիս: Երեկ ամբողջ օրը սպասում էի, որ ամուսինս գար, միասին ուտեինք ու սպիտակ գինի խմեինք: Ո՞ր էիր: Իմ կենացը: *(Խմում է:)*

ԳԵՎՈՐԳ - Հանուն մեր երջանիկ տարիների՝ մի փոքր հացի վրա հավի թեկուզ մեջք դիր, մի բաժակ էլ գինի:

ՀԱՍՄԻԿ - Չհամարձակվես գիծն անցնել: Այդ տարիներին ես միայն տառապել եմ:

ԳԵՎՈՐԳ - Ստում ես, ինքդ էլ չես հասկանում՝ ինչ ես ասում: Այս մարդը քեզ կախարդել է: Ուշքի արի, քանի դեռ հնարավորություն կա ուղղելու: Հիշում ես, գնացել էինք գազանանոց: Միայն մենք էինք ու կապիկները: Երբ սկսեցինք համբուրվել, նրանք էլ սկսեցին մեզ ընդօրինակել: Մենք երջանիկ էինք:

ՀԱՍՄԻԿ - Ոչինչ չեմ հիշում: Իմ ուղեղը լցված է միայն վատ հիշողություններով: Զարտուղարուհիդ քեզ ձեռք է տվել: Դու նրան համբուրել ես: Զգվելի է, էլ չմոտենաս ինձ:

ԳԵՎՈՐԳ - Երդվում եմ, ես նրան ձեռք չեմ տվել:

ՀԱՍՄԻԿ - Գիշերը ցրտից սառչում էի, իսկ դու սենյակում խռմփացնում էիր:

ԳԵՎՈՐԳ - Ես չեմ խռմփացնում:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, խռմփացնում ես:

ԳԵՎՈՐԳ - Դու ծիշտ ես, սիրելիս, մյուս բուրդ չուտես: Հիշիր, մենք քրիստոնյաներ ենք, իսկ այնտեղ ասվում է՝ սիրիր թշնամուդ, հավի բուրդ տուր ամուսնուդ:

ՀԱՍՄԻԿ - Զարտուղարուհիդ քեզ ինչո՞վ է կերակրում:

ԳԵՎՈՐԳ - Միայն սուրճ է պատրաստում:

ՀԱՍՄԻԿ - Ամբողջ օրը սո՞ւրճ եք խմում:

ԳԵՎՈՐԳ - Ճաշին պիցցա ենք պատվիրում:

ՀԱՍՄԻԿ - Գնա, սիրուհուդ հետ պիցցա կեր: Ինչո՞ւ ես ժամանակ վատնում, գնա՛ նրա մոտ: Նա քեզ է սպասում: *(Դադար:)*

ԳԵՎՈՐԳ - Հիշում ես, ուզում էինք գնալ Աֆրիկա՝ գետածի տեսնելու:

ՀԱՍՄԻԿ - Իմ մեջ ոչ մի հիշողություն չի մնացել:

ԳԵՎՈՐԳ - Ուրեմն այդպես, ինչպես նա է ասում, մենք օտարներ ենք: Լավ, ես հեռուստացույց կնայեմ:

ՀԱՍՄԻԿ - Իմ գլուխը ցավում է, անջատիր:

ԳԵՎՈՐԳ - Հեռուստացույցը իմն է, ես եմ գնել:

ՀԱՍՄԻԿ - Միայն կեսն է քոնը, եթե
զայրացնես, իմ բաժինը կջար-
դեմ:

ԳԵՎՈՐԳ - Եթե չեմ նայելու, իմ ին-
չին է պետք հեռուստացույցը,
ջարդիր:

ՀԱՍՄԻԿ - Իսկապես: *(Վերցնում
են:)* Գցեցինք՝ մեկ, երկու, երեք:

ԳԵՎՈՐԳ - Էլ ի՞նչ ունենք ընդհա-
նուր... ծաղկամանը:

ՀԱՍՄԻԿ - Ձեռք չտաս:

ԳԵՎՈՐԳ - Կակտուս, աֆրիկյան
բույս է, փշոտ, առանց ջրի էլ կա-
րող է դիմանալ, իսկ մենք չենք
սիրում Աֆրիկան: Գցեցինք: Արի
այնպես անենք, որ ոչ մի հիշո-
ղություն չմնա մեր երազանքնե-
րից: *(Գցում են:)*

ՀԱՍՄԻԿ - Հերթը հասավ մահձա-
կալին: Ես չեմ քնի քեզ հետ նույն
մահձակալին:

ԳԵՎՈՐԳ - Սղոցենք երկու մասի,
չէն ամսոսում:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ:

ԳԵՎՈՐԳ - Ասում էիր՝ քո օժիտն է,
մայրդ շատ էր հավանում: Ի դեպ,
մորդ զանգե՛լ ես:

ՀԱՍՄԻԿ - Հէ՛, նա քնում է մինչև
տասնմեկը:

ԳԵՎՈՐԳ - Նա էլ որ գա, իսկական
գժանոց կդառնա:

ՀԱՍՄԻԿ - Չվիրավորեն իմ մորը:

ԳԵՎՈՐԳ - Կացին չունենք, բայց
սղոց ունենք, որտեղ է:

ՀԱՍՄԻԿ - Խորդանոցում:

ԳԵՎՈՐԳ - Ա՛խ, ոնց եմ սղոցելու:
Բարակ-բարակ շերտերի եմ բա-
ժանելու:

ՀԱՍՄԻԿ - Իսկ որտեղ ենք քնելու:

ԳԵՎՈՐԳ - Չգիտեմ, իմ մեջ ոչնչաց-
նելու մարմաջ է մտել: Ոչինչ չեմ
ուզում թողնել... տրա-լյա-լյա:
Զարդել, փշրել, ոչնչացնել, հո՛պ-
լյա: *(Պարում է: Դադար:)*

ՀԱՍՄԻԿ - Ես ուզում եմ մտնել լվա-
ցարան:

ԳԵՎՈՐԳ - Չհամարձակվես սահ-
մանն անցնել:

ՀԱՍՄԻԿ - Դա բռնություն է:

ԳԵՎՈՐԳ - Մաքսատան աշխատա-
կիցը քաղցած է: Կերակրիր
նրան, հակառակ դեպքում թույլ
չեմ տա սահմանն անցնել:

ՀԱՍՄԻԿ - Դու կմնաս քաղցած այն-
քան ժամանակ, մինչև ծնկի գաս:

ԳԵՎՈՐԳ - Ուրեմն տակդ արա:

ՀԱՍՄԻԿ - Եվ կանեմ: Ես քեզնից
չեմ ամաչում:

ԳԵՎՈՐԳ - Բարձրացիր սեղանի
վրա: Դրանից հարմար տեղ չկա:

ՀԱՍՄԻԿ - Եվ կբարձրանամ, որով-
հետև չեմ դիմանում:

ԳԵՎՈՐԳ - Չմոռանաս, որ տանն օ-
տար մարմին կա: Մի կտոր միս,
հաց և գինի:

ՀԱՍՄԻԿ - Վերցրու, գխտկվիր, և
թող քո բոլոր սիրուհիները փոր-
լուծ կանեն:

ԳԵՎՈՐԳ - Ծնորհակալություն, քաղցրիկս: *(Հասմիկը մտնում է լվացարան, իսկ Գևորգն ուտում է:)* Երկար չմնաս, ամեն վայրկյանը փող է: Ես բիզնեսմեն եմ, փողը իմ կյանքն է: *(Մոտենում է խոհանոցին, նայում է դռան անցքից:)* Իսկ այդ սրիկան կարծես ձողոպրել է: Տիկին, կեցցե ազատությունը:

Հասմիկը վերադառնում է իր տա-րածքը, Գևորգը փորձում է նրան գրկել:

ՀԱՍՄԻԿ - Վերադարձիր քո տա-րածքը, նրա լինել թե չլինելը ոչ մի կապ չունի: Մենք բաժանված ենք:

ԳԵՎՈՐԳ - Նրա արածը մի չար կա-տակ էր:

ՀԱՍՄԻԿ - Ես նախկին ամուսնուս հետ չեմ սիրում կատակել: Գնա՛ սիրուհուդ մոտ:

ԳԵՎՈՐԳ - Այնքան ասացիր, որ մտածում եմ՝ շատ էլ սիրուն աղ-ջիկ է:

ՀԱՍՄԻԿ - Ա՛, կնամո՛ղ, կանանց փե-շի ստրուկ:

ԳԵՎՈՐԳ - Սահմանը չանցնես, նախկին տիկին: Եվ այսպես՝ ինչ եմ անելու. քաղցած չեմ, քունս է տանում: Ես կքնեմ մահձակալին, իսկ դու բավարարվիր բազմոցով: *(Պառկում է:)*

ՀԱՍՄԻԿ - Մահձակալի կեսը ինձ է պատկանում: *(Պառկում է:)*

ԳԵՎՈՐԳ - Հանկարծ սահմանը չանցնես:

ՀԱՍՄԻԿ - Միայն քո խնդրելու դեպ-քում: *(Ծիծաղում են:)*

ԳԵՎՈՐԳ - Ես այդպես էլ չհասկա-ցա, ինչ գործ ունի նա մեր տանը: Դո՛ւ ես հրավիրել նրան մեր տուն: *(Դադար:)*

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, գրկի՛ր ինձ:

ԳԵՎՈՐԳ - Թո՛ղյլ ես տալիս:

ՀԱՍՄԻԿ - Մրսում եմ: Ուժեղ գրկիր և ծածկիր ծածկոցով:

ԳԵՎՈՐԳ - *(գրկում է):* Ի՛նչ հիմար ենք: Ինչո՞ւ ենք թույլ տալիս՝ օ-տար մարդ մտնի մեր ընտանիքը: Ախր, մենք իրար սիրում ենք:

ՀԱՍՄԻԿ - Միա՛ռու:

ԳԵՎՈՐԳ - Իմ փոքրիկ փիսիկ, երբ մտածում էի մեր բաժանման մա-սին, սիրտս կտոր-կտոր էր լի-նում: Ես առանց քեզ մի վայրկյան չեմ դիմանա:

ՀԱՍՄԻԿ - Փակիր վարագույրները, թող ոչ ոք մեզ չնայի:

Մթություն:

Պատկեր հինգերորդ

Խավար է: Գևորգն ու Հասմիկը կիսամերկ պառկած են մահձա-կալին: Կարպ Կարպիչը կանգ-նում է նրանց գլխավերևում:

Մկան մեծ թակարդ է դնում Հասմիկի վրա: Երբ Գևորգը գրկում է Հասմիկին, մատներն ընկնում են թակարդը: Գևորգը զարհուրած ընկնում է ցած: Կարպ Կարպիչը լույսը վառում է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք խախտել եք իմ գծած սահմանն ու իրար հետ եք պառկել:

ԳԵՎՈՐԳ - Լավ ենք արել:

ՀԱՍՄԻԿ - Մենք հաշտվել ենք: Լայի, ինչպես ենք համբուրվում: *(Համբուրվում են:)*

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչպիսի՞ անպատկառություն... Ինձ հարցրել եք, ես իմ թույլտվությունը տվել եմ... Սա ոտնձգություն է իմ պարտականություններին:

ՀԱՍՄԻԿ - Մենք կվճարենք ձեզ ներություն տալու համար:

ԳԵՎՈՐԳ - *(դրամը դնում է սեղանին):* Վերցրեք և հեռացեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ի հարկե, կվճարեք: Հիմա ո՞վ է ձրի աշխատում: *(Հաշվում է գումարը:)* Այնքան էլ բարձր չեք գնահատել իմ աշխատանքը, բայց ես ազահ չեմ: *(Փողը դնում է գրպանը:)* Ի դեպ, մինչ դուք այստեղ, այս սենյակում, այս մահձակալի վրա, այս վերմակի տակ ինչ-որ բաներ էիք անում, ես գնացի քաղաք, հետախուզեցի և որոշակի իրեղեն ապացույցներ գտա: Տիկին, համաձայն եք ապրել այս պարոնի հետ ստորացու-

ցիչ պայմաններում: Մտածեք, նոր ասեք:

ՀԱՍՄԻԿ - Ապացույցներ ունե՞ք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այն էլ ինչքան՝ մեկը մյուսից սահմուկեցուցիչ... Գնացի քաղաք, գտա նախկին ամուսնուղ աշխատավայրը, բարձրացա երկրորդ հարկ... Զարտուղարուհին իր տեղում էր: *(Դադար, իրար են նայում:)* Ներկայացա որպես իրավաբան: Լա սիրալիի ժպտաց, ցույց տվեց ոսկյա ատամը: Կարող եմ ասել, որ արտակարգ գեղեցիկ էր, ամեն ինչ տեղը տեղին՝ մեծ կրծքեր ու մինի շրջագգեստ... Երբ ոտքը ոտքին զցեց ու հաստ շուրթերը ժպտացին... Բիչ էր մնում՝ կատաղած ցլի նման վրան գնայի...

ԳԵՎՈՐԳ - Ստում ես: Իմ քարտուղարուհին համեստ կին է, նույնիսկ չի շպարվում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Երկու կերպար... Տիկին, ո՞րն եք հավաստի համարում:

ՀԱՍՄԻԿ - Աստված իմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես նրանից սուրճ ուզեցի: Լա գնաց խոհանոց սուրճ պատրաստելու, իսկ ես գաղտագողի մտա կաթինետ:

ԳԵՎՈՐԳ - Ձեզ ո՞վ է թույլ տվել ներս մտնեք, մի՞թե դուռը փակ չէր:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինձ համար բոլոր դռները բաց են: Ներս մտա, տեսա՝ բազմոցը բացվում է, դառնում

մահձակալ: Պահարանը բացեցի և գտա սավաններ, սփռոց և այլ պարագաներ, իսկ երբ բազմոցը մի կողմ տարա, ինչ գտա... դրանք այստեղ են, պայուսակիս մեջ: Դե ինչ, ես գնում եմ, շատ գործեր ունեմ, հաճախորդներս ինձ են սպասում:

ՀԱՍՄԻԿ - Ո՛ր եք գնում, սպասե՛ք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք ասացիք, որ ձեզ հարկավոր չեմ: Ես չեմ կարող մնալ այն տանը, որտեղ ավելորդ եմ: Տոնեսություն:

ՀԱՍՄԻԿ - Սպասե՛ք, ուզում եմ տեսնել՝ ինչ կա պայուսակում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այնտեղ անհավատալի բաներ կան, որ մարդու մազերը բիզ-բիզ են կանգնում:

ՀԱՍՄԻԿ - Ես պահանջում եմ, որ ցույց տաք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կդիմանա՞ք: Ավելի լավ է համբուրվեք ու մոռանաք ինձ՝ մի մարդու, որը կարող է բացահայտել ցանկացած ստորություն:

ԳԵՎՈՐԳ - Ես հասկացա, ձեզ ուղարկել են, որ մեզ բաժանեք:

ՀԱՍՄԻԿ - Անմիջապես ցույց տվեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք ցանկանում եք տեսնել, բայց դա կարող է ողբերգության պատճառ դառնալ:

ՀԱՍՄԻԿ - Խնդրում եմ...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լավ, խնդրանքն ընդունված է: *(Բացում է պայու-*

սակը, ցույց է տալիս:) Սա կանացի վարտիք է՝ ընկած էր բազմոցի տակ, չափերից կարելի է եզրակացնել...

ՀԱՍՄԻԿ - Ծարունակե՛ք...

ԳԵՎՈՐԳ - Սյուզին փոքր-մոքր կին է, դժվար դա հագներ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կրծկալ՝ չափսը հինգ: Իմ պրակտիկայից գիտեմ: Ծրթներկ համար հինգ, կարմիր գույնի: Պահպանակների չափսերը կարևոր չեն: Սա բավական է, որ պատկերացում կազմենք նրա վարքագծի մասին:

ՀԱՍՄԻԿ - Ուրեմն դա ճիշտ է: Այսքան տարի խաբել ես ինձ:

ԳԵՎՈՐԳ - Սիրելիս, նրա ասածները ծայրից ծայր սուտ են:

ՀԱՍՄԻԿ - Ինձ մի դիպչիր, ես հեռանում եմ: Դու էլ ինձ չես տեսնի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, պատրաստվիր ուղևորության, գնացքը սուլում է՝ պո՛ւ, չուքու-չուքու, պո՛ւ, չուքու-չուքու:

Հասմիկը հեռանում է:

ԳԵՎՈՐԳ - Հասկանո՞ւմ եք՝ ինչ եք անում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հիշիր ու ականջիդ օղ արա՝ Կարպ Կարպիչն անսխալական է:

ԳԵՎՈՐԳ - Լա իրեն կվնասի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հանգստացիր, սառը օդից ուշքի կգա ու կվերադառնա: Նա քեզ բաց չի թողնի:

ԳԵՎՈՐԳ - Չէ, գնամ ետևից, կարող է զոքանչս էլ գա: Խնդրում եմ, մարդ եղիր, նրան իմ դեմ չլարես:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Վստահեցնում եմ, որ Կարպ Կարպիչը ոչ մեկին

մյուսի դեմ չի լարում: Ես հաշտեցնող բնավորություն ունեմ: Գիտե՞ս, ինչեր են ասում իմ մասին: Կարպ Կարպիչն աշխարհի միակ մարդն է... Ո՛ր կորար: Սրիկան չուզեց ինձ լսել:

Մթություն:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պատկեր առաջին

Կարպ Կարպիչը բազմոցին նստած թերթ է կարդում: Պատի անցքից ներս է մտնում Վաղոն: Մոտենում է, մի պահ կանգնում ու կեղծ հագում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դու ո՞վ ես, ինչ գործ ունես այս տանը:

ՎԱՂՈ - Ես Վաղոն եմ՝ հարևանը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Զաղաքացի Վաղո, քո պատճառով ստիպված եմ օդի խմել, որ վախս անցնի:

ՎԱՂՈ - Ես էլ դեմ չեմ լինի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տես, սառնարանում ինչ կա:

ՎԱՂՈ - Նա բարձր որակի օդի է խմում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բեր համտեսենք: (Վաղոն սառնարանից օդի և երկու բաժակ է բերում:) Բաժակները մեծ չե՞ն:

ՎԱՂՈ - Փոքր բաժակը կոկորդս չի թրջում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Զո կոկորդը թրջե՞լ կլինի, անտակ հոր է: Մեր կենացը: (Խմում են:) Զաղաքացի Վաղո, դեմքդ նկատել եմ, բայց ուղեղումս չի դրոշմվել: Որտե՞ղ եմ քեզ տեսել:

ՎԱՂՈ - Հարևանն եմ, այս պատից այն կողմ իմ տունն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ա՛յ դու հաստավիզ Վաղո, դեռ համարձակվում ես այս տո՞ն մտնել: Սրիկա՛մ, մառանում բան չես թողել, գողացել ես:

ՎԱՂՈ - Լավ եմ արել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ի՞նչ ասացիր, ձեռքինդ ի՞նչ է:

ՎԱՂՈ - Դանակ: Եթե հենց հիմա չհեռանաս...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այ դու քիմիական

միացություն, ուզում ես ինձ վախեցնել:

ՎԱՂՈ - Բա ինչ անեմ, հաց կտրել ես, ո՞վ է ինձ կերակրելու:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լսիր, քաղաքացի, դժբախտ թոշակառու, ես քեզ հասկանում եմ, բայց թույլ չեմ տա կողոպտես իմ հաճախորդին: Նույնիսկ ինձ թույլ չեմ տալիս: Հասկացիր, ազնիվ լինելը բարձրագույն հաճույք է:

ՎԱՂՈ - Դրսից մարդ եմ կանչել, որ քո հարցերը լուծի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կուսակցական է:

ՎԱՂՈ - Օրենքով գող է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եկել ես, վախս չափե՛ս: Սրիկա՛, ինձնից ամբողջ աշխարհն է վախենում: Ես մեծ կապեր ունեմ Ռուսաստանում, Ամերիկայում: Կարող եմ քեզ դարձնել Ռուսաստանի թոշակառու, կրկնակի թոշակ կստանաս:

ՎԱՂՈ - Ամերիկայում ավելին են ստանում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ախորժակդ մեծ է: Լավ, հիմա կգանգեմ պրեզիդենտին: *(Չանգում է:)*

ՎԱՂՈ - Թող մի հատ էլ ավտո նվիրի, երրորդ կարգի հաշմանդամ եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չի երևում, որ հաշմանդամ ես:

ՎԱՂՈ - Ո՞նց երևա, որ գլխիս մեջ է քեկորը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այո՛, պարոն պրեզիդենտ, ես եմ՝ Կարպ Կարպիչը... Այո՛, պայմանավորվածությունը մնում է ուժի մեջ, ոչ մի լազերային ռումբ չեմ օգտագործի: Լսիր, ախպերս, էս երկրում մի Վաղո կա, դե, մեր Վաղինակը, դժբախտ թոշակառու է, ուզում է ձեր թոշակառուն դառնալ... Հարցնում է՝ ինչ է արել մեզ համար:

ՎԱՂՈ - Ի՞նչ եմ արել, մարլբորո եմ ծխել, երեկ հյուրասիրեցին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չէ՛, նա նույնիսկ մեզ համար ոչ մի բան չի արել, ուր մնաց՝ ձեր... Բայց խնդրում է, չէ՛... նաև սպառնում է... դանակը ձեռքին է: Դե, ես չեմ կարող լազերով նրան այլանդակել... դեմոկրատիա, հումանիզմ... Նա չուզեց քո անունն իսկ լսել:

ՎԱՂՈ - Դու լազերային ռումբ ունե՛ս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչպե՛ս կարող եմ չունենալ: Այսքան տղա էի, ռումբը գրպանումս էր:

ՎԱՂՈ - Դե ցույց տուր:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուզում ես տեսնել:

ՎԱՂՈ - Հա՛:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իմ ու պրեզիդենտի ասածը քեզ համար ոչ մի արժեք չունի՞:

ՎԱՂՈ - Չէ՛:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Սրիկա՛, հիմա ես ցույց կտամ, ու դու ծնկի կգաս:

(Ձեռքը տանում է գրպանը:)

Պատրաստվիր: *(Գրպանից հանում է լապտերը:)* Հենց միացնեմ, ծառագայթները կներթափանցեն քո դատարկ ուղեղն, ու դու կդառնաս իմպոտենտ:

ՎԱՂՈ - Չեմ հավատում: Վաղոյին այդքան հեշտ չի վախեցնել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կարծում ես, ես հավատում եմ, բայց միջազգային փորձը ցույց է տվել, որ ամեն ինչ հնարավոր է: Ուրեմն, ուզում ես, որ քեզ ծառագայթահարեմ: Լավ, մեղքը քո վիզը: *(Միացնում է կարմիր լույսը, պահում է Վաղոյի վրա: Վաղոն փախչում է:)* Մի փախչիր, լազերից ո՞ր կարող ես փախչել: Կռվի ժամանակ սա իմ միակ զենքն էր: Լազեր, վազիր, սպանիր նրան: Քսան վայրկյանից կդառնաս իմպոտենտ, կնիկդ չի թողնի տուն:

ՎԱՂՈ - Հանձնվում եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չէ, պիտի քեզ ծառագայթահարեմ: Բազկաթոռն էլ քեզ չի օգնի:

ՎԱՂՈ - Խնդրում եմ, ուզում եմ ամուսնանալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ախ, դու էլ ամուսնացած չես:

ՎԱՂՈ - Չէ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեռքերդ վեր պարզած դուրս արի, դանակը գցիր ցած, մոտ արի: *(Վաղոն*

ձեռքերը վեր պարզած մոտենում է:) Դե ինչ, համոզվեցիր լազերի հզորությանը:

ՎԱՂՈ - Արի հաշտվենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Զեզ նման մարդու հետ՝ ոչ մի դեպքում: Ի՞նչ կմտածեն վերևներում: Բա չե՞մ ասի՝ ինչո՞ւ այդ մրջյունին չգցեցիր ոտքի տակ:

ՎԱՂՈ - Ասա նրանց, որ ինքնակամ գերի եմ հանձնվել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ճիշտ է, միջազգային կոնվենցիայով գերիներին չեն ծեծում: Լավ, համոզեցիր, ձեռքերդ իջեցրու, մեծ մարդ ես: Բաժակները լցրու, խմենք, հետո կտեսնենք՝ ինչն է բարին: *(Խմում են:)* Ի՞նչ է ուզածդ:

ՎԱՂՈ - Հենց քեզ տեսա այս տանը, հասկացա, որ գործերս վատ են լինելու: Գիշերը երազ տեսա՝ կարծես մեկը վրաս գոռար՝ «սոված սատկելու ես»:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուր ես հայտնվում եմ, այնտեղ տիրում է արդարությունը: Սրիկա՛, մի մտիր պաշտպանյալիս մառանը:

ՎԱՂՈ - Աղքատ մարդը նույնպես ստամոքս ունի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Աղքատ մարդը ուրիշ բան էլ ունի, պիտի մտնեն կնկա ծոցը:

ՎԱՂՈ - Ամեն օր նրանց մառանից մի կտոր միս եմ վերցնում: Երանց համար դա մեծ բան չի:

Թիվ 56-57

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դու մի ամբողջ բուդ էիր գողանում, ամոթ չի՛:

ՎԱՂՈ - Ամոթ է, բայց գնա ստամոքսիս հարցրու՝ ամոթ է, կասի՝ սոված մարդու ամոթը ո՞րն է: Կուշտ մարդը կարող է ամոթ ունենալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Էն խեղճ մրջյուններին զրպարտել ես, թե նրանք են գողանում, զրպարտի՛չ:

ՎԱՂՈ - Ես ընդունում եմ իմ մեղքը, բայց կարող եմ սխալս ուղղել: Արի քեզ փող տամ, որ ինձ քաղցր աչքով նայես:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կաշառո՞ւմ ես:

ՎԱՂՈ - Չէ, չէ, ես փողը կդնեմ սեղանին, ով որ ուզենա, նա էլ կվերցնի: (*Փողը դնում է սեղանին:*)

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Փողը չի կարելի սեղանին թողնել, անվայելույ տեսք ունի: Այս ազնվասիրտ մարդուն ինչո՞ւ են փողի վրա նկարել: Փողը ձեռքի կեղտ է, լսե՛լ ես: Դե, դու ո՞նց կարող ես լսած լինել: Ամեն մարդ հո չի՛ լսում, միայն սիրում է, էն էլ ո՞նց է սիրում, գրկախառնվում են, կարծես մեկ մարմին լինեն:

ՎԱՂՈ - Վերցրեք, պարո՞ն, սրտանց եմ տալիս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լսի՛ր, մարդ արարած, մի գողացիր, Աստվածաշունչ կարդա:

ՎԱՂՈ - Ես չեմ գողանում, վերցնում եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ ի՞նչ կմտածեն Կարպ Կարպիչի մասին, արժանապատվության հարց է: (*Փողի հետ խաղում է:*)

ՎԱՂՈ - Ոչ ոք չի տեսնի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ դու, սրիկա՛, անընդհատ նայում ես փողին:

ՎԱՂՈ - Որ ուրիշները չգողանան:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - (*փողը դնում է գրպանը*): Լավ, այս անգամ ներում եմ, բայց հաջորդ անգամ զգուշացիր, կմտածեմ, որ զոդություն ես անում: Իսկ հիմա գնա, սառնարանից վերցրու՝ ինչ ուզում ես ու կորիր աչքիցս: Ո՛նց չեմ սիրում ընչաքաղցներին: Փառք Աստծո, Կարպ Կարպիչն ազնվագույն մարդ է: Դե, բավական է որբերին կողոպտես... Դե, փախի՛ր, փրկության նոխազ, ես քեզ վայրկյան եմ տալիս, չմոռանաս աղոթք անել օրը երեք անգամ:

ՎԱՂՈ - (*նայում է լուսամուտից*): Աստված իմ, Գևորգի զոքանչն է գալիս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մե՞ծ բան, ինչ-որ զոքանչ...

ՎԱՂՈ - Դու նրան չես ծանաչում: Լա աստվածուհի է, փողոցում ընկած գոհար:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ներս կմտնի, կտեսնեմ՝ աստվածուհի՞ է, թե՛ կռվամարտիկ: Կփորձի հոշոտել,

ես էլ նրան կզցեմ լվացքի մեքենայի մեջ: (Նայում է լուսամուտից:) Ինչ պինդ կնիկ է... հնարավորություն ունեմ սարսափելու... Բայց նա չգիտի, որ իմ գարշապարն անխոցելի է:

Պատկեր երկրորդ

Հնասպառ ներս է մտնում զոքանջը:

ԶՈՔԱՆԶ - Զնոր, մի կում ջուր, ուշքս գնում է...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Զոքանջին ջնոր... (Տեսնում է՝ Վաղոն չկա, ինքն է ջուր տալիս:) Խմեք, հարգարժան տիկին, այստեղի ջուրը սառն է ու համեղ: Կարծես մեղրաջուր թափվի ծորակից: (Զոքանջը ջուր է խմում, նայում Կարպ Կարպիչին:) Դուք ամենաքիչը զոքանջ կլինեք: Ես հարգում եմ բոլոր զոքանջներին: Բարև ձեզ, տիկին զոքանջուհի, ես ձեզ ողջունում եմ:

ԶՈՔԱՆԶ - Ես վազում էի ամբողջ ուժով, մարմինս այնպես էր թեթևացել, կարծես թռչում էի, հավանաբար զայրույթից է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ո՞վ է համարձակվել զայրացնել տիկին զոքանջուհուն:

ԶՈՔԱՆԶ - Իհարկե, Գևորգ փեսաս: Գիշերը երազում լսում էի աղջկա աղիողորմ լացը, իսկ փեսաս

քահ-քահ ծիծաղում էր: Գիտես, ես ինչ կանեմ: (Ցույց է տալիս, ինչպես է գլուխը պոկում ու դրանով ֆուտբոլ խաղում:)

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ուզում եք ֆուտբոլ խաղալ: Ես կարող եմ դարպասապահ կանգնել:

ԶՈՔԱՆԶ - Ո՞ր է աղջիկս, ի՞նչ ես արել նրան:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ես չեմ մեղավորը: **ԶՈՔԱՆԶ** - Նա տառապել է, լացել է... Գևորգը սպանել է նրան: Ես ուզում եմ տեսնել աղջկաս արնաշաղախ մարմինը: Տե՛ր Աստված, ինչպես եմ ապրելու լույս աշխարհում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Հանգստացեք, տիկին, ո՞վ կհամարձակվի ձեր աղջկա մազին դիպչել: Չէ՞ որ ես այստեղ եմ:

ԶՈՔԱՆԶ - Նա ո՞ղջ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Իհարկե, տիկին: Նա ոչ միայն ողջ է, այլև ուրախ է ու երջանիկ: Գնացել է զբոսնելու, շուտով կգա:

ԶՈՔԱՆԶ - Ուրեմն իմ տառապանքն անիմաստ էր, և փառք Աստծո: Պատմե՛ք ողջ եղելությունը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Գիշերը վիճել են, աղջիկդ թաքնվել է մրջնանոցի ետնամասում, իսկ փեսադ քնած էր ու խոնկացրել է: Երբ ես եկա, լարվածությունը հասել էր գագաթնակետին: Երկար ժամանակ

Գևորգի հետ մենամարտում էի՝ փոխադարձ հարվածներ, փոխադարձ մեղադրանքներ... Դա տիտանական ծակատամարտ էր: Իմ հաղթանակը կատարյալ էր: Ես ամեն ինչ արեցի, որ աղջիկը զգա՝ ինչպիսի հզոր բազուկներում է հայտնվել:

ՋՈՋԱՆՉ - Ծնորհակալ եմ, պարոն, դուք քաջ ասպետ եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, ես իմ պարտքն եմ կատարել:

ՋՈՋԱՆՉ - Իսկ ինչպե՞ս հայտնվեցիք այստեղ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Օ՛, դուք չպիտի դա ասեիք, պարտականությունն էր ստիպում ինձ գալ այստեղ: Ի դեպ, ձեզ ձեր աղջիկն է զանգել:

ՋՈՋԱՆՉ - Ո՛չ, ես քնած էի, հանկարծ մեկն ականջիս ասաց՝ վեր կաց ու գնա, փրկիր աղջկադ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչպիսի՞ զուգահիսություն: Նախախնամությունն է մեզ ստիպել գալ այստեղ, որ փրկենք ընտանիքը:

ՋՈՋԱՆՉ - Իսկ ո՞ր է կորել այդ փեսա կոչեցյալը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նրան դուրս հրավիրեցի տնից:

ՋՈՋԱՆՉ - Իզուր: Ես նրա հետ դաստիարակչական աշխատանք կտանեի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նրա բախտը բերել է:

ՋՈՋԱՆՉ - Աղջկաս ասում էի՝ թույլ տուր քնեմ այս տանը: Եթե այստեղ ապրեի, աղջիկս ընտանեկան բռնության զոհ չէր դառնա:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես թույլ չտվեցի, որ գործը դրան հասնի: Ընտանեկան փոքր վեճ էր, որը սովորական է մեր հասարակության համար:

ՋՈՋԱՆՉ - Մենք պիտի պայքարենք, պայքարենք ու միայն պայքարենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Պայքար, պայքար մինչև վերջ, մասնակցել եմ: Չգիտեմ, ուրիշներն ինչպես, բայց ես մինչև հիմա պայքարում եմ: Պայքար հանուն պայքարի, մոտավորապես նման է ուղեղի բռնաբարությանը:

ՋՈՋԱՆՉ - Դա խայտառակություն է: Այս լուսավոր աշխարհում ո՞վ է տեսել այդպիսի բան: Ես կստիպեմ, որ նա ինձնից ներողություն խնդրի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բայց ինչո՞ւ ձեզանից, տիկին:

ՋՈՋԱՆՉ - Որովհետև Հասմիկն իմ աղջիկն է: Բռնաբարելով նրան՝ վիրավորում է ինձ՝ զոքանչ մայրիկիս: Այդ տղան ինձ լավ չի ճանաչում: Ես նրան բզիկ-բզիկ կանեմ: Ես նրան կմտցնեմ եռացող ջրի մեջ ու փետուրները հատ-հատ կհանեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դա վտանգավոր է առողջությանը:

ԶՈՔԱՆՉ - Միանգամայն բավական է, որ խելքի գա, իսկ եթե համառի, կդիմեմ համապատասխան բռունցքների:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հնագույն, բայց արդարացված ձև է, փեսային արժանի պատիժ: Բայց դա հարցի լուծում չէ:

ԶՈՔԱՆՉ - Նախազգուշացնում եմ, շատ եմ զայրացած: *(Դադար:)*

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նստե՛ք, այնպես նստե՛ք, որ տեսնեմ ձեր աչքերը:

ԶՈՔԱՆՉ - Ես նստած եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լավ եք տեղավորվել:

ԶՈՔԱՆՉ - Չեմ բողոքում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չէ, բարձերը պակասում են: *(Բարձեր է բերում:)* Դնեմ թիկունքիդ տակ, որ խղճմտոք մոտենաք ընտանեկան հարցին:

ԶՈՔԱՆՉ - Ես կաշխատեմ խղճին մոտ, նրան կհանձնեմ ոստիկանությանը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չէ, ինչ-որ բան պակասում է: Ա՛, ոտքերը... *(Աթոռ է բերում:)* Տիկին, խնդրեմ, ոտքերդ դրե՛ք աթոռին: Ինչ գեղեցիկ ոտքեր ունե՛ք:

ԶՈՔԱՆՉ - Ավելի լավ է խոսենք գործից:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, որպես

հասուն մարդ, քննենք Հասմիկի և Գևորգի գործը բոլոր ուղղություններով: Արդեն հինգ տարի է՝ միասին ապրում են, ծիշտ է:

ԶՈՔԱՆՉ - Ճիշտ է, միամիտ աղջկաս կպավ ու պոկ չէկավ: Ես նրան քանի անգամ զգուշացրի՝ աղջիկս, մի հավատա նրան, մի կործանիր քեզ: Նա ինձ չլսեց:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ով չի լսում ծնողին, երկու ոտքով է թակարդն ընկնում:

ԶՈՔԱՆՉ - Ճիշտ է: Ինձ հասկանում եք կես խոսքից, հավանաբար շատ մեծ փորձ ունե՛ք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այնքան էլ մեծ չէ՝ մեկ ամուսնություն վեց ամիս տևողությամբ: Բայց անցնենք փեսա կոչեցյալին: Ենթադրենք, այդ անձնավորությունը աչք է դրել քարտուղարուհու վրա: Դա ի՞նչ մեծ բան է, ո՞վ չի արել իր ժամանակին: Այ ես՝ կին չէր մնում, որ աչքերիս առջևով չբայլեր: Դուք էլ փորձված կին եք: Ասացե՛ք, չկային տղամարդիկ, որ ցանկանային ձեզ, այսպես ասած, դարպասել:

ԶՈՔԱՆՉ - Ի՞նձ... *(Ծիծաղում է:)* Պարո՛ն, ես պարուհի էի: Ինձ տեսնելու համար հավաքվում էին քաղաքի բոլոր տղամարդիկ: Իսկ ի՞նչ աչքեր ունեին, սև, մազուփի նման կաչում էին ու պոկ չէին գա-

լիս: Ես այն ժամանակ փխրուն տեսք ունեի: Հիմա էլ առանձնապես չեմ փոխվել, այնպես չէ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իհարկե, տիկին, դուք այնքան փխրուն եք, կարծես նոր թխված փախլավա լինեք, բայց անցնենք բուն գործին՝ արժե՞ նրանց բաժանել:

ԶՈՔԱՆՉ - Դուք ասում էիք, որ բաժանել եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իհարկե, բաժանել եմ, բայց երբ տեսա ձեզ, փոշմանեցի: Նրանց հարկավոր է ձեր հզոր աջակցությունը: Այո, Գևորգին հարկավոր է հենց ձեզ նման զոքանչ ունենալ... Ուրիշ զոքանչներ նվնվում են, հիվանդանում են, հենց տեսնում են փեսային, հառաչում են՝ ամիս, էրբ եմ մեռնելու: Իսկ ձեր ռազմական ոգին նրանց ուժ կտա, ընդդիմադիր կեցվածք կընդունեն:

ԶՈՔԱՆՉ - Չգիտեմ՝ ինչ ասել: Գևորգն այնքան էլ վատ տղա չէ: Մեր մեջ ասած, շատ լավ տղա է, բայց չի կարելի նրան երես տալ: Հենց թուլացնում ես բռունցքդ, սկսում է իրեն երևակայել: Ուզում եք ասել, որ նրանք կարող են միանալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մոր ցանկությունից է կախված:

ԶՈՔԱՆՉ - Լավ, ես համաձայն եմ: Թող այդպես լինի: Իսկ աղջիկս համաձայն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նրանք կհամարձակվեն ձեր որոշմանը դեմ կանգնել:

ԶՈՔԱՆՉ - Էդ էր պակաս, որ ինձ հակառակվեն: Երբ պարում էի, բեմադրիչը կամաց մոտենում էր ու ականջիս փսփսում՝ Մարիա Աթաբեկովնա, ձախ ոտքով ուժեղ մի դոփեք, ավելի մեղմ, ավելի քնքուշ, իսկ ես շարունակում էի դոփել, որովհետև հանդիսականներին դա էր դուր գալիս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ որտեղ էիք պարում, տիկին:

ԶՈՔԱՆՉ - Պարի պետականում մենապարուհի էի, տղամարդիկ ծնկի էին գալիս, իսկ մենք բարձրանում էինք նրանց ուսերին: Բերդ պարն էինք պարում: Ա՛խ, ոնց կուզեի կրկնել անցյալը: Պարել գիտե՞ք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հո չե՞ք ուզում կանգնել իմ ուսերին:

ԶՈՔԱՆՉ - Իսկ ինչո՞ւ ոչ, դուք առյուծ տղամարդ եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Գուցե առյուծ եմ, բայց պարել չգիտեմ: Բժիշկները խորհուրդ չէին տալիս, ասում էին՝ ուսերիդ վրա բեռ ավելացնես, սապատ կառաջանա:

ԶՈՔԱՆՉ - Ես չեմ կարող շփվել մի մարդու հետ, որը պարել չի սիրում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչպէս թե՛ չեմ սիրում: Այնպես եմ սիրում, ինչպես առյուծը եղնիկին: Ես նրան խժռում եմ:

ԶՈՔԱՆՉ - Ես այնպես ինքնամոռաց էի պարում, որ տղամարդիկ ոտքի էին կանգնում ու ծափահարում: Ես երջանկությունից լաց էի լինում: Այն ժամանակ ջահել էի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք հիմա էլ եք ջահել:

ԶՈՔԱՆՉ - Տղամարդկանց ուշադրության կենտրոնում էի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք հիմա իմ կենտրոնում եք:

ԶՈՔԱՆՉ - Նրանք ամեն ինչ անում էին, որ արժանանան իմ ժպիտին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ ես ամեն ինչ կանեմ, որ արժանանամ ձեր սրտին:

ԶՈՔԱՆՉ - Պարո՛ն, իմ սիրտը փակ դարբնոց է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես կդառնամ դարբին, որ բացեմ սրտիդ կլապանները, հորդառատ արյունը հոսի առանց խափանման:

ԶՈՔԱՆՉ - Ծուտ գլուխս կորցրեցի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Զոքանչն առանց գլխի՞... Սարսափելի է պատկերացնել: Զոքանչն իրավունք չունի կորցնելու գլուխը:

ԶՈՔԱՆՉ - Ախր, այն ժամանակ երիտասարդ էի, անփորձ: Երբ լսում

էի նրա հուսահատված ձայնը՝ ես քեզ սիրում եմ, ես քեզ պաշտում եմ, ես կմեռնեմ առանց քեզ, ինքնասպան կլինեմ... Դուք լինեիք իմ փոխարեն, ինչ կանեիք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեր փոխարեն... Այդ այլասերված լակոտը ինձ գայթակղէր: Տո, ես նրա հերը կանիծեի:

ԶՈՔԱՆՉ - Իսկ ես չդիմացա, ասացի՝ այո: Բայց նա փախավ ընկերուհուս հետ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Սրիկա՛: Ծողոքորթ ոչխարը միանգամից երկու կնոջ է գայթակղել: Չէ, ես այդպիսին չեմ, ձեզ ավելորդ բառեր չեմ ասի, ոչ էլ ինքնասպան կլինեմ, ո՛չ էլ ծոմ կպահեմ, այլ կասեմ՝ տիկին, իմ սիրտն ազատ է, հոգիս՝ ծարավ, մտքումս էլ միայն դու ես, տեսքդ աչքերիս մեջ է, արի մեր սրտերը միացնենք...

ԶՈՔԱՆՉ - ...Պարենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դուք ուզում եք ինձ հետ պարել:

ԶՈՔԱՆՉ - Այո՛:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բայց ո՛չ Բերդ պարը:

ԶՈՔԱՆՉ - Մենք կպարենք հայկական տանգո:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այդպիսի պար ունենք:

ԶՈՔԱՆՉ - Ինչպէս կարող ենք չունենալ: Գրկիր ինձ, ուժեղ սեղմիր:

Մի վախեցիր, չեմ ջարդվի: Մեկ, երկու, երեք, գնացինք: *(Երաժշտություն, պարում են, Կարպ Կարպիչը տրորում է նրա ոտքը:)*

Արջի նման եք պարում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ավելի լավ է անցնենք ազգայինի՝ շալախոյի: *(Երաժշտություն:)*

ԶՈՔԱՆՉ - Ես այդ պարը գիտում չեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ա՛խ դու, զոքանչ, նաև դարաբաղցի եք: Ձեր համառության մասին ամբողջ աշխարհը գիտի: Ներեցեք, հիմա ինչո՞վ եք ապրում:

ԶՈՔԱՆՉ - Ես ազնվականների խորհրդի անդամ եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Պարտադիր է լինել ազնվական:

ԶՈՔԱՆՉ - Գնա, ցանկացած պաշտոնյայի հարցրու՝ դու ազնվական ես...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եվ նրանք կպատասխանեն՝ այո, մենք դարաբաղցի ենք:

ԶՈՔԱՆՉ - Իմ պապերը նախնադարում քրմական դասին են պատկանել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Էլ ի՞նչ դարաբաղցի, որ նախնադարում քուրմ չլիներ: Թույլ տվեք համբուրեմ ձեր փափլիկ մատները: *(Ձոքանչը մեկնում է ձեռքը, նա համբուրում է:)* Ընդամենը հինգն են, ես կուզեի, որ հարյուրը լինեին: Բայց պատ-

րաստ եմ ձեզ ընդունել, ինչպես որ կաք: Պարիր, իմ սիրելի քրմուհի:

ԶՈՔԱՆՉ - *(Երաժշտություն, երգում է ու պարում):* Ինձ ասում են նախշուն բաջի...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ոտքերս իրենք իրենց պարում են, ձեռքերս էլ վեր են բարձրանում: Էլ ի՞նչ Կարպ Կարպիչ, որ ցույց չտա իր անհատականությունը: *(Միանում է պարին, երաժշտությունը դադարում է, հոգնած ընկնում են բազմոցին:)* Դուք անզուգական եք:

ԶՈՔԱՆՉ - Նույնը չէի ասի ձեր մասին: Այդ ինչպե՞ս եք շարժվում, դա պարե՞լ եք համարում: Իմ ժամանակ տղամարդիկ կանոններով էին պարում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այո, դուք ճիշտ եք, իմ պարն ակադեմիական չէ, որովհետև հոգուս խորքում ես անարխիստ եմ՝ ոչ մի համաչափ շարժում, արա այն, ինչ կարողանում ես անել:

ԶՈՔԱՆՉ - Կուսակցական եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուզում էի թաքցնել կուսակցական լինելս, բայց չստացվեց: Այո, ես կուսակցական եմ:

ԶՈՔԱՆՉ - Եվ կատարում եք նրանց հրահանգները:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իհարկե: Բավական է կուսակցական ժողովում

ինձ առաջադրանք տան, կատարում եմ անբեկանորեն:

ՁՈՋԱՆՁ - Ո՞ր կուսակցությանն եք պատկանում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բոլոր: Իմ անունը փորագրված է բոլոր կուսակցությունների ցուցակում:

ՁՈՋԱՆՁ - Դրա համար եք այդպես պարում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իմ գաղափարախոսությունները, իսկ դրանք շատ-շատ են, ազդում են ոտքերիս շարժումներին: Պիտի նկատած լինեիք, երբ ծախ էի թեքվում, դա ընդդիմադիր կեցվածք էր, իսկ երբ շուրջդ էի պտտվում, կեղծ կուսակցությունների ազդեցությունն էր: Բայց իմ կեցվածքով ամփոփում եմ իմ ժողովրդի իղձերը:

ՁՈՋԱՆՁ - Ձեր քաղաքական կողմնորոշումը կասկածելի է և ոչ ըմբռնելի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Միևնույն է, ես սիրում եմ իմ կուսակցությունները: Ա՛խ, նրանք այնքան շատ են: Ինձ զգում եմ, ինչպես ծուկն ակվարիումում՝ բոլորն ուզում են ինձ կերակրել:

ՁՈՋԱՆՁ - Դուք այնքան տարվեցիք կուսակցական խաղերով, որ մոռացաք ինձ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մի՞թե կարող եմ մոռանալ ձեզ: Ոչ մի կուսակցութ-

յուն ձեր արժանիքները չունի: Դուք սեքսուալ եք, գեղեցիկ ու պարկեշտ, կես խոսքից հասկանում եք դիմացիներին: Դարձեք իմ քրմուհին:

ՁՈՋԱՆՁ - Դա անհնար է: Ես չեմ սիրում կուսակցականներին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բոլոր կուսակցությունները նետում եմ ձեր ոտքերի առջև: Կարող եք տրորել, զցել լվացքի մեքենան, նույնիսկ դնել սառնարանը: Ես կլինեմ ձեր հավատարիմ ընկերը:

ՁՈՋԱՆՁ - Մենք չե՞նք հանդիպել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ինչպե՞ս չենք հանդիպել, երբ կանգնած եք իմ դիմաց:

ՁՈՋԱՆՁ - Չէ, անցյալում, երբ ջահել էինք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես հիմա էլ եմ ջահել: Իսկ դուք, տիկին, այնքան ջահել եք, որ ձեր վրայից կրակ է թափվում, բոց... Եթե անկողնում, մեր մեջ ասած, կարողանանք կեսի կեսը թափել, ուրախությունից աքլորի նման ծուղրուղու կկանչեմ: Տիկին, իմ սիրտը ձեր ձեռքերում է: *(Ուզում է համբուրել:)*

ՁՈՋԱՆՁ - Պարո՛ն, հանդարտվե՛ք: Ասում եմ, մի փորձեք ինձ հունից հանել, դե, բավական է... *(Հրում է, Կարպ Կարպիչն ընկնում է:)*

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նույնն անում է

ձեր աղջիկը փեսայիդ գլխին:
ՁՈՔԱՆՉ - Եվ լավ է անում, ուրեմն արժանի է: Վեր կացեք, անփորձ պատանու եք նմանվել:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ամբողջ կյանքում երազել եմ ձեզ նման կին ունենալ:
ՁՈՔԱՆՉ - Իսկապես... տեսնում եմ, չեք կարողանում բարձրանալ: Տվեք ձեր ձեռքը:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, դուք ինձ խենթացնում եք:
ՁՈՔԱՆՉ - Դուք հրշեջ եք:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հրշեջ... Ինձնից ամեն բան սպասելի է, բայց ինձ թվում է՝ ես փաստաբան եմ: (Սկսում է հազալ:)
ՁՈՔԱՆՉ - Փաստաբան, հավատս չի գալիս:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, Կարպ Կարպիչը վաստակավոր փաստաբան է: Տվեք ինձ մի սրիկա մարդասպան, ու ես նրան մարդ կդարձնեմ: Դա է փաստաբանի առաքելությունը:
ՁՈՔԱՆՉ - Իսկ քեզ ո՞վ պիտի մարդ դարձնի: Ինչպես ես հայտնվել այս տանը:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Զնած էի, մեկը բռնեց կողս ու ասաց՝ վեր կաց ու գնա: Ես եկա այս տուն ծիշտ ժամանակին... (Հազում է):
ՁՈՔԱՆՉ - Դու հազացիր, ինչպես

այն ժամանակ: Զո հազը ես հիշում եմ:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մանկությունից է մնացել: (Ցույց է տալիս թոքերը:)
 Այստեղ ինչ-որ բան կա: Թույլ չի տալիս՝ կարգին հազամ: Բժիշկներն ասում են՝ աղերի կուտակում է: Պատկերացրեք, օլիգարխները հանկարծ իմանան տեղս, իսկույն տրակտոր կմտցնեն կոկորդս ու կսկսեն քանդել:
ՁՈՔԱՆՉ - Նույն ժեստերը, նույն հիմարությունները, որ ասում էիր այն ժամանակ:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մենք անցյալում հանդիպել ենք:
ՁՈՔԱՆՉ - Այն էլ ինչպես... Իսկապես ինձ չես հիշում:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Սիրային կամպ ենք ունեցել:
ՁՈՔԱՆՉ - Դա կոչվում է սիրային կամպ: Վեց ամիս ամուսիններ ենք եղել:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մենք եկեղեցում երդվել ենք:
ՁՈՔԱՆՉ - Նան զագսում՝ ստորագրել: Սրիկա, երեխային թողեցիր վրաս ու փախար:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Փախա՞մ, ինչո՞ւ: Ձեզ նման կնոջը թողեցի... անհավանական է:
ՁՈՔԱՆՉ - Ոչինչ չեմ հիշում:
ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛հ, վթարի եմ ենթարկվել: Գլուխս մնացել էր ցե-

խի ու անվաղողի արանքում: Ուշ-
քի եմ եկել հիվանդանոցում, երբ
բժշկուհին մեծ ասեղով սրսկեց:
Այ, նրան չեմ մոռանում:

ՁՈՔԱՆՁ - Տնօր ձեռքդ: *(Կարպ Կար-
պիչը մեկնում է ձեռքը:)* Այս սպին
իմ ձեռքի գործն է: Այդ օրվանից
քեզ չտեսա:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ուրեմն այս սպին
դո՞ւ ես արել:

ՁՈՔԱՆՁ - Չե՞ս հիշում: Մենք թունդ
վիճեցինք, վիրավորեցիր ինձ
մինչև սրտիս խորքը: Դա վերջին
օրն էր: Լավ, մոռանանք: Ամեն
բան չէ, որ ուզում եմ հիշել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այնպես շփոթված
եմ, ուշքի չեմ գալիս: Մի բաժակ
ջուր: *(Ձոքանչը ջուր է տալիս:)*
Այնքան անսպասելի էր: Վերջա-
պես անցյալիս հետ հանդիպեցի:
Դու իմ կինն ես եղել, և աղջիկը
ինձնից է:

ՁՈՔԱՆՁ - Այո՛, Կարպ Կարպիչ: Ո՞վ
կմտածեր, որ ինքնակամ կընկ-
նես ձեռքս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ի՞նչ ես մտադիր
ինձ անել:

ՁՈՔԱՆՁ - Բացատրություն պահան-
ջել: Քսանհինգ տարի չուզեցիր
տեսնել ինձ ու իմ աղջկան...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Սպասիր, ես քեզ
սիրում էի:

ՁՈՔԱՆՁ - Այո՛, մենք անզուգական
զույգ էինք: Երբ դուրս էինք գալիս

փողոց, բոլորը մեզ էին նայում ու
նախանձում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եվ այս տուն եկա
այն պահին, երբ աղջկաս վիճա-
կը ծանր էր... Ես այնպես էի վա-
զում: Առջև ոչինչ չէր երևում,
բայց գալիս էի, որովհետև արյու-
նը կանչում էր: Ի՞նչ ես ասել Հաս-
միկին:

ՁՈՔԱՆՁ - Հասմիկին ասել եմ, որ
ընկել ես գնացքի տակ, մարմինդ
երկու կեսի է բաժանվել, ու քեզ
զցել են առյուծներին կեր:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ավելի մարդկային
մահ չէ՞ր կարող մոգոնել:

ՁՈՔԱՆՁ - Ինձ համար այն ժամա-
նակ հասարակ մարդ չէիր, բայց
հիմա, երբ իմ ձեռքում ես, պիտի
պատասխան տաս բոլոր չարա-
գործությունների համար:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես չարագործ եմ
եղել:

ՁՈՔԱՆՁ - Աշխարհի մեծագույն չա-
րագործը: Դու կոտրեցիր իմ սիր-
տը, քիչ էր մնացել՝ ինքնասպան
լինեի: Երեխասս փրկեց ինձ...
Փաստաբան, կարո՞ղ ես ինքդ քեզ
պաշտպանել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛չ, ես դժբախտ
մարդ եմ, ոչինչ չեմ հիշում: Դա է
իմ արդարացումը:

ՁՈՔԱՆՁ - Եթե ոչինչ չես հիշում, ու-
րեմն արդարացված ես:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եթե չեմ հիշում՝

ինչ եմ արել, ինչպե՞ս զղջամ: Ես նոր ծնված երեխայի նման եմ, միայն թե կյանքն իմ վրայով անցել է ու գարշելի խոցեր թողել: Լորածին երեխային չեն դատում:

ԶՈՔԱՆՉ - Միայն հիշելի՛ր՝ ինչեր ես արել, ինչ ստորություն ու խաբեություն: Այնպես հետքդ կորցրիր, որ մասնավոր խուզարկուն էլ չգտավ: Իսկ ես ուզում էի աղջկաս ցույց տալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես զղջում եմ և խնդրում եմ քո ներողամտությունը: *(Դադար:)* Ինձ Հասմիկին կներկայացնե՞ս:

ԶՈՔԱՆՉ - Լա հղի է, սթրեսից կարող է երեխային կորցնել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լավ, դեռ ինքս չեմ գիտակցում, որ հայր եմ: Երբ երեխան ծնվի ու ես պապիկ դառնամ, այն ժամանակ էլ կասեմ: Ինչո՞ւ ես ժպտում, ծաղրո՞ւմ ես ինձ: Լայիր աչքերիս, ու ո՛չ մի շարժում: Սիրելի և հարգելի տիկին, իսկապե՞ս Հասմիկի հայրն եմ ու քո ամուսինը, խոստովանիր: Եթե ստես, այս ձեռքերով քեզ կխեղդեմ:

ԶՈՔԱՆՉ - Խեղդիր, Կարպ Կարպիչ, խեղդիր, սիրելիս, ամբողջ կյանքում ինձ վառել ես... թեն ես էլ վատահ չեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ի՛նչ է նշանակում՝ վատահ չես:

ԶՈՔԱՆՉ - Ծատ ես տարբերվում իմ նախկին ամուսնուց:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ ձեռքիս վրայի հետքերը...

ԶՈՔԱՆՉ - Զուգադիպություն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Արի ամուսնանանք, կզգաս, որ ես ես եմ եղել:

ԶՈՔԱՆՉ - Մենք երբեք չենք ամուսնանա:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Երբեք մի՛ ասա երբեք, որովհետև այդ բառն ինձ դուր չի գալիս: Ես ուզում եմ ամուսնացած լինել, կին, երեխա ունենալ, ինձ պիտի սիրեն, կերակրեն, փայփայեն: Եվ, վերջապես, այս տարիքում էլ աղջիկ չեմ կարող ունենալ:

ԶՈՔԱՆՉ - Այդ մասին պիտի ժամանակին մտածելի, ուշացել ես:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Խնդրում եմ, ասա, որ քո ամուսինն եմ:

ԶՈՔԱՆՉ - Ես քեզ լավ գիտեմ, այսօր փաստաբան ես, վաղը կասես՝ էլեկտրիկ եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այն ժամանակ է՛լ եմ այսպիսին եղել:

ԶՈՔԱՆՉ - Չգիտեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Երդվում եմ, էլ երբեք քեզ չեմ ստի, որովհետև վերջապես հասկացա, որ առանց քեզ կյանք չունեմ:

ՎԱՂՈ - *(պատի ետևից):* Տիկին, նրան չհավատաք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ո՛վ խոսեց, ո՞վ

համարձակվեց այս նեղ պահին կրակի վրա յուղ լցնել: (*Մոտենում է պատին:*) Գլուխդ ներս մտցրո՛ւ, միջատ:

ՎԱՂՈ - (*ներս է մտնում*): Բարև ձեզ, սիրելի հարևանուհի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Գործից խոսիր, մրջյուն: Ինչո՞ւ ես երևացել մեր աչքերին:

ՎԱՂՈ - Ուզում եմ խոստովանել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Գնա՛ եկեղեցի, տերտերը քեզ դրախտ կուղարկի: Այս ի՞նչ է, ծաղիկներ... շիրիմիդ համա՛ր ես բերել:

ՎԱՂՈ - Տիկին, իմ բակից եմ քաղել ձեզ համար:

ՋՈՔԱՆԶ - Ծնորհակալություն, պարո՛ն, գեղեցիկ փունջ է:

ՎԱՂՈ - Ինձ մի՛ մերժեք:

ՋՈՔԱՆԶ - Պարո՛ն, ի՞նչը պետք է մերժեմ:

ՎԱՂՈ - Ես տառապում եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ծարունակիր, միջատ, միայն չասես, թե սիրահարված ես:

ՎԱՂՈ - Արդեն հինգ տարի է: Ողորմածիկ կինս ասում էր՝ կմեռնեմ, էլ լույս ու արև չես տեսնի: Հենց քեզ տեսա, հասկացա, որ դու ես իմ լույսն ու արևը: Մինչև հիմա ուշքի չեմ գալիս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Սա կարծես սիրահարվել է:

ՋՈՔԱՆԶ - Պարոն Վաղինակ, ես համեստ կին եմ:

ՎԱՂՈ - Պատրաստ եմ քեզ համար ամեն գոհողության:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Դրա համար ես նրա բղերը գողանում:

ՎԱՂՈ - (*սիրառատ*): Որ հոտոտեմ, կարոտս առնեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ա՛խ դու, սեքսուալ մոլագար, համարձակվում ես աչք տնկել իմ քրմուհու վրա և միաժամանակ գողանալ նրա ապխտած բղերը: Մենամարտ, թե՛ քոթակ, ընտրի՛ր:

ՎԱՂՈ - Մենամարտ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Իսկ ես կողմ եմ քոթակին: Այնպես կքոթակեմ, որ մոռանաս, թե որ անցքից ես ներս մտել:

ՋՈՔԱՆԶ - Հանգստացեք, պարոններ, ես չեմ ուզում, որ ինձ համար մենամարտեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Տիկին, մենամարտը տղամարդկության երաշխիքն է: Ի՛ զեն, ի՞նչ զենք ես նախընտրում:

ՋՈՔԱՆԶ - Հանգստացեք, պարոններ, ինքս կորոշեմ, ով է ինձ հարմար:

ՎԱՂՈ - Տունս կվաճառեմ, փողը քեզ կտամ, տիրուհիս:

ՋՈՔԱՆԶ - Բռավո, դա անձնագոհություն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Զաղաքի կենտրոն-

նում երկու տուն ունեմ, չեմ ավստսում, կվաճառեմ:

ՎԱՂՈ - Նիկոլայի հինգ ոսկի ունեմ, կվաճառեմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ախ դու, սրիկա, ոսկի՞ ես շաղ տալիս: Որ այդպես է, ես էլ կվաճառեմ օպերայի շենքը:

ՎԱՂՈ - Օպերան քոնը չէ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եթե իմը չէ, ապա ո՞ւմն է: Չի կարելի մասնավոր գաղտնիքը քեզ նման արարածին վստահել: Ես սեփականաշնորհեմ եմ դեռ այն ժամանակ, երբ տիկինն այնտեղ պարում էր, և լսիր, միջատ, մենք ոսկյա շղթայով ենք շաղկապված:

ԶՈՋԱՆՉ - Ստում ես: Պարոն, առայժմ ամուսնանալու մտադրություն չունեմ: Ո՞ր է աղջիկս, ինչո՞ւ է ուշանում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - (Վաղոյին): Ո՞ր է աղջիկը, ինչո՞ւ է ուշանում:

ՎԱՂՈ - Ի՞նձ ես հարցնում: Ես ի՞նչ իմանամ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Անմիջապես գնա, գտիր նրան ու բեր: Առանց նրան չմտնես այս տուն: Ի՞նչ ես ցգվել: Չե՞ս տեսնում, տիկինը տառապում է, իսկ դու տեղիցդ չես շարժվում: Ուզո՞ւմ ես, հանեմ լազերային ատրճանակս: Փախի՞ր, քանի ունեցածդ չեմ կտրել ու օգե՞լ շներին:

Վաղոն փախչում է:

ԶՈՋԱՆՉ - Դուք էլ գնացեք, ես ուզում եմ հանգստանալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Երբեք, ես ձեզ կպաշտպանեմ ամեն տեսակ թափափուկներից:

ԶՈՋԱՆՉ - Հենց աղջիկս վերադառնա, ինձ կարթնացնեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լսում եմ, իմ քրմուհի:

Ձոքանչը աչքերը փակում է: Կարպ Կարպիչը քայլում է գինվորի պես:

Պատկեր երրորդ

Ձոքանչը քնած է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - (պտտվում է գոքանչի չորս կողմն ու քրթմնջում): Մեկ, երկու, երեք, տեղում պտույտ, չորս, հինգ, վեց... (Ներս է մտնում Հասմիկը:) Չփորձես աղմկել, նա քնած է, հիմա երազներ է տեսնում: (Ուշադիր նայում է:) Հասմիկ, լավ լուր ունեմ քեզ հայտնելու: Քո աչքերի գույնը սև է, ինչպես իմը, քիթդ նույնպես թեթև կոր է, և ամենից կարևորը՝ մենք այնքան իրար նման ենք:

ՀԱՍՄԻԿ - Դ՞ա՞մ է ուրախ լուրը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մայրդ ասաց՝ հղի ես... Գևորգը գիտի՞ այդ մասին:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, երեխան միայն իմն է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այնքան նման ես մորդ, իսկ հայրդ... Դու նրան գիտնու:

ՀԱՍՄԻԿ - Մայրս ասում էր՝ ընկել է գնացքի տակ, իսկ մարմինն առյուծներն են կերել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մայրդ չափազանցել է, ո՞վ է տեսել՝ առյուծը մարդու միս ուտի, ալերգիա կստանա:

ՀԱՍՄԻԿ - Ո՞ր է Գևորգը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նա քո ետևից եկավ:

ՀԱՍՄԻԿ - Ամեն ինչում մեղավորը դու ես:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ե՛ս: Մեղադրելուց առաջ մտածիր՝ ինչ ես ասում: Ես մորդ հետ ձեր ապագան էի գծագրում, իսկ դու, անշնորհակալ աղջիկ, ինձ զրպարտում ես:

ՀԱՍՄԻԿ - Իսկ ինչո՞ւ ես մեր տանը, ինչո՞ւ չես հեռանում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հասմիկ, հարցը զուտ անձնական է: Ես կարծես կախարդված լինեմ: Ես չեմ կարող քեզ այս վիճակում թողնել: Երբ Գևորգն ասաց, որ տուն չի ուզում գալ, մտածեցի, որ դա քո օգտին է:

ՀԱՍՄԻԿ - Ի՞նչն է իմ օգտին՝ առանց ամուսնու երեխա մեծացնելը, ինչպես իմ մայրը: Ամբողջ կյանքում երազում էի հայր ունենալ,

որ ձեռքս բռնի, տանի զբոսնելու...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ես քեզ հասկանում եմ:

ՀԱՍՄԻԿ - Դու է՛լ հայր չես ունեցել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ունեցել եմ, բայց նա շատ խիստ մարդ էր, դրա համար էլ ինֆարկտ ստացավ:

ՀԱՍՄԻԿ - Ի՞նչ էր անունը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Չեմ հիշում, ոչինչ չեմ հիշում: *(Դադար:)*

ՀԱՍՄԻԿ - Վստահ եմ, Գևորգն ինձ չի լքի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այդպես մտածում են բոլոր հղի կանայք, նույնիսկ մայրդ: Սպասիր, մայրդ արթնանում է: Նա բացեց մի աչքը, նաև երկրորդը: Բարի լույս, տիկին, ինչպես հանգստացաք:

ԶՈՋԱՆՉ - Ինչո՞ւ է այդքան տխուր:

ՀԱՍՄԻԿ - Մայրիկ, ես դժբախտ կին եմ: *(Ընկնում է մոր գիրկը:)*

ԶՈՋԱՆՉ - Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ ես դժբախտ, ո՞վ է քեզ դժբախտացրել: Պարոն, բացատրիր, ի՞նչ է կատարվում աղջկաս հետ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեր փեսան... Մենք նրա մասին բավական երկար խոսել ենք, հեռացել է տնից: Գիշեր է, իսկ նա չկա: Ինչպես երևում է, չի ուզում տուն գալ:

ԶՈՋԱՆՉ - Ինչո՞ւ չի ուզում տուն գալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այդ ո՞ր հիմարն իր

ազատությունը կփոխարինի ընտանեկան լծով:

ՁՈՔԱՆՉ - Դուք էլ եք այդ կարծիքին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տիկին, ես բացառություն եմ: *(Ձոքանչը նրան է նայում:)* Թեև ինչ իմանամ, իմ կյանքում ինչևր են պատահել, բայց հոգով ես ընտանիքասեր եմ: Եթե շատ եք ուզում, նրան կարող եմ գտնել: Բայց արժե՞ այդ տղայի համար լաց լինել:

ՁՈՔԱՆՉ - Մի՛ լացիր, եթե ձեռքս ընկնի, եթե միայն փորձի ձեռքս ընկնել, եթե կարողանամ նրան բռնել... Կարպ Կարպիչ, մոռացեք, ինչ խոսել ենք նրա մասին: Ես պահանջում եմ ապահարզան:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մենք պահանջում ենք ապահարզան:

ՀԱՍՄԻԿ - Մայրիկ, ես նրան սիրում եմ:

ՁՈՔԱՆՉ - Այդ տղան արժանի չէ քո սիրուն: Հավաքիր իրերդ, գնում ենք:

ՀԱՍՄԻԿ - Թողնեմ իմ տունը, թողնեմ Գևորգին... Ինչ ենք անելու երկուսով քո տանը:

ՁՈՔԱՆՉ - Քեզ համար նոր փեսացու կծարեմ: Հիշում ես այն տնտեսագետին: Հիմա նախարարության աչքն է: Մի անգամ տեսա, հարազատ տղայի պես ընկել էր գիրկս, քո մասին էր

հարցնում: Չգացվում էր, որ քեզ չի մոռացել: Գնանք, սիրելիս:

ՀԱՍՄԻԿ - Ես չեմ լքի Գևորգին:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Գևորգի մասին կարող ես չանհանգստանալ: Նա հիմա ընկեր է ձարել:

ՀԱՍՄԻԿ - Ի՞նչ է դա նշանակում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եթե ընկերուհի չունի, իր հարազատ կնոջը չի սիրում, հետևաբար տրամաբանությունը ինձ հուշում է, որ ընկերունի:

ՀԱՍՄԻԿ - Ստում եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - 21-րդ դար, ինչ ասես չի լինում:

ՀԱՍՄԻԿ - Մայրիկ, կործանվեց ընտանիքս:

ՁՈՔԱՆՉ - Նա քեզ դավաճանել է:

ՀԱՍՄԻԿ - Ավելի վատ բան է արել:

ՁՈՔԱՆՉ - Ճիշտ ես արել, որ փաստաբան ես վարձել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կներեք, նա ինձ չի վարձել: Ես ինքնակամ եմ եկել: Եկա փրկելու այս գեղեցիկ աղջկան, ով ունի ձեզ նման հիասքանչ մայրիկ:

ՁՈՔԱՆՉ - Իսկ հրեջն ունի՞ փաստաբան:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իհարկե, ուներ: Նրա հետ բացատրական աշխատանք տարա, ու նա ճողոպրել է:

ՁՈՔԱՆՉ - Ծնորհակալ եմ, որ աղջկաս ազատել ես այդ հրեջի ձի-

րաններից: Աղջիկս, էլ չտեսնեմ՝
լաց լինես, և ո՞ւմ համար:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Մի միասեռակա-
նի:

ԶՈՔԱՆՉ - Ի՞նչ, նա միասեռակամ է:
Դա մահ է, ողբերգություն, դա
միասեռություն է: Օգնիր, շունչս
կտրվում է: Եվ այսքան ժամանակ
դու նրա հենո ես ապրել: Աղջիկս,
նվագիր Մենդելսոն և սև հագիր:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Գուցե մինչև մահ-
վան ծեսը մի կտոր հաց ուտենք:

ԶՈՔԱՆՉ - Թողեք, չե՞ք տեսնում,
մենք ողբում ենք: Նվագիր, աղ-
ջիկս:

**Հասմիկը նվագում է: Լսվում է
դռան քակոց:**

ԶՈՔԱՆՉ - Նա է, համարձակվել է
վերադառնալ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եկեք թաքնվենք,
պետք է հասկանանք նրա մտադ-
րությունը: Հասմիկ, լույսը հանգց-
րու:

**Լույսը հանգցնում, թաքնվում են:
Ներս է մտնում Գևորգը՝ ծաղիկ-
ները ձեռքին:**

ԳԵՎՈՐԳ - Սիրելիս, ես տանն եմ:
Քեզ համար ծաղիկներ եմ բերել:
Ռեստորանում սեղան եմ պատ-
վիրել: Կլինենք երկուսով, ինչպես
հինգ տարի առաջ: Կարպ Կար-
պիչը գնացել է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այո՛:

ԳԵՎՈՐԳ - Ինչ լավ է: Վերջապես
պրծանք այդ մարդուց: (Կարպ
Կարպիչը համր շարժումներ է ա-
նում:) Եթե ուզում ես, կարող ենք
տանը մնալ: (Փնտրում է:) Տեսա,
ինչպես մտար տուն: Ա՛ռ, որտե՞ղ
ես, սիրելիս:

ԶՈՔԱՆՉ - Այստեղ եմ, սիրելիս:
Կարպ Կարպիչ, լույսը վառիր,
տեսնենք այդ մարդու անամոթ
դեմքը: (Լույսը վառվում է:) Ինչո՞ւ
չես կարմրում:

ԳԵՎՈՐԳ - Ես ի՞նչ եմ արել:

ԶՈՔԱՆՉ - Քո արածը նույնիսկ Աստ-
վածաշնչում չի գրված:

ՀԱՍՄԻԿ - Ես համաձայն եմ, սիրի՛ր
Սյուզիին:

ԳԵՎՈՐԳ - Բայց ես Սյուզիին չեմ սի-
րում:

ԶՈՔԱՆՉ - Իսկ ո՞ւմ ես սիրում: Քո ա-
րածը ուղեղիս մեջ չի տեղավոր-
վում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Պարո՛ն, մի՞թե կա-
նայք այնքան արժանիքներ չու-
նեն, որ արժանանան քո
ուշադրությանը:

ԳԵՎՈՐԳ - Ես հարգում եմ նրանց:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Կարևորը հարգե-
լը չէ, կարևորը սիրելն է: Կենակ-
ցիր պահպանակով, հասկացա՛ր:

ԳԵՎՈՐԳ - Ո՞ւմ հետ եմ կենակցելու,
չեմ հասկանում:

ԶՈՔԱՆՉ - Զզվանքից բերանս չի
բացվում: Տղա՛, խելքդ գլուխդ հա-

վաքիր, քեզ կործանում ես: Ինչ կմտածի աշխարհն իմ մասին, սարսափելի է... Ո՛վ եմ հիմա ես... Անզգամ, վերականգնիր մեր պատիվը:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Եթե Սյուզիին չես սիրում, Կառա անունով պոռնիկ գիտեմ: Կհամաձայնվի միայն փողով:

ՀԱՍՄԻԿ - Ես համաձայն եմ, գնա Կառայի մոտ, սա էլ՝ քեզ փող: Գնա ցանկացած կնոջ մոտ, բայց մեզ մի խայտառակիր:

Դադար, իրար են նայում:

ԳԵՎՈՐԳ - Վերջապես բացատրելու եք, ինչ է կատարվում իմ տանը:

ՀԱՍՄԻԿ - Կարպ Կարպիչն ասաց, որ դու ոչ մի կնոջ չես սիրում:

ԳԵՎՈՐԳ - Այո, չեմ սիրում, ես միայն քեզ եմ սիրում:

ԶՈՔԱՆՉ - Ձեռք չտաս իմ աղջկան: Հասմիկ, մենք գնում ենք:

ՀԱՍՄԻԿ - Նա ասաց, որ դու միասեռական ես:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Տրամաբանությունը դրան է մոտեցնում, խոստովանիր, դու միասեռական ես, թե՛ ոչ:

ԳԵՎՈՐԳ - Ո՛չ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Բա ինչո՞ւ Սյուզիին չես սիրում:

ԳԵՎՈՐԳ - Որովհետև չեմ սիրում:

Ես միայն իմ կնոջն եմ սիրում: Դուրս իմ տնից: Ես ձեզ չեմ ուզում տեսնել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Լավ, կհեռանամ, ես արժանապատվություն ունեմ: Զոքանչը մնալու է:

ԳԵՎՈՐԳ - Ո՛չ: Զոքանչին էլ վերցրու ու հեռացիր:

ԶՈՔԱՆՉ - Դու համարձակվում ես ինձ տնից դուրս անել:

ԳԵՎՈՐԳ - Հա՛, ու եթե չհեռանաք... Դուք եթե չհեռանաք...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հանգստացիր: Տիկին զոքանչուհի, մենք պետք է հեռանանք:

ԶՈՔԱՆՉ - Ո՛չ, պիտի մնամ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Հանուն ձեր երեխայի պարտավոր եք հեռանալ: Թող տուն-տունիկ խաղան:

ԶՈՔԱՆՉ - Ես նրանց խանգարում եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Զոքանչը տան պահապան հրեշտակն է, բայց ո՛չ տվյալ պահին:

ԶՈՔԱՆՉ - Աղջիկս, ուզո՞ւմ ես՝ մնամ:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, մայրիկ, վաղը քեզ կզանգեմ:

ԶՈՔԱՆՉ - Դու կփոշմանես, բայց ուշ կլինի: Կզանգես 09.30-ին: Գնացինք, Կարպ Կարպիչ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Այո, ժամանակն է:

Մթություն:

ԵՐՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Պատկեր առաջին

Գևորգը, մատած դռան շեմին, մայրում է ամպերին: Հասմիկը նախաճաշ է պատրաստում:

ԳԵՎՈՐԳ - Սիրելիս, նստիր կողքիս, ամպերին նայենք:

ՀԱՍՄԻԿ - Նախաճաշ եմ պատրաստում:

ԳԵՎՈՐԳ - Նախաճաշը կսպասի: Նայիր, ամպերը նմանվեցին ուղտերի, իսկ հիմա դարձան աղավնիներ: Ինչ գեղեցիկ են:

ՀԱՍՄԻԿ - Չե՞ս գնում աշխատանքի:

ԳԵՎՈՐԳ - Այ կին, ի՞նչ ես նստել շնչիս, թող ամպերով հիանամ: Նայիր, քամին քշեց ամպերը: Պարզվում է՝ գեղեցկությունը փխրուն է, հավերժություն չկա: Ուզում եմ լաց լինել, բայց ավելի լավ է՝ ոտքերս մեկնեմ ու քնեմ: Հենց ամպերը երևացին, ինձ կարթնացնես:

ՀԱՍՄԻԿ - Գևորգ, կոոպերատիվը քեզ է սպասում:

ԳԵՎՈՐԳ - Ի՞նչ կին ես, չես թողնում՝ քնեմ:

ՀԱՍՄԻԿ - Աշխատանքդ մնաց:

ԳԵՎՈՐԳ - Թող կորչեն աշխատանքն էլ, կոոպերատիվն էլ: Չեմ ուզում աշխատել, ուզում եմ ամպերին նայել:

ՀԱՍՄԻԿ - Ախր, կկորցնես ամեն ինչ:

ԳԵՎՈՐԳ - Հնարավոր է, շատերն են սպասում, որ դուրս գամ շուկայից:

ՀԱՍՄԻԿ - Հինգ տարվա աշխատանքդ ջուրը կընկնի:

ԳԵՎՈՐԳ - Վերջապես աչքերս բացվել են: Ես պիտի շփվեմ բնության հետ: Պիտի բնության մի մասնիկը դառնամ: Ես ի՞նչ գործ ունեմ մխոցի հետ, նրանց հերն եմ անիծել, մերն էլ՝ վրան: Լսում ես, մրջյունները խոսում են:

ՀԱՍՄԻԿ - Մրջյունները չեն խոսում:

ԳԵՎՈՐԳ - Այս մեկը կամաց լաց է լինում: Փոքրիկս, ինչո՞ւ ես լաց լինում: Ասում է՝ փորը ցավում է: Հավանաբար շատ է կերել մեր ապխտած ձկներից: Հանգստացիր, հիմա շտապօգնություն կկանչեմ, որ քեզ հոգնա անի: Փորկապության դեմ դեղ չունեն:

ՀԱՍՄԻԿ - Վերջ տուր, նախաճաշդ կեր ու գնա գործի: Քեզ համար սուրճ էլ եմ եփել:

ԳԵՎՈՐԳ - Այն ո՞ր հիմարն է ասել՝ աշխատանքը մարդուն մարդ է դարձրել, իսկ ես ասում եմ, կարող ես գրի առնել, աշխատանքը մարդուն ռոբոտ է դարձնում: Երբևէ ամպերին նայած կամ:

Թիվ 56-57

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ:

ԳԵՎՈՐԳ - Այն ժամանակ ռոբոտ էի, հիմա կամաց-կամաց մարդ եմ դառնում:

ՀԱՍՄԻԿ - Գնա աշխատանքի, մարդիկ քեզ են սպասում:

ԳԵՎՈՐԳ - Այո՛, գնամ, կես գնով վաճառեմ ունեցած ապրանքներս, հետո կգամ տուն, ու միասին կնայենք՝ ինչպես են մրջյունները ելումուտ անում: *(Խորը շունչ է քաշում:)* Ինչ հաճելի է, երբ չես աշխատում: Հոգիդ մաքրվում է, քեզ ազատ մարդ ես զգում, մարդ՝ մեծատառով:

ՀԱՍՄԻԿ - Իսկ ինչպե՞ս ենք ապրելու, ո՞վ է մեզ կերակրելու:

ԳԵՎՈՐԳ - Դու երագում էիր Աֆրիկա գնալ: Կվերցնենք գումարն ու դեպի Աֆրիկա՝ գետաձիեր ու փղեր տեսնելու: Վստահ կարող եմ ասել, մեր փողը կբավականացնի շուրջերկրյա ծամփորության համար:

ՀԱՍՄԻԿ - Ի՞նչ ենք անելու, երբ փողը վերջանա:

ԳԵՎՈՐԳ - Այդ մասին չեմ մտածում և չեմ ուզում մտածել:

ՀԱՍՄԻԿ - Բայց դա աննորմալ ծրագիր է:

ԳԵՎՈՐԳ - Չե՛ս ուզում գետաձի տեսնել, առյուծներ կորսանք:

ՀԱՍՄԻԿ - Ինչքան ծիծաղեցինք՝ բավական է:

ԳԵՎՈՐԳ - Ծիծաղեցի՞նք: Կարծում ես, կատմկ եմ անում: Գնում եմ, վաճառեմ ունեցածս, իսկ դու պատրաստվիր ճանապարհորդության: Ասում էիր՝ գնացքի ռեւսերը հասնում են մեր տուն: Տոմս գնիր, առանձին կուպե երկու հոգու համար:

ՀԱՍՄԻԿ - Մեր տան մոտ ռելսեր չկան ու երբեք չեն եղել:

ԳԵՎՈՐԳ - Իսկ Կարպ Կարպիչն ասում էր՝ ռելսերը մտել են մեր խոհանոց:

ՀԱՍՄԻԿ - Կարպ Կարպիչն էլ չի եղել:

ԳԵՎՈՐԳ - Ի՞նչ: Կարպ Կարպիչը փուչիկ էր ու պայթեց: Մենք հարբե՞լ ենք:

ՀԱՍՄԻԿ - Հա՛: Իսկ հիմա հաց կեր ու գնա աշխատանքի:

ԳԵՎՈՐԳ - Իսկ ես նրան սովորել էի, կարծում էի՝ նրանից պրծում չենք ունենալու: *(Ծիծաղում է:)* Որ իմանայի՝ նա երևակայության արդյունք է, մի լավ կծիծաղեի: Ես այնքան լուրջ ընդունեցի... Իսկ զոքանչ մայրիկը նույնպես փուչիկ էր: *(Ծիծաղում է:)* Հիմա կխելագարվեմ: Ո՞ր է իմ սիրելի զոքանչ մայրիկը: Ես չեմ ուզում մնալ առանց զոքանչի:

ՀԱՍՄԻԿ - Նա իր տանն է:

ԳԵՎՈՐԳ - Վստահ ես:

ՀԱՍՄԻԿ - Առավոտյան եմ հետը

խոսել: Ուշանում ես աշխատանքից:

ԳԵՎՈՐԳ - Զեզ չեմ հասկանում: Ամբողջ տարին հետս կռվում էիր, որ նստեմ կողքիդ, ու միասին նայենք ամպերին, իսկ հիմա դուրս ես անում, թե՛ գնա աշխատանքի:

ՀԱՍՄԻԿ - Ես ուզում էի, որ կիրակի օրերը միասին լինենք:

ԳԵՎՈՐԳ - Լավ կլիներ, բայց իմ առևտուրը շաբաթ ու կիրակի օրերին է:

ՀԱՍՄԻԿ - Ուրեմն՝ երկուշաբթի:

ԳԵՎՈՐԳ - Երկուշաբթի և մնացած օրերը պատրաստվում եմ կիրակի օրվա տոնավաճառին:

ՀԱՍՄԻԿ - Չե՞ս կարող հանգստյան օր ունենալ:

ԳԵՎՈՐԳ - Այսօրվանից կարող եմ: *(Թուղթ ու գրիչ է վերցնում:)* Հրաման համար 101. «Ազատել աշխատանքից Գևորգ Խաչատրյանին»: Հրաման համար 102. «Պարտականությունը դնել Սյուզի վրա...»: Ի՞նչ էր նրա ազգանունը:

ՀԱՍՄԻԿ - Բո գործը վստահում ես այդ կնոջը:

ԳԵՎՈՐԳ - Նրան նշանակում եմ կոոպերատիվի նախագահ: *(Կնիքով կնքում է:)* Վերջ: Այսօրվանից նախագահ չեմ, ես ազատ մարդ եմ:

ՀԱՍՄԻԿ - *(պատռում է թուղթը):*

Միայն իմ դիակի վրայով:

ԳԵՎՈՐԳ - Ուզում ես, քեզ նշանակեմ նախագահ:

ՀԱՍՄԻԿ - Իսկ դու տան գործերը կարող ես անել:

ԳԵՎՈՐԳ - Բո արած գործը կանեմ հինգ րոպեում, հետո կնստեմ դռան շեմին ու կնայեմ մրջյուններին՝ ինչ խելացի կենդանիներ են:

ՀԱՍՄԻԿ - Ծատ լավ, ինձ նշանակիր կոոպերատիվի նախագահ:

ԳԵՎՈՐԳ - Հրաման համար 102. «Նշանակել Հասմիկ Ծատկորյանին կոոպերատիվի նախագահ»: Խնդրեմ, հրամանը կտաս Սյուզիին, քեզ կծանոթացնի գործի հետ:

ՀԱՍՄԻԿ - Չմոռանաս ճաշ եփել:

ԳԵՎՈՐԳ - Ի՞նչ ճաշ ես ուզում, սիրելիս:

ՀԱՍՄԻԿ - Դոլմա կաղամբով, միսը սառնարանում է: Կարող ես եփել, սիրելիս:

ԳԵՎՈՐԳ - Տղամարդիկ աշխարհի լավագույն խոհարարներն են:

ՀԱՍՄԻԿ - Ես հարցնում եմ՝ դու եփել գիտե՞ս: Եթե չստացվի, կզանգես ինձ:

ԳԵՎՈՐԳ - Այնպիսի տղամա կեփեմ, որ մատներդ հետը ուտես:

ՀԱՍՄԻԿ - Պայմանավորվեցինք, տո՛ւր կնիքը:

ԳԵՎՈՐԳ - Եթե հարցեր առաջա-

նան, դիմիր Սյուզիին: Նա գործը լավ գիտի:

ՀԱՍՄԻԿ - Եղավ:

ԳԵՎՈՐԳ - Վերցրու կնիքը, շեֆ: Սա էլ հրամանը: Ինձ հարցեր ունեն:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ:

ԳԵՎՈՐԳ - Ուզում եմ խորհուրդներ տալ:

ՀԱՍՄԻԿ - Ծնորհակալություն, ես կանեմ այն, ինչ սիրոս թելադրի:

Ավելի լավ է, տաքսի պատվիրիր:

ԳԵՎՈՐԳ - Լսիր, հանկարծ աշխատանքս ջուրը չզցես:

ՀԱՍՄԻԿ - Նստիր շեմին ու ամպերին նայիր:

ԳԵՎՈՐԳ - Կնայեմ: Երեկոյան կգաս, կպատմես՝ ինչ ես արել:

ՀԱՍՄԻԿ - Այդ էր պակաս: Ես կոպերատիվի նախագահն եմ և պարտավոր չեմ զեկուցելու ոչ ոքի: *(Մտնում է ննջարան:)*

ԳԵՎՈՐԳ - *(գանգում է):* Տաքսի ծառայությունն է: Մեզ տաքսի է պետք: Հինգ րոպեից, լավ: *(Չայն է տալիս:)* Տիկին, տաքսին կլինի հինգ րոպեից: *(Զայում է ու մտորում:)* Ինչո՞ւ համաձայնեցի: Գործերս վարի է տալու: Ինչ է հասկանում մխոցից, կարդանից... Թող կորչեն մխոցն էլ, կարդանն էլ, կեցցեն ամպերն ու մրջյունները: Տիկին նախագահ, գործից ուշանում ես: *(Գալիս է Հասմիկը՝ գեղեցիկ հագնված:)*

Օպերա ես գնում, թե՛ աշխատանքի:

ՀԱՍՄԻԿ - Հատակը կավլես, ամանները կլվանաս, լվացքն էլ կանես: Չմոռանաս նստել շեմին ու նայել ամպերին:

ԳԵՎՈՐԳ - Լսում եմ, տիկին նախագահուհի:

Մթություն:

Պատկեր երկրորդ

Երեկո է, ամպեր չեն երևում: Գևորգը զայրացած քայլում է տան մեջ, անընդհատ նայում է ժամացույցին:

ԳԵՎՈՐԳ - Ուշանում է: Դուրման էլ սառեց: *(Նայում է կաթսայի մեջ:)* Ամեն ինչ լցրեցի: *(Փորձում է, դեմքը ծամաճոռում:)* Փորձերս վրաս թանկ են նստելու: Սոված եմ... Բա որ թունավորվեմ: *(Պատի անցքից ներս է մտնում Վադոն:)*

ՎԱՂՈ - Բարև, հարևան: Ֆո՛ու, էս ինչ հոտ ես գցել: Դո՞ւ ես եփել:

ԳԵՎՈՐԳ - Հա՛, կուտես:

ՎԱՂՈ - Չէ, շնորհակալ եմ, գլխիցս ձեռք չեմ քաշել: *(Սիգարետ է վառում:)* Նայում եմ, ամբողջ օրն առաջ ու ետ ես քայլում: Լավ չի, չէ՛, պարապ-սարապ քայլելը: Բա ես ինչ ասեմ, քառասուն տարի աշխատանք չեմ ունեցել, քայլել եմ

ու քայլել: Դժվար է պարապ մնալը, չգիտես՝ ինչ անես:

ԳԵՎՈՐԳ - Դրա համար ես մառանիցս գողություն անում:

ՎԱՂՈ - Ըստ կանոնադրության:

ԳԵՎՈՐԳ - Դա ի՞նչ կանոնադրություն է:

ՎԱՂՈ - Իմ սեփական կանոնադրությունն է: Այնտեղ ասվում է. եթե հարևանդ ունի ուտելիքի պաշար, կարող ես վերցնել: Դա օրենքով պախարակելի չէ:

ԳԵՎՈՐԳ - Մառանում բան չես թողել: Դու խիղճ ունեն:

ՎԱՂՈ - Ձեր մառանում այնքան ուտելիք կար, որ կարող ես մի ամբողջ բանակ պահել: Դեռևս հին իմաստուններն ասել են՝ վերցրու հարևանիդ ունեցվածքի կեսը, բայց հեղափոխություն մի արա: Յոթանասուն տարի պահեցինք, պահպանեցինք սովետը: Ղարաբաղցիները երկու օրում քանդեցին: Բա՛, եղբայր, հարգիր ղարաբաղցիներին, դու նրանց լավ չես ծանաչում:

ԳԵՎՈՐԳ - Էն էլ ոնց եմ ծանաչում, զոքանչս այն կողմերից է:

ՎԱՂՈ - Զոքանչդ սիրուն կնիկ է:

ԳԵՎՈՐԳ - Նվիրում եմ քեզ:

ՎԱՂՈ - Կարծում ես, զոքանչ պահելը հեշտ է: Ամբողջ գիշեր էդ մասին եմ մտածել: Չէ, նա ինձ կստիպի, որ աշխատեմ: Գլուխս

փորձանքից հեռու: Հալալ է մեր իշխանությանը՝ աշխատանքի փոխարեն թոշակ է տալիս: Կեր, խմիր մի ժամում ու հետո սոված զկրտա: Էն օղին ինչի՞ ես սառնարանում պահում, կփչանա:

ԳԵՎՈՐԳ - Մենք օղի ունենք:

ՎԱՂՈ - Ամենադրակալը Ռուսաստանից:

ԳԵՎՈՐԳ - Խմել ես ուզում:

ՎԱՂՈ - Ե՛ս... դեմ չեմ: Մի բաժակ էլ քեզ կտամ:

ԳԵՎՈՐԳ - Գնա՛ բեր, ես էլ կխմեմ:

ՎԱՂՈ - Ուտելիք էլ բերե՛մ:

ԳԵՎՈՐԳ - Ինչ մտքովդ կանցնի:

ՎԱՂՈ - *(սառնարանն է քչփորում):* Երշիկ կիկյան, սկումբրիա, վատ չի, թթու վարունգ: *(Ամբողջը դնում է սեղանին):*

ԳԵՎՈՐԳ - Կինս ուշանում է:

ՎԱՂՈ - Պարապ ես, դրա համար էլ հիշեցիր կնոջդ... Հիմա մի երկու բաժակ կխմենք ու ամեն ինչ կմոռանանք: *(Լցնում է:)* Առաջինը խմենք մեր հարևանության կենացը: Քսան տարի հորդ հետ ընկերություն եմ արել: Հերդ ասում էր՝ Վաղո՛, քո կանոնադրությունից չես ուզում դուրս գալ, անբանությունից մինչև գողություն մեկ քայլ է: Ես էլ ասում էի՝ հարգարժան հարևան, հենց կանոնադրությունս թույլ չի տալիս գողություն անեմ, ես ազնիվ մարդ

եմ: Դե, խմիր: *(Խմում են:)* Առաջին բաժակի վրա հաց չեն ուտում: Էդ էլ ռուսներից մնաց: Երանք օղի խմելու ձևը գիտեն: Ոչ մեզ նման՝ միանգամից սկսում ենք խորոված հուպ տալ: Էս մի բաժակն էլ... դու ասա, ես խմեմ:

ԳԵՎՈՐԳ - Ես կենաց ասել չգիտեմ, քիչ եմ խմում:

ՎԱՂՆ - Բա մարդ էլ արաղը երեք ամիս սառնարանում թողնի՞, վերցրու՞, մեկ, երկու՝ խմեցի՞ք: *(Խմում են:)* Հիմա թթու կեր ու շորիցդ հոտ քաշիր:

ԳԵՎՈՐԳ - Կնոջս նշանակեցի կոոպերատիվի նախագահ: Գնացել է, ետ չի գալիս:

ՎԱՂՆ - Էլի կնոջդ հիշեցիր: Դրա ժամանակն է: Կենտրոնացիր բաժակաձառի վրա, տղամարդ ենք, չէ՞:

ԳԵՎՈՐԳ - Հա՛, տղամարդ ենք:

ՎԱՂՆ - Ջահել էի, բերանիցս կրակ ու շանթ էի արձակում: Կարա՞ր մեկն ինձ ասեր՝ գլխիդ վրա մազ կա: Իմ ահից նախկին կինս երեք անգամ ուշաթափվեց, հետո շորերը վերցրեց ու գնաց, չդիմացավ: Խմենք ուժեղ տղամարդկանց կենացը: *(Խմում են:)*

ԳԵՎՈՐԳ - Լա ինձ տանը թողեց, իսկ ինքը գնաց իմ գործն անելու:

ՎԱՂՆ - Թող անի, թող իմանա քո գինը:

ԳԵՎՈՐԳ - Ախր, նա ոչինչ չի հասկանում իմ գործից:

ՎԱՂՆ - Կինդ քո չափ խելք ունի՞, որ հասկանա:

ԳԵՎՈՐԳ - Ճիշտ ես, մի գրամ խելք չունի: Հիմա Սյուզիի հետ կռվում են, իրար մազ են պոկում: Էդ Սյուզին ծարպիկ, գործունյա կին է, իմ աջ ձեռքը, հրեշտակ պահապանը:

ՎԱՂՆ - Զո սիրուի՞ն է:

ԳԵՎՈՐԳ - Հիմա էլ սա: Մենք սիրեկաններ չենք, հասկացա՞ր:

ՎԱՂՆ - Ծուտ ես բարկանում, նյարդերդ պահպանիր, աշխարհում ինչն է շատ՝ կնիկը: Սա չլինի, նա կլինի: Զեզ համար ի՞նչ տարբերություն:

ԳԵՎՈՐԳ - Ինչպե՞ս թե՛ տարբերություն չկա: Լա իմ կինն է, իսկ մյուսներն իմ կանայք չեն: Թեև կանայք նույնն են՝ բոլորն էլ քեզնից փող են ուզում:

ՎԱՂՆ - Էն էլ ինչքան, կարող էի միլիոնատեր լինել, նրանց պատճառով էս օրն ընկա: Լացս գալիս է:

ԳԵՎՈՐԳ - Մի՛ լացիր, թե չէ ես էլ կլացեմ:

ՎԱՂՆ - Բայց ես ուզում եմ լացել:

ԳԵՎՈՐԳ - Ուրեմն ես էլ կլացեմ:

ՎԱՂՆ - Բայց մենք տղամարդ ենք, չէ՞:

ԳԵՎՈՐԳ - Լավ հիշեցրիր, ուրեմն

քիչ ենք խմել: Լցրու, խմենք եղբայրության կենացը:

ՎԱՂՈ - Լավ հարևանը լավ եղբորից էլ է լավ, լավ գոքանչից էլ է լավ, մնացած մարդկանցից էլ: Բո կենացը:

ԳԵՎՈՐԳ - Չէ, քո կենացը:

ՎԱՂՈ - Լավ, մեր կենացը: *(համում են:)* Էլ չե՞ն նեղանա, որ մտնեմ քո մառանը:

ԳԵՎՈՐԳ - Բեզ նշանակում եմ մեր մառանի նախագահ: Ով էլ հարցնի, կասես՝ ես եմ թույլ տվել:

ՎԱՂՈ - Բեզ նման առատաձեռն հարևան աշխարհում չկա: Ինչ լավ է, որ քեզ նման մարդիկ գոյություն ունեն ամբողջ աշխարհի կտրվածքով: Ի՞նչ պիտի անեինք մենք՝ կանոնակարգված մարդիկս:

Դռան զանգ:

ԳԵՎՈՐԳ - Նա է: Խմածությունս չի երևում:

ՎԱՂՈ - Վախենում ես:

ԳԵՎՈՐԳ - Ե՛ս, ես վախենամ իմ սեփական կնոջից, այդ էր պակաս:

ՎԱՂՈ - Դու նստիր, ես կբացեմ դուռը:

ԳԵՎՈՐԳ - Հա՛, դու բացիր, իսկ ես կնայեմ ամպերին: Ի՞նչ շքեղ ամպ է, կարծես էջ լինի: Միայն թե վրայից օղու հոտ է գալիս: Ֆո՛, շատ եմ խմել:

Ներս է մտնում Հասմիկը, նա էլ է գինովցած:

ՀԱՍՄԻԿ - Դու ո՞վ ես:

ՎԱՂՈ - Ձեր սիրելի հարևանն եմ:

ՀԱՍՄԻԿ - Բեզ նման հարևան ունե՞նք: *(Պայուսակը գցում է մի կողմ:)* Այս ո՞ւմ եմ տեսնում, իմ սիրելի ամուսնյակին: Ճաշը եփել է, հատակը՝ մաքրել: Սա ի՞նչ է, սեղանի վրա կեղտոտ ափսեներ կան... ջարդուփշուր կանեմ:

ՎԱՂՈ - Մի վայրկյան, ես ափսեները կլվանամ:

ՀԱՍՄԻԿ - Դու ո՞վ ես, ինչո՞ւ ես հայտնվել մեր տանը, ինչո՞ւ ես խառնվում մեր գործերին:

ՎԱՂՈ - Ամուսնուդ մենակ ես թողել, հետո ասում ես՝ ինչու եմ հայտնվել:

ՀԱՍՄԻԿ - Անմիջապես հեռացիր:

ԳԵՎՈՐԳ - Նա կմնա այնքան ժամանակ, ինչքան որ ես ուզենամ:

ՀԱՍՄԻԿ - Ա՛, բաժակի ընկեր ես գտել: Պարո՛ն, այս տան կեսը իմն է, հեռացիր իմ տնից:

ԳԵՎՈՐԳ - Այս տունը հայրական ժառանգություն է: Ես պարտավոր չեմ կիսել պատահական կնոջ հետ:

ՀԱՍՄԻԿ - Այսինքն՝ այս տանը պատահական կին եմ: *(Վաղոյին.)*

Դուրս կորիր իմ սահմանից:

Վաղոն վախչում է, դեմ է առնում Գևորգին:

ԳԵՎՈՐԳ - Կանգնիր տեղդ, չշարժվես, միայն փորձիր իմ կողմնանցնել, կգրկեմ բոլոր իրավունքներից: *(Հրում է Վաղոյին, մյուս կողմից հրում է Հասմիկը:)*

ՀԱՍՄԻԿ - Ֆո՛ւ, քեզանից զգվելի հոտ է գալիս:

ԳԵՎՈՐԳ - Բեզանից էլ է հոտ գալիս, խմե՛լ ես:

ՀԱՍՄԻԿ - Այո՛ր, խմել եմ ինձ գայթակող տղամարդկանց հետ:

ԳԵՎՈՐԳ - Ահա թե ինչ, գլխիս կոտոշներ ես տնկե՛լ:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ, ծառ, չհաշված թփերը, կարող ես ջրել:

ՎԱՂՈ - Օգնեցե՛ք, մեռնում եմ, սիրոս թուլացավ, վալերիանկա ունե՛ք:

ԳԵՎՈՐԳ և ՀԱՍՄԻԿ - Ո՛չ:

ՎԱՂՈ - Մեռնում եմ, ինձ կթաղեք հորս կողքին: *(Օրորվելով ընկնում է բազմոցին ու քնում, նրանք մոտենում են նրան:)*

ՀԱՍՄԻԿ - Մեռա՛մլ:

ԳԵՎՈՐԳ - *(ստուգում է):* Չէ, շնչում է: Լավ պրծանք: Երկուսիս էլ ազատագրվում էր սպասվում:

ՀԱՍՄԻԿ - Դու կվերցնե՛իր քեզ վրա:

ԳԵՎՈՐԳ - Իհարկե, սիրելիս:

ՀԱՍՄԻԿ - Ես շտապում էի, ուզում էի քեզ ուրախացնել, իսկ դու...

ԳԵՎՈՐԳ - Երեխա՛ս ես ունենալու:

ՀԱՍՄԻԿ - Չէ, տասը հազար հատ մխոց եմ գնել, շատ էժան:

ԳԵՎՈՐԳ - Սյուզին թողե՛ց:

ՀԱՍՄԻԿ - Ես ազատման հրաման գրեցի, վաղվանից չի աշխատելու:

ԳԵՎՈՐԳ - Կանխիկ գումարո՞վ ես գնել:

ՀԱՍՄԻԿ - Չէ, Սյուզին բանկից պիտի փոխանցի:

ԳԵՎՈՐԳ - Գիտե՛ս, ինչ բան է մխոցը, 5-6 տարին մեկ է փչանում:

ՀԱՍՄԻԿ - Մի քանի արկղ էլ ավել տվեց:

ԳԵՎՈՐԳ - Մաքրեց իր պահեստը աղբից, լցրեց իմ պահեստը, սրիկա: Միայն ձեռքս ընկնի: Զո առած գործարքը կոչվում է քցվել:

ՀԱՍՄԻԿ - Նա օրինավոր մարդու տպավորություն էր թողնում: Զանգիր և ասա՛ թյուրիմացություն է տեղի ունեցել:

ԳԵՎՈՐԳ - Ինքդ զանգիր:

ՀԱՍՄԻԿ - *(զանգում է):* Չի պատասխանում:

ԳԵՎՈՐԳ - Դա նրա ձեռագիրն է՝ իրացնում է անորակ ապրանքն ու որոշ ժամանակ անհետանում: Հետո երևում է, ասում ես՝ սխալմունք է եղել, նա էլ պատասխանում է՝ չսխալվեիր: Ինչո՞ւ ինձ չզանգեցիր:

ՀԱՍՄԻԿ - Լավ արեցի: Ես եմ կոպերատիվի նախագահը:

ԳԵՎՈՐԳ - Հրաման համար 104՝ քեզ ազատում եմ կոոպերատիվի

նախագահի պարտականություն-
նից: Վերադարձրու կնիքը:

ՀԱՍՄԻԿ - Ո՛չ:

ԳԵՎՈՐԳ - Ուզում ես ոչնչացնել իմ
կոոպերատիվը:

ՀԱՍՄԻԿ - Ընդհակառակը:

ԳԵՎՈՐԳ - Ընդհակառակը ինչ:

ՀԱՍՄԻԿ - Այն, որ քո Սյուզին
այնքան էլ տգեղ չէ, ինչպես ներ-
կայացնում էիր: Դու ինձ դավա-
ճանում էիր ամեն օր:

ԳԵՎՈՐԳ - Տո՛ւ, լավ էի անում: Կարող
ես գնալ մորդ տուն: Դու չլինես,
մեկ ուրիշը կլինի:

ՀԱՍՄԻԿ - Ախ այդպես... Քանի որ
բաժանված ենք, ես էլ իմ իրա-
վունքները կապշտպանեմ՝ տղա-
մարդիկ շատ կան:

ԳԵՎՈՐԳ - Ես քեզ կսպանեմ:
(*Վերցնում է դանակը:*)

ՀԱՍՄԻԿ - Ես էլ քեզ կսպանեմ:
(*Վերցնում է գրտնակը:*) Էլ էն
խեղձ Հասմիկը չեմ: Ես կոոպե-
րատիվի նախագահ եմ:

**Հոգնած և ուժասպառ մերս է
մտնում Կարպ Կարախչը:**

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Առավոտյան ինձ
ասացին՝ վեր կաց ու գնա: Ես
քայլեցի դար ու փոսի վրայով,
քայլեցի հոգնած և ուժասպառ:
Չէի կարողանում կանգնել, մի ուժ
ինձ ստիպում էր քայլել: Ճանա-
պարհին մի մրջյուն տեսա՝
բարձրացել էր ռելսի վրա ու չէր

կարողանում իջնել: Մոտիկից
լսվում էր գնացքի փոնչոցը: Օգ-
նեցի նրան ռելսից ցած իջնել: Նա
նայեց ուղիղ աչքերիս և ասաց.
«Ընտրիակալություն, բարի մարդ,
բայց շտապիր, քեզ սպասողներ
կան»:

ԳԵՎՈՐԳ - Մրջյունը ասաց:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ես լսեցի նրան,
սկսեցի քայլել: Ծրջանցեցի երեք
բարձրահարկ շենքերը, երևաց
փշատերև անտառը: Հանկարծ
անտառի եզրին կրակ տեսա: Մո-
տեցա: Երկու մարդ կրակ էին ա-
րել, սունկ էին խորովում: Երանց
ասացի. «Պարոններ, ձեր արած
խարույկից կարող է անտառը
բռնկվել»: Երանք ինձ հարցրին.
«Հրշեջ ես»: Ես նրանց շշպոեցի.
«Ինչ է, չե՞ք տեսնում», - ու ջուրը
լցրեցի կրակի վրա: Վերջապես
հասկացա, թե ով եմ ես: Հրշեջ եմ
և հպարտ եմ, որ հրշեջ եմ:

ԳԵՎՈՐԳ - Մեր տունը չի այրվում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Դա ձեզ միայն
թվում է: Ի դեպ՝ ձանապարհին
տեսա զոքանչիդ՝ վազում էր ձեռ-
քերը թափահարելով: (*Շայում է
նրանց:*) Արդեն իրար վրա զենք
եք բարձրացնում: Ցած դրեք զեն-
քերը:

ՀԱՍՄԻԿ - Իմը գրտնակ է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - (*վերցնում է*): Սա
ավելի վտանգավոր է, քան դա-

նակը: (Փորձում է գլխի վրա:) Սրանով կարող ես մարդու գլուխը ջարդել: Ինչ է պատահել, ինչն է եք ուզում իրար սպանել:

ԳԵՎՈՐԳ - Մենք ընտանեկան հարցեր էինք քննարկում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Ձեր ընտանեկան քննարկումը շատ նման է ընտանեկան բռնության: Ձեզնից ո՞վ է ում բռնանում, խոստովանեք:

ՀԱՍՄԻԿ - Մենք չենք վիժում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Իսկ գրտնակը:

ՀԱՍՄԻԿ - Որոշել եմ գաթա թխել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Դու գաթա՞ ես թխում:

ՀԱՍՄԻԿ - Հա՛, գաթա:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Գաթա ամուսնուդ համար:

ՀԱՍՄԻԿ - Այո՛, մենք իրար սիրում ենք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Քաղաքակիրթ մարդիկ իրար սիրելով երեխա են ունենում, իսկ այս գրտնակից շերեփ էլ դուրս չի գա: Լսե՛ք ինձ, քանի դեռ զոքանչ մայրիկը չի եկել, զենքերը թաքցրեք: (Թաքցնում են:) Եվ նայեք իրար սիրահարների պես: Հիմա գրկախառնվեք ու շատ երկար համբուրվեք: Կարող եք ներս մտնել, հարգարժան տիկին:

Թափով դուռը բացվում է, ներս է մտնում զոքանչը՝ ձեռքի պայուսակը բարձրացրած: Տեսնում է

մրանց համբուրվելիս, թևաթափ ընկնում է աթոռին:

ՋՈՋԱՆՉ - Դուք թողնելո՞ւ եք, որ հանգիստ քնեմ: Ինչ է պատահել, ինչն էն ինձ արթնացնում առավոտ շուտ, երբ մտադիր էի մինչև կեսօր քնել: Նրանք համբուրվո՞ւմ են:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Նրանք այնքան են իրար սիրում, որ չեն կշտանում: Բավական է, Գևորգ, բաց թող Հասմիկին, ամոթ է:

ՀԱՍՄԻԿ - Հանգստացիր, մայրիկ, ամեն ինչ կարգին է:

ՋՈՋԱՆՉ - Առավոտյան արթնացրին ու ասացին՝ վեր կաց ու գնա: Ես հագա առաջին պատահա՞ծ հագուստս ու տանից դուրս եկա: (Գևորգին.) Դու համարձակվել ես աղջկաս ծեծել:

ԳԵՎՈՐԳ - Լսե՛ք, ամբողջ կյանքում կնոջ վրա ձեռք չեմ բարձրացրել: Ես դեմ եմ ծեծին:

ՋՈՋԱՆՉ - Լռի՛ր, դու այսօրվանից զրկվում ես խոսելու իրավունքից:

ԳԵՎՈՐԳ - Կինս նախագահ դարձավ, մայրն էլ փակեց բերանս: Ես այս տան լիարժեք քաղաքացին եմ, ես էլ իրավունքներ ունեմ:

ՋՈՋԱՆՉ - Երբ ես այստեղ եմ, դու զրկվում ես բոլոր իրավունքներից: Կարպ Կարպիչ, կարգի իրավիրիր այս անձնավորությա՜նը:

ԳԵՎՈՐԳ - Ես ձեր սիրելի փեսան էի, այդպես էիք մի ժամանակ ասում:

ԶՈՔԱՆԶ - Մի՞թե սիրելի փեսա լինում է: Գազան, չհամարձակվես դիպչել աղջկաս:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Գևորգ, հարգիր զոքանչ մայրիկին, նա հուզված է:

ԳԵՎՈՐԳ - Իսկ ես կատաղած գազանի եմ նմանվել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Զգուշացիր, ժանիքների չհանի: Հասկացիր, նա զոքանչ է, պարտավորություններ ունի: Նրան պիտի սիրես ու հարգես:

ԶՈՔԱՆԶ - Ինչ նրբանկատ անձնավորություն եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Գևորգ, անմիջապես ներողություն խնդրիր նրանից:

ԳԵՎՈՐԳ - Երբեք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Զոքանչ ունենալը բախտավորություն է, շահած վիճակախաղի տոմս:

ԳԵՎՈՐԳ - Նվիրում եմ քեզ:

ԶՈՔԱՆԶ - Ինչ ես ակնարկում:

ՀԱՍՄԻԿ - Մայրիկ, հանգստացիր:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ինչպե՞ս համարձակվեցիր այդպիսի բան ասել: Դուք, պարոն, եթե Հասմիկի ամուսինը չլինեիք... Ես ձեզանից պատիվ կպահանջեի:

ԳԵՎՈՐԳ - Ինչ ասացի, որ...

ԶՈՔԱՆԶ - Սիրելիներս, մեզ մենակ թողեք:

ՀԱՍՄԻԿ - Գնանք խոհանոց: Ժամանակն է, որ թեյ խմենք: *(Գևորգն ու Հասմիկը գնում են խոհանոց:)*

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - *(հուզված):* Տիկին, մենք բախտավորություն ենք ունեցել հանդիպել կյանքում երկու անգամ: Ինձ համար դժվար է հավատալ, որ կարող եք ինձ ներել: Իմ արարքն աններելի է: Ինչպե՞ս կարող էի ձեզ նման կնոջը թողնել ու անհետանալ: Դուք իրավունք ունեք ինձ ատելու, արհամարհելու, ասելու վերջին բառերը... Բայց ինձ պիտի ներեք, որովհետև ես ձեզ սիրում եմ և առաջարկում եմ իմ սիրտը:

ԶՈՔԱՆԶ - Դուք հասկանո՞ւմ եք, ինչքան դժվար է այս տարիքում ընկնել նոր փորձության մեջ: Ես հանգիստ կյանք եմ ապրում:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ո՛չ, էլ ձեզ հանգիստ չեմ թողնի, եթե նույնիսկ ինձ մերժեք:

ԶՈՔԱՆԶ - Ինձնից էլ չե՞ս փախչի:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Երդվում եմ, Կարպ Կարպիչի խոսքը խոսք է...

ԶՈՔԱՆԶ - Եթե փորձես կողքիցս մեկ մետր հեռանալ...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ես համաձայն եմ, էլ երբեք չենք բաժանվի:

Ներս են մտնում Հասմիկն ու Գևորգը:

ՀԱՍՄԻԿ - Թեյը պատրաստ է, կարող ենք խմել:

ԶՈՔԱՆԶ - Ախ, այս երեխաները արթնանում են անպատեհ ժամին:

Վաղոն արթնանում է:

ՎԱՂՈ - Իսկ սեղանին օղի չեք դրել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Այս աներես մրջյունն ինչ գործ ունի մեր տանը:

ՎԱՂՈ - Ես նրանց սիրելի հարևանն եմ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Այսօրվանից դու նրանց ատելի հարևանն ես: Եթե մեկ անգամ էլ քեզ տեսնեմ այս տանը, գործ կունենաս անձամբ ինձ հետ:

ՎԱՂՈ - Գևորգն ինձ թույլատրել է:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Իսկ ես չեմ թույլատրում, սրիկա, մառանի մոկ:

ՎԱՂՈ - Ես քեզ դատի կտամ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ինձ դատի՞ ես տալիս: Ո՞ւր է իմ լազերային ատրճանակը: Յոթ լազեր քո դատարկ գլխի մեջ: *(Վաղոն փախչում է:)* Փախավ սրիկան: Իսկ դու լավ կանես, փակես բոլոր անցքերը, որպեսզի ազատվես ձրիակեր միջատներից:

Կարպ Կարպիչն ու Գևորգը սկսում են փակել պատի անցքերը:

ԶՈՔԱՆԶ - Աղջիկս, նա քո հայրն է:

ՀԱՍՄԻԿ - Բայց իմ հայրը զոհվել էր:

ԶՈՔԱՆԶ - Նա զոհվել էր, բայց հիմա վերադարձել է: Նա իմ միակ սերն է:

ԳԵՎՈՐԳ - Նա ո՞ւմ է սիրահարվել:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Գրողը տանի, միթե ես չեմ երևում: Փեսա, ինձ նայիր, ես է՛լ եմ կարմրել:

ԳԵՎՈՐԳ - Կարպ Կարպիչ, ինչ է կատարվում քեզ հետ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Սիրելիներս, ինչ կարծիքի եք մեր ամուսնության մասին:

ՀԱՍՄԻԿ - Դուք ամուսնանո՞ւմ եք:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Ո՛չ, մենք գնում ենք ամուսնական ճամփորդության:

ԳԵՎՈՐԳ - Իսկ մե՞նք...

ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Իսկ դուք՝ պարոն փեսա և դուք՝ աղջիկս, շատ լուրջ մտածեք ձեր համատեղ կյանքի մասին: Հույս չունենաք, որ Փարիզից կգանք ձեզ օգնության: *(Գնացքի սուլոց:)* Ահա և մեր գնացքը... Գնանք, սիրելիս:

ԶՈՔԱՆԶ - Այս տեսքով՝ Փարիզ...
ԿԱՐՊ ԿԱՐՊԻԶ - Դու ճիշտ նրանց նման ես հագնվել:

ԶՈՔԱՆԶ - Սիրելիներս, մենք այնտեղ երկար չենք մնա:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Երբ վերադառնանք, երեխան ծնված լինի, հասկացմք:

ՀԱՍՄԻԿ - Ցտեսություն, հայրիկ:

ԳԵՎՈՐԳ - Ցտեսություն, մայրիկ:

ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉ - Վերջապես հայր դարձա:

ԶՈՔԱՆԸ - Իսկ ես ամուսին ունեցա:

Կարպ Կարպիչն ու զոքանչը գնում են: Հասմիկն ու Գևորգը զարմացած իրար են մայում:

ԳԵՎՈՐԳ - Ա՛յ թե շրջադարձ էր, ո՞վ կսպասեր զոքանչ մայրիկից:

ՀԱՍՄԻԿ - Իսկ դու գիտե՞ս, որ Կարպ Կարպիչն իմ հայրն է:

ԳԵՎՈՐԳ - Աներ էլ ունեցա, շահած խաղատոմսերն ավելացան:

ՀԱՍՄԻԿ - Նրանք երջանիկ տեսք ունեին:

ԳԵՎՈՐԳ - Իսկ իմ սրտից արյուն է կաթում:

ՀԱՍՄԻԿ - Ի՞նչ է պատահել, սիրելիս:

ԳԵՎՈՐԳ - Սնանկացել ենք, հարգելիս: Հիմա մենք ինչպե՞ս ենք ապրելու:

ՀԱՍՄԻԿ - Կսկսենք նորից:

ԳԵՎՈՐԳ - Հինգ տարվա աշխատանքս ջուրն ընկավ:

Հեռախոսազանգ:

ՀԱՍՄԻԿ - Չանգում են:

ԳԵՎՈՐԳ - (*վերցնում է բջջային հեռախոսը*): Այո, Սյուզի... Ի՞նչ, փոխանցում չե՞ս արել: Ես քեզ սիրում եմ: (*Նայում է կնոջը*): Միայն կնոջիցս հետո: Չէ, դու աշխատում ես, այդ ես եմ ասում: (*Հեռախոսն անջատելով*): Փողը չի փոխանցել, մենք փրկված ենք:

ՀԱՍՄԻԿ - Ես մնալու եմ տա՛նը:

ԳԵՎՈՐԳ - Մենք միասին կգնանք աշխատանքի: Տասը հազար միտոցը կհանենք պահեստից, կվերադարձնենք տիրոջը: Իսկ երբ վերադառնանք տուն, այնքան հոգնած կլինենք, որ կմոռանանք նայել ամպերին:

ՀԱՍՄԻԿ - Կարծում ես, ընդունա՞մ եմ այդ տանջանքին:

ԳԵՎՈՐԳ - Սիրելի՛ս, դու ես կոռպե-րատիվի նախագահը:

ՀԱՍՄԻԿ - Հենց դա եմ ասում: Ես նախագահ եմ:

ԳԵՎՈՐԳ - Գնանք քնենք, առավոտյան վաղ ենք արթնանալու:

ՀԱՍՄԻԿ - Առավոտյան 11-ից շուտ ինձ չարթնացնես:

ԳԵՎՈՐԳ - Լսում եմ, ի՞մ նախագահուհի: (*Հասմիկը գնում է ննջարան*): Սա է երջանկությունը: Ես հայր եմ դառնալու:

Մթություն:

«ԳՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅԻ» ՊԱՆՈՇՆԵՐԻՇ (14-15. 2008)



*Հևոն
ԽԵՉՈՅԱՆ*

*Պիեռի մտահղացումը ծրագրելիս
լռությանն էլ տեղ հատկացրի:*

ՄՊԱՍՈՒՄ

Պիես երկու գործողությամբ

Գործող անձինք

ԱՂԱԲԵԿ ՏԱՅՈՒ - պապը

ՏՂԱ

ՀԱՅՐԸ

ՄԱՅՐԸ

ՓՈՍԱՏԱՏԱՐ

ԴԱՏԱՎՈՐ

ԴԱՏԱԽԱՋ

ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐ - Վելիխան, Չաքար

ՈՒՍՈՒՅՉՈՒՀԻ

ԼՐԱԳՐՈՂ - շրջանային թերթից

Կոկորդը վիրակապով փաթաթած ՄԵԼԻՅԻՈՆԵՐ

ԽՈՇՈՐ ԳԼԽՈՎ ՄԵԼԻՅԻՈՆԵՐ

ԵՐԿՈՒ ԲՈՒԺԱԿՆԵՐ

ԲԺԻՇԿ ՍԵՔՍՈՊԱԹՈԼՈԳ - գեղեցիկ կին

ՀԻՎԱՆԳ - որին բրդի գործարանի տնօրեն են ասում

ՍԵՐՄԱՆ - վրացի

ՀԱՄԲՈ ԵՎ ՄԱՅՐՈ - գյուղացի ամուսիններ

ՀԵՌԱԽՈՍԱՎԱՐՈՒՀԻ

**Գյուղական հողածածկ տուն: Խառնափնթոր վիճակ: Առավոտ:
Աղաբեկը նախաճաշում է: Նստած է դեռ չհավաքած տեղաշորի վրա:**

Միայն շավարն է հագել: Նախաճաշի սեղանը ցածրառու է:

Ներս է մտնում փոստատարը:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ՓՈՍԱՏԱՏԱՐ - Եկել են Ախալքալա-
թից:

ԱՂԱԲԵԿ - (ծուն կլպելով): Մի բան
ծարի, նստի: (Գոռալով դռան

կողմը:) Աղջի, մի հատ բաժակ
բեր: (Պատասխան՝ երկար լռությ-
յուն: Ճակնդեղի թթվի ցողունը
ծամելով՝ նստած տեղը իր շուրջ-

բոլորն ինքն է ման գալիս՝
գտնում: Օղի է լցնում: Բաժակներ-
ըը իրար են խփում:)

ՓՈՍՏԱՏԱՐ - (բաժակը շուրթերին
տանելով): Բարի լուսը բարին
տա: (Ձուն կլպելով): Աբլակատ-
ները կանչում են:

ԱՂԱԲԵԿ - (վերնաշապիկը հագնե-
լով): Տորենի օղի էր:

ՓՈՍՏԱՏԱՐ - (ծվի բրդուծը ծամե-
լով): Փափուկ է խմվում: Էսօր ա-
վելի շատ հոգով են եկել:

ԱՂԱԲԵԿ - (բաժակները նորից է
լցնում, խմում են: Դուրս գալով):
Տղա՛, տես հայրդ գալի՛ս է:

**Փոստատարը գնում է արտի ծայ-
րամասում շինած զուգարանը: Ա-
ղաբեկը դռանը սպասում է: Տղան
դուրս է գալիս տան ետևից:**

ՏՂԱ - Տացնո՛ւ, սխտորն է ջրում:

ԱՂԱԲԵԿ - (մախորկա է փաթաթում՝
սպասելով փոստատարին: Տղա-
յին): Վազիր, գազեթ բեր, մա-
խորկայի համար գազեթ չեմ
վերցրել:

ՏՂԱ - (բերելով թերթը): Տացնո՛ւ, նա
սխտորն էր ջրում:

ԱՂԱԲԵԿ - (թերթը ծալելով և քառա-
կուսիների կտրատելով): Նա այ-
սօր էլ, վաղն էլ, տարիներով
սխտորն է ջրելու: Ամոթից չգիտի՝
որտեղ թաքնվի:

**Փոստատարը գալիս է, գնում են:
Առջևից Աղաբեկն է գնում: Գյու-
ղացիք աթոռներով, իշոտնուկնե-
րով, ով տանը ինչ նստելու
հարմարանք ունե՞ր՝ զցած ուսե-
րին՝ շտապում են ակումբ: Գյու-
ղի վրա տարածված է վառված
լաթերի մրմռացնող սուր խան-
ձահուղը:**

ԱՂԱԲԵԿ - Վրացոց տղոցկան կա-
նայք էսօր երեխա կունենան...
(Տղան ու փոստատարը թիկուն-
քից տեսնում են նրա երկար հա-
սակի կծկվածությունը՝ զույգ
հենակների վրա:)

ՓՈՍՏԱՏԱՐ - Աղաբեկ, լավ էլ փա-
փուկ էր խմվում, ձեր քաշմձն էր:
Ինձանից չնեղանաս, ասին՝ գնա,
ես եկա:

ԱՂԱԲԵԿ - (նստելով քարե ցանկա-
պատին, հենակները սեղմելով
ոտների արանքը՝ մախորկա է
փաթաթում: Հետո փոստատա-
րին էլ է տալիս: Տղային):
Գլխարկդ դիր տակդ, կմրսես:

ՏՂԱ - Չեմ մրսի:

ԱՂԱԲԵԿ - Ասի՛՛ գլխարկդ դիր
տակդ, քարը պաղ է: (Փոստա-
տարին.) Չէ՛, Փաշուլայի օղին է,
պարտքով մի քանի չարեք վերց-
րի: Բաշենք, կտանք: (Նրանք
զրուցում են ու ծխում:)

ՏՂԱ - Բա դու ինչո՛ւ չես մրսում:
(Գլխարկը դնելով տակը:)

ԱՂԱԲԵԿ - (շտապող գյուղացիներից մեկին): Վարձ, բա դու ինչո՞ւ ես շտապում:

ՎԱՐՈ - (համարյա վազելով): Նստելու տեղ չի լինի:

ՏՂԱ - (Աղաբեկին): Կտեսնես, հայրիկը սխտորը կջրի ու կգա: (Գյուղի ակումբում դատը սկսվել է, ուշացածները դեռ գալիս ու գալիս են:)

ԴԱՏԱՎՈՐ - Նոր, լրացուցիչ փաստաթղթեր են ստացվել: (Աղաբեկին ու տղային չէ, դահլիճին է հարցնում:) Վառվածի հոտ եմ առնում, չլինի՞ բան է վառվում:

ԴԱՀԼԻՃ - (հարցումից ուրախացած): Չէ, ընկեր արլակատ: Վրացի կանայք երբ երեխա են ունենում, չարին նրանցից քշելու համար չուլ են վառում: (Դահլիճը ուրախացած է անտեղյակ դատավորին բացատրելուց: Աղաբեկն ու տղան նայում են դռանը, նրանք ուզում են, որ տղայի հայրը գա:)

ԴԱՏԱՎՈՐ - Ուրեմն, այսպես... Մեղադրյալը գյուղում հայտարարել է, թե ոտքը կորցրել էր Ստալին-գրադի պաշտպանության համար, մի ուրիշ անգամ, թե՛ Մոսկվայի պաշտպանության ժամանակ, թե գերմանացին կողքանց ավտոմատի համազարկ է տվել ոտքին, որ ինքը հերոս է...

Ուրեմն այսպես... (Սեղանին որոնելով:) Էս առաջին հատորն ո՞ր է, մեր հարցումին ու մեր գործին նոր լույս սփռող փաստաթղթերն ասում են. «Բեռլինի այսինչ հուպիտալի բակում թաղված է մեղադրյալի ոտքը, և գիտե՞ք ինչու, սապոգի կրունկը հարել է ոտքը...»: (Դահլիճը ծիծաղում է: Դատավորը տղային ու Աղաբեկին չէ, դահլիճին է դիմում:) Էս ինչ սուր է գալիս վառվածի հոտը, ծխողները թող մի քիչ քիչ ծխեն, իրար չվառեք...

Նրանք երկուսով մայրում են դռանը: Նրանք ուզում են, որ տղայի հայրը գա:

ԴԱՏԱՎՈՐ - (կիսականգնած, դահլիճում նստածների մեջ փոստատարին որոնելով): Օվանները ո՞ր է: Օվաններ, մի գնա գրասենյակ, նախագահին տես՝ ինչ է ասում, էսօր մալ մորթելո՞ւ են: Ասա՛ Ալոշը միս է ուզում, կնոջ հորքուրը հիվանդ է, թող մի տասը-տասնհինգ կիլո միս ետ առնեն: (Սեղանին որոնելով:) Էս առաջին հատորն ո՞ր է... Էդ ո՞վ է դուռը բացում-փակում: Կան ներս եկեք, կան էլ մի խանգարեք, գործը գլուխ բերենք, վերջացնենք: (Տղային.) Հայրդ ո՞ր է, հայրդ մի գար՝ տեսնե՞ինք: Հորդ մեղադր-

յալը ղնց էր ասել, թե՛ մորդ չկարողացաք պահել, իմ փայ պատերազմը վերջացնեի՝ գայի: Պիտի ամուսնանամ, ես մի ոտքով կնկանդ հույսին մնացողը չեմ:

ՏՂԱ - Աղաբեկ տացուս մեր գյուղից քայլելով հասել է Բեռլին, ոտքը թողել է այնտեղ, մի ոտքով եկել է գյուղ, նա հերոս է...

Դահլիճը ծիծաղում է:

ՏՂԱ - *(դատավորին և դահլիճին):* Հայրս սխտորն է ջրում, վերջացնի, կգա:

ԴԱՏԱՎՈՐ - Հայրդ ի՞նչ էր ասում:

ՏՂԱ - Ի՞նչ պիտի ասեր, վիճում էին: Ասում էր. «Այդ տարիքիդ պիտի ամուսնանամ, հարս ունես, թոռ ունես, գյուղում խայտառակ կլինենք»: Համոզում էր, որ այդպիսի բան չանի, տնտեսությունը երկու մասի բաժանելն էլ սխալ քայլ կլինի:

ԴԱՏԱՎՈՐ - *(դատախազին և ատենակալներին):* Խնդրում եմ նաև այս հանգամանքը հաշվի առնել, որ մեղադրյալը խաղաղ ընտանիքում պարբերաբար վեճերի առիթ է տվել ու քայքայողական դիրքորոշում ունեցել:

ՏՂԱ - Նա քայքայող չէ, նա միշտ աշխատում էր: Աղաբեկ տացուիս գարնան գլուխ դնում էին կոլտն-

տեսության Կայծակ անունով իշու վրա, Կայծակ էշը ոտքերի տակից փախչող մանր քարերից հետույքին-հետույքին նստոտելով, լպոկտելով գավակը՝ երկու ժամ հետո նրան հասցնում էր ձորի խորքը՝ գյուղի ջրաղացը: *(Դահլիճին, հետո դատարանին.)* Այնքան ծիծաղելի էր: Թիկունքից նայում ես, իշու կողքից մի ոտք է կախված, այն էլ՝ այնքան երկար, ժամացույցի ձոճանակի նման գնում-գալիս է ու գետնին կաչում: *(Տղան ձեռքով տնազելով՝ ցույց է տալիս, թե ոտքը ոնց էր կաչում քարին: Դահլիճը ծիծաղում է: Դատավորը ժպտում է:)* Նա բոստանն էր ցանում, ջրաղացն էր աշխատեցնում, գյուղի աղունն էր աղում մինչև աշուն, ու նորից Կայծակ էշը նրան, անթացուպերը սեղմած թևերի տակ, ծնկելով-ծնկելով, լպոկտելով ծնկներն ու կուրծքը, վերև՝ գյուղ էր բերում: *(Դահլիճին, հետո դատավորին.)* Էնքան ծիծաղելի էր: Նայում ես՝ մի ոտքը չկա, բայց երկու ոտքերի արանքում տոպրակով լոբի է դրված, սոխ, կարտոֆիլ: Էնքան ծիծաղելի է, ինձ է տալիս ու ասում է՝ ա՛ռ, ձագ եմ հանել... *(Դարձյալ տնազում է ու ցույց է տալիս, թե ինչ է արել Աղաբեկը:)*

Ծիծաղելի է, չէ՞, բայց տացուս քայքայող չէր...

ԴԱՏԱՎՈՐ - *(ընդհատելով դահլիճին ու դատախազին):* Ես կասեի՝ քայքայողական ասածս նույնիսկ ինչ-որ չափով գյուղին էլ է շոշափում, ինչպես նաև՝ որոշ ընտանիքների: Ծրջակա գյուղերից կորկոտը ծեծելու բերած *(տղային չէ՛ դահլիճին.)*, ներողություն արտահայտությանս, կանանց հետ ջրաղացի կտուրին աճած խոտերի ու փշերի մեջ էր պառկում: Այդ առթիվ վկաներ կան: Ճի՞շտ է, Վելիխան:

ՎԵԼԻԽԱՆ - *(դահլիճից):* Ծատ անգամ եմ տեսել, Գևոն է տեսել, Ծալոն, Մարգարը, Զարմիկը, մենք բոլորս էլ տեսել ենք, մեր հարսն էլ...

ԴԱՏԱՎՈՐ - Լավ, նստիր, մեր խնդիրը դա ապացուցելը չէ: Մենք դատավարության այս փուլում ծանոթացանք մեղադրյալի բնութագրին: Մեր խնդիրն ուրիշ է:

ՓՈՍՏԱՏԱՐ - *(դուռը ետևից փակելով):* Ընկեր արվակատ, նախագահն ասում է՝ էսօրվա միսը լավը չէ, գյուղացիներին են բաժանելու: Թող մնա վաղը, վաղն էլ են մորթելու:

ԴԱՏԱՎՈՐ- Էս առաջին հատորն ինչ եղավ, է... *(Դահլիճին.)* Մի ա-

սող լինի՝ էդ մատըն երեխուն ինչի՞ եք բերել: Ձենը կտրեք՝ գործ անենք: *(Տղային.)* Վկա, պիոնե՞ր ես:

ՏՂԱ - Այո՛:

ԴԱՏԱՎՈՐ - Գիտե՞ս, որ սուտ ցուցմունք տալ չի կարելի:

ՏՂԱ - Դասղեկն ասել է: Դպրոցի դիրեկտորն ասաց, եթե խաբեմ, ինձ դպրոցից դուրս կանեն:

ՈՒՍՈՒՑՉՈՒՇԻ - *(դահլիճի ետևի շարքերից մոտենում է տղային):* Հանկարծ չխաբես, դու ազնիվ խոսք ես տվել...

ՏՂԱ - Գիտեմ: *(Դահլիճը շունչը պահած սպասում է: Էլ չի լսում լացող մանկան ծիչը: Տղան ու Աղաբեկը նայում են դռանը, նրանք ուզում են, որ տղայի հայրը գա:)*

ԴԱՏԱՎՈՐ - *(տղային):* Պատմիր, ինչպես որ պատահել է:

ՏՂԱ - *(կամակոր, լացակումած):* Չեմ պատմի:

Դահլիճն աղմկում է:

ԴԱՏԱՎՈՐ - *(մեղմ):* Դու ասիր, որ կպատմես, եթե հոգնել ես, գնա մի քիչ դուրս, խաղա, կգաս, կպատմես:

ՏՂԱ - *(ցույց տալով Աղաբեկին):* Նա էլ է հոգնել:

ԴԱՏԱՎՈՐ - Ա՛յ, այդտեղ սխալվում ես, մեծերը չեն հոգնում, դրա համար էլ նրանք մեծ են: Ա՛յ, ես էլ

Թիվ 56-57

չեմ հոգնել, Չաքարը չի հոգնել:
(Չայն տալով դեպի դահլիճ:)
Ճիշտ չէ, Չաքար բիճա:

ՉԱՔԱՐ - (ծեռքը ականջին): Համ-
մե...

ԴԱՏԱՎՈՐ - Ասում եմ՝ չեն հոգնել:

ՉԱՔԱՐ - (ծեռքը ականջին): Համմե:

ԴԱՏԱՎՈՐ - (տղային): Տեսա՞ր, որ
մեծերը չեն հոգնում, գիտես, չէ,
երկար, շատ երկար հեքիաթ են
պատմում ու չեն հոգնում:

ՏՂԱ - (գլխով ցույց տալով Աղաբե-
կի թիկունքին երկու հրացանա-
վոր զինվորներին): Թող նրանք
զնան՝ պատմեն:

ԴԱՏԱՎՈՐ - (մեղմ): Ախր ինչո՞ւ, օ-
րենքն է այդպես:

ՏՂԱ - Մինչև նրանք չզնան, չեմ
պատմի: Երբ նրանք ձգվում են
ոտքից ոտք, նրանց սապոզները
ձռձռում են: Սապոզները թող
չձռձռան:

ԴԱՏԱՎՈՐ - (զինվորներին): Տղա-
ներ, խնդրում եմ, զնացեք դուրս,
ծխեք, նա երևի ձեր հրացաննե-
րից է վախենում: (Չինվորները
զնում են:)

ՏՂԱ - Աղաբեկ տացուիս ջրաղացը
հաց էի տարել: Դռանը խաղում
էի: Ծոգ էր: Հետո ջրաղացքարի
լծակի վրա կախված նալիկների
ձայնը կտրվեց: Չխկանը լռեց:
Ջրաղացքարը կանգնեց: Ստվերը
եկավ: Աղաբեկ տացուս ասավ.

«Երևի վայրի խոզերը դարձյալ
գետի հունը բացին, զնանք, նա-
յենք»:

ԴԱՏԱՎՈՐ - Բա ինչո՞ւ քեզ հետը
տարավ:

ՏՂԱ - Ջրաղացում չեմ կարողանում
միայնակ մնալ: Վախենում եմ
ջրհորդանի, ջրաղացի տակ ապ-
րող սատանաներից... (Դահլիճը
ծիծաղում է: Տղան ուզում է, որ
հայրը գա: Աղաբեկը, գլուխը
կախ, ծխում է, դահլիճն էլ է
ծխում, տղան գիտի, որ քթին
կպչող դառը ծուխը տացուի ծխա-
խոտի ծուխն է, ու նա էլ է ուզում,
որ տղայի հայրը գա:)
Մենք շատ էինք բարձրացել վերև: Աղաբեկ
տացուիս ասի՝ ջորին: Լա ասավ.
«Քարերի մեջ մարդ է ընկած»:
Քարերի մեջ ընկած մարդը
խոխոացնում էր, ջորին հեռվում,
երեք ոտքերի վրա կանգնած՝
պոչն էր թափ տալիս, քարերի
մեջ խուրջին էր ընկած, մեջը՝ լի-
քը փող: Աղաբեկ տացուս ասավ.
«Ջորին խրտնել է, զցել ցած»:
Ջորու աչքերը խոշոր էին, սև: Ես
վախենում էի, ասաց՝ մի վախե-
նա... Հետո նստեց քարին...
Մարդը խոխոացնում էր, արյունը
լցվում էր աչքերի մեջ, արյունոտ
աչքերը բացեց: Լա երևում էր ջո-
րու աչքերի մեջ, գետի մեջ: Գետը
զնում էր, նրան չէր տանում, ջո-

րին սև աչքերը փակում-բացում էր, նա կար: Բերանից էլ արյուն էր գալիս, ասավ. «Եսս, օգնեսս...»: «Տացո՛ւ,- ասի,- վախենում եմ»: Ասաց. «Մի վախենա, սարեցի է: Առավոտյան տեսար՝ ոչխարի հոտը տանում էին Ախլցխու կողմերը՝ ծախելու...»: Մարդը մանր քարերից էր կառչում, քարերը ձեռքի հետ գնում էին, նա չէր կարողանում կանգնել, խժի ու գլաքարերի մեջ ընկած՝ ջղաձգվում էր, ջորու սև աչքերի, գետի հայելու մեջ ծալծլվում, չէր կարողանում կանգնել: Տացուս ասաց. «Սպասենք»: Ես ասի. «Գնանք, շոգ է»: Նա՛ թե. «Դա հեշտ է, մի վախենա, ես էնտեղ շատ մահ եմ տեսել: Տեսնո՞ւմ ես էն գորտին, չի վախենում: Մի տես գորտին՝ գետակից դուրս է եկել, քարին նստած՝ մեզ է նայում, այ դու սատկես... Վախենալու բան չկա, պիտի կարողանանք սպասել...»:

ԴԱՏԱՎՈՐ - Բա ինչո՞ւ չէիր լացում:

ՏՂԱ - Լացում էի:

ԴԱՏԱՎՈՐ - Բա նա՞: *(Մատուլ ցույց տալով Աղաբեկին):*

ՏՂԱ - Գրպանից պնդուկ հանեց, ասաց. «Գնա մի կողմի վրա, կեր»: Բերանս չկարողացա բացել, ատամներս կպել էին իրար: Ասի. «Առ պնդուկներդ, գնանք»: Ասավ.

«Մի վախենա, էդ տեսակ վերքով շատ չի քաշի, մինչև գորտը էն քարից թռնի ջուրը... գիտեմ, ես էնտեղ էնքան մահ եմ տեսել: Ուզո՞ւմ ես՝ պատմեմ, թե ոտքս ոնց են կտրել»: Ես լացեցի, նա՛ թե. «Ուզո՞ւմ ես, գնա էն քարերի մեջ օձ բռնի, չեմ նեղանա»: Ասի. «Չեմ ուզում, գնանք...»: Ասավ. «Հիմար, փող կունենանք, ի՞նչ մեծ բան է, որ չես սպասում՝ գորտը քարից ջուրը թռնի, նոր տուն կշինենք, հորիցդ էլ չեմ բաժանվի, չեմ ամուսնանա, տան գլուխ կլինեմ, հայրդ խորհուրդ կհարցնի...»:

Դահլիճում լռություն է, լսում են տղային: Մտնում է գյուղացիներից մեկը, դուռը ճռռում է, դրանն է հենվել՝ էլի դրան ճռռոց: Թաշկինակն է հանում՝ քրտինքը մաքրի, թաշկինակը հանելիս կոպեկ է ընկնում: Տղան չի խոսում, դահլիճի լռության մեջ կոպեկի ձայնը, կոպեկի թավալգլոր տալու ձայնը, մետաղի պաղ հնչյունը, դահլիճը շրջվում է ձայնի կողմը, բոլորը գլուխները շրջած են, լռություն է... Կոպեկը կորցրած գյուղացին կուզեկուզ որոնում է: Անորոշ, ընդհանուր հայտարարություն. «Կոպեկս ընկավ, կոպեկս գտնեմ ու նստեմ, գործերս վերջացրի ու եկա...»:

ԴԱՏԱՎՈՐ - (տղային): Հետո՛:

ՏՂԱ - Ասաց. «Հիմար, փող կունենանք, ինչ մեծ բան է, որ չես սպասում՝ գորտը քարից ջուրը թռնի, նոր տուն կշինենք, հորիցդ էլ չեմ բաժանվի, չեմ ամուսնանա, տան գլուխ կլինեմ, հայրդ խորհուրդ կհարցնի: Մայրդ ձեռքերը կոնքերին՝ չի գռռա հորդ երեսին. «Աման, էլ չեմ կարող պահել էդ միտքքանի քավթառ գոռուզին»: Մենք էլ սպիտակ հաց կթխենք, հարևանները մեզ հետ էլ դրկիցություն կանեն, պարտքով հաց կտանեն-կբերեն, էլ չեն զզվի փնթի, կոկրոտ մորիցդ, գյուղում մենք էլ մարդահաշիվ կլինենք, մեզ էլ հարսանիք կկանչեն, դու էլ մյուս տղաների հետ հարսի սինուց մոմփազ կթոցնես, հայրդ շաբաշ կտա, կպարի, բրիգադիր Պանտեյը կվախենա, չի կտրի ադոթած էշ հորդ աշխօրերը, նրան չեն վախեցնի, ձմռան ցրտին չեն ուղարկի յայլաներում մնացած խոտը բերելու, նա էլ ցրտից ամիսներով մեզկապ՝ անկողինը չի ընկնի, խոտքաղին ձահիժները չեն քշի, մալարիայով ու դողերոցքով անկողինն ընկած՝ կուրծքը չի ձղի, թե՛ կրակը հոս է, մարեք: Սպիտակ վերնաշապիկ որ ունենա, դեպուտատ կընտրեն, ինձ էլ

հրամայելով չեն նստեցնի Կայծակ էշի մեջքին, որ ամբողջ երկու ժամ, ոռիս գեմարոն տրորելով, իջնեմ ձորը, ձմռան կողմերը չեն թողնի-մոռանա ամայի ձորումը, որ ես էլ կատաղած՝ սկսեմ խմել ու խմել, խմելը կթողնեմ, ժամանակ շատ կլինի, մեր նորաշեն տան դռանը նստած՝ քեզ համար շվիկ կշինեմ, հեքիաթ կպատմեմ, թե ոտքս ոնց են կտրել... Անձրև գիշերներին ցրտից դողալով, տաշտը ձեռքիդ, թալկացած աչքերով չես նստի անկողնուդ մեջ, էն Սեթո ախպերդ մի թոպեում հավի ձագի պես ափուխուփի չէր լինի... Հայրդ ծկլթալով չէր վագի տան շուրջը, թե՛ ա՛յ ժողովուրդ, հասեք կլոր բերան Սեթոյիս՝ չգնա... Այ ժողովուրդն էլ իբրև չի լսում, որ հանկարծ հայրդ պարտքով փող չուզի... Ո՛վ է մրսածությունից այս տաք աշխարհից գնում: Հայրդ տան շուրջբոլորը չէր ծկլթա, թիֆլիսներում ու երևաններում ոտքով պրոֆեսորների դռները կջարդեր... Ասում են՝ լենինգրադներում այնպիսի ոտք են դնում, ինչպես սեփականը, ոտքս դնել կտամ, թիզ ու կես, խեղժ ու կրակ հորդ գյուղամիջում անցնող-դարձող էլ գլխին չի բամփի, չի ծեծի,

սիրտս չի մղկտա, կհասնեմ, արսու փարս կանեմ, հորդ թիկունք կլինեմ, ախպեր կլինեմ»:

Դահլիճում լռություն է, միայն տղայի ձայնն է լսվում: Մտնում է փոստի հեռախոսավարուհին, դուռը ճռռում է, էլի դռան ճռռոց: Տղան չի խոսում:

ՀԵՌԱՆՈՍԱՎԱՐՈՒՄ - Աբլակատներից ներողություն եմ խնդրում, շատ շտապ էր, դրա համար էլ անձամբ ես եկա: Թիֆլիսից զանգել էին Ախալքալաք, Ախալքալաքից էլ՝ մեր գյուղ, թե՛ Ալոշն ու Մակարը թող ասեն, էն որ ասել էին, ուզում են, թե՛ չեն ուզում:

ԴԱՏԱՎՈՐ - Ասա՛ Ալոշն ասում է՝ իրիկունը ես կզանգեմ իրեն:

ՀԵՌԱՆՈՍԱՎԱՐՈՒՄ - Հիմա գնամ ու էն մյուս՝ մաքուր գծով հաղորդեմ:

ԴԱՏԱՎՈՐ - (տղային): Հա՛:

ՏՂԱ - Ասաց. «Լենինգրադներում այնպիսի ոտք են դնում, ինչպես սեփականը: Ոտքս դնել կտամ, թիզ ու կես, խեղճ ու կրակ հորդ գյուղամիջում անցնող-դարձող էլ գլխին չի բամփի, չի ծեծի, ես էլ հայր եմ, սիրտս չի մղկտա, կհասնեմ ու արսու փարս կանեմ, հորդ թիկունք կլինեմ, ախպեր կլինեմ: Զեզ մեքենա կառնենք, Վալոդի փնթի, անձոտ աղջիկնե-

րին կգայթակղեցնես, կտանես ման տալու, ուզես՝ մեքենան կկանգնեցնես, նրանց հետ թփերի մեջ կմտնես: Ես գիտեմ, աշխարհում շատ բան եմ տեսել, հավատա՛ էդ տեսակ վերքով երկար չի քաշի... գորտի թռնելն ի՞նչ է, որ չես սպասում՝ գորտը քարից ջուրը թռնի»: Ասավ. «Թուրքը Սոնա մորս իմ աչքի առաջ սպանեց, մատըր երեխա էի, քո չափ... Զարը որ պաղավ, գորտը երկար չի նստի...»: Ծոգ չէր: Օրը գնում էր: Զարը պաղում էր: Գորտը էլի նստած էր: Մարդը կծկվում, տնքում էր՝ ջորու սև աչքերի մեջ, արյունոտ քարերի մեջ: Գետը գնում էր, օրը գնում էր, ջորին սև աչքերը փակում-բացում էր... մարդը չէր գնում... մենք սպասում էինք, որ գորտը քարից ջուրը թռնի, չէր թռնում, նստած՝ թուքն էր կուլ տալիս: Ասի. «Գնանք, տացրո՛ւ...»: Ասավ. «Մի վախենա, ուզում ես՝ պատմեմ՝ ոտքս ոնց են կտրել: Դու լսել ես՝ հերոսի ոտքը ոնց են կտրում... Կամ ուզում ես, գնա ջորին նստի, չեմ թակի...»: Ասի. «Զորին նրանն է, չեմ ուզում...»:

ԼՐԱԳՐՈՂ - (դահլիճի առաջին շարքերից ծոցատեստրն ու գրիչը ձեռքին՝ ոտքի է կանգնում: Դատավորին): Ներողություն, Ալո՛շ

ջան, հարց ունեմ տղային, թող ասի՝ բա ջորին ինչ եղավ:

ԴԱՏԱՎՈՐ - (դահլիճի կողմը): Էս ո՞վ է:

ԴԱՇԼԻՃ - (ուրախացած, որ իրենք գիտեն: Մեկը ոտքի է կանգնում): Արլականտ ջան, շրջկենտրոնից է, թերթի գլխավոր ժուռնալիստ է աշխատում: Առաջին պալասայում համ վրացերեն է տպում, համ՝ հայերեն:

ԴԱՏԱՎՈՐ - (շրջվում է՝ տղային): Բա դու ինչո՞ւ չգնացիր, թող դու գնայիր...

ՏՂԱ - Գորտին էի սպասում, տացուս ասավ, որ գորտը թուքը կուլ կտա, կպրծնի ու էլի երկար չի մնա ջրից դուրս... համ էլ ջրաղացում կվախենայի սատանաներից:

Դահլիճը ծիծաղում է: Տղան ու Աղաբեկը նայում են դռանը: Նրանք ուզում են, որ տղայի հայրը սխատորը ջրի, պրծնի ու գա:

ԳՅՈՒՂԱՑԻ - (դահլիճ է մտնում: Գլխարկը հանելով): Ընկեր արլականտ ջան, նախագահն ասում է՝ Ալոշին ասա՝ սատկածի միսը վաղն ենք բաժանելու, թող էսօր գա, լավ մսից կլինի:

ԴԱՏԱՎՈՐ - (դատախազի ականջին ինչ-որ բան է ասում, դատախազն էլ՝ նրան: Գյուղացուն): Ասա, թող մի տասը-տասնհինգ

կիլո էլ Մակարի համար պահի, ասա՝ հիվանդ ունեն:

ԳՅՈՒՂԱՑԻ - (գլխարկը դնել-հանելով): Աչքիս վրա, հիմա գնամ, ասեմ: Էս ինչ է, դատը հլա չի վերջացել: Հիմա ուղիղ գնում եմ կանցելար, կասեմ, դատախազ ջան:

ԴԱՏԱՎՈՐ - (սեղանի վրա որոնելով): Էս անտեր առաջին հատորն ո՞ր է... Խանձահոտ է գալիս, իրար չվառեք...

ԴԱՇԼԻՃ - (ուրախացած): Տղոցկան կանանցից չար ոգուն քշելու համար վրացիք չուլ են վառել:

ԼՐԱԳՐՈՂ - (դահլիճի առաջին շարքերից ոտքի է կանգնում՝ ծոցատետրն ու գրիչը ձեռքին: Դատավորին): Ներողություն, Ալո՞շ ջան, հարց ունեմ տղային, թող ասի՝ բա ջորին ինչ եղավ:

ԴԱՏԱՎՈՐ - (տղային): Թող թողնեիր, գյուղ գնայիր...

ՏՂԱ - Գորտը չէր թռնում, իսկ նա վախենում էր:

ԴԱՏԱՎՈՐ - Ո՞վ:

ՏՂԱ - Տացուս անընդհատ ծխում էր: Հետո, երբ օրը գնաց, շոգն անցավ, գետը գնաց, ջորու աչքերը էլ չէին երևում, մութը եկավ, մարդն անշարժացավ՝ բաց աչքերով կուչ եկած քարերի մեջ. ցուրտը եկավ, տացուս սրթսրթաց, գորտը թռավ ջուրը,

քարերի մեջ մուկը ճստճստաց,
տացուիս մազերը ձերմակեցին...

**Դահլիճը հռռում է: Աղաբեկը
ծխում է, դատավորը ծիծաղում է:**

ԴԱՏԱՎՈՐ - (ժպտալով): Հետո՞:

ՏՂԱ - Հետո էլ, տացուս թե՛ տե-
սա՛ր՝ ինչ հեշտ էր, գորտը թռել է...
Մենք խուրջինը վերցրինք, ա-
սավ. «Ոչ մի բանից չվախենաս,
չհիշես, կյանքումդ էլ չմտաբերես,
որ ապրելը հեշտ լինի, դիմացիր,
որ հասնենք ջրաղաց, քեզ

կպատմեմ, թե ինչպես են ոտքս
կտրել... Մի ոտքի վրա կանգնած
միզում էր ծառին, կոշիկներին,
շալվարին, հենակներին»...

Աղաբեկը նայում է տղայի աչքե-
րին, դահլիճում ծուխը շատ է,
նրա ծխախոտի դառը ծուխը
հասնում է տղայի քթին, հետո
նրանք միասին նայում են ակում-
բի դռանը, նրանք ուզում են, որ
հայրը գա: Ակումբի բաց դռնից
երևում է մի փակ, սև մեքենա:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Երեք տարի անց: Տղան ավարտել է տասներորդ դասարանը, մայրաքաղա-
քում է: Երեկո: Նոր են վառվել փողոցների էլեկտրական լույսերը: Տղան վա-
զում է: Նրան հետապնդում է ինչ-որ բան:

Պարեկ միլիցիոներները նկատում են նրան: Կանգնեցնում են:

ԽՈՇՈՐ ԳԼԽՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ -
Ծունչդ տեղը բեր, հետո կասես,
թե ինչու ես վազում:

Տղան հեռապառ է, շունչը տեղը չի
գալիս, ուզում է փախել:

ԿՈԿՈՐԴԸ ԲԻՆՏՈՎ ՓԱԹԱԹԱԾ
ՄԻԼԻՑԻՈՆԵՐ - Ոչինչ, մի քիչ
տեղում քայլիր, կանցնի: Միան-
գամից կանգնել չի կարելի,
երևում է՝ երկար ես վազել:

Տղան կանգնած է: Ուզում է ինչ-
որ բանից բռնել, ծառերը, շենքե-
րը գնում են, ոտքերը ծալվում են,
չի կարողանում ոտքի վրա մնալ:
Երկու միլիցիոներները, տղայի
թևերը իրենց ուսերով զցած, շուն-
չը տեղը բերելու համար՝ աջ ու
ձախ են քայլեցնում: Միաժամա-
նակ գրպաններն են ստուգում:
Տղան ուզում է փախել, դարձյալ չի
կարողանում, ստամոքսն այրվում
է: Նրանց շուրջը շուրջը անցորդ-
ներ են հավաքվել:

ԿՈԿՈՐԴԸ ԲԻՆՏՈՎ ՓԱԹԱԹԱԾ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ - (գոռում է հավաքվածների վրա, պահանջում է, որ ցրվեն): Ինչ եք կանգնել, մի հավաքվեք, գնացեք ձեր գործին, անցեք...

ՏՂԱ - Սոված եմ:

ԽՈՇՈՐ ԳԼԽՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ - Դու պատմիր, հետո միասին կգնանք ձաշելու, դե սաս՝ ինչ է պատահել:

Տղան պատմում է: Նրա ձայնը ընդհանուր աղմուկի մեջ լսելի չէ:

ԽՈՇՈՐ ԳԼԽՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ - Մի վախենա, դու գնա տուն, մենք կգտնենք Քրիստոսին նման՝ կպույտ աչքերով ծերունուն: Այս փողոցով մինչև վերջ, մինչև սեփական տները պիտի բարձրանանք, չէ՛:

ՏՂԱ - (ուրախացած, որ իր սարսափի պահին հարազատի նման կարեկցողներ կան): Գիտե՞ք, ես նոնից եմ ծնվել:

Միլիցիոներներն իրար են նայում, նայում են շուրջքուրքը կանգնած, ծիծաղող անցորդներին, հետո նորից իրար են նայում: Նորից ծիծաղ:

ՄԻԼԻՑԻՈՆԵՐՆԵՐ - Նստիր մեքենան:

ՏՂԱ - (չի ցանկանում նստել): Տուն եմ ուզում գնալ, քաղցած եմ:

Միլիցիոներները քաշքշում են տղային: Կոկորդը բինտով փաթաթած միլիցիոների կոճակն է պոկվում, կուզեկուզ ման է գալիս, գտնում, գրպանն է դնում:

ՀԱՎԱԲՎԱԾՆԵՐ - (ծիծաղում են, նրանցից մեկը): Մեղք չէ՛, ինչ եք ուզում:

ՄԻԼԻՑԻՈՆԵՐՆԵՐ - Ձեր գործը չէ: Դուք ցրվեք: Բերանները բաց կանգնել են, ոնց որ թատրոն լինի: (Տղային.) Մի ստիպիր, որ մենք նստեցնենք:

ՏՂԱ - (սաստկացող վտանգ զգալով): Ուզում եմ տուն գնալ, քաղցած եմ:

Միլիցիոներները երկար համոզում են, որ իրենք տուն տանեն տղային, տղան ինչ-որ բանից զգուշացած է, չի համաձայնում:

ՏՂԱ - Չէ՛, չեմ ուզում:

ԿՈԿՈՐԴԸ ԲԻՆՏՈՎ ՓԱԹԱԹԱԾ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ - Ոչինչ, նստիր, մենք էլ ենք այն կողմ գնում, քեզ տուն կտանենք, հետո մեր գործին կգնանք, մեր կարգն է այդպես, տուժողին միշտ էլ տուն ենք տանում, ախր, չեմ հասկանում, թե քեզ համար ինչ

տարբերություն, թե ո՞նց ես տուն գնում...

ՀԱՎԱՔՎԱԾՆԵՐԻՑ ՄԵԿԸ - Թողեք, թող գնա, երեխա է, էլի:

ՀԱՎԱՔՎԱԾՆԵՐԻՑ ՄԵԿ ՈՒՐԻՇԸ - Այսպես որ պաշտպանում եք, ի՞նչ գիտեք, թե ով է:

ԽՈՇՈՐ ԳԼԽՈՎ ՄԻԼԻՑԻՈՆԵՐ - *(բռնում է տղայի օձիքից):* Զզվցրիր: *(Շարտում է փոքրիկ, անլուսամուտ, դեղին «Երագի» մեջ: Տղան ստվերի նման ծեփվում է թիթեղյա պատին ու թափվում հատակին: Խոշոր գլխովը, գլխավերևը նստած, ծխում է:)*

Տղան սալիտակ շորերով, չրադարող պտույտներ՝ միջանցքներում, մեծ ու փոքր սենյակներում, դատարկ ճաշարանում:

Երկու տղամարդ բուժակներ ամբողջ գիշեր, խոշոր գլխով միլիցիոների պես, միջանցքներում, զուգարաններում, մահճակալների տակ, սենյակից սենյակ թափառող հիվանդների օձիքներից բռնած, շարտում են դեպի պատերը՝ հիվանդանոցում պատշաճ, խաղաղ գիշերվա պատրանք ստեղծելու համար: Տղան միաժամանակ ամեն տեղից լավոր ճիչերի, ձայների պատկերների մեջ է:

Տղան առավուովա լույսի մեջ տեսնում է իր սենյակի պատուհանի ճաղերը: Երկար նայում է ճաղերին ու լույսերին: Կարկամած է:

Երկու տղամարդ բուժակները մտնում են ներս, խոսք չկա, ամեն ինչ կատարվում է լռության մեջ: Տղայի քնից բռնած՝ տանում են բժշկի առանձնասենյակը: Բժշկի հետ՝ սեղանի ետևը, նստած է կին սեքսոպաթոլոգը:

ԲԺՒՇԿ - *(երկար զննումներ է կատարում: Շապիկը հանել է տալիս, ստուգում կուրծքը):* Ձեր ցեղում հիշում ես որևէ մեկին... ասենք, որ քնից վեր թռչեր, աղաղակեր, հարևաններին վնաս տար կամ նստած տեղից հանկարծ վայր ընկներ, թարտար ու բերանից փրփուր գար, ձերոնցից մեկն էլ մատ կամ գդալ մտցներ բերանը, որ լեզուն կուլ չգնար: Պիտի որ հիշես, հիշողության մեջ մնացող բաներ են այդպիսի դեպքերը, գդալի պոչն է ջարդվում, երբեմն արյունոտելու չափ օգնողի մատն են կծում: *(Հետո նկատում է տղայի շփոթված հայացքը: Տղան ամաչում է գեղեցկուհի սեքսոպաթոլոգից:)* Դու նրանից մի ամաչիր, կարգն է

այդպես, մենք երկուսով պիտի եզրակացության գանք: Լա մեր սեքսուաթթություն է:

ՏՂԱ - Չէ, չի եղել, չեմ հիշում:

ԲԺԻԵԿ - Հա՛, չես հիշում, չես հիշում, չես հիշում... Լեզուդ ցույց տուր, ահա... *(Երկու բուք մատներով տղայի կուպերն է սեղմում, հետո աչքերը փակ, զույգ ձեռքերը առաջ պարզած, սենյակում քայլել է տալիս: Լորից զննում է:)* Ցուցամատդ դիր քթիդ, այսպես, հիմա էլ՝ ձախով, մի անգամ էլ, ահա... ծունկդ բացիր, ահա... *(Փոքրիկ բժշկական մուրձով մի քանի անգամ հարվածում է տղայի ծնկին:)* Ահա: *(Ձեռքերն է լվանում ծորակի տակ, ետ է գալիս, նստում իր տեղը:)* Լավ, բա ինչո՞ւ վախեցար:

ՏՂԱ - Որովհետև հավատում եմ, որ նոնից եմ ծնվել: *(Ծապիկը դեռ չի հագել, սեղմած՝ թևի տակ:)*

ԲԺԻԵԿ - *(նայում է սեքսուաթթու-գին, հետո երկար նայում է տղայի աչքերի մեջ):* Ինչ գիտես:

ՏՂԱ - *(շապիկը ուզում է հագնել, հետո դնում է մյուս թևի տակ):* Մայրս է պատմել...

ԲԺԻԵԿ - Հայ բանահյուսության մեջ այսպիսի ինչ-որ վարկածի մասին խոսվում է: Խաչքարերի ու տաճարների նոններն են հիմք ըն-

դունում: Ո՞ր է, թե այդպես լիներ: Մայրդ գյուղում ի՞նչ գործ է անում:

ՏՂԱ - Բոստանն է ցանում:

ԲԺԻԵԿ - Ի՞նչ է ցանում:

ՏՂԱ - Ծաղիկներ, այնպիսի խոշոր, կրակի գույնի կակաչներ է աճեցնում, որ մեր գյուղի միլիցիոներ Ծալիկոն նույնիսկ արգելում է հաջորդ տարի նորից ցանել:

ԲԺԻԵԿ - Այ քեզ բան, ինչո՞ւ է արգելում:

ՏՂԱ - Արգելում է, որովհետև ցահելները կարող են սերմը գողանալ, մեկ ուրիշ տեղ ցանել, հետո նրա կաթով սրսկվել: Կակաչի կաթը հավաքում են բամբակի վրա, բամբակը եռացնում են և հյութը սրսկում երակի մեջ:

ԲԺԻԵԿ - *(դադար):* Դու արե՞լ ես:

ՏՂԱ - Չէ:

ԲԺԻԵԿ - Բա լավ, դու մի բան պիտի անեիր, չէ՞, դու հո չէիր կարող ոչինչ չանել:

ՏՂԱ - Դպրոց էի գնում, արձակուրդներին սարերում ոչխար էի արածեցնում, մերոնց հետ կարտոֆիլ էի ցանում: Մարգագետնում խաղում էի, քամուց ծածանվող շրջագգեստների տակից աղջիկների սպիտակ շապիկների ծայրերն էի տեսնում՝ կարմիր նախշազարդ ծաղիկներով, ու շունչս կտրվում էր. պապիս դիա-

կը բերեցին բանտարկության տեղից, թաղեցինք, հետո ավարտական երեկոյի վերջին զանգը եղավ, ամբողջ դասարանով, դիրեկտորն էլ մեզ հետ, երգեցինք. «Լենին, դու կյանք ես հարակեզ...», դպրոցն ավարտեցի, տանից փող գողացա ու փախա մայրաքաղաք՝ դեռ էլի հավատալով, որ նռնից եմ ծնվել:

ԲԺԻՇԿ - Նռնից, նռնից, ինչո՞ւ նռնից, կարո՞ղ ես ասել՝ ինչո՞ւ նռնից:

ՏՂԱ - Մեր գյուղում միրգ չի աճում: Մայրս ինձ պատմել էր, որ մի շոգ օր դաշտում կարտոֆիլն էին քանդել, ու սիրտը թթու բան է ուզել: Ասում էր. «Զգիտեմ՝ որտեղից էր ձարել պապդ, հենակներին հենվելով՝ եկավ, դիմացս մի ոտքի վրա ձոճվելով կանգնեց, տելագրեյկայի գրպանից մի մեծ կարմիր նուռ հանեց, տվեց ինձ: Ծրջվեց, հորդ ասաց. «Աշխատանքը ծանր է, թող հարսը տուն գնա»: (Տղան քննախույզ բժշկի ու սեքսուաթոլոգի աչքերին է նայում փոխնիփոխ, նրանց աչքերից ոչինչ չի գուշակում, նորից է շարունակում:) Մայրս ասում էր. «Եկա տուն, նուռը ջարդեցի, դուռը ներսից փակեցի ու կլեպն էլ հետը կերա»: Հետո, մի քանի օր անց, ծնվել եմ ես... Համալսարա-

նի քննություններին չմասնակցած՝ թափառում էի մայրաքաղաքի փողոցներում ու էլի հավատում էի, որ ես ծնվել եմ հենց այն նռնից, որ պապս տելագրեյկայի ծոցագրպանից էր հանել ու տվել մորս:

ՍԵՔՍՈՊԱԹՈԼՈԳ - Դու ասացիր, որ գյուղում, մարգագետնում խաղում էիր, քամուց ծածանվող շրջագետստների տակից աղջիկների սպիտակ շապիկների ծայրերին էիր նայում՝ կարմիր նախշազարդ ծաղիկներով, ու շունչդ կտրվում էր: Այ, այդ ժամանակ միայնակ մնալու ցանկություն ունենում էիր:

ՏՂԱ - Ժամերով պառկում էի ցորենի դաշտում:

ՍԵՔՍՈՊԱԹՈԼՈԳ - Այդ ժամանակ ի՞նչ էիր անում, ասենք՝ ինքնապղծությամբ չէիր զբաղվում:

Տղան կարկամած է, շշմած նայում է սեքսուաթոլոգի սև աչքերին ու չի կարողանում խոսել: Մեքսուաթոլոգը բժշկին լատիներեն մի քանի բառ է ասում:

ԲԺԻՇԿ - (տղային): Լավ, ընդունենք, որ այդպես է եղել քո ծնունդը՝ նռնից: Եկ կրկին անդրադառնանք մորդ, էլ ի՞նչ էր ցանում:

ՏՂԱ - Մանուշակ, նարգիզ, արևածաղիկ...

ԲԺԻՇԿ - Ռեհան, պետրուշկա չէր ցանում:

ԸԻՎԱԼԴ - *(որին բրդի գործարանի տնօրեն են ասում: Դռան արանքից գլուխը ներս է մտցնում, բժշկին):* Բենիամին Աշոտովիչ, ես հաստատ գիտեմ՝ էդ տղայի ծնողները չեն գա նրա ետևից:

ԴՌՆԵՐԻ ՄՈՏ ԿԱԼԳԼԱԾ ԵՐԿՈՒ ԲՈՒԺԱԿՆԵՐ - *(նրան ետ են մղում):* Էլ չերևաս այս կողմերը: *(Դուռը փակում են:)*

ԲԺԻՇԿ - Լավ, շարունակիր, աշխատիր կենտրոնանալ, մեր գործի համար շատ կարևոր են մանրամասները:

ՏՂԱ - Նույնիսկ սարի սմբուլ էր աճեցնում: *(Ոգևորված:)* Տեսնլ եք՝ բարակ, երկար, փափկամազ, փիսիկ էլ են ասում, նույնիսկ ասում են՝ ով որ տանը պահի, դժբախտություն կպատահի...

ԲԺԻՇԿ - Կոտեմ էլ չի ցանում:

ՏՂԱ - Չէ:

ԲԺԻՇԿ - Բա լավ, գյուղից, տանից փախել էիր, որ համալսարան ընդունվեիր, ինչո՞ւ քննություններին չմասնակցեցիր:

ՏՂԱ - Իմ վարձած նկուղներից մեկում գյուղում չճարվող, արգելված Աստվածաշունչն էի ուսումնասիրում և հավատում, որ մեր գյուղի գրականության ուսուցիչը, որ

նույնիսկ իր հոր հետ էլ քաղաքավարի էր խոսում, ճիշտ էր ասում մեր դասարանին, որ պոեզիան Աստվածաշնչից է սկսվում: Երբ կարդալով եկա, եկա ու հասա Մատթեոս ավետարանիչի թղթերին, ու Քրիստոս խաչի վրա դիմանում էր փշե պսակին, նիզակի հարվածներին և մարդկային թուլությամբ աղերսում էր Եհովա հորը, որ լեղու բաժակը իրենից հեռու տանեն, չենթարկեն այդ փորձությանը, համալսարանի ծակատին ամրացված բարձրախոսները դղրդալով արդեն հայտարարում էին առաջին քննությունների մասնակիցների գնահատականները: Իսկ ես այդ օրը հասկացել էի, որ Քրիստոս աշխարհի ամենամեծ բանաստեղծն է:

ԲԺԻՇԿ - Մենք կրկին շեղվեցինք, մենք մորդ մասին պիտի խոսեինք: Լսիր, տղա՛, ենթադրենք՝ մայրդ ճաշ է եփում, սոխի համար քաղաքի շուկա խոմ չի՞ գնա կամ ձեր բոստանը թողած՝ հարևանից չի՞ ուզի, չեմ հասկանում, սոխն ինչ է, որ ձեր բոստանում չեք ցանում:

ՏՂԱ - *(դեռ ոգևորված):* Գույնզգույն մեխակներ է ցանում, քաղաքում դրանց նմանները տեսած չեք լի-

նի, թերթիկներն այնքան բարակ են, այնպես թափանցիկ:

ԲԺԻՇԿ - Ինչո՞ւ վախեցար, ինչի՞ց էիր փախչում այդպես:

ՏՂԱ - Փողոցներից մեկում, պատի տակ նստած, ավելսառն մորուքով ծերունուն հանդիպեցի, զարմացել էի՝ Բրիստոսին այնքան նման էր: Նրա աչքերը կապույտ ու ջինջ էին, անընդհատ ինձ էին նայում: Գնացինք իրենց տուն՝ շան քոթոթներին տեսնելու: Հետո խաղատախտակը ծնկներիս դրած՝ նարդի էինք խաղում: Նրա չոր ծնկները ծնկներիս էին կպնում, նա ծիծաղում էր, ես էլ էի ծիծաղում, հետո նրա ձեռքերը շոշափելով բարձրանում էին ծնկներիցս վեր ու ավելի վեր: Ես հաստատ տեսա, որ երբ դուրս թռա, նա նստած մնաց: Գիտեի, որ նա ինձ չի հետապնդում, բայց ես վազում էի, նա գալիս էր: Ծանրերը, շենքերը մնում էին, նա՝ չէ, բայց նրա նման մի բան ինձ կառչելով գալիս էր: Մանրամասն պատմեցի: Ես գնամ, այսօր հինգշաբթի է, մեր ավտոբուսը ամեն հինգշաբթի գյուղ է գնում: Եթե հիմա գնամ, չեմ ուշանա, թողեք գնամ:

ԲԺԻՇԿը կողքին նստած սեքսուալաթուղզի հետ լատիներեն բառեր է փոխանակում:

ՍԵՔՍՈՊԱԹՈՒԼՈԳ - Դու գիտեիր, թե նա ինչ էր ուզում քեզանից, թե՞ այդպես էլ գլխի չընկար:

Տղամ, շնամ, բժշկուհու սև աչքերին է նայում: Լռում է:

ՍԵՔՍՈՊԱԹՈՒԼՈԳ - *(բժշկի հետ լատիներեն բառեր է փոխանակում: Մոտենում է տղային, շոշափում ուսերը, կողերը):* Այս ոսկորները հարկավոր է մտով լցնել: *(Վերցնում է շապիկը թևի տակից, իր ձեռքով հագցնում տղային:)* Բոտարիքի ու բոյի համեմատ՝ այսպես չի կարելի, հարկավոր է ոսկորները լցնել մտով: Դե ասա, դու գիտեիր, թե՞ չգիտեիր՝ նա ինչ էր ուզում քեզանից: Հասկացիր, քո պատասխանը շատ կարևոր է: *(Վերադառնում է իր տեղը:)*

Տղամ լռում է:

ԲԺԻՇԿ - Դու ասացիր, որ պապը կալանավայրում մահացել էր, ինչո՞ւ էր կալանավայրում, ի՞նչ էր պատահել:

ՏՂԱ - Մեր ջրաղացի մոտերքը մարդ էր մահանում, մենք սպասեցինք, սպասեցինք, հետո նրա խուրջինով փողը վերցրինք:

ԲԺԻՇԿ - Ոչ մեկին օգնության չէիք կանչում, կանգնել, սպասում էիք, որ նա մեռնի...

ՀԻՎԱՆԴ - *(որին բրդի գործարանի*

տնօրեն էին ասում: Դուռը բացում է, գլուխը ներս մտցնում): Բենիամին Աշոտովիչ, ես հաստատ գիտեմ՝ էդ տղայի ծնողները չեն գա նրան տանելու:

ԴՌԱՆ ՄՈՏ ԿԱՆԳԱՆԱԾ ՍԱՆԻՏԱՐ-ԼԵՐԻՑ ՄԵԿԸ - *(բռունցքով հարվածում է նրա գլխին ու դուռը փակում: Փակ դռան ետևից լսվում է մարդկային մարմնի տապալվելու դրմփոց և տնքոցներ: Նույն սանիտարը նորից դուռը կիսաբացում է, արանքից):* Բրդի գործարանի տնօրեն, մեկ էլ դուռը բացեցիր, կկապեմ մահձակային, իմացա՞ր:

ԲԺԻԾԿ - *(տղային):* Հա՛...

ՏՂԱ - Այդ դատի օրերին շրջկենտրոնից եկած լրագրողն էլ թերթում հոդված էր գրել, որ՝ ինչ անենք, թե նա այլազգի էր, մենք առանց օգնություն կանչելու՝ կանգնել, նայել ենք... Հա՛, այդպես էր, մենք երկուսով կանգնել էինք:

ԲԺԻԾԿ - *(սեքսուաթոլոգին):* Էդ մարդու խելքը չեմ հասկանում, էդ բիձեն ի՞նչ էր մտածում, որ կանգնել, սպասում էր, այդ մի մատ երեխեն հետո ո՞նց էր ապրելու՝ ամբողջ կյանքը ուրիշի մահը շալակին... *(Տղային՝ աչքերի մեջ նայելով:)* Թաղման ժամանակ արդեն մեծ էիր, տասներորդ դա-

սարանում էիր, չէ՞, որ կալանավայրից բերված դիակը տեսար, մեջդ նրա նկատմամբ դժգոհություն, սարսափ, նեղվածություն չկա՞ր...

ՏՂԱ - Սարսափի հետ խառը ահավոր տխրություն էր, մարդուն դնում ես դագաղի մեջ, մի ոտքը չկա: Մի ոտքը վաղուց՝ տիրոջից առաջ է մեռել ու թաղված է Բեռլինի հիվանդանոցների պատերի տակ, իսկ ոտքի տեղը՝ դագաղի մեջ, հենակներն են դնում... փայտ... այդպես նեղվում էի...

ՍԵՔՍՈՊԱԹՈՂՈԳ - Դու չասացիր, որ ցորենի դաշտում պառկում էիր, ինչո՞վ էիր զբաղվում, ինքնապղծության միտք չկա՞ր մեջդ, դու մի բանով զբաղվում էիր, չէ՞, խոմ չէիր կարող հենց այնպես ժամերով պառկել:

ՏՂԱ - *(երկար լռում է, գլուխը կախ է, էլ չի նայում բժշկուհու աչքերին, ցածրաձայն):* Ցորենի արտի մեջ խառը կուժկոտրուկներ էլ էին լինում, նայում էի...

ՍԵՔՍՈՊԱԹՈՂՈԳ - Փորի՞դ վրա էիր պառկում, թե՞ մեջքիդ:

ՏՂԱ - *(կրկին երկար լռություն: Գլուխը կախ է, էլ չի նայում բժշկուհու սև աչքերին):*

ԲԺԻԾԿ - Որ ձիշտ պատասխանես,

հենց մեր մեքենայով էլ կուղարկենք գյուղ:

ՏՂԱ - Ես ավտոբուսով եմ ուզում գնալ:

ԲԺԻՇԿ - Ավտոբուսով, ուրեմն թող ավտոբուսով լինի, ավտոբուսով գնա:

ՏՂԱ - Հորաքույր Ասանեթին մի անգամ լողանալուց մերկ տեսել էի, նրա մասին էի մտածում: Տեսնում էի, թե ինչպես է գորտը քարից նրա վրա թռչում:

ՍԵՔՍՈՂԱԹՈՂՈԳ - Պարզ է, հենց այդպես էլ գիտեի: Ախր, նիհարությունը հուշում էր ինձ, ոսկորների այսպիսի մերկություն... *(Բժշկին լատիներեն բառեր է ասում, հետո՝ հայերեն:)* Հիշենք, օրինակ՝ նման պատկերային զգացողության ժամանակ, թե ինչ բանալի է առաջարկում Ֆրեյդը իր «Դասախոսություններ պսիխոանալիտիկ վերլուծությունների համար» գրքի 1923 թվականին հրատարակած առաջին հատորի 165-րդ էջում: Մերկությունը արդեն մեզ հայտնի է՝ որպես կնոջ էրոտիկության մասին որոշակի սիմվոլ: Այս կերպարը կարող է դարձյալ մանրամասնվել, այն իմաստով, որ գորտի՝ քարից նրա վրա թռչելը ենթադրում է մարմնի անցքեր ունենալը: Իսկ գորտը,

նրա թռիչքը, քարը և նրա պնդությունը, այս բոլոր խորհրդանիշերի բացման բանալին, անկասկած, ենթադրում է բարձիթողի տղամարդկային սիմվոլը:

ԲԺԻՇԿ - Զեզ բուժում է պետք: Կպառկես, կբուժվես, ոսկորներդ մտով կլցնենք, այդ ընթացքում կհեռագրենք գյուղ, որ ծնողների գան:

ՏՂԱ - Ես ամեն ինչ պատմեցի, ուզում եմ գնալ տուն, ավտոբուսը ամեն հինգշաբթի գնում է, թողեք՝ ավտոբուսով գնամ գյուղ:

ԲԺԻՇԿ - *(դռան երկու կողմը կանգնած սանիտարներին):* Որ ծնողները եկան, ասեք, որ անպայման ինձ տեսնեն:

Սանիտարները լուռ տանում են տղային:

Հոգեբուժարան: Տղային բուժում են: Բժիշկը հետևում է նշանակումների արդյունքին: Որպեսզի չխուսափի ցավոտ ներարկումներից, երկու սանիտարները հաճախ նրա ձեռքերը մահճակալին են կապում, այդ պահին տղան ուզում է, որ ծնողները գան: Դիմացի թիվ 7 հիվանդասենյակի ճաղատ գլխով, միջին տարիքի հիվանդը, որին բրդի գործարանի տնօրեն էին ասում, գիշերները

քիչ-քիչ, օր օրի տղայի ներքնակի ու բարձի բամբակն է գողանում («Տանեմ, Էլիզայի համար ներքնակ եմ սարքելու, բայց դու իմացիր, ես հաստատ գիտեմ՝ ձերոնք չեն գա քեզ տանելու: Ես բրդի գործարանի տնօրեն եմ, ես ամեն ինչ գիտեմ»): Երկու ամիս անց տղայի հայրն ու մայրը գալիս են գյուղից: Հիվանդանոցի միջանցքում տղայի հայրն ու մայրը երկու սանիտարներից իմանում են բժշկի տան հասցեն: Հայրը բժշկի համար կճուճով բերած մեղրը տանում է նրանց տուն: Մինչև նրա վերադարձը, տղան ու մայրը, միջանցքի մատարանին մատած, զրուցում են: Հայրը վերադառնում է, նրանք երեքով մտնում են բժշկի առանձնասենյակը:

ԲԺԻՇԿ - (ծեռքով ծանոթանում է տղայի հոր հետ): Անվանակիցներ ենք: Մի ժամանակ մտածում էի, թե Բենիամինը աշխարհի ամենալավ անունն է: (Ծիծաղում է:)

ԼԱՅՐԸ - (ժպտում է, վերնաշապիկի օձիքի կոճակն է արձակում): Ձեր առողջությունը ղնց է, բժիշկ ջան, երեխեքը լավ են:

ԲԺԻՇԿ - Լավ են, շնորհակալություն: (Տղայի մորը տարբեր հարցեր է տալիս:) Իզուր եք տղայի

գլուխը լցրել նուան պատմություններով:

ՀԻՎԱՆԴ - (որին բրդի գործարանի տնօրեն են ասում: Գլուխը ներս է մտցնում դռան արանքից): Բենիամին Աշոտովիչ, ես հաստատ համոզված եմ՝ էդ տղայի հայրն ու մայրը չեն գա գյուղից:

ՍԱՆԻՏԱՐՆԵՐ - Տնօրեն, քեզ մահձակալից կկապենք, իմացար:

ՄԱՅՐԸ - (շփոթված): Այդ օրը շոգ էր, կեսրարս ձոճվում էր մի ոտքի ու հենակի վրա, գրպանից նուռ հանեց...

ԲԺԻՇԿ - (զայրացկոտ ընդհատում է նրան): Ա՛յ կնիկ, այդ օրերին փորդ բերանիդ էր հասնում, խոսում ես մատղաշ աղջնակի նման: Նուռ, նուռ... բա մարդը... (Բազմանշանակ նայում է տղայի հորը:)

ԼԱՅՐԸ - (քարերին առած գունաթափ կոշիկների քթերին է նայում, հետո կռանում է, քրտնած ձեռքի ափով կոշիկների քթերն է մաքրում, նորից ուղղվում): Օ՛ֆ, օ՛ֆ...

ՏՂԱ - (տագնապած է, ուզում է, որ գնան տուն): Գնանք, այսօր հինգշաբթի է, ավտոբուսը կգնա:

Նրան չեն պատասխանում:

ԲԺԻՇԿ - (հայացքը կանգնած է տղայի հոր գունաթափ կոշիկներ-

րի քթերին: Հետո գրպանից ծխախոտ է հանում, ծխում է):

ՄԱՅՐԸ - ...ինչո՞ւ Ծովինարը... ես անգրագետ կին եմ, բայց ինչո՞ւ Մարիամը... Այդպիսիներն էլ կային...

ԲԺԻՇԿ ԹՅԹԻ ՎՐԱ ԲԱՆ Է ՂՐՈՒՄ:

ՏՂԱ - (ուզում է, որ գնան տուն): Գնանք, այսօր հինգշաբթի է, ավտոբուսից ուշանում ենք:

ՆՐԱՆ ՀԵՆ ԱԿԱՏԱՍԽԱՆՈՒՄ:

ԲԺԻՇԿ - Տղան հիմա լրիվ բուժված է, իմ խորհուրդն է, նրան այլևս մայրաքաղաքում չթողնել, մեծ քաղաքներում հաճախ են սթրեսներ պատահում, կարող է նորից կրկնվել: (Երկար լռություն է, հայացքը երկար՝ տղայի հոր գունաթափ կոշիկների քթերին է):

ՏՂԱ - (ուզում է, որ գնան տուն): Գնանք, ավտոբուսից ուշանում ենք: (Նրան չեն պատասխանում:) Այսօր հինգշաբթի է:

ԲԺԻՇԿ - (գրած թուղթը տալով տղայի հորը): Այստեղ գրված է, կտաք ձեր գյուղի բուժքոչը, թող նշանակումը նույնությամբ կատարի, ձեր կնոջն էլ է բուժում պետք, ես դեռ այն ժամանակ էլ կասկածեցի, երբ տղայի հետ էի գրուցում:

ՀԱՅՐԸ - (զարմացած, հանկարծ

նայում է կնոջ դեմքին, ձեռքի փով սրբում է ծակատի քրտինքը: Հանկարծ ոտքերը, թելն արծակած խամաճիկի ոտքերի նման, ծուռումուռ թափվում են միաժամանակ ամեն կողմ: Հավաքում, ուղղում է, կրկին ծոմնովում, անջատվում են, գալիս քիթ քթի՝ իրար են հպվում): Էս անտեր մեջքս ինչի՞ բռնվեց: Մեջքս է բռնվել:

ԲԺԻՇԿ - Վտանգավոր բան չկա, այդ նշանակումները ապահովության համար են:

ՀԱՅՐԸ - (թուղթը վերցնելով): Օ՛ֆ, ճֆ:

Հապշտապ երեքով դուրս են գալիս:

ՀԻՎԱՆԴ - (որին բրդի գործարանի տնօրեն են ասում, նրանց ետևից գնալով՝ տղային): Այդ էր պակաս, որ չիմանայի, ես գիտեմ՝ ձերոնք քեզ գյուղ չեն տանի, վաղուց ավտոբուսը գնացել է, այսօր էլ ուրբաթ է, հինգշաբթի չէ:

Գյուղի ճամփաբաժանը: Վերին գյուղերը գնացող ավտոբուսը նրանց իջեցրել է, ոտքով են գնում գյուղ:

ՀԱՅՐԸ - (ամբողջ ժանապարհին ավտոբուսի մեջ չի խոսել: Նրանցից մի քիչ առաջ է, ետ է դառնում, գալիս դեպի նրանց:

Միանգամից, վրա-վրա ասելով): Չեմ հասկանում, ինչ է, բանաստեղծ դառնալու համար անպայման տնից պիտի փախնեիր ու մայրաքաղաքում քյաֆթառ ծերունիները, ծնկներդ ճանկոտելով, պիտի շալվարդ արձակեին, ու դու էլ վախից խելըռնոցների մահձակալներին ընկնեիր: *(Նորից առաջ է անցնում՝ պատասխանի չսպասելով:)*

Մայրը թևանցուկ է անում տղային:

ՍԵՐՄԱՆ - *(հեռվից գոռում է):* Բարև:

Հայրը, կուզը դուրս գցած, ավելի արագ է քայլում:

ՍԵՐՄԱՆ - *(հիմա էլ վրացերեն է գոռում):* Գամարջոբա:

ՄԱՅՐԸ - *(պինդ սեղմում է տղայի թևանցուկ թևը):* Ետ չնայես, չնայես Սերմանին:

ՀԱՅՐԸ - *(վրացերեն, Սերմանի կողմը ձեռքը թափ տալով):* Նետայի շեն սաքմես: *(Արագ քայլում է՝ կուչ ու ձիգ անելով:)*

ՍԵՐՄԱՆ - *(շրջանցում է թմբերը, որ անպայման տղայի հոր դեմ ընդառաջ դուրս գա ու կանգնում է ծանապարհի մեջտեղը):* Բարև, Աղաբեկի տղա, էս որտեղից եք գալիս էսպես գերդաստանով: Փոստի Տասոն ասում է՝ մանչուն

խելըռնոցն էին պառկեցրել, ինչ է պատահել: *(Հացի տոպրակից մի կպացոց սինձ է հանում, տալիս տղային:)* Խոզանի անարատ սինձ է, հենց նոր եմ հավաքել, կեր: *(Նայում է տղայի աչքերի մեջ:)* Երկուսին գումարած երկու ինչ կանի: Իհնա, տղա, սինձն էլ անվա ուտեն, այ քեզ բան...

Տղան բերանի մեջ զգում է անվասնձի հողի համը, ուզում է լաց լինել: Նաև զարմացած է, ինքը միշտ սինձը անվա է կերել: Թքում է ոտքերի տակ:

ՍԵՐՄԱՆ - Տղա, մարդկանց ներկայությամբ էլ թքեն, իհնա, թող գնայիր հեռու, թքեիր... *(Նորից քննախույզ աչքերի մեջ է նայում:)*

ՀԱՅՐԸ - *(Սերմանին):* Հեչ, բան չկա, էդ հիվանդանոց-միվանդանոցի պատմությունը սխալմունք էր:

Նրանք թմբին պառկում, ծխում են: Նորից հայրը գալիս, խռոված, նրանցից տասը քայլ առաջ է անցնում:

Տղան հոր հետ կապ է որոնում: Մանր քարերին է հարվածում կռիվի քթով: Քարերը գլոր-գլոր հասնում են հոր կրունկներին, նորից է հարվածում, հետո՝ նորից, հայրը ետ չի մայում:

Մայրոն ու Համբոն գալիս են գյուղից: Նույն գյուղի բնակիչներ են: Հայրուկի փամփշտակալի մման վանդակավոր շալը խաչուփաչ կապած, Մայրոն՝ առաջ ընկած, պարանով պոզերը կապած կարմիր կովին է քշում:

ՀԱՄԲՈ - Բարև, Աղաբեկի տղա: Ֆերշել Գուրգենն ասում է՝ էս անտերը պրովոդ է կուլ տվել կամ էլ մինինգիտ է, տանում ենք մթերման: Փոստի Տասոյից լսեցի, ասում են՝ հեռագիրը ինքն էր ստացել, մանչը խելըռնոցն էր պառկած, ինչ է պատահել... (Զննախոյզ տղայի աչքերի մեջ նայելով:) Իմա, մանչ, կոշիկիդ թելը արձակ է, էս ինչի՞ն է կոշիկիդ թելը արձակ... (Տղայի հորը.) Ինչ է, բան էր պատահել...

ՀԱՅՐՈ - Սթրես ուներ... Համբոն, կարող է իմանաս, ինչ բան է սթրեսը, բժիշկը ասում է՝ մեծ քաղաքներում է պատահում:

ՀԱՄԲՈ - (ուսերը թոթվելով): Ինչ իմանամ, էնենց դժվար բան ես հարցնում:

ՄԱՅՐՈ - (տղային): Չվախենաս: (Բայց ինքը, ինչ-որ անորոշ բանից վախեցած՝ դողում է, տղայի հետ թևանցուկ են:)

ՏՂԱ - (մորը): Բերանումս հողի համեմ գգում:

ՄԱՅՐՈ - Էդքան միամիտ պետք չէ լինել, սնձից է, նոր սինձ չկերամբ:

Հայրը կրկին առաջ է անցել: Տղան կոշիկի քթով հարվածում է մանր քարերին, քարերը գլորգլոր կպնում են նրա կրունկներին: Մայրը գոհ է այդ կապող միջոցից, ժպտում է, ժպտում:

ՀԱՅՐՈ - (հանկարծ կանգնում է, մինչև նրանք հասնում են իրեն): Այսքան տարի խելառների հետ եմ ապրել... (Կմկմալով:) Խելառի եմ սիրել... (խոսքը կիսատ թողնելով՝ դարձյալ առաջ է անցնում:)

ՏՂԱ - (էլ չի ցանկանում գնալ, շրջվել՝ նայում է իրենցից հեռացող Մայրոյի ու Համբոյի կովին: Տղան այլևս չի ուզում գնալ, նայում է հոր բարակ ու երկար վզին ու այլևս չի ցանկանում գնալ: Մորը): Ինչո՞ւ ավելի շուտ չեկաք հիվանդանոց՝ ինձ տանելու: Երկու ամիս ինձ մոռացել էիք այնտեղ:

ՄԱՅՐՈ - Գնանք, գիտնա՛ ինչ սիրուն ձագեր են հանել էն քո սպիտակ դոխերը:

ՏՂԱ - Հեռագիրը, բժշկի հեռագիրը, էն ցրք էիք ստացել: (Կանգնում է, չի ուզում գնալ:)

ՄԱՅՐՈ - Գիտնա, որ էն չորս համարի քո գերանդին հայրդ կոթել է, որ իր հետ քեզ էլ խոտքաղի տանի:

Տղան նստում է ճանապարհամերձ թմբին ու չի ուզում գնալ, քարով կրունկը հարող կոշիկի մեխն է ծեծում:

ՄԱՅՐԸ - *(տղայի գլխավերևն է կանգնած):* Իզուր ես հորդ կասկածում, հայրն էլ որդու առաջ մեղք ունենա՞, տես, ոնց է վիզը երկարել, այս երկու ամսվա մեջ շատ է նիհարել, քանի դու հիվանդանոցում էիր, նիհարել է, մեղք է, գնանք: Կատակելով, խաղալով, մանր քարերին կխփես, քարերը գլոր-գլոր կվազեն, հորդ կրունկներին կկպնեն, ետ կնայի, կժպտա, ու չես էլ հասկանա, թե ոնց գյուղ հասանք, կասկածել պետք չէ, մարդ էլ իր սեփական հորը կասկածի՞, խելքդ մի բան կտրո՞ւմ է, ի՞նչ է, հայրդ քեզ կթողնե՞ր հիվանդանոցում, անխելք...

ՏՂԱ - *(կոշիկն է հագնում, բարձրանում է: Նորից է խփում, մանր քարերը կրկին հասնում, թույլ կպնում են հոր կրունկներին, նա ետ չի նայում: Մորը):* Հիշո՞ւմ ես, երբ կալանավայրում, բանտարկության ժամանակ, պապս՝ նրա հայրը, մահացավ, գյուղի տղամարդիկ յայլա՝ խոտհնձի էին, ես ու ինքը գնացինք Ախալքալաք՝ դագաղը բերելու: Վերին գյուղերը գնացող մեքենան իջեցրեց մեզ,

այս նույն ճանապարհով ոտքով էինք գյուղ գալիս: Դագաղը պարանով ուսած՝ հայրս առջևից էր գնում, վիզը բարակ ու երկար էր, ինչ-որ բանից վախեցած էր ու այս աշխարհում՝ միայնակ: Այն ժամանակ էլ մանր քարերին էի խփում, քարերը հասնում, կպնում էին կրունկներին, նա այդպես քայլում էր՝ դագաղը ուսից կախ, ես այդպես խաղում էի, երբ արդեն հեռվում գյուղը երևաց, նա զայրացած շուռ եկավ, ասաց. «Գլուխս տարար, վերջ տուր, կոշիկներիդ քթերը կպոկես»: Լա ժպտալով ասաց: Հետո ճանապարհամերձ թմբին նստած, քաղաքի՝ բամբակի նման թեթև, սպիտակ հաց ու սխտորի բուրմունքով երշիկ էինք ուտում: Մեջքիս պառկած, գլուխս նրա ծնկներին՝ հանգստանում էի, նա մազերիս հետ էր խաղում... Ես նրան ասացի. «Մի վախենա աշխարհից»:

Հայրն արդեն գյուղին է մոտենում, նա ետ չի նայում, ոչ էլ տղային ու մորն է սպասում, քանի գնում՝ տարածությունը մեծացնում է նրանց միջև:

Տղայի գլորած քարերն այլևս չեն հասնում նրան: Տղան կռանում է ու արևից շիկացած մի գլաքար է

վերցնում, մատները դադող, ափի մեջ չտեղավորվող, ողորկ մի գլաքար, ու աչքերի մեջ՝ հոր ծոծրակը... անընդհատ տեսնում է հոր ծոծրակը...

ՄԱՅՐԸ - *(կախվելու պես թևանցուկ է անում տղային, որ գլաքարը բռնած թևը թափ չառնի, կախվում է):* Մի նայիր հորդ վզին, խտտերի մեջ աքիս տեսած աքլորի նման ոնց է երկարել: *(Բարձր, թախանձագին ծիծաղում է, ամուսինը կրկին ետ չի նայում:)*

ՏՂԱ - Նա իր հոր դատին երբ եկավ որ, չեկավ հոր դատին:

ՄԱՅՐԸ - Դու ինչո՞ւ չես ծիծաղում, մարդու ուշք կանցնի, դու էլ ծիծաղիր: Տեղյակ ես, որ հորդ գյուղում խորոզ են ասում: Ինչ էլ ճիշտ անուն են գտել գետինը մտածնե-

րը, ինչքան էլ նման է, Աստված իմ... ծիծաղիր, որ թեթևանաս... Իզուր ես կասկածում, որ ծնողներն են հրաժարվել...

ՏՂԱ - Հորաքույրը, նրա Ասանեթ քույրը, հիվանդանոց ինձ նամակ էր ուղարկել, որ ես եմ պատճառը, ու տունը կռիվ է ընկել: Այս երկու ամիսը դու նրան զօր ու գիշեր հանգիստ չես տվել, ինչ է, թե զոռով հիվանդանոց քարշ տաս, ես իրենց համար օտար եմ: Դու ինձ բերել ես հետդ, երբ նրանց տուն հարս ես եկել՝ մուրը ձակատիդ, բարուրով փաթաթած քո հետ բերել ես... Այդ օրը շոգ չի եղել, պապը հենակների վրա ձոճվելով՝ քո գլխավերևը չի կանգնել ու տելագրեյկայի գրպանից... Բժիշկն էլ ասաց, նուռն էլ չի՝ ո՞վ է իմ հայրը:

Մայրը մի ձեռքով բռնելու պես թևանցուկ է արել տղային, որ գլաքարը սեղանած թևը թափ չառնի, մյուս ձեռքով քիթ ու աչքերից թափվող արտասուքն է մաքրում: Տղան մոր հևասպառ լացը, սրթսրթոցը տեսնելով... ձեռքը թուլանում է, գլաքարը զցում է: Հայրը կնոջ սարսափած լացի ձայնից չի շրջվում, նրանց թողած՝ զնում է, քանի հեռանում, ավելի արագ է զնում, հետո այլևս չի երևում: Լքում է: Մայր ու տղա կանգնած են, հանկարծ կանգնում են: Կանգնել՝ գյուղին են մայրում: Նրանց չորս կողմը՝ տարածության մեջ, ժամանակն անցնում է: Նախիրն արդեն սարից իջնում է: Նրանք՝ մայր ու տղա, ճանապարհամերձ թմբին մատել, մնացել են, զմալու տեղ չունեն:



Յարոսլավ ՍՏԵԼՄԱԽ

*Յարոսլավ Ստելմախը
(1949-2001) Ուկրաինայի
անվանի դրամատուրգներից է,
մանկագիր, խորհրդային
ըջանում «ամենաշատ
քեմադրվող» թատերագիրներից:*

*Նրա սցենարով են
նկարահանվել մի շարք ֆիլմեր,
այդ թվում՝ «Գնչուհի Ազա»,
«Միրո կղզի» և այլն: «Կապույտ
ավտոմեքենան» մոնոդրաման
համարվում է նրա լավագույն
պիեսներից, որը ռուսերեն է
թարգմանել հենց ինքը՝ հեղինակը:*

Թարգմանչի կողմից

*Բազմաշերտ կերպար, որ ստեղծագործական պրոցեսում
հետահայացությամբ վերադառնում է մանկություն,
երիտասարդություն, կատարում ներքին ճշգրտումներ, իսկ
վերադարձը դեպի մանկություն իմաստավորում ու
լուսավորում է ստեղծագործական ընթացքը...*

ԿԱՊՈՒՅՏ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ

Տրագիկումնդիս

Գործող անձ

Ա.

Գրքեր: Պատին՝ Ա.-ի մեծ դիմանկարը: Յուդաներկ: Ներքևում՝ պահարանիկի վրա, Տոլստոյի կիսանդրին: Հսկայական գրասեղան՝ վրան բառարաններ, գրքեր, ձեռագրեր: Գրամեքենա՝ մաքուր քղթով: Ա.-ն հուզված ետուառաջ է անում սենյակում, հաճախ կանգ է առնում, ձեռքերով շարժումներ անում, երբեմն՝ մտասուզվում, ապա կրկին նետվում այս ու այն կողմ: Ժամանակ առ ժամանակ վագում է սեղանի մոտ: Մեր աչքերի առաջ տեղի է ունենում մտքերի համատեղում:

Ա. - Գրողը տանի: Ախր, եղել են ոսկե ժամանակներ: Ո՛չ հոգս ունես, ո՛չ գլխացավանք, քարշ ես գալիս առանց անձնագրի, գվռում ես հատակի վրա կապույտ ավտոմեքենայով - հա՛, ունեի էդպիսի մի խաղալիք՝ փոքր անիվներով: (Ծիծաղելով:) Դե հա՛, իսկապես, ես դրանք դեռ չեմ կոտրել-պոկել: Բոլորը քեզ երես են տալիս, բոլորը զբաղված են քեզնով... Իսկ այստեղ... (Բռունցքով ատելությամբ խփում է ձեռագրերին:) Նստի՛ր, գրի՛ր, հորինի՛ր, փորձի՛ր... Միայն Աստված գիտի, թե էլ ինչ մտածես: Օրերով՝ ո՛չ մի տող... Այսպես ահա... այս թեմայով ես արդեն գրել

եմ, այս թեմայով՝ նույնպես, այս մեկով էլ, բայց... ես չեմ գրել... Ահա... Դե, դե... Այո՛: Ահա՛ այն: ՁԻԱ՛Հ: Մեր ժամանակների պատուհանը, իսկական ողբերգություն: Սարսափելի, նենգ հիվանդություն, որ թունավորում է ողջ օրգանիզմը: Աստիճանաբար, ծածուկ: Հիվանդն այդ մասին ոչինչ չգիտի: Նա լի է ստեղծագործական ուժերով, ծրագրերով, պատրաստվում է ամուսնանալ, խելահեղորեն սիրահարված է, երագում է ապագայի մասին, երեխաներ է ուզում, շատ երեխաներ, ավարտում է աշխատանքը գրքի վրա, որ նրա ստեղծագործության գագաթն է

դառնում... **Չէ, ո՛չ մի գիրք:** Աշխատում է նկարի վրա, այո: Նա տարիներով է այն ստեղծել: Այդպես... Կյանքի լավագույն տարիները վատնվել են էսքիզների, ուրվանկարների, հորինվածքի վրա, գրողը տանի: Տասնյակ տարբերակներ են արվել, անպետք-անիմաստ բաներ, որ հիմա լցված են իրար վրա: Հիմա նա վերելքի ճանապարհին է, նա էքստազի մեջ է, նա փակվում է իր արվեստանոցում: Իսկ նա... բուժքնյոր: Կարոտել է նկարչին ահավոր: Սիրահարված է մինչև ականջների ծայրը, կյանքն առանց նրա տանջանք է: Ու ահա, կատակի համար, արյան նմուշ է վերցնում: Ա՛յ քեզ կատակ... **Չէ, ի՛նչ բուժքույր.** նա լնրջ մարդ է, գիտությունների թեկնածու: Բժշկական: Ուզում է ընտանիք կազմել գիտական հիմունքներով: Որպեսզի լինի ժամացույցի պես անխափան... Որպեսզի գեներն իդեալական լինեն, ծննդաբանությունը՝ փայլուն, տոհմի մեջ՝ ոչ մի ընկնավոր... Նրանից արյուն է վերցնում՝ արյան մակարդեղիությունը ստուգելու համար, և հանկարծ մանրադիտակում տեսնում է... Օ՛, սարսափ... Մղձավանջ... Արյունը սառչում է երակներում: Նշանակում է՝ նրա մոտ նույնպես... **Չէ, նրանք մտե-**

րիմ չեն եղել... Այդպես ավելի դրամատիկ է: Նա խստականոն է, ազնվական դաստիարակություն ունի՝ նախնիներից ժառանգած: Պապը՝ պաժերի կորպուսն ավարտած, Աննան՝ վզին, գնդակահարվել է 17-ին: Տատը՝ ազնվական օրհորդների ինստիտուտի շրջանավարտ, մահացել է սովից 19-ին: Ուրեմն՝ նա քանի՞ տարեկան է: *(Հաշվում է:)* Նախապապը գնդակահարվել է, նախատատն էլ՝ ոնց ասինք... Դե, այո, վերջապես ամեն ինչ տեղն է ընկնում: Անգամ գրիպով երբեք չի հիվանդացել. տանը՝ մանրէագերծիչ, թեյը եռացնում է քառասուն րոպե... Ու հանկարծ նրա ընտրյալի մոտ... Սարսափ: Նա խուճապի մեջ է: Առաջին միտքը՝ ուղարկել մոր մոտ, այսինքն՝ զրկել տնից, բայց հետո զլուխ են բարձրացնում լրիվ այլ զգացումներ: **Չէ** որ նա տղամարդուն սիրել է: Ու սիրում է: Հա՛, իրեն ավելորդ բաներ թույլ չի տվել, բայց, ի վերջո, զգացմունքն ապրում է, ի՛նչ անել դրա հետ: Իսկ հոգեհարազատությունը: Նրանք հրաշալի, անհավատալի հոգևոր մտերմություն ունեն: Երկուսն էլ նկարում են, դահուկներով սահում, պաշտում են Դեբյուսի - չէ, Դեբյուսին արդեն հնացած է: Ծնիտկե՛: Հըմմ... Բավական ուշացած է՝ մի

հինգ տարի... Իսկ ինչ կասեք Հոֆմանի մասին, հա՛, հեքիաթագիրը: Ոչ ոք նրա երաժշտությունը երբեք չի լսել, իսկ նրանք, ահա, սիրում են, երգում են միմյանց համար... ու դրա նման ինչ-որ բաներ, խնդիր չկա: Եվ ահա գիշերն անքուն, օրերով սուրճի վրա նստած, շաբաթներով՝ հանգստացնող դեղերի, որոշվում է. նա իր վրա կվերցնի և այդ բեռը: Նկարչի հայրը հաշմանդամ է, մայրը՝ հոգեբուժարանում, եղբայրը հարբեցող է... Չէ, դա պարզունակ է, թմրամոլ... Ո՞նց... Դա նույն տոքսիկոմանը չէ: Իսկ գուցե՝ արվամոլ... Գրողը տանի, ո՞վ է նրա եղբայրը: Լավ, հետո կմտածեմ... Այլախոհ: Չէ, դա հիմա ողջունվում է: Իսկ շրջկոմի քարտուղա՞ր: Չէ, մարզկոմի: Առաջին: Մի խոսքով՝ դժվար ընտանիք է: Բայց որոշված է՝ ինքը կլինի այդ տղամարդու հետ: Եվ հետո՝ ախր, տաղանդ ունի: Մեծ տաղանդ: Գերտաղանդավոր է: Նա ավարտում է նկարը, կարելի է ասել՝ իր ողջ կյանքի գործը: Մենակ է արվեստանոցում, քաղցած, չսափրված, փողոց դուրս չի գալիս, չի համարձակվում իր մոտ գալ: Ինքը հասկանում է, ամեն ինչ հասկանում է՝... այդ տղամարդը նրբագագ, խորը մարդ է: Բայց հարկավոր է շտապել, հետաձգելու

տեղ այլևս չկա, պետք է բուժվել: Հա՛, բժշկությունը թեև անզոր է, բայց գոնե մի քանի տարի կպահի նրան: Հավաքում է նրա հեռախոսի համարը և, աշխատելով իրեն չմատնել, արցունքն աչքերին, դժվարությամբ հանգստություն պահպանելով, խոսում է իր փափուկ, անկրկնելի կոնտրալտոյով. փոքր աղջիկ էր, երբ երգում էր եկեղեցական երգչախմբում, ո՛չ, պիոներների տանը, այնուհետև՝ կոնսերվատորիայում, քայց, էս ինչ եմ ասում, ախր նա բժշկուհի է, հոգ է տանում դժբախտ մարդկանց մասին... Ա՛: Հեռացա՛, կոնսերվատորիայի երկրորդ կուրսից հեռացել-գնացել է բժշկական... աշխատում, աշխատում է կերպարի վրա, որովհետև հասկացել է՝ ինքն այնտեղ օգտակար է: Ու ահա զանգում է և ասում... Հա՛-հա՛... Բայց, ախր, հեռախոսն անջատված է... Տղամարդը ստեղծագործական պոռթկումների մեջ է, վերելքի ճանապարհին, մոտ է վերջնակետին, ոչ մեկին տեսնել կամ լսել չի ուզում. նրան ամեն ինչ խանգարում է՝ ամեն շշուկ, ամեն ձռռոց, պատրաստ է նռնակ նետել տրամվայի վրա, որ անցնում է երեք թաղամաս հեռվից, քայց, ո՛չ, ավելի լավ է՝ քար, ... վերջիվերջո հումանիստ է էությամբ: Պատու-

հաններն ամուր փակված են, ինչպես Պրուստինը: Նյարդային, զգայուն, խոցելի մարդ է: Այո՛ր, խոցելի: Դռան զանգերին չի արձագանքում՝... կտրել է լարերը, չի լսում թակոցները՝... նրա դռները կրկնակի են, մեկը՝ մետաղապատ, մյուսը՝ թաղիք: Նա հիմա ամբողջովին պոռթկում է, ամբողջովին՝ թռիչք, անզսպություն: Նրա բետոնն ներքնահարկում՝ բունկերում, չի լսվում ոչ մի ձայն, անգամ շշուկ: Եվ ինչպե՞ս աղջիկը պետք է հասնի նրան: Ինչպե՞ս: Չէ, ներքնահարկը պիտանի չէ: Խոնավ է, կտավները կարող են փչանալ, շրջանակները՝ ծռմռվել, ներկերը՝ շերտատվել... օ, ո-հ՛չ, նա չափազանց արժևորում է իր աշխատանքը: Ձեղնահարկ: Յոթերորդ հարկի վերնահարկը, աղավնիները... Աղավնիների վաղուց թունավորել է: Անիմաստ դունդունալը, հոգևոր դատարկությունը, մտածողության պարզունակությունը, ... ապրում են միայն բնազդներով, չկա թռիչք, նկատի ունեմ՝ ստեղծագործական, բացի այդ՝ վարակ են տարածում: Եվ կեղտոտում են: Բիվերի վրա: Նայելը տհաճ է: Ու աչք են չռում միմյանց վրա: Ծուտվանից չեն երևացել: Գրո՛ղը տանի դրանց... Նրանք վիրավորում են գեղագետի հոգին: Եվ այսպես՝ ոչ մի աղավնի

չկա: Չկա նաև ոչ մի կապ արտաքին աշխարհի հետ: Դե, նա ի՛նչ անի: Մի կերպ բարձրանում է հրդեհաշիջման սանդուղքով... Չէ, չափազանց հասարակ է, ... այդպես ամեն մեկն էլ կարող է... Մազցում է ջրահեռացման խողովակով՝ չփորձելով դրա ամրությունը, բախտին ապավինելով, ինքն իրեն մահացու վտանգի ենթարկելով. մի ժամանակ՝ կապույտ մանկության տարիներին, գեղարվեստական մարմնամարզություն է պարապել,- չնայած, սովյալ դեպքում, ավելի լավ է՝ սպորտային,- հանդես է եկել առաջին կարգում, մինչև ծննդաբերելը, իհարկե: *(Վախենալով:)* Նշանակում է՝ նա, ի՛նչ է, երեխա՛ ունի: Տղա՛: Աղջիկ: Իսկ մարդուն ի՛նչ է արել: Ամուսնուն... Ո՛ր գրողի ծոցից բերեցին նրան... Խմելով իրեն կործանեց... Ստոր, խեղկատակ, փողի ստրուկ, կոմպոզիտորների տանն օրերով բիլիարդ էր խաղում... Դատարկություն... Բայց այդ դեպքում, հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր պետք ամուսնանալ էդպիսինի հետ: Չէ-է, այստեղ ամեն ինչ չէ, որ պարզ է... Այսպես, այսպե՛ս... Ահա՛, խնդրեմ՝ գյուտարարը: Ժամանակից առաջ անցած գյուտարարը: Ստեղծեց... Նա ի՛նչ ստեղծեց: Լավ, կխորհրդակցեմ

մեկի հետ: Վազվզում է իր ստեղծածի՝ իր «հոգեզավակի» հետ, դռներ թակում, շեմեր մաշում, բայց այդպես էլ մնում է չհասկացված: Թեև գյուտը ձգում է Նոբելյանի, բայց, ախր, պետք է հիշել՝ որտեղ ենք ապրում: Ծուրջբուրդը կարծամիտների իշխանություն է, ամենուր ձեռնաշղթաներով փոքրագլուխներ են, պայուսակներով դինոզավրեր: Մերժված է, ծաղրված, հալածված, ազատել են աշխատանքից, իսկ Արևմտյան Եվրոպայի տասնչորս երկիր այժմ նրա արտոնագրով է աշխատում: Գումարած՝ Ճապոնիան: Հարավային Կորեան պարզապես ծաղկում է: Բայց մնում է հայրենիքում, չի մեկնում, ուզում է արդարության հասնել, իսկ նյարդերը չեն դիմանում: Մտավոր ու բարոյական վիթխարի ծանրաբեռնվածություն: Սկսում է խմել: Իսկ ո՞վ չի խմել: Զրպարտություն: Սպիտակ տենդ. բռունցքներով նետվում է նրա վրա՝ շփոթելով ՀԻՀԳ (Հեղինակային իրավունքի համամիութենական գործակալության) պետի տեղակալի հետ, պատասխանատու կոնֆերանսից մեկ օր առաջ, որտեղ պետք է հանդես գար զեկույցով, աչքի տակը կապտացնում է... Կոնֆերանսին ելույթ չունեցավ, ուղևորությունը ԱՄՆ ձախողվեց,

մինչդեռ դրա հետ կապված ծրագրեր կային: Բայց դե՛ ո՞նց ապրի էդպիսինի հետ: Խնդրեց, լացուկոծ արեց, աղաչեց վերադառնալ, ոսկե սարեր խոստացավ.- չնայած՝ ո՞ր է: Հիմա նա արդեն, իհարկե, մի կաթիլ անգամ իրեն թույլ չի տալիս, ամեն առավոտ մարզանք է անում, սոված փորին մի լիտր գազարի հյութ խմում, բայց ուշ է՝ ոչինչ արդեն ետ չես բերի: Առանձին մեկսենյականոցի համար նա վճարել է, վաճառել ընտանեկան զարդը: Նախատատինը: (*Նաղար:*) Այսպես, ամեն ինչ պարզ է: Բնորոշ պատկեր է, ծանոթ: Մանրամասների մասին, իհարկե, դեռ պետք է մտածենք, կերպարը կգծագրենք, իրավիճակի վրա կաշխատենք... Չէ, Աստված վկա, ամեն ինչ կարող է լինել... (*Ձեռքերն անհամբեր շփելով՝ մտտենում է սեղանին, նստում գրամեքենայի առաջ:*) Այսպես, սպասիր, իսկ ես ի՞նչ կապ ունեմ: Իսկ այդ ապուշն ի՞նչ կապ ունի: Ինչ-որ գյուտարար... Էլ ո՞վ դիմանար... Հարավային Կորեա... Թայվան... Այնտեղ չես իմանա, թե քո տանն ինչ է կատարվում, նաև՝ քո իսկ սեփական գլխում: Գյուտարար... Այսպես էլ բան կլինի՞: Գրողը տանի, քեզ քանի՞ անգամ ասացի՝ դիկտաֆոն գնիր, դիկտա-

ֆոն գնիր, ժլատ մի եղիր, այ մարազմատիկ, ախր, պետք է: Դիկտաֆոնով աշխատիր: Դեբիլ: Եվ, ի դեպ, վատերը չեն պատահում կոմիսիոններում: Կոմիսիոն: Ինչի՞ համար, խոսքի օրինակ, ամեն ինչ պետք է ձարել կոմիսիոններից, ինչ-որ գարշելի կանանցից՝ ծանոթ կամ անծանոթ, ինչ-որ պահեստներից, հնավաճառների շուկայից: Ախր, դա ինչ բան է... Էս բոլորն ինչքան կարող է շարունակվել: Կրպակները դատարկ են, դափ-դատարկ, բացի վերմիշելից ու ծովակաղամբից, ոչ մի բան չես գտնի. դա էլ, ի դեպ, նույնպես խնդիր է: Իսկ նա... Ժամանել է Կանադայից, նրանց մոտ ամեն ինչ այլ կերպ է: Ձեռներեց է, բայց սիրալիր է տրամադրված: Ուզում է իր ուժերի չափով ներդրում անել, պայմանագրեր կնքել, ստեղծել բաժնետիրական ձեռնարկություն, ուսումնասիրում է պահանջարկը, մարդկանց տրամադրությունները, մանրակրկիտ ծանոթանում գործի բնույթին: Մայրնեզի հերթում նրանք ծանոթանում են: Մոտենում է Ամանորը, ... առանց մայրնեզի հնարավոր չէ: Սաստիկ սառնամանիք է՝ քսանհինգ աստիճան, նրանց մոտ այդպես չէ, իսկ նա առանց ձեռնոցների է՝... թոցրել են հյուրանո-

ցում, սառել է: Եվ ահա նա իր ձեռնոցներն է մեկնում նրան... Ո՛չ, ավելի լավ է՝ նա՛ իրեն: Ստացվում է՝ գողացել են նրանից: Ծատ լավ է: Ծայր է առնում խաղաղ գրույց, քնքուշ հայացքով նայում է նրան, իսկ հերթը շարժվում է, ... անընդհատ ինչ-որ մարդիկ են մոտենում, աղմկարարներ, առաջ են խցկվում՝ ցուցադրելով վկայականները, մեկը՝ աշխատանքի վետերանի, մեկը՝ պատերազմի մասնակցի, մեկը՝ համամիութենական նշանակության թոշակառուի: Տղամարդը զարմացած է՝... իրենց մոտ նման բան չկա: Կինը նրան համբերատար բացատրում է մեր կանոնները: Մայրնեզը վերջանում է: Լսվում են կանչեր՝ «Ամեն մեկին՝ կես բանկա», բայց իրենց, մեկ է, չի հասնի: Չայրացած, բայց երջանիկ՝ նրանք դուրս են գալիս փողոց՝... դեռ պետք է եղևնի՞ ձարել: Ջբոսում են նախատոնական, աղքատ լույսերով զարդարված երեկոյան քաղաքում, եղևնու մի շուկայից՝ մյուսը: Այն, ինչ տեսնում են, ավելի լավ է չտեսնել: Ուզում են ուտել, բայց ոչինչ չկա: Տղամարդը հրավիրում է ռեստորան, որտեղ վճարում են արտարժույթով: Մի ժամի չափ տատանվելուց հետո՝ համաձայնում է: Արդեն հանդերձարանում հիշում է, որ զուգազու-

պաներից մեկի վրա փոքրիկ ծակ կա, վերջին գույգն է: «Ես չեմ գա,- ասում է նա,- անհարմար եմ գգում»: Տղամարդն անելանելի վիճակում է՝ տորորում է արմունկները, ծտտացնում ձեռքերը: Տեսնելով նրա նախահինֆարկտային վիճակը՝ կինն այնուամենայնիվ համաձայնում է, առավել ևս, որ սա իր տեսակի մեջ միակ հաստատությունն է, որտեղ հանգիստ երաժշտություն է հնչում: Մի անգամ արդեն եղել է ռեստորանում՝ երկու տարի առաջ, որից հետո մի ականջը իսլացել է: Անբուժելի: Առայսօր մի կոպը ձգվում է: Բայց դա տղամարդուն չի էլ շփոթեցնում. նա հետաքրքրվում է կնոջ կարգավիճակով: «Ես ամուսնացած եմ,- ափսեում ձկնկիթը քչփորելով՝ ասում է նա,- թեև ամուսնական կյանքում դժբախտ եմ: Մենք միանգամայն տարբեր մարդիկ ենք»: Տղամարդուն դա հրձվանք է պատճառում: «Իմ կինն էլ ինձ է օտար,- երջանիկ հայտնում է նա,- չի հետաքրքրվում իմ գործարանի գործերով»: Կինը հասկանում է, որ Կանադայում էլ կարելի է հանդիպել դժբախտ մարդկանց: Դանրանց մտերմացնում է: Ու ահա - տոմատով թյունիկ և իր հյութի մեջ պատրաստված օմար...- ռեստորանում ձկան օր է հայտարար-

ված...- պարզվում է՝ երկուսն էլ հետաքրքրվում են էկոլոգիայով, երկուսի համար էլ թանկ է մեր հրաշալի, կապույտ մոլորակի ճակատագիրը. ինքն ու նա չեն օգտագործում անբողոքներ, ինչը նպաստում է ստրատոսֆերայի անցքի փակմանը Արկտիկայի վերևում: Առավոտյան ժամը չորսն է, ռեստորանը փակվում է, գնալու ժամանակն է: Վերջին անգամ նա մոտենում է «Սթեյնվեյին» և նվագում Չայկովսկու «Տարվա եղանակները». նվագում է հիշողությամբ, երբ տանը՝ Կանադայում, նայում էր «Ժամը» ծրագիրը: Դժվարությամբ կուլ տալով կոկորդին կանգնած գունդը՝ կինը նայում է իր մատներին, որոնցով վերստեղծում է մանկությունից ծանոթ մեղեդին... ավելի ուշ կպարզվի, որ նա մեծ կոմպոզիտորի հեռու բարեկամուհին է, և հասկանում է, որ ամեն ինչի համաձայն է: Մանավանդ, որ մետրոն չի աշխատում, տաքսիստները տանում են միայն Լենինգրադ, իսկ մասնավորները աշխարհի շուրջ ճամփորդելու գներ են ուզում: Լուռ, ձեռք ձեռքի բռնած, գնում են դեպի պլաստմասե վերելակը՝ ձմեռային այգու միջով: «Շվեյցար», - վախեցած կանչում է նրան իր մոտ, իսկ շվեյցարին հուզում է նրա

անփորձությունը: Համեստ, սիմվոլիկ պարզևատրման դիմաց՝ արտարժույթի տեսքով, շվեյցարը՝ թոշակի անցած գեներալ, նրան գրկած տանում է չորրորդ հարկի համարի դուռը: Վերելակը չի աշխատում, հերթապահ կազմբեականը համար է բերում և իր ձեռքով բացում շամպայնի սառեցրած շիշը, իսկ հարկի հերթապահը բացում է անկողինն ու վրան լցնում վարդի թարմ թերթիկներ: Իսկ այժմ՝ ամենահետաքրքիրը. սիրային տեսարանը՝ մեկ րոպե քառասուն վայրկյանից, որպեսզի խպիպից շունչը չկտրվի: Այնտեղ, ինչ-որ տեղ ինձ մոտ «Կամա Սուտրա» կար... *(Մոտենում է դարակներին, փնտրում:)* Հիմի նրանց ապշեցնենք: Ահա այստեղ էր դրված: Ո՞ր խոզն է թոցրել... Ինչ անել... Ա՛յս-պէս... Սկզբում նա նրա վրա է, հետո՝ մեջքով, այսպես... Էլ ինչ կա... Հա՛, հիշեցի: Չէ, դեռ շուտ է... Ժողովուրդը՝ մութ, տգետ, ո՛չ մի սեքսուալ դաստիարակություն... չի՛ հասկանա: Կոգան: Կոգան, սրիկա՛, թոցրել ես. նա հենց նոր է ամուսնացել: Երրորդ անգամ: Գուցե արդեն ինչ-որ բան սովորել է... *(Վազում է հեռախոսի մոտ, հավաքում է համարը, նույն րոպեին կրկին հուսահատ կախում լսափողը:)* Չէ՛ որ նա հե-

ռացավ, տականք, գնաց մեղրամիս՝ իմ գրքով: Իսկ առհասարակ՝ մի դրան տեսեք: Վե՛ժ՝ անկողնում: Դա արդեն սրտխառնուք է առաջացնում: Ամենուր: Որտեղ պետք է և որտեղ՝ ոչ: Դա արդեն նորություն չէ: Յուրօրինակ չէ: Անցավ: Այստեղ ինչ-որ անսովոր բան է պետք: Որ մխրձվի հիշողության մեջ, ստիպի մտահոգվել, թե ինչպես ենք մենք՝ խոզերս, ապրում, ո՞ր ենք գլորվում: Որտե՛ղ են բարոյական սկզբունքները, առաքինությունը, գաղտնի հեղուկները, խոստովանելու վախը, մոտենալը՝ միայն տեսնելու՝ արդեն երջանիկ է: Որտե՛ղ է «նոնաքարե ապարանջանը»: Վերջ, որոշված է: Միայն զգացմունքների, ապրումների խաղ, թեթև կասկածներ հոգում... Համար, անկողին՝ պատված վարդերով, մթնշաղ, դռան ետևում գաղտնալսում է սպասուհին, անավարտ թողնված շամպայնը գավաթներում մի թեթև փրփրում է, կախարդանքով շողում գիշերային լամպի լույսի ներքո... Կինը գնում է բաղնիք, և քանի դեռ աղմկում է ցնցուղը, այդ անուղղելի սրիկայի հոգում ինչ-որ բան է հայտնվում՝ իրեն մինչ այդ անծանոթ ինչ-որ զգացում... Ինչ-որ բան ձգվում է՝ ցնցուղից դեպի հոգի: Բայց իսկապես՝ ինչո՞ւ սրիկա: Որովհետև ա-

վելի գործածական է: Այն քեզ բան. հանդիպել են երկու լավ, պարկեշտ մարդիկ, և ի՞նչ: Իսկ դու քեզ մի պահ սրիկա պատկերացրու, փորձիր քո մեջ արթնացնել ինչ-որ մաքուր, մարդկային բան: Եվ ահա կինը հայտնվում է - գունատ դեմք, հուզմունքից՝ իհարկե, նրա հետ սա առաջին անգամն է... Փափուկ, ջրվեժի պես սև մազերը...- Ո՛չ, չեմ սիրում թխահերներին - ոսկեգույն մազերը ալիք-ալիք ընկնում են ուսերին. նա գիշերաշապիկով է: Մի բռնակ. իսկ շապիկը որտեղից հայտնվեց: Չէ որ այն իր հետ քարշ չի տալիս: Ա՛, իհարկե, տղամարդու շապիկով: Ցնցող է... կանացի քնքուշ կազմվածքը՝ տղամարդու շապիկի մեջ... մոտենում է մահճակալին, վեհերոտ նստում, դեմքին՝ զգացմունքների բարդ գամմա, աննկարագրելի ապրումներ: Տղամարդը համբուրում է նրա ձեռքը, նույնպես գնում լոգարան... Ու... դուրս չի գալիս: Տղամարդը որոշում է, որ այդպես ավելի լավ է: Ուղնուծուծով ջենտլմեն է՝ բուրժուական պարկեշտ ընտանիքից - այնտեղ դեռ պահպանվում են այդպիսիք - լոգարանում կանգնում է անողորմ հայելու առջև՝ զննելով իր հոգնած, սմբած, բայց կրքից փայլատակող դեմքը: Լերքին լուրջ պայքար: Ինչպես Սերգեյի հոր մոտ: Դե ո՛չ,

որոշումն ընդունված է: Սպասում է, դեռ նրան է նայում: Կինը նույնպես սպասում է, թեև արդեն առավուտվա չորսն է, շուտով տուն պետք է գնալ, ամուսնու համար նախաձաշ պատրաստել, երեխային մանկապարտեզ տանել, ... հազիվ է նրան այնտեղ գրանցել: Քնում է: Լախորդ օրվա հոգնածությունը և ապրումներն իրենցն անում են: Կես ժամ պառկելով կիսամոռացության մեջ՝ նա վեր է թռչում, տենդորեն նայում էլեկտրոնային ժամացույցին՝ ... փախչելու ժամանակն է: Աթոռակի վրա գրություն է նկատում. «Հարգելի Մարի...», - չէ, Մարի չէ - «Հարգելի Նատաշա...», - այսպես ավելի լավ է, - «...ես քեզ կհիշեմ հավիտյան: Խնդրում եմ, որպես հուշ, ընդունիր այս երեքկասետանոց տեսամագնիտոֆոնը: Մի արթնացրու. այսօր հովանավորների հետ պատասխանատու հանդիպման եմ»: Նատաշան անմիջապես հիշում է, որ այդ բարոյական մարդն իր կողքին չի քնել, այլ՝ լոգարանում: Նա անգամ չի մտածում վերցնել տեսամագնիտոֆոնը, բայց այստեղ հիշում է, որ փոքրիկ տղան՝ կյանքի միակ երջանկությունը, վաղուց երագում է դրա մասին: Հարկի հերթապահը ոսկե գլանաթղթով ու ցելոֆանով զգուշորեն փաթաթում է նվերը,

իսկ կագեբեականը, թաքուն ար-
ցունք թափելով, նրան տուն է
ուղեկցում իր մեքենայով: Կանա-
դացին փառահեղորեն քնած է լո-
գարանում: Նրան հարմար չէ,
լոգարանից կաթում է, բացի այդ՝
տաք ջուր չկա: Առավոտյան ջեր-
մությունը բարձրանում է: Ոչ մի
գործնական հանդիպման մասին
խոսք լինել չի կարող, բայց նա,
այնուամենայնիվ, դուրս է գալիս
փողոց և այնտեղ կորցնում գի-
տակցությունը: Երեկոյան մեր
սրտացավ մարդիկ «Շտապ օգ-
նություն» են կանչում, և տղամար-
դուն հոսպիտալացնում են: Նա
միայնակ պառկած է բազում այլ
հիվանդների հետ, հիվանդանոցի
միջանցքում՝ բացվող մահձակա-
լին, քանի որ պառկելու ուրիշ տեղ
չկա, բռունցքում մեկանգամյա օգ-
տագործման ներարկիչներով լի
պարկը սեղմած և հրաժարվելով օ-
րը երեք անգամ գարու շիլա ուտե-
լուց: Լեզուն չգիտի, բժիշկներն
այդտեսակ վարքը համարում են
հացադուլ և ի նշան հարգանքի՝
նրան տեղափոխում են այլ մի-
ջանցք, բայց՝ պատուհանի մոտ:
Տեղը հարմար է, բայց փչում է:
Դրան զումարած՝ զուգարանի կող-
քին է: Ճիշտ է՝ զուգարանը չեն օգ-
տագործում. վաղուց չի աշխատում:
Բայց այնտեղ սառնարան կա բո-

լորի համար, որտեղ հիվանդները,
ովքեր կարողանում են քայլել,
սնունդ են պահում: Իսկ գիշերները
մյուս բաժիններից ավարառուները
տանում են դրանք, այդ իսկ պատ-
ճառով կանադացին նրանց խան-
գարում է: Նրա մոտ անքնություն է
և զառանցանք, սակայն բոլորը
մտածում են, որ նա ձևացնում է, որ
նա օբեխեսեսի լեյտենանտ է: Եվ
նրանք նպատակ են դնում կանա-
դացուն թունավորել: - Էհ-էհ, ահա
ինձ արդեն **տանում** է: Մի կտոր
երշիկի պատճառով: Հա՛, ինչ: Դեռ
ավելի վատ բաների պիտի սպա-
սենք: Ո՛չ, սրանք առողջապահութ-
յան ոլորտի խնդիրներ են. ինչի՞
համար: Իսկ ինչո՞ւ չէ: Դրանք
նույնպես արժանի են հետազո-
տության: Հետազոտություններն
արվում են շըփ-թըփ, դեղատնե-
րում դատարկություն է, մոռացել
են՝ ինչ տեսք ունի վալիդոլը,
ստեղծագործող մարդու քնաբեր-
ների մասին արդեն անգամ չեմ ե-
րագում: Նյարդերս քայքայված են,
ջախջախված՝ տանջվում եմ այս-
տեղ, իսկ նրանք... Մարդասպան-
ներ: Թող իրենց նայեն կողքից:
Մանավանդ, որ կանադացին
բժիշկներին էլ է խանգարում: Որ-
պես բիզնեսմեն ու դատողունակ
մարդ՝ նա նկատում է, որ գիշերա-
յին հերթապահության ժամանակ

ավարառունները փակվում են բժիշկների սենյակում բուժքույրերի հետ. ականջին օղ է անում, որ դեղերը, որոնք նրանց տրվել են ողջ շաբաթվա համար, մեկ օրում սպառվում են: Հիվանդներին տալիս են բացառապես ամիդոպիրին, իսկ անալգետիկները կուլ են տալիս հենց իրենք: Նրա մեկանգամյա օգտագործման ներարկիչներն անհետ կորել են, այնպես որ քնեցնել իրեն գրեթե անհնար է. իրեն սրսկել էլ չի թողնի՝...վախենում է ընդհանուր ասեղից ՁԻԱՀ-ով վարակվել: Ա-ա-ա-ա-ա: Ահա: Հիշեց: Գյուտարարը: Գիտությունների թեկնածուի ամուսինը, իսկ նա... նա պարզապես ձեղնահարկի նկարիչ է: Օ՛Ֆ, փառք քեզ, Աստված: Հիշեց: Եվ այսպես՝ որոշում է նկարչի կողքին լինել նրա համար այս բարդ ժամանակաշրջանում, և մագլցում է նրա մոտ ջրահեռացման խողովակով: Ահա առաջին հարկը, երկրորդը, երրորդը... Հոգնում է, ողողվում արցունքով ու քրտինքով, բայց ձգտում է վեր՝ դեպի նա՝ սիրելին: Ամբոխ է հավաքվում, ոմանք աղաղակում են՝ «գո՛ղ», ոմանք էլ՝ «մարմնավաճա՛ռ», բայց ուշադրություն չի դարձնում այդ վիրավորական բառերին, ... հասկանում է... Ի դեպ, «մարմնավաճառ»՝

ինչո՞վ թեմա չէ: Հա՛, թափափված է, հոգնեցրել է, արդեն թարմ չէ, բայց ի՞նչ: Նայած որ տեսանկյունից կնայես... Սրանց տես. երկու-երեք խղճուկ ֆիլմ են նկարել, ինչ-որ խզբզոց գրել թերթերում, և վերջ: Իսկ մինչև գեղարվեստական իմաստավորման, ներքին ողբերգականության, դիալեկտիկական հակադրությունների հասնելը - դժվար է: Ախր, սա ոսկու հանք է խորաթափանց մարդու համար: Միայն հիշիր՝ ոչ մի դեպքում մի քննադատիր. քննադատելն ավելի հեշտ է, քան ցանկացած այլ բան: Ա՛յ, դու ինքդ փորձիր, առանց ջանք խնայելու, ամեն ազատ բույսն օգտագործելով՝ քեզ լիովին նվիրել սիրածդ մասնագիտությանը. գիտես, դրան ամեն մարդ չէ, որ կգնա: Այստեղ պետք է կարեկցանքով վերաբերվել. կավատին վճարիր, տաքսիստին վճարիր, շորթողին վճարիր, բուլոբին վճարիր. լավ է, եթե ունես քո սեփական բնակարանը, իսկ եթե վերցնում ես աշխատանքային մի անկյոն: Ո՞նց կարող է նորմալ կինն այդքան փող աշխատել: Հոգով, հոգով վերաբերվիր, ըմբռնումով... Իսկ անձնական կյանքը: Եթե աշխատում ես գիշերային հերթափոխում, իսկ ցերեկը՝ քնո՞ւմ: Բայց այնտեղ՝ գիշերային հերթա-

փոխում, ինչպիսի՞ն դրամատիկական իրավիճակներ են ի հայտ գալիս, ինչպիսի՞ն բախումներ - մազերդ բիզ-բիզ կկանգնեն: Իսկ եթե, դրա հետ մեկտեղ, նա սիրահարվում է, իսկ աշխատանքը չի կարողանում թողնել - ախր, սիրտը կպել է, ախր, կատակ չէ՛ այդքան տարի է նվիրել... *(Հուզումնախոռով:)* Ու ահա կինը սիրահարվում է... Ֆանտաստիկա: Ի դեպ, ֆանտաստիկան չէր խանգարի: Հիմա բոլորը գծվում են ֆանտաստիկայի համար: Օրինակ՝ թռչող ավիսենները: Ինչո՞վ է վատ: Վաղուց ժամանակն է՝ մասնավորի ֆոնի վրա իրադարձությունները մեծ համայնապատկեր դարձնել: Մասնավորը կապել իրականության հետ՝ հեշտ չէ, ավելին՝ բարդ է - ավելի քիչ ուտոպիա, իրավիճակն օգտագործել միայն որպես հիմք, որպես զարդանախշ, ընդ որում՝ լայն հնարավորություններ՝ ենթատեքստերի համար... Հա՛, կարող է պատահել: Ապարատը սահուն իջնում է. ինչոր բան է փչացել: Ծարքից դուրս է եկել ֆոտոնային ձգողականությունը, լույսի արագության փոխարեն նրանք՝ այլմոլորակայինները, տեղաշարժվում են ձայնի արագությամբ: Ու ահա թռչում են Երկրի վրա, փնտրում՝ որտեղ նստել: Եվ հանկարծ՝ կրակներ: Այլմոլորա-

կայինները կարծում են, թե կրակները վայրէջքի տեղերը ցույց տալու համար են, և դրանք վառել են իրենց բանական եղբայրները, բայց պարզվում է՝ կոլտնտեսականներն են, որ ձյան տակից տաքացնելով հանում են տրակտորները: Ծուտով ցանքի ժամանակն է: Այլմոլորակայինների նավի ֆոտոնային, թեև վերջին շնչով աշխատող, սակայն դեռ հզոր շարժիչի աշխատանքից գետինը տաքացել է, ձյունը հալվել, իսկ նավից ճառագայթող ռադիոակտիվ ալիքը ազդել է ձմեռային մշակաբույսերի վրա, որոնք ցանվել են երեք տարի առաջ, սակայն այդպես էլ ծիլ չեն տվել: Դաշտը կերպարանափոխվում է մարդկանց աչքերի առջև՝ մարդաբոյ հացահատիկն է շորորում, մեկին՝ երեքհարյուրապատիկ ծանրացած՝ հասունանում է լուիկը: Նախագահը՝ Աշխատանքի հերոսի աստղով, արդեն Լենինյան մրցանակի հոտ է առնում: Նա խնդրում է անկոչ հյուրերին կամ մնալ իրենց մոտ, կամ գոնե վաճառել սարքավորումը, որպեսզի ժամանակ առ ժամանակ գործարկվի: Նա եկվորներին ոսկե սարեր է խոստանում՝ ամենքին «Իժ» մոտոցիկլետ՝ սայլակով, բարձր աշխատավարձ և ամսա-

կան յուրաքանչյուրին՝ երկու կիր հնդկաճավար: Եկվորները թեթև ընդդիմանում են. նրանց նույնպես դուր են եկել այս անշահախնդիր, կիսաքաղց մարդիկ, որոնք այստեղ աշխատում են մի նպատակով՝ ապացուցելու ամբողջ աշխարհին, որ գաղափարը դեռ իրեն չի սպառել: Բայց կա առաջընթացի հակառակորդը. նա դեմ է եկվորներին, քանի որ նրանց պատճառով միանգամից հասունացած բերքը դեռ պետք է պահեստավորել, իսկ պահեստներ չկան, տեղափոխել, իսկ տեխնիկա չկա, ընդ որում՝ պետք չէ այլևս պարարտանյութերով լցնել դաշտը, էդ դեպքում ո՞ր տանել քիմիական նյութերը. լցնել գետը: Մի խոսքով՝ խնդիրների ծով: Առաջընթացի հակառակորդը կոպիտ, մարտական տոնով խոսում է եկվորների հրամանատարի հետ, որը խոստանում է մեկ շաբաթում նավի նորոգումն ավարտել: Սակայն այստեղ նախագահը՝ Աստղով հերոսը, տեսնում է գեղեցկուհի Էտային՝ հրամանատարի դստերը... Եվ վերջ: Օր ու գիշեր հեծանիվով պտտվում է տիեզերանավի շուրջ՝ հուսալով տեսնել նրա սկաֆանդրի գոնե մի փոքր հատվածը: *(Մոայլվում է:)* Այս ամենն անհեթեթություն է:

Կենսական չէ: Նրբանկատ չէ: Կոպիտ է: Չի լինի: Ջնջում եմ: Ո՞ւմ է սա պետք: Մենք կանչված ենք այս աշխարհ, որպեսզի ցնցենք, ու այդ դեպքում ինչ դեր ունի այն խելոքը՝ Աստղով կոմպոզիտորը... Սպասիր, ինչ կոմպոզիտոր: Լրագրող: Ա՛խ, չէ, ո՞նց էր կոչվում... Ա՛, նկարիչ: Այո՛: Իր հավեսով նստած է բունկերում, անջատել է լույսն ու փակել գազը, ինչպես Հիտլերը... այսպես-այսպես... իսկ մարտերն արդեն ընթանում են Բեռլինի փողոցներում՝ անմիջապես կրետների բնի մեջ: Հիմար: Ի՞նչ մարտեր: Չէ՞ որ նա մեր ժամանակակիցն է, իսկ պատմվածքի մեջ՝ անգամ առաջ է անցել ժամանակից: Հիտլերին է կպել, դուրս բերել անգոյությունից, պարանոյիկ: Էս ոնց է աշխատում միտքս: Բայց դավատ չէ: Աշխատում է, որովհետև գոյություն ունեմ, աշխատում է, անսպասելի տարբերակներ հուշում. խռովահույզ ոգին հանգիստ չունի, ես սպառված եմ, կարծես ամբողջությամբ նյարդերի կծիկ լինեմ, էներգիայի կուտակում, մտքի լարվածության գագաթնակետ, անզսպելի երևակայություն, ու այս ամենը արգասավորված է ներշնչանքի բարձր թռիչքով: Աշխատել: Աշխատել ամեն օր, և ո՛չ մի թուլացում: Սա միակ ճանապարհն է:

Ճանապարհի դեպի հաջողություն, դեպի ձանաչում, դեպի ստեղծագործական մտահղացումների իրականացում: Ինչ մտահղացում, ապաշնորհ: Կես օր է արդեն, ինչ չես կարողանում թեմա գտնել: Ո՛չ մի կերպար, ո՛չ մի բնավորություն: Վերցնենք, օրինակ, Գոգոլին: Դուրս եմ գալիս, ասում է, Նևսկի պողոտա և քթով զգում եմ քսան թեմա: Ճիշտ է, նա քիթ ուներ, իսկ իմը... *(Մոտենում է հայելուն, գնում իրեն, շոշափում քիթը: Դժգոհ:)* Ինչ խոսք, իմ քիթը չի կարող մրցել նրա կտուցի հետ: Այստեղ ինձ գերազանցեց սրիկան: Այս եկվորները... Լավ կլիներ ինչոր հասկանալի, ամենքին սրտամտ, թանկ բանի մասին լիներ: Պատմվածք ընտանիքի մասին... Սկսել տատիկներից ու պապիկներից: Ինչպես Դիքքենսի մոտ է: Մի տեսակ նահապետականության հոտ է գալիս... Մի գեղեցիկ օր ծանոթանում են երիտասարդները, մասնավորապես՝ ծնողներս: Այդ օրն ինձ համար հրաշալի էր. ասես լոտոյի տոմս լիներ: Հայրս ակնհայտորեն համեստ մարդ էր, անգամ՝ ամաչկոտ: Այդպիսին մնաց հետո էլ, երբ հասնում էր այն ամենին, ինչի մասին կարող էր երազել երիտասարդ գիտնականը: Չեմ կարողանում պատկերացնել՝ ոնց

է որոշել մոտենալ մորս: Իսկ բանն այսպես է եղել. անհայտ կենսաբանը եկավ մի աննշան քաղաք: Թեթև մի գործուղման: Ու ահա նա, փողոցներով թափառելով կամ, ինչպես ընդունված է ասել, ծանոթանալով տեսարժան վայրերին, որոնք այդ քաղաքում էն գլխից չեն եղել, հանկարծ նկատում է մի գեղեցկուհու: Այդպիսիք լինում են փոքր քաղաքներում, թեև շատ հազվադեպ: Կենսաբանը տապաված է, պարտված, ինքն ինքը չէ, զոհվել է: Գնում է նրա ետևից՝ իբրև ստվեր, իբրև լուսնոտ՝ արտահայտվելով վերամբարձ կերպով: Կաչուն չէ, չի սիրաշահում, չի առաջարկում ծանոթանալ, չի հարցնում, թե ինչպես գտնել այս կամ այն փողոցը կամ տունը. պարզապես լուռ հետևում է նրան: Մայրս շրջվում է, արագացնում քայլերը. հայրս, մեկ-երկու, ետ չի մնում: Իր տան հարևանությամբ, ավելի ձիշտ՝ թեքված, կիսախարխուլ խրճիթի մոտ ինքը կանգ է առնում, նա՝ նույնպես: «*Ի՞նչ եք ուզում*», - հարցնում է նա այնպես, կարծես մարտահրավեր է նետում: «*Ծանոթանալ ձեր ծնողների հետ*»: Եւ իր նրբիկ ուսերն է թոթվում, նույն մարտահրավերով հրում դարպասը. «*Խնդրե՛մ*»: Երանք գնում են արահետով,

մտնում տուն, որտեղ աղջիկը հայտարարում է. «Մայրիկ, մի տարօրինակ անձնավորություն ուզում է քեզ հետ ծանոթանալ»: Մայրս այդ ժամանակ արդեն հայր չունեի: Հայտնվում է իմ տատիկը՝ անփոխարինելի գլանակը ձեռքին. ծխում էր միայն «Կազբեկ»: «Այո՞»: «Եկել եմ ձեր աղջկա ձեռքը խնդրելու», - ասում է հայրս: Այս տեսակ անբեսությունը շքանշանում է մորս այն աստիճան, որ նա իր մեջ ուժ չի գտնում մերժելու այդ համեստ խնդրանքը: Ծնորհակալ եմ, մայրիկ: Մի ամիս անց նրանք գազսում գրանցվեցին, և հայրս տարավ նրան: Մեկ տարի անց ես ծնվեցի: Այդպես է սկսվում իմ մանկությունը, իմ պատանեկությունը, իմ երիտասարդությունը: Մենք համեստ էինք ապրում՝ չորսով, ավելի ուշ մեզ մոտ եկավ նաև տատիկը, որի հետ կիսում էինք մի սենյակ՝ առանձնացված գրադարակներով: Ըստ ընտանեկան ավանդույթի՝ երեք հարյուր գրամ պոլտավյան երջիկը տոն էր: Հայրս շատ էր աշխատում, իսկ ես մի անգամ չէ, որ զարթնել եմ նրա սեղանի հին լամպի կանաչ լույսից: Ճիշտ է, այդ իսկ պահին քնում էի: Հայրիկի արթուն գիշերները բերեցին երջանիկ օրեր. նա հեղինակավոր պարզև ստացավ՝

Գիտությունների ակադեմիայի մեդալ, այնուհետև այդ տեսակ պարգևները շատացան: Ակադեմիական գործիչները սկսեցին նրա հետ խոսել հավասարը հավասարի պես: Բնակարան տվեցին, իսկ հետո, երբ իմ քչախոս հայրիկն ակադեմիկոս դարձավ, տեղափոխվեցինք էլ ավելի մեծ բնակարան՝ անհաշիվ սենյակներով: Այդ ժամանակ ես արդեն քույր ու եղբայր ունեի. կլան էր ձևավորվում: Բնակարանը հին շենքում էր, հիմա արդեն այդպիսի շենքեր չեն կառուցում. բարձր առաստաղ, հսկայական սենյակներ, ընդարձակ խոհանոց, լայն ու երկար միջանցքներ, տարատեսակ պահոցներ. կարելի էր զբոսնել և կորչել: Մենք չէինք շտապում տեղափոխվել. մայրս մեծ վերանորոգում էր ծրագրել և լրջորեն էր վերաբերում դրան, ինչպես և այն ամենին, ինչ անում էր: Նա հասկանում էր, որ ավելի լավ բնակարան մենք չենք ստանա, քանի որ այդպիսիք աշխարհում չկան: Անհրաժեշտ է այնպես անել, որ այն հարմարավետ լինի երկար տարիներ ապրելու և աշխատելու համար: Երևում էր՝ մայրս արդեն վաղուց էր տարված այդ մտքով: Նրա մոտ հայտնվեցին բազում արտասահմանյան ամսագրեր՝ լուսանկարներով և

բնակարանների ներքին հարդարման նախագծերով, ինչ-որ տեղից հայտնվեցին կատալոգներ, գունավոր ալբոմներ, անգամ շինարարական տեղեկատուներ, որոնք առանձին դարակ գրավեցին: Մայրս իր բոցաշունչ էներգիան ներդնում էր ստեղծածի մեջ: Դավերանորոգում չէր, այլ ստեղծագործություն: Ջարդոտվում էր հատակը, փշրվում էին պատերը, հանվում էին դռներն ու պատուհանների շրջանակները: Բնակարանից շինարարական աղբը տեղափոխվում էր ավտոմեքենաներով, որոնց, թվում էր, վերջ չկա: Եվ այդ փոշու, ծեփի փշրված կտորների, աղյուսի կտորտանքի, տախտակների, հին մանրահատակի մեջ քայլում էր մայրս, ենթադրություններ էր անում, մտածում, նկարում, չափում մետրով: Երբեք կապ չի ունեցել շինարարության հետ, և հանկարծ՝ անհասկանալի ստեղծարարություն, երևակայություն, մտքի թռիչք, բարձր ճաշակ: Ահա թե որտեղ է ինքն իրեն գտել: Թե՛ շինարարության կազմակերպիչը, թե՛ աշխատողները շատ շուտ հասկացան, որ թերացումներ չափտի լինեն. մայրս գիտեր՝ ինչպես տեղը դնել, բայց, ինչն ամենակարևորն է, թասիքի զցեց, ազարտ արթնացրեց

նրանց մեջ: «Չի կարելի» կամ «էդպես չեն անում» բառերն իր համար գոյություն չունեին: Եթե ինձ պետք է, եթե ուզում եմ, նշանակում է՝ հնարավոր է ու պետք է արվի: Նոր տեղերում պատեր էին հիմնվում, անցքեր էին բացվում, պահարաններ տեղադրվում... Իսկ հետո բերեցին կահույքը: Աստված իմ: Ո՞ր կոմիսիոններից, իրենց դարն ապրած ո՞ր պառավներից, ո՞ր հավաքածուներից էր մայրս վերցնում այդ աթոռները՝ կեռ ոտքերով և ժանյակավոր, պատկերազարդ մեջքակալներով, այդ օվալաձև սեղանները, բազկաթոռները, բազմոցիկները, նստարանները, օթոցները, շքեղ աշտանակները: Ո՞ր թանգարանների աշխատողներն են մինչ օրս ողբում և գլխներին տալիս, որ այդ հրաշքը չի հայտնվել իրենց ցուցադրություններում: Ամբողջը մեկտեղված էր մեկ ոճի մեջ, մեկ գունային երանգով, իսկ եթե ինչ-որ բան չորացած ու ձաքձաք, շարքից դուրս եկած էր՝ իսկույն վերանորոգվում էր, տեղավորվում և տեղափոխվում էր տասնյակ անգամ, քանի դեռ չէր գտնում իր օրինական տեղը: Հայրս հիացմունքով էր դիտում այդ ամենը, նաև՝ մի փոքր անհանգստությամբ, ... որքան հիշում եմ՝ ոչ մի բանի

չխառնվեց: Լա, ինչպես և մինչ այդ, շատ էր աշխատում, հասարակական գործիչ չէր, գրեթե երբեք չէր հայտնվում ժողովներում, չէր միջամտում ոչ ձղձիմություններին, ոչ դեպքերի մեկնաբանություններին. ապրում էր մեկուսացած, չէր ձգտում իշխանության: Անկախ մարդ էր. երբեք ոչ մեկին չէր հաճոյանում: Միգուցե՝ միայն կնոջը, ում սիրահարված էր նույնքան, որքան հանդիպման օրը: Բնությունն առատորեն շնորհներ էր պարգևել նրան, ինչի համար շատերը չէին ներում: Բայց նա իր թշնամիների նկատմամբ հանդուրժող էր: «Մի պահ մտածիր,- ծիծաղելով ասում էր հայրս,- ինչ անի, եթե ձեռքից ոչինչ չի գալիս»: Եվ ահա եկավ նշանակալից օրը՝ մեզ տարան բնակարանը տեսնելու: Ամեն ինչ փայլում էր, հայացք էր շոյում ու հիացնում: Մայրս երջանկացած քայլում էր մեր ետևից՝ հաճույքով լսելով մեր ձիչերն ու բացականչությունները. հիացմունքից խոսքեր չունեինք: Այդ ժամանակ ևս եթե անգամ չհասկացա, ապա զգացի՝ մայրս անհատականություն է: Ինչպիսի կամք: Ինչպիսի էներգիա: Արարելու ինչպիսի ունակություն: Լա երջանիկ էր ու հպարտ: Ինքն իրենով, իր աշխա-

տանքով, հպարտ էր իր ամուսնով, իր զավակներով: Մորս համար ամեն ինչ կարևոր էր. ովքեր են մեր ընկերները, ո՞ւմ հետ ենք տալիս առնում, ովքեր են մեզ հյուր գալիս: Լա պետք է ծանոթանար յուրաքանչյուրի հետ, խոսեր, ճանաչեր, իմանար... Բժախնդիր, քննախույզ հայացքում միշտ կարդացվում էր՝ «Իսկ դու արժանի ես մեր Տուն մտնելու»: Հարցը սնորհիզմը չէր, ուղղակի իմ ընկերներից յուրաքանչյուրին մոտենում էր իր չափանիշներով՝ կշռադատված ու որոշակի: Մի անգամ անսպասելի մտավ սենյակ, երբ ինձ տարեկից մի քնքուշ արարածի հետ համբուրվում էի: Իմ անկեղծ շփոթմունքին մայրս այսպես արձագանքեց. «Սարսափելի է: Լա ղնց կարող է թույլ տալ իրեն, որ համբուրես՝ ձեռքդ գրպանումդ»: Մի օր չափից շատ խմեցի, և մորս մոտ իսկույն նոր ընկերուհի հայտնվեց. սարսափեցի, երբ իմացա, որ նա ոստիկանության մանկական սենյակից էր: Եվ նույն ժամանակ, երբ մորս մտերիմ ընկերուհիներից մեկը նկատեց, որ իմ մազերը շատ երկար են, մայրս դադարեց նրա հետ շփվել. բացի իրենից՝ ոչ մեկը չպետք է համարձակվեր ինձ նկատողություն անել: Ճիշտ է, կարճ ժամանակ հետո վարսավիր հրա-

վիրեց մեր տուն: Հանկարծ սկսեց ինչ-որ նոթատետրում գրառումներ անել և գրանցել խոսակցությունները, երբ իր հետ առավելապես կոպիտ ու անհարգալից էի խոսում: Մի անգամ էլ նրա մոտ հայտնաբերեցի իմ ծանոթների հեռախոսահամարները. մայրս չէր ալարել արտագրել հեռախոսագիրքս: Այդ ամենը հենց այնպես տեղի չէր ունենում. մեր միջև օտարացում էր սկսվում: Ես, այնուամենայնիվ, իմ հոր որդին էի և ունեի ձգտում առ անկախություն: Իսկ իմ քույրն ու եղբայրը: Դե, նրանց թեման յուրահատուկ է: Մայրս լիովին իր կամքին էր ենթարկել քրոջս: Ինձ համար դժվար էր հասկանալ, թե նա ինչպես էր անտրտունջ հանդուրժում մորս բոլոր նկատողությունները, խայթոցները, արգելքները. մի անգամ չէ, որ տեսել եմ արցունքներ նրա աչքերում՝ մորս հերթական ճառը լսելուց հետո: Մինչդեռ թվում էր՝ քույրս մեկընդմիջտ հանձնվել էր ու համակերպվել: Ես փարվում էր ինձ, կիսվում իր գաղտնիքներով ու դիտարկումներով: Նրան ամբողջ հոգով սիրում էի, բայց երբեմն, հիմարության կամ երիտասարդության բերումով, ծիծաղում էի վրան, ծաղրանմանում իր արձագանքները մորս նկատողություններին.

«Հա՛, մայրիկ: Եղավ, մայրիկ: Իհարկե, մայրիկ»: «Ինչպե՛ս ես կարողանում դա հանդուրժել,- ասում էի...- էլ ուրիշ բառեր չգիտե՛ս»: Քույրս համաձայնում էր ինձ հետ, բայց ոչ ավելին: Ընդունել էր Տան բոլոր կանոնները: Եւ սիրալիր, նրբազգաց աղջիկ էր: Ժիշտ է, ամեն դեպքում անխղճորեն խաբում էր: Իմանալով, որ ցանկացած արարքի, ցանկացած քայլի համար, որ մորս դուր չի գա, իրեն պատժելու են, ժամանակի ընթացքում իր մեջ զարգացրեց ստելու կարողությունը և ջրից չոր դուրս գալու վարպետություն մշակեց: Բացի այդ, ձեռք բերեց ապակենման հայացք, որով լսում էր բոլոր ճառերն ու խրատները՝ չմոռանալով, սակայն, կրկնել. «Այո՛, մայրիկ: Եղավ, մայրիկ»: Իսկ իրականում վաղուց այդ ամենը մեկ էր նրա համար: Սովորում էր մի կերպ. ժիշտ է, շատ էր կարդում ու կարդում էր կլանված: Սիրում էր պլաններ կազմել. սովորելու է համալսարանում, լեզուներ է ուսումնասիրելու, թարգմանություններ է անելու... Այդ ամենը մնաց անկատար, չնայած համալսարանական ծրագիրը հազիվհազ ավարտեց: Իսկ եղբայրս շատ շահեկան վիճակում էր. իր մասին շատ էին հոգ տանում, մատների

արանքով էին նայում նրա թեթև ու ոչ այնքան անմեղ չարություններին. թրև էր գալիս որտեղ և ում հետ ցանկանում էր, տուն էր գալիս այն ժամանակ, երբ քեֆը տար, ինչն իմ դեպքում մշտապես քննադատվում էր, իսկ քրոջս մասին առհասարակ խոսք չկար: Մորս այդ տեսակ հանդուրժողականությունը ես բացատրում եմ ոչ միայն նրանով, որ եղբայրս ընտանիքի սիրելին էր. մայրս իր ողջ եռանդը ծախսել էր իմ ու քրոջս վրա, և այդ պատճառով այն այլևս չէր բավականացնում տան փոքրի համար: Չմոռանանք նաև, որ այդ ժամանակ մայրս արդեն ում ասպիրանտի անհայտ ընկերուհին չէր, այլ՝ ողջ աշխարհով մեկ հայտնի ակադեմիկոսի տիկին: Դա նրա համար ավելացրեց պարտականությունները, և դրանցից առաջինը նույնն էր՝ պաշտպանել Տունը, կարգուկանոն պահպանել Տանը, այդ մեծ, դեռևս շողշողացող, փայլող և կարծես արդուկված Տանը: Դա, ինչպես և նախկինում, մնում էր մորս թուլությունն ու ուժը: Այժմ նա ապակեղեն էր հավաքում... թանկարժեք ծաղկամանները, ամաններն ու շոոֆները՝ սպասքապահարաններում Տունն առանձնացնում էին նրբաձաշակությամբ: Գալիս էին հյուրեր, երբեմն՝ բարձրաստիճան,

ու բոլորը հիանում էին մորս գեղեցկությամբ, քաղաքավարությամբ, խոհանոցով... նա արտակարգ էր պատրաստում: Ոչ իսկույն, բայց բոլորին էլ պարզ էր դառնում՝ ինչպիսի երկաթյա կամք է թաքնված այդ կործանիչ կանացիության ետևում: Մինչ այժմ Տան դրվածքը, նիստուկացը, կապերն արտաքին աշխարհի հետ դրված էին մորս վրա: Ու հաճախ էր լինում, որ մի նոր մարդ, ընդամենը մի անգամ լինելով Տանը, այլևս այնտեղ չէր հայտնվում, քանի որ մորս դուր չէր եկել: Եվ մեր ընկերները, եղբորս ու քրոջս ընկերները մեզ հազվադեպ էին այցելում, չնայած յուրաքանչյուրս մեր սենյակն ունեինք ու ապրում էինք ծնողներից գրեթե առանձնացած՝ բաժանված երկար միջանցքներով. ոչ բարձր երաժշտությունը, ոչ մեր ձայնը բացարձակապես չէին անհանգստացնում նրանց: Օտարության բարակ սառույցն իմ ու մորս միջև օրեցօր հաստանում էր: Ինձ հանգիստ չէին տալիս նրա հրամանները, անհաղթահարելի ցանկությունը՝ միջամտել իմ բոլոր գործերին ու խնդիրներին, բացառապես ամեն ինչ իմանալ իմ կյանքի մասին և ազդել նրա ընթացքի վրա: «Գուցե ես ճիշտ չեմ, բայց ես ձեր մայրն եմ»: Իսկ դա

նշանակում էր՝ պետք է ենթարկվել առանց քննարկումների: Սակայն, տարօրինակ բան, Տանը, այնուամենայնիվ, սառնություն չկար. ապրում էինք խաղաղ, գրեթե միշտ միասին էինք ճաշում մեր՝ արևի շողերից փայլող հյուրասենյակում: Այդ ժամանակ ես արդեն հանդիպում էի մի եթերային էակի հետ, որը վարպետորեն դաշնամուր էր նվագում ու ֆրանսերեն սովորում: Թեև տարօրինակ է, բայց մայրս հավանել էր այդ էակին, ու ես հետզհետե զգում էի մորս ըմբռնող հայացքը: Բայց մենք ավարտում էինք ինստիտուտը, մոտենում էր աշխատանքի բաշխման պահը, իսկ ես դեռ չէի շտապում կողմնորոշվել, և այդպիսով այդ էակը, չանսալով ո՛չ իմ երդումներին, ո՛չ կառուցողական առաջարկներին, մի օր նստեց տաքսի, որի դիմապակու վրա մանուշակագույն տիկնիկ կար, ու նետվեց մոտակա զագսը՝ իմ համակուրսեցու հետ: Ծատ ծանր էի տանում, բայց դա երկար չտևեց. ի զարմանս ինձ՝ պարզվեց, որ կյանքը շարունակվում է, որ աշխարհը լի է երկար ոտքեր ունեցող աղջիկներով՝ պատրաստ քեզ հետ լինելու դժվար պահին, և ոչ միայն հոգեպես: Ու ես անձնագրոհաբար նետվեցի նրանց հյուրընկալ գիրկը:

Մայրիկը, իրեն հատուկ վճռակա նությամբ, այստեղ նույնպես փորձեց ուղղորդել իմ ընտրության մեջ, բայց շուտով հասկացավ. անգամ իր համար էր դժվար մրցել այնպիսի ուժի հետ, ինչպիսին էր իդեալի որոնումը: Ինչ խոսք, ծնողներս արդեն երիտասարդ չէին, անիծված ժամանակը իրենն անում էր: Իսկ ես արդեն աշխատում էի և ամիսը երկու անգամ, ստորագրելով ռոժկացուցակը, լսում էի կախարդական բառերը՝ «Գումարը՝ տառերով, խնդրում եմ»: Ծատ արագ պարզվեց, որ հարևան ամբիոնում, անգլիական լեզվաբանության զոհասեղանի վրա, այրվում է հիասքանչ ու անկախ մի կին: Նաև պարզվեց, որ իմ հայացքները՝ թե ինչպիսին պետք է լինի կինը, շատ բաներում համընկնում են իր նախկին ամուսնու հայացքների հետ, ումից նա այդ ժամանակ հագիվ էր պրծել: Եվ մի օր նրան Տուն հրավիրեցի: Սեղանի շուրջ հյուրեր էին նստած. շատերը իրենց հետ երեխաներին էլ էին բերել: Իմպրովիզացիոն համերգի մասին միտքն ասես ինքն իրեն ծագեց, և ահա պատանեկան անմիջականությամբ, խրախուսող ծափերի ներքո, հուզմունքից կարմրատակած մոտենում էին երաժշտական գործիքին ու քաջաբար թնդացնում

«Էլֆերի պարը» կամ «Թուրքական քայլերգը», շարունակում էլ ավելի վստահ ելույթ ունենալ՝ երջանկացած իրենց առաքելությունից: Ընկերուհիս մի քանի դիտողություն արեց՝ ոչ վիրավորական, բայց հիացմունքի այդ մթնոլորտում՝ անհարկի: Բացի այդ, նա մեկ իրեն հավաքած էր նստում, մեկ էլ շատ ազատորեն խաչում էր իր արևակեզ ոտքերը, ասես՝ մարտահրավեր: Իսկ իրականում, ինչպես իմացա, մեր փայլող հյուրասենյակում, որը լուսավորված էր, ինչպես նկարահանումների համար նախատեսված տաղավարը, նա պարզել էր, որ իր կոշիկներից մեկը ծաք էր տվել՝ կարի ուղղությամբ, ինչը փորձում էր թաքցնել: Մայրս, իհարկե, բարեհամբույր էր նրա նկատմամբ, բայց սեղմված շրթունքներից հասկանում էի, որ ընկերուհիս հավանության չի արժանացել: Չնայած դա ինձ քիչ էր անհանգստացնում, ավելին՝ միայն զվարճացնում էր: Համոզված էի ինքս իմ մեջ, նաև համոզված էի զգացմունքներիս մեջ: Կատարվեց, կատարվեց: Այդ երեկո, երբ ծանապարհում էի ընտրյալիս, առաջարկեցի միավորել մեր ձակատագրերը: Առաջարկն ընդունվեց բարեհաճորեն: «Կատակում ես, ինչ է»,- ախ արեց մայրս, երբ հայ-

տարարեցի որոշմանս մասին: Այդ ժամանակ արդեն գտնվել էին բազմաթիվ բարի կամեցողներ. լրտեսական տեղեկությունները չափից ավելի էին, և վճիռը քննարկման ենթակա չէր՝ ես ծակատագրական սխալ եմ գործում: Կանչվեց հայրս, լսեց մորս, ցավակցական կերպով գլխով արեց, բայց այնումենայնիվ նկատեց, որ այս դեպքում վերջին խոսքը իմը պիտի լինի: «Եվ ինչ, նա մեզ հետ պետք է ապրի»,- հարցրեց մայրս: Ես նրան հանգստացրի: «Ծնորհավորում եմ,- ասաց մայրս,- թեև շնորհավորելու բան չկա»: Հարսանիքին իմ ամբողջ ազգուսակից եկավ միայն տատիկս: Նա արդեն «Կազբեկ» չէր ծխում, միայն նայում էր բոլորիս՝ ինձ, կնոջս, իմ ընկերներին, նայում էր թախճոտ ու խորթ քնքշանքով: Տատիկը գինի խմեց, մի քանի հին ռոմանս երգեց՝ արժանանալով հյուրերի հիացմունքին: Նույնիսկ տաքսու մեջ էր դնդնացնում, երբ տուն էի տանում. նա արդեն առանձին էր ապրում: Ծնողներիս հազարից մեկ էինք այցելում, պահպանվում էր անտարբեր չեզոքություն, բայց ամեն անգամ զգում էի մորս շվարած հայացքը: Նա այդպես էլ չկարողացավ հասկանալ՝ ինչո՞ւ, ինչի՞ համար նրա կամքին հակառակ

վարվեցի: Հորս հետ հարաբերությունները մնացին նախկինի պես: (Դադար:) Այսպես... Իսկ ինչի՞ համար է այս ամենը: Մի՞թե նորից տարան՝ հասցրին հեռու: Այս հիշողությունները... Դրանցից ինչ օգուտ... (Նայելով ժամացույցին:) Աստված իմ, ոնց է թռչում ժամանակը: Ինձ հետ ինչ է կատարվում... Ինչի՞ վրա կանգ առա... Հա՛... կանադացին, ժամանակ ծախսելով աղավինների վրա, ձեռնահարկում «Ինտուրիստ» բացեց ու զգաց, որ իր մոտ ամեն ինչ ավելի վատ է... Հա՛... (Դադար:) Չէ: Ծփոթեցի: Ձեռնահարկում նկարիչն է, իսկ այդ... Ինչ է պատահել նրա հետ... Արդեն կազդուրվել է: Ես ուղղակի անհանգստանում եմ՝ նա ո՞նց է: Լավ, հիմա մենք նրա հետ հարցերն արագորեն կլուծենք: (Դադար:) Իրոք, նրա հետ ինչ-որ բան այն չէ... Հիվանդանոցում մահացավ՝ հետքն էլ չմնաց: Չնայած՝ չէ, մեղք է: Նա էլ մարդ է: Դեռ ավելին՝ Նատաշան սպասում է նրան: Երեքտեղանոց տեսաժապավենով, որ որդին՝ Ժիր մի տղա, արդեն մասերի էր բաժանել: «Հմուտ ձեռքեր» խմբակում: Իսկ ինչ նա կասի ամուսնուն: Ինչ: Որտեղի՞ց հայտնվեց տեսամագնիտոֆոնը: Ձեռնոցները գողացան, իսկ տեսամագնիտոֆոնը գտավ:

Ա՛յդ էր մնացել, որ նրա համար գլուխս ցավի: Թող ինքն էլ իր ամուսնու հետ հարցերը լուծի: Ո՛չ, այդպես չի կարելի: Միայն տրամաբանություն: Ամեն ինչ պետք է կշռադատված լինի: Առանց արգելքների: Որ ոչ մի շուն չհաչա: Ոչ մի քննադատ ծպտուն չհանի: Չնայած իրենք շատ չեն էլ ուզի: Ոտից գլուխ թավալ կտան, ինչ էլ որ գրես: Ա՛յ քեզ մասնագիտություն: Սովորեցնում են, սովորեցնում են, ինչ էլ անես: Բայց դե, Աստված նրանց հետ, իսկ նրա ամուսինն ինչ կասի: Ա՛, ամուսինը... մեկնել է: Կես տարով: Աֆրիկա: Նա մանրէաբան է, իսկ այնտեղ համաճարակ է: Դրա համար էլ ուղարկել են: Ման է գալիս ծահիճներով, կռվում է մալարիայի դեմ՝ դիմակը երեսին: Իսկ հետո վարակվում է տուլյարեմիայով, կամ կծում է մոծակը, ու նա մահանում է: Չնայած, չէ, շատ մռայլ է: Սա մեռավ, նա... Ինչ է նա անելու այժմ: Դե ինչ, այս մեկին վերակենդանացնենք: Կանադացին առողջանում է: Բժիշկները երկար, բայց անիմաստ պայքարում էին նրա կյանքի համար, իսկ հետո նրան ի վերջո գտան հայրենակիցները դեսպանատան միջոցով ու կես օրում ուշքի բերեցին: Երեկոյան արդեն նստած էր բանակցությունների սե-

ղանի շուրջ՝ պայմանով, որ եթե այն հիվանդանոցը, որտեղ պառկած էր, քանդեն, իսկ բժիշկներից խլեն դիպլոմները, նա անշահախնդրորեն կկառուցի երեք նոր հիվանդանոց՝ բոլոր սարքավորումներով: Այդպես էլ որոշեցին: Գլխավոր բժիշկը ոտուձեռ էր ընկել, Աստծո անունով էր երդվում, որ կվերադարձնի բոլոր կաշառքները՝ վիրահատությունների և տրամադրված հիվանդասենյակների համար, սակայն կանադացին անդրդվելի էր: Եվ ահա, կիսամեռ, ասես թևեր առած, շրջում է քաղաքով, նրան փնտրում: Բայց որտե՞ր: Եվ հանկարծ կռահում է: Հրաշալի կանխատեսում: Չորրորդ օրը գտնում է նրան, գտնում է արծաթագույն խեկածկան հերթում. չէ՞ որ Հանքափորի օրն է, առանց դրա չի լինի: Լետվում է նրա մոտ. նա արդեն հազիվ է ոտքի վրա կանգնում, ձեռքերի վրա է առնում և փորձում տանել իր «Պորշե»-ի մոտ, բայց նա ջղաձգորեն կառչել է իրենից առաջ կանգնած տատիկից, գոչում է. «Չէ: Միայն ո՛չ սա»: Դե, նրան կարելի է հասկանալ. ընդամենը չորս ժամ է մնացել հերթում կանգնելու: Բաց թողնելով տատիկին՝ նրանք ուղևորվում են դեպի «Պորշե»-ն, որից այդ ընթացքում արդեն

պոկել են լուսարձակները, հանել անվադողերն ու ապակեմաքրիչները... Սա նույնպես խնդիր է, պետք է հիշել: Չեն կարող գնալ: Չնայած պետք էլ չէ, որ գնան. մինչ կիջներ երեկոն, նրանք սավառնում էին քաղաքի վերևում՝ դեռ մայր չմտած արևի ճառագայթների ներքո, ինչպես Շագալի մոտ է, մանավանդ որ փողոցներն ու մայրերը, ինչպես միշտ, փորփրված են, շուրջբոլորը հողակույտեր են, կտրված խողովակներ ու շինարարական աղբ: Խողովակներից ջուր է հոսում: Այդ ընթացքում նրանք որոշում են ամուսնանալ: Իհարկե, այդ կինը նրա մոտ՝ Կանադա չի գնա, դա միանշանակ է, նա շատ է սիրում իր հայրենիքը, իր չքավոր, բայց հոգևոր տեսակետից՝ ամենահարուստ հայրենիքը: Անգամ եթե գնա, ապա մեկ կամ երկու օրով՝ հաղորդակցվելու մշակութային արժեքներին, շրջելու թանգարաններով, ավելի մոտիկից ծանոթանալու դրանց հակադրություններին: Եվ նորից նրանք բացում են համարի, արդեն ցավալիորեն ծանոթ հյուրանոցի այն համարի դուռը, որն իրենց զգում է քնքուշ ու սենտիմենտալ հիշողությունների գիրկը: Բայց հիմա ամեն ինչ այլ կերպ կլինի: (Դադար:) Այդպես է մտածում

գրականության մեջ բոլորովին տգետ մեկը, ինտրիգի և ֆաբուլայի ստեղծման մեջ անկարող ողորմելին: Նրանք բացում են դուռը: Հա՛-հա՛-հա՛: Համարում՝ ծամարուկների կույտի վրա, նստած է կինը՝ իր կինը: Եկել է աղավնյակը, կարոտել, որոշել է անակնկալ մատուցել: Լռությունը ձգվում է հինգ րոպե: Այստեղ ես նկարագրում եմ զգացմունքների ծանր գամման, դեմքերի արտահայտությունները, կոպերի նյարդային կծկումները, ջղաձգորեն թուք կուլ տալը, սրտի արագ բաբախումը, դիստոնիան. դե հասկանալի է: Իսկ հետո՞, հետո՞: Այս ընթացքում նրա կինը Մերձբալթիկայում մենեջերական դասընթացներ է ավարտել և դրանով, կարծես, քանդել այն պատը, որն իրենց բաժանում էր: Բացի այդ՝ նա պլաստիկ վիրահատություն է կատարել և Նատաշայի աղջիկը կարող է համարվել՝ այնքան երիտասարդացել է, իսկ գլխավորը՝ ամուսնուն հիշեցնում է ամուսնական պայմանագրի մասին, որ բացարձակապես նրա մտքից թռել էր, ըստ որի՝ ամուսնական դավաճանության դեպքում ամուսնու անշարժ ու շարժական գույքի իննսուն տոկոսն անցնում է իրեն: Ու Նատաշան հասկանում է, որ հասարակության այսպիսի տգեղ ու

դաժան օրենքների դեմ ինքն անզոր է: «Մնաս բարով», - անարյուն շրթունքներով շնջում է և ինքն իրեն կորցրած, թևաթափ ու ուժասպառ՝ զառանցում հյուրանոցի երկար միջանցքում, որը լի է գաղտնի նկարահանող սարքերով: Ահա նրա ձեռքը կարեկցաբար սեղմում է ժամանակից շուտ խորշումած հերթապահը, տխրում է ծեր, բազմափորձ շվեյցարը՝ հորեղբայր Կոլյան, ինչպես նրան անվանում էին օրգանի աշխատողները, կագեբեի հայտնի աշխատակիցը՝ կտրվելով գիշերային դիտակետից՝ կնոջ առջև պատվի բռնելով: Կասկածից դուրս է՝ այս բոլոր կարեկից մարդիկ իրեն այլևս տեսադաշտից չեն կորցնում: Եվ կրկին գիշերային քաղաքը... Եգիպտական մթություն... Ջարհուրելի լռությունը խախտում է ապակիների գնգնգոցը՝ տանկերի տոնական շքերթին են պատրաստվում: Ահա Նատաշայի քնքուշ կազմվածքը լուսավորում են մերթ մի շարասյան լուսարձակները, մերթ՝ մյուս... Իսկ հետո նա ծովվում է խավարին... Ու ոչ մի նույնանման վերջաբան: Ու Կաբիրիայի ոչ մի ժպիտ: Նուրբ հարց է առաջանում՝ ի՞նչ է սպասվում նրան: *(Եղածից ցնցված, ապա՝ խաղաղված:)* Ո՛ւխ... Ոնց որ թե

գտա... Դե, իսկ հիմա՝ գործի: Ընդարձակենք, այն ծանրակշիռ դարձնենք: Արցունքներով, արցունքներով, իհարկե, բայց՝ երկրորդ, երրորդ պլանում: Այսպես... որպեսզի կանայք գրքի էջերը չթրջեն արցունքներով, իսկ գրադարանավարները հրաժարվեն գիրքն ընդունելուց: Ուղղակի, որ երկար թախժոտ հառաչեն, իսկ տղամարդիկ խորհեն, որ չեն կարողանում բարձր գնահատել նրանց: Հա՛, սա բարոյական գրականություն է: Հետո ի՞նչ: Հենց մեր ժամանակներում է բարոյականության ընդհանուր անկումը, հասարակության դարավոր բարքերի վերացման համար այդպիսի գրականություն է անհրաժեշտ: Խիստ է անհրաժեշտ: Մի փոքր սենտիմենտալ է, սակայն հոգ չէ: Միթե արցունքները չեն մաքրում հոգին: Մանկան մեկ արցունքը միթե չի մաքրում: Այստեղ վատ չէր լինի նաև ինչ-որ թևավոր խոսք ասել: Օրինակ՝ «Մինչև երբ, Կատալինա...», կամ՝ «Փարիզն արժե պատարագին», կամ, վատթարագույն դեպքում՝ «Չնայած կարծում եմ՝ Կարթագենը պետք է կործանվի»: Էլի վատ չէ: Հըմ... (Կեցվածք ընդունելով:) «Չնայած կարծում եմ...»: Գրողը տանի, ինչպիսի դերասան եմ կորցրել իմ մեջ: Բայց

սա՛ նույնպես եղել է: Նապոլեոնն է, ինչ է: Ամեն ինչ եղել է: Ամեն թևավոր բան թռել-հեռացել է: Ի դեպ, ահա՛, միթե խնդիր չէ՝ մեկը գրում, գրում է ամբողջ կյանքում, աշխատում, ջանում, վեր հանում բառային հանքից հազարավոր բառեր. էլի ես չեմ ասել, ափսոս, չի հեռանում գրամեքենայի մոտից, և՛ ոչինչ: Դատարկություն է: Ինչպես ոչ ոք քեզ չի իմացել, այնպես էլ հիմա չի իմանում: Իսկ ուրիշն այսպես իմիջիայլոց ինչ-որ բան է դուրս տալիս, և խնդրեմ՝ ժառանգների երախտապարտ հիշողությունն ապահովված է: Ցավալի է: Իսկ եթե մտածե՛լ, իսկ եթե փոփոխե՛լ: Իսկ նույն միտքը ձևակերպել այլ բառային կաղապարով: Այնպես, որ ոչ ոք գլխի չընկնի: Միայն դու կիմանաս, ու էլ ոչ ոք: «Չնայած կարծում եմ...»: Բերդիչևը պետք է որ կործանված լինի: Բարբաջանք է: Բերդիչևն ի՞նչ կապ ունի: Ու ինչի՞ համար: Եվ, ընդհանրապես, հրեատյացությունն ի՞նչ է տալիս: Ո՛ւմ է պետք: Չգիտեմ, կարող է և մեկին պետք գալ, իսկ ինձ հաստատ՝ չէ: Ի դեպ, նույնպես թեմա է: Նա արիստոկրատ կին է, իսկ տղամարդը՝ հրեա: Բայց նա բանակի հրամանատար է: Թեև թուխ դեմքով տղամարդ է: Նրան արտասահմանում աշխատանքի

են նշանակում: Կինը որոշում է գնալ նրա հետ: Ամեն ինչ թողած՝ տուն-տեղ, հարազատներին, մտերիմներին, ընկերներին, կենցաղային իդեալական պայմանները: Իսկ համհարզը՝ այդ սրիկան, նախանձում է նրանց անմարդկային բախտին ու որոշում... *(Հիշեց: Տխրամած:)* Ահա թե ուր հասա: Այդպես էլ է պատահում: «Օթելլո»: *(Ձայրացած:)* Հետո ինչ: Ամեն ինչ եղավ: Ոչինչ էլ չեղավ: Կարդում են, հառաչում, արցունք թափում, սրտները բռնում: Իսկ ո՞ր է նորույթը: Նա նրան է սիրում, նա էլ՝ նրան - էլ ո՞վ դիմանար, այն քեզ զարմանք: Կամ՝ նա ուրիշ է: Կամ էլ՝ մյուսը: Դե չէ, գնա՛ բանիդ, առանց խղճի խայթի կթում են ու կթում: Կթում են ու կթում... Նայած, թե ոնց նայենք հարցին: Այլ բան է՝ տաղանդի կարողությունը, խորաթափանցությունը, ստեղծագործական ուժը... Դրանցով են չեն զբաղվում... Բայց թեման, թեման... Սյուժեն. հա՛, դա իմ խոցելի տեղն է: Իսկ ահա կերպարների մշակումը, պսիխոլոգիզմը. այստեղ կտեսնենք՝ ով ով է: Գրողը տանի, ինչքան լավ է նկարիչների համար. փխրուն մի ձյուղ են դնում բաժակի մեջ, թե՛ տրամադրություն չունեն, ու նկարում են իրենց քեֆին: Կամ լուսամուտագոգի վրա, կամ տա-

ղավարում: Կամ այգաբացին, կամ վերջալույսին: Կամ շուրջդ աշուն է, կամ գարուն: Կձանձրանա՛՝ կվերցնի նույն ձյուղը, կդնի ծաղկամանի մեջ կամ ուրիշ տեղ: Եվ ինչո՞ւ են նկարիչ չեն: Կես օրում քսան նկար կնկարեի: Կոմպոզիտոր: Առավոտյան արթնացար, երեկվանից վրադ հալ չկա, զլուխդ ցավում է, սողում են դաշնամուրի մոտ, ու՛ պա-բա-բա-բա-ան,- և ամբողջ աշխարհը մեջբերում է... Ո՛չ, այսպես դատել, անշուշտ, չի կարելի: Պարզունակ է: Ամոթ է: Այսպիսի դատողությունները վայել չեն իսկական ստեղծագործողին, նվաստացուցիչ են... Հարկավոր է հարգել մյուս արվեստների ներկայացուցիչների մասնագիտությունը: Եվ այսպես. սեր... Ի դեպ, այնտեղ ո՞նց է իրեն զգում իմ նկարիչը: Չէ՛ որ ժանգոտած խողովակով, ինչն ամբողջովին զրկված է նորմալ տեսքից, կյանքը վտանգելով՝ իր մոտ էր սողում ընտրյալը: Իսկ նա ոչինչ չգիտի: Այդ ժամանակ նա կանգնած էր բաց պատուհանի մոտ և նշան էր բռնել հերթական աղավնուն: Ու հանկարծ ինչ-որ մեկի ձեռքը հայտնվեց ուղիղ նրա քթի դիմաց՝ բռնելով քիվից, ապա հայտնվում է հենց ինքը: Իսկ նկարը, ի դեպ, նոր չէ, տունը վաղուց վերանորոգված չէ, ինչպես մարզի մյուս բնա-

կարանները, պատերը ճաքած են, տանիքն այրում է, բնակիչները մեկ անգամ չէ, որ բողոքել են, իսկ քիվն ուր որ է՝ կպոկվի: Սկզբում նա ցնցվում է, իսկ հետո ավելի ուշադիր նայում նրա՝ սարսափից այլայլված ու իր հանդեպ սիրով լի դեմքին, և նրան թվում է՝ իր առջև ակնթարթային տեսիլք է, իսկական գեղեցկության հանձար... Իսկ հետո հանկարծ գլխի է ընկնում՝ «...այլ քեզ բան, նա հենց Ինքն է: Ինքը: Նետվում է դեպի նա, անշահախնդիր օգնության ձեռք մեկնում, քաշում դեպի իրեն: Եվ հանկարծ ինչ-որ անբացատրելի, անդրկողմյան առեղծվածային ուժ... Ի դեպ, միստիկան հիմա պահանջարկ ունի: Բոլոր այդ գուշակությունները, փսեսները, հայելիները, մոմը, հորոսկոպը... կարող է բավականին հաջող բան ստացվել: Սակայն դա՝ հետո, իսկ այժմ միստիկական ուժը այդ կնոջը նետում է նրա գիրկը: Իսկ նա մազակալել է, սափրված չէ, չլողացած, նիհարած, միայն աչքերում կրակ կա, անմար, անշեջ կրակ, որում մինչև մոխիր դառնալն այրվում են մարդկության լավագույն զավակները, գաղափարի իրական զոհերը, որոնք նվիրվել էին մարդկանց ծառայելու գործին: Նրա մեջ մեծ քնքշանք է արթնանում: Կնոջ,

քրոջ, մոր քնքշանք: Հն, կնոջ: Նա այդ պահին զգում է, որ պատրաստ է մայր դառնալ: Եվ հանկարծ նրա հայացքն ընկնում է հենց նոր ավարտված կտավին: Այո, այո, այդ տեսարանը հստակ իմ առջև է հառնում. կիսախավար ձեղնահարկը, ծակ կտուրը, որի միջով ժամանակ առ ժամանակ սառն աշնան արևի ճառագայթները ներթափանցում են, և մի շողն ընկնում է հենց կտավի վրա՝ տալով նրան անկրկնելի երանգներ, ... այն կարծես ներսից է լուսավորվում, ասես կախարդանք է: Օ՛, այդ գույները: Ներկերն ինքն անձամբ է պատրաստում, ինչպես հին վարպետները, չվստահելով տեղական արտադրությանը, սանդի մեջ ծեծում է, խառնում, նկարում ձվի դեղնուցով. դա կոմպոզիցիա է, վրձնախազք, ռակուրս: Դա գրունտ է: Չէ, ո՛չ մի գրունտ: Նա նկարում է տախտակի վրա: Սրբապատկերներ: Բայց մեկ է՝ նա ցնցված է: Կյանքում երբևէ նման բան չէր տեսել: Դե, ոչ ոք ամբողջ աշխարհում չի տեսել նման բան: Ու չի էլ տեսնի, որովհետև հոսանքագծերի անսարքության պատճառով ձեղնահարկը կայրվի տան հետ միասին: Կրակը կտարածվի դեպի մոտակա երկաթուղային կայարան, որտեղ կան նավթի

ցիստեռններ և ֆոսֆատի գործարան: Ամբողջ թույնը կլցվի երկրում մնացած վերջին գեղեցիկ գետը, որտեղ դեռևս թառափի տեսակներ են ապրում: Բարեբախտաբար, զոհեր չեն լինի: Էլեկտրիկին, որի պատճառով տեղի է ունեցել հրդեհը, կզրկեն ամսական պարգևավճարից: Բայց դա՝ հետո, երկրորդ մասում, իսկ հիմա... Եւ սրտատրոփ ու ակնածանքով ծնկի է իջնում նկարի դիմաց, ձեռքերը սեղմում կրծքին..... Ի դեպ, նա գեղեցիկ կուրծք ունի և այժմ կիսամերկ է - դե, իհարկե, փորձիր խողովակով բարձրանալ յոթերորդ հարկ - և նրան է հառում արտասվալից աչքերը: Այդ պահին պատրաստ է ամեն ինչի: Մոռանալով իր այցի նպատակը՝ կինը թռնում է նրա վրա... Ինչ անհամբերն եմ ես. նա հանդարտ բարձրանում է, ամոթխած մոտենում և գլուխը դնում է նրա ուսին: Ամեն ինչ որոշվեց հաշված վայրկյանների ընթացքում: Թող լինի այդպես: Դա ճակատագրի նախանշում է: Նրանք կանցնեն իրենց ոչ երկար կյանքի մնացած մասը ձեռք ձեռքի տված, ուս ուսի, միասին: Ավելի լավ է մի քանի տարի հանձարի հետ, քան ամբողջ կյանքն ինչ-որ հիմարի հետ, որը չի տարբերում վաղ Դյուրերին ու Սեզանից: Եվ այդ պա-

հին պատուհանագրգին ծլվում է աղունիկների գույգը, գրողը տանի, ինչպիսի խորհրդանիշ: Եւ մի կողմ է քաշվում այդ կնոջից, իսկ վերջինս, իմանալով տղամարդու սիրելի սովորությունները, սարսափով նայում է, թե ինչ է լինելու հետո: Իսկ նա կյանքում առաջին անգամ մի բուռ ցորեն է վերցնում ու նետում աղավնիներին: Եվ արևի շողը, որն օրվա ընթացքում երկրորդ անգամ հանկարծակի թափանցել է հարևան կոքսի կոմբինատի ծխնելույզների ծխի միջով, լուսավորում է նրա յուրօրինակ բարեհոգի, հաճելի դեմքը: (Դադար:) Սա կյանք է, կյանք, ոչ թե սվսվոց, ոչ մի կեղծ ռոմանտիկ թոթովանք: Եվ ամեն բան հասկանալի է առանց ավելորդ բառերի: Հանձարեղ է: (Դադար:) Բայց ոչ ավելին: (Դադար:) Իսկ եթե անկեղծ, ձեռքը սրտին դրած... անիմաստ բան է: Կատարյալ անկապություն՝ ավելին չասելու համար: Ինչ է ինձ հետ կատարվում, ի վերջո: Ո՞ր եմ գլորվում: Կամ արդեն գլորվել եմ, և էլ տեղ չկա: Ինչ է, մի՞թե այլևս ոչինչ չեմ կարող հորինել: Ոչ մի արժանի բան: Բայց հնարավոր չէ: Մինչև այժմ հորինում էի, ու հանկարծ, անի, էլ չեմ կարող: Իսկ եթե - վերջ: Ո՛չ մի տող, ո՛չ մի միտք: Սա ինչ է,

վերջն է, թե՛ ձգնաժամ: Իսկ ուժս
դեռ տեղն է, դեռ կարող եմ... Չէ՛ որ
մի ժամանակ գրում էի: (*Պաթոսով:*) Մեծ համբավ ունեի: Լավ,
գուցե և համբավ չունեի, բայց որոշակի շրջանակներում, այսպես ասած, բավականին հայտնի էի: Չէ՛ որ հաճելի բաներ ունեի, անկեղծ, միայն իմը... Ինչպե՞ն դուրս գամ այս անդունդից: Ներոնի ժամանակներում մի բանաստեղծ էր ապրում, որը վատ բանաստեղծություններ էր գրում: Կեսարն ասաց՝ սպանե՛ք նրա հորը: Երբ դրանից հետո բանաստեղծը չսկսեց ավելի լավ գրել, Ներոնը հրամայեց՝ իսկ այժմ սպանե՛ք նաև նրան: Չէ՛ որ ինձ մոտ էլ են եղել վատ ժամանակներ, ես մտածում եմ այդ մասին. դրանք դեռևս իմ մեջ են: Ի՞նչ է ստացվում. ամեն ինչ վաճառքի հանել: Անգամ անհարմար է: Խիստ անձնական իրեր... ինչի՞ համար: Իսկ եթե այստեղ էլ ոչինչ չստացվի: Այդ դեպքում գրիր կանադացու մասին, ձեռնահարկի մասին, գեղեցկուհի Էտայի մասին: Կզնեն, ծերուկ: Ամեն ընթերցողին՝ մեկական գրող: Ո՛չ, բավական է, բավական է կրկնել ուրիշ մարդկանց բառերը, ուրիշ մարդկանց մտքերը, չէ՛ որ իմ մեջ պետք է լինի ինչ-որ բան՝ միայն ինձ պատկանող: Սեփական ուրա-

խությունները, սեփական տանջանքները... Կարծում եմ՝ դրանցից էլ կսկսենք, ի՞նչ կասես: Փորձել կարելի է: (*Հիմարի ծայնով:*) Լսե՛ք: Լսե՛ք հիանալիորեն տխուր մի պատմություն, որ պատմել է բոլոր իրադարձությունների ականատեսն ու մասնակիցը, և եթե ուզում եք, ինքներդ ձեզ համար հետևություններ արեք: (*Սովորական ծայնով:*) Եվ այսպես, զանգեց քույրս... Չէ՛ հա, ի՞նչ քույր, նրանից դա սպասելի չէ. երեք տարի առաջ մի անգամ ինձ տեսավ փողոցում, անցավ մյուս մայթը՝ հանկարծ իրեն չկանգնեցնեմ: Զանգեց եղբորս կինը: Այն Տնից արդեն մի քանի տարի ինձ ոչ ոք չէր զանգել, այդ պատճառով անմիջապես վատ հոտ առա: «Մաման հիվանդանոցում է», - ասաց նա: «Ի՞նչ է եղել նրան»: Իսկ ծանր նախազգացումն արդեն համակել էր ինձ: Այդ վիճակն ինձ ծանոթ էր. նրա հետ բազում տարիներ եմ ապրել: Հայրս դեռ չէր մահացել, տասը տարեկան էի, հիշում եմ, գիշերվա կեսին արթնացա հենց այսպիսի զգացումից՝ վախ նրա կյանքի համար: Գրեթե անմիջապես բռնեցի կնոջս մահձակալից. բիոտոկերս փոխանցվեցին նրան: «Ի՞նչ: Ի՞նչ է պատահել»: «Բան չէ, քնիր»: «Ի՞նչ-որ երա՞զ տեսար»: «Ասում եմ՝

քնիր»: Ավելի ուշ նա արդեն գիտեր՝ ինչն ինչոց է, փորձում էր հանգստացնել ինձ, չնայած գիտակցում էր՝ ապարդյուն. տան մեջ դեռ երկար այս ու այն կողմ եմ անելու, նստելու եմ խոհանոցում, աչքս կանելու է միայն առավոտյան: Ոչ մի բան ողբերգություն չէր կանխագուշակում: Հայրս առողջ էր, շատ էր աշխատում, իսկ երբ սունկ էր հավաքում, նրան չէի կարողանում հասնել: Անտառում նույնիսկ թվում էր՝ մեր տարիքները միմյանց հետ փոխել ենք: Իսկ հետո հանկարծ նկատեցի, որ նա կտրուկ նիհարեց, բառացիորեն՝ աչքերիս առաջ: Ու իմ գիշերային մղձավանջներն ավելի ու ավելի հաճախ էին կրկնվում: Հետո արդեն հորս տարեց մի ընկեր ինձ պատմեց այն, ինչ բոլորը գիտեին: Այնպես պատահեց, որ մի օր նրանք նստած էին ամառանոցում, ու հայրիկը հանկարծ խոստովանեց. «Պրոֆեսորն ասաց՝ սարսափելի հիվանդություն ունեմ»: Նրա աչքերում արցունքներ տեսա: Բայց նա արագ իրեն հավաքեց ու շարունակեց ինչ-որ վերացական մի գրույց, էլ չլսեց ո՛չ իրեն հանգստացնելու, ո՛չ սփոփանքի խոսքեր... Ծատ արագ գնաց այն աշխարհ: Սկզբից նրան վիրահատեցին, թվաց՝ ապաքինվում է, իսկ

հետո, գրեթե իսկույն, երկու շաբաթվա ընթացքում էլ ոտքի չկանգնեց: Նրան հսկում էի հիվանդանոցում, նա հիշողությունը կորցրել էր: Երբեմն մտաբերում էր ինձ, խոսում, անգամ կատակում, իսկ հետո նրա հայացքն անսպասելիորեն մարում էր, ասես ներս էր թեքվում կամ անցնում իմ միջով... Հասկանում էի. հայրս ինձ չէր տեսնում, նա այլևս ինձ հետ չէր: Ո՞ր էր նա այդ ընթացքում: Կամ նրա աներևույթ հայացքն այնտեղ էր, որտեղ նրա խեղճ հոգին պատրաստվում էր թռչել: Մի անգամ էլ ասես նյարդայնացավ, սկսեց շուրջը գննել, ապա ասաց. «Գնանք»: «Ո՞ր», - վախեցա ես: «Ահա էնտեղ փող ունեմ: Հիմա մեքենա վերցնեմ ու տուն գնամ»: «Ախր, քեզ չի կարելի, պապ»: «Գնանք, օգնիր ինձ վեր կենալ», - ու նստեց: Բռնեցի ուսերից, որ բոլորովին վերջերս այնքան ամուր էին, վերնաշապիկի միջով ափերիս մեջ զգում էի նրա ամեն մի փխրուն ոսկրաշերտը: Կարեկցանք ու ցավ էր ինձ համակել: Այտս սեղմվել էր նրա գլխին, հազիվ զսպեցի հեկեկոցս, չիմանալով՝ ինչ անել, ինչ ասել, բայց, ախր, պետք է ինչ-որ բան ասեի: Նա ինքը գլուխը հանկարծ դրեց բարձին՝ ինչ-որ բանի մասին խորհելով: Ինչ-որ բան հիշեց: Հետո

ժպտաց. «Հենց նոր տեսա հորս: Մորս էլ... Ու Պյոտր Ծնչիկին էլ... Մենք սունկ էինք հավաքում...»: Հասկացա. նա հենց նոր ետ գնաց դեպի մանկություն: «Ի՞նչ է, պանյ, տխրե՞լ ես»: «Էլ ավելի տխուր կլինե՞ր, եթե չունենայի քեզ», - շնջաց նա՝ հազիվ շարժելով շուրթերը: Ու մահացավ թեև հիշողությունը կորցրած, բայց սպասածը տեսնելու ակնկալիքով՝ մեզ բոլորիս: Մենք հերթափոխում էինք իրար, իսկ այս անգամ բոլորս մի տեղ էինք հավաքվել՝ մայրս, քույրս ու ես, եղբայրս հեռվում էր՝ ուրիշ երկրում, ու նոր էինք մտել հիվանդասենյակ, սկսեց ահավոր խոխոացնել, նրան ներարկիչով մոտեցավ բուժքույրը, ու այստեղ մայրս կրկին ապշեցրեց ինձ: «Ինչի՞ համար, - բացականչեց նա, - ախր դուք երկարածգում եք նրա տառապանքները», - ու փորձեց կասեցնել բուժքրոջ գործողությունը: Ներարկումը չօգնեց, մի քանի վայրկյանից ամեն ինչ ավարտվեց: Ես հեկեկացի: «Մի լացիր, - ասաց մայրս, - չի կարելի»: Ես հայացք զցեցի հորս դեմքին, համբուրեցի ձեռքը... Եղբայրս հուղարկավորությամբ եկավ ուղիղ օդանավակայանից: «Փառք Աստծո, - ասաց քույրս, - հասցրիք»: Ու տարօրինակ թվաց ինձ այդ արտահայ-

տությունը: Ինչի՞ համար «փառք Աստծո»: Որ եղբայրս շտապեց այստեղ: Ու ահա, տարիներ անց, շատ տարիներ անց, երբ լսափողի միջից լսեցի կնոջ ձայն, որը հաղորդեց՝ մայրս հիվանդանոցում է, կրկին ինչ-որ բան՝ սառնաշունչ ու դաժան, ինչպես սուր սայր, անցավ իմ միջով: Ամեն ինչ հասկացա: «Ի՞նչ է եղել նրան»: «Չգիտեմ: Արյան հետ կապված խնդիր կա»: Գնացի հիվանդանոց: Մայրս ինձ դիմավորեց ժպիտով, երկար տարիներ նման բան չէր եղել մեր միջև: «Քեզ ի՞նչ է պատահել, մամ: Ինչո՞ւ ես վիրահատարանում: Քեզ վիրահատելո՞ւ են»: «Չէ, էստեղ ծանոթ բժշկի ունեմ...»: Այդ ամենն ինձ ծշմարտանման չթվաց, բայց երբ ուզում ես հավատալ՝ հավատում ես: Հետո իմացա, որ վիրահատությունը մեկ ամիս առաջ է եղել, իսկ երկրորդից մայրս հրաժարվել է: Դե, բժիշկն էլ չի ստիպել: Վախենում էին՝ չդիմանա: «Կբուժենք, - ինձ ասաց պրոֆեսորը, - կբուժենք»: «Այնուամենայնիվ, ի՞նչ է պատահել նրան»: «Ես ձեզ առաջին անգամ եմ տեսնում, հասկացե՞ք...»: «Դե ի՞նչ տարբերություն՝ առաջին անգամ եք տեսնում, թե մանկուց գիտեք»: «Ոչինչ, - ուղիղ չպատասխանեց նա, - կաթիլային ներարկում ենք անում,

վիճակը կբարելավվի՝ մի կուրս էլ կանենք, կբուժենք»: Դրսում ծառերը սևավուն էին դարձել, բողբոջները դեռ չէին ուռել, բայց մարտյան օդում թևածում էր նոր կյանքի շունչը: «Իսկ գուցե ոչ մի լուրջ բան,- մտածում էի ես,- ուղղակի մայրս է խնդրել ինձ գանգել, որպեսզի վերջապես տեսնվենք: Հա՛, հա՛, հենց այդպես էլ կա»: Իսկ հիշողությունս ինձ տարավ դեպի անցյալ: Հորս մահից հինգ օր հետո մայրս հանկարծ հայտնեց, թե կարիք չկար, որ կինս գար հուղարկավորությանը. «Ո՞նց նա կարողացավ: Ի՞նչ է, չգիտե՞ր, թե հայրդ իրեն ոնց է վերաբերվում»: Այդ ժամանակվանից սկսած՝ նրանց հարաբերությունները կնոջս հետ վատթարացել էին: «Զգիտեմ՝ դու նրան ո՞նց, բայց հայրիկը՝ բոլորովին այլ կերպ էր վերաբերվում»: «Դա քեզ թվում է: Հայրիկդ փափուկ մարդ էր. չէր ուզում քո ներկայությամբ նրանից խոսել»: Ու նա հիշում ու հիշում էր բոլոր վիրավորանքները, որոնք, ինչպես իրեն էր թվում, հասցրել էր կինս: «Այստեղ մեղավորներ չկան,- պատասխանեցի ես,- երբ մարդիկ իրար չեն ընդունում, անկախ իրենց կամքից, իրար խոցում են»: «Ու չմտածեն,- գոչեց մայրս,- թե ապրելու եք էս տանը»: Ես ապ-

շահար նայեցի նրան. ո՞նց կարող էր նման գրույց բացել հենց այս պահին: «Մնա՛ այստեղ, ինձ այս տունը պետք չէ», - բղավեցի ես, հագա վերարկուս ու հեռացա հայրական օջախից: Ու էլ չվերադարձա: Միայն գրեցի նրան, որ ոչ մի պահանջ չունեմ բնակարանի համար,... թող համարեն, որ չկամ: Քույրս անմիջապես դադարեց ինձ հանդիպել, իսկ նախկինում գալիս էր, ժամերով նստում, չաչանակում, պատմում իր երեխայի մասին, իսկ հետո կտրուկ դադարեցրեց ամեն ինչ: Եղբայրս մի որոշ ժամանակ կապ պահեց, հետո նա էլ անհետացավ: Պարզ էր. ինձ հետ շփումն արգելված էր: Ինչպիսի արտակարգ կամք. հարազատ մոր մասին մտածում էի՝ ասես օտար մարդու մասին: Չփորձեցի կարգավորել մեր հարաբերությունները: Միայն երեք տարի հետո պատահաբար հանդիպեցի՞ք գերեզմանոցում՝ հայրիկի գերեզմանի մոտ: «Ինչո՞ւ չես գալիս», - հարցրեց նա: «Ինչո՞ւ գամ: Որպեսզի իմանամ, որ սեփական տանը տեղ չունեմ: Ես գլխավերևում տանիք ունեմ»: «Ինչ կոպիտն էս դարձել,- ասաց մայրս, լռեց ու շարունակեց.- Ես հիվանդ եմ...»: «Ի՞նչ է կատարվում քեզ հետ»: Սակայն նա չէր պատասխանում: Ու-

շաղիր նայեցի նրան: Երբեք որևէ մեկը մայրիկին իրական տարիքը չէր տալիս: Միշտ սխալվում էին: Եվ այժմ նա նույնպես այդպիսի տեսք ուներ: «Լավ, մամ, կգամ»: Բայց չգնացի: Ես, ինչպես և առաջ, ապրում էի վիրավորանքը սրտումս... Հիվանդանոցում մեր տեսակցությունից հետո այցելում էի մորս համարյա ամեն օր, սակայն օտարությունը մնում էր.... ո՛չ ես, ո՛չ նա չէինք կարողանում հաղթահարել անջրպետը: Մի ամիս անց մորս դուրս գրեցին: Առաջին անգամ վերջին տարիների ընթացքում ոտք դրեցի իմ հայրական տան շենք: Սեղան գցեցինք և նույնիսկ խմեցինք առողջության համար: Մորս շոկի չենթարկելու համար եղբորս հետ նրա սենյակում մի շիշ օղի էինք պահել և ժամանակ առ ժամանակ գնում էինք խմելու, այնպես որ, երկու ժամ անց բավականին բարձր տրամադրություն ունեինք: Վերջում խմեցի մորս կենացը, ամենայն անկեղծությամբ ասացի, որ նա մեզ համար միշտ թագուհի է: Մայրս շողում էր. նայում էր մեզ հիացմունքով. մենք այսքան երկար իրար հետ չէինք հավաքվել: Մի ամիս անց նրան կրկին տարան: Այս դեպքում անգամ հիմարի համար ամեն ինչ պարզ էր: Կրկին

բժիշկը անհասկանալի մրմնջում էր, բայց նայում էր աչքերիս մեջ անկեղծ և պատասխանատվությամբ: Ընկերների, ծանոթների և ոչ այնքան ծանոթ մարդկանց երկար շղթայի միջոցով իմացա ախտորոշումը: Մորս մնում էր կես տարուց էլ պակաս կյանք: Եվ սկսվեց վազքը լաբիրինթոսում: Գտա մի հոյակապ բժիշկ, որ բուժում էր ոչ ավանդական մեթոդներով՝ խոտերի, հյութերի, շփումների միջոցով: Այլաբույժները նրան տանել չէին կարողանում, մանավանդ, երբ ոտքի էր հանում անհույս դատապարտվածներին: «Ձեզ մոտ վերջին փուլն է,- ասաց նա:- Դժվար կլինի: Ոչինչ չեմ կարող խոստանալ»: Իսկ խնդիրն այն էր, որ դեղերի ազդեցությունից քայքայվող ուռուցքից առաջացած թույները տարածվում էին ճառագայթումից անորակ դարձած արյան միջոցով բոլոր օրգանները: Դրանք պայքարում են, բայց և՛ օրեցօր թուլանում: Անհրաժեշտ է դուրս հանել թույները և միաժամանակ շարունակել ներքաշել ուռուցքը: Ինչքան լավ է ընթանում ներքաշումը, այնքան ավելի շատ են լինում թույները, և այնքան ավելի ծանր է լինում նրանց հաղթահարելը լյարդի, սրտի, ենթաստամոքսային ու վահանաձև գեղձերի համար: Ո՛չ

սպիտակուցներ, ոչ ճարպեր. բան-
ջարեղեն, մրգեր, թարմ հյութեր՝
շատ-շատ: Ոչ մի պահածո, խո-
տաբույսերի թուրմեր. ամեն ինչ՝
խիստ չափաքանակով, կոնկրետ
որոշված հերթականությամբ՝ մեկ
ժամից ոչ ավելի ընդմիջումով: Ըն-
կերներս պարկերով տուն են բերել
եղինջ, խատուտիկ, ծիծեռնախոտ,
ծիպոց: Ամբողջը տրորվել է, քամ-
վել, պատրաստվել: Եվ մի ամիս
անց ուռուցքը բաժանվեց երկու
մասի, հետո ավելի մաս-մաս
եղավ: Սկսեց ներծծվել, ապա չո-
րանալ: Սև հատվածն աստիճա-
նաբար նահանջեց, նրա տակ մուգ
վարդագույն մաշկ էր: Ուրախա-
ցանք, բայց բժշկուհին չէր կիսում
մեր ուրախությունը: «Ուռուցքը ոչն-
չացված է, բայց թույնները, թույնե-
րը... դրանք ավելի վտանգավոր
են: Չեք պատկերացնում՝ ինչ տե-
ղի կունենա հիմա»: Այո, ես չէի
պատկերացնում: Միայն տեսել էի
մորս դեմքը, որը կիսով չափ
ծածկված էր փետուրե թաշկինա-
կով. նա նիհարում էր և սառում,
իսկ դեմքը գնալով ավելի թանկ էր
դառնում ինձ համար: Մենք շատ
քիչ բան ասացինք միմյանց,
չզղջացինք բաժանման տարիներ
ի համար, մի բառ անգամ չփո-
խանակեցինք մեր բաժանման
պատճառի մասին, բայց օրեցօր

այն, ինչ կտրվել էր, հանկարծ
միացավ ու միացրեց մեզ: Իսկ եղ-
բայրս դժվարության հանդիպեց:
Նա չափից ավելի էր սովորել եր-
ջանիկ լինել: Առաջին իսկ հնարա-
վորության դեպքում բռնկվում էր,
անհետանում իրեն տրված տնից,
հեռախոսը վայր չդնելով՝ լացում ու
անիծում էր իր ճակատագիրը:
«Կլոնն դու վերջապես,- գրեթե գո-
ռալով ասաց մայրս՝ լսելով նրա-
նից մի անգամ այդպիսի խոսքեր:-
Ինչո՞ւ ես պատմում ամբողջ աշ-
խարհին, որ ես հիվանդ եմ, և թե
ինչքան դժվար է քեզ համար»: Նա
անում էր այն ամենը, ինչ կախված
էր իրենից, բայց մեզ հետ չէր լի-
նում: Թվում էր՝ առհասարակ չէր
հասկանում, թե ինչ էր կատար-
վում, ինչին էինք գնում: Նա փախ-
չում էր ամեն տեսակի խո-
սակցություններից: Մի ուրիշ ան-
գամ էլ վազեց խոհանոց՝ իր հա-
մար գազօջախի վրա մի բան
պատրաստելու, և այդ ամենը այն
աղմուկի մեջ, որ տիրում էր բնա-
կարանում: Ճիշտ է՝ պատրաստում
էր շատ համեղ: Մոր մոտ չէր
հայտնվում: «Ի՞նչ է պատահել
նրան,- շնջում էր մայրս,- չէ՞ որ
սիրում էի նրան բոլորից շատ»: Թոշնած քույրս սենյակից սենյակ
էր անցնում, գնում ընկերուհիների
մոտ, հաճախ պառկում էր՝ բողո-

քելով նյարդերից, լյարդից, գլուխ
 չէր հանում ո՛չ խոտաբույսերից, ո՛չ
 պրոցեդուրաներից, և... ստացվեց
 այնպես, որ մորս մոտ մնացի
 միայն ես: Մայրս էլ այդ ամենին
 նայում էր ապշած, թե ինչպես եմ
 սովորել. արդեն կարողանում էի
 վարվել վիրադանակի ու վիրաբու-
 ժական մկրատների, թանգիֆի ու
 տամպոնների հետ: Արդեն վիրա-
 կապեր էի դնում: «Ինչպիսի ձեռ-
 քեր ունես,- ասում էր նա:- Ինձ
 համար այնքան ցավալի է, որ
 դրանք չեմ զգում: Թվում էր՝ դու
 պիտանի չես կյանքի համար. ես
 քեզ համար միշտ վախեցել եմ: Դու
 պետք է բժիշկ դառնայիր»: Մեկ
 այլ իրավիճակում այս ամենն ինձ
 միանգամայն ծիծաղելի կթվար:
 «Դե լավ, էլի, մամ, ինձնից ի՛նչ
 բժիշկ»: «Դու սիրտ ունես,- ասում
 էր մայրս,- Իրան դա չի կարողա-
 նա անել»: «Իրան ձգտում է»: «Ի-
 րայի համար վաղուց արդեն ամեն
 ինչ միևնույնն է», - պատասխանեց
 մայրս: Երկու տարի առաջ Իրինան
 երկրորդ անգամ ամուսնացավ,
 պատրաստվում էր գնալ ամուսնու
 մոտ, որ մարզիչ էր և ապրում էր
 ուրիշ քաղաքում: Մայրս դեմ էր
 այդ ամուսնությանը: Քույրս զան-
 զեց օդանավակայանից. «Ես գնում
 եմ»: Լսելով մորս հիվանդության
 մասին՝ վերադարձավ: «Ես շուտ

կգամ դագաղի մեջ,- ասում էր
 մայրս,- եթե նա սկսի ապրել այս-
 տեղ՝ հորդ բնակարանում»: Այդ
 բոլորներին նա առաջվանն էր՝
 անդրդվելի, անհաշտ, իշխանա-
 տենչ: Քույրս հանգստացնում էր
 մորս. ինքն արդեն միայնակ է. բա-
 ժանվել է ամուսնուց: Հասկացա,
 որ սա հմտորեն մտածված բան է:
 Մի անգամ էլ միջքաղաքային
 զանգ եկավ,... քույրս ինչ-որ ան-
 հասկանալի բան էր փնթփնթում:
 «Արևս,- լսեցի ես,- ամեն ինչ կար-
 գին է»: «Ի՛նչն է «կարգին», -
 հարցրի ինքս ինձ: Մի անգամ էլ
 լսեցի մի արտահայտություն՝ «Չէ,
 արևս, նա էստեղ չի ապրի»: Խոսքն
 իմ մասին էր: (Դադար:) Մորս
 վիճակը շատ ծանր էր. նա էլ
 չէր կանգնում, բայց փորձում էր
 դեկավարել տունը: Չորեղ կամք
 ուներ: Լույնիսկ եղբորս, որ ուտե-
 լիք էր պատրաստում խոհանոցում,
 խորհուրդներ էր տալիս՝ ցավից
 ջղաձգվելով: Մի անգամ ինձ ա-
 սաց. «Գիտես՝ ինչ հիշեցի: Ծիրա-
 նենին: Աձել էր Տաշքենդում,
 էվակուացիայի ժամանակ: Ու ես
 դեռ բոլորովին մանուկ՝ հավաքում
 և ուտում էի ծիրանները: Ամբողջ
 կյանքում ավելի համով բան չէի
 կերել»: Այդ ժամանակ երկրորդ ու-
 ռուցքն էլ սկսեց աչքի առաջ անհե-
 տանալ: Թվաց՝ երջանիկ ելքն

արդեն մոտ է, բոլորիս տրամադրությունը բարձրացավ: Ուշ գիշերին, մայրիկիս վիրակապելուց հետո, բացեցինք թրմօղու շիշը: Եղբայրս ասաց. «Եթե մենք սկսեինք ավելի վաղ՝ գոնե երկու ամիս առաջ: Հիմա նրա ուժերը շատ սահմանափակ են»: «Եթե բժիշկն այն ժամանակ ամեն ինչ ասեր ինձ, երբ առաջին անգամ նրա մոտ եկա...- նկատեցի ես: - Ինչքան ժամանակ ենք կորցրել»: «Արգելել էր նրան խոսել», - հանկարծ վրա բերեց եղբայրս: «Այսինքն՝ ինչ է ստացվում. մայրիկն ամեն ինչ գիտե՞ր»: «Հայ»: «Դու է՞լ»: «Հայ»: «Բա ինչի՞ չասացիր ինձ»: Եղբայրս մրթմրթաց. «Մայրիկն արգելել էր»: «Ու դու լսեցի՞ր նրան»: «Ես միշտ եմ լսում նրան», - այո՛ր, այդպես էլ եղել է: Ես գնաց մայրիկի ննջարանը և անմիջապես վերադարձավ: «Քնած է՝ ինչպես նապաստակը», - հանկարծ ասաց նա, և ինձ դուր եկավ այդ համեմատությունը: Մոտեցա կիսաբաց դռանն ու ականջ դրեցի. շնչառությունը համաչափ էր՝ առողջ մարդու նման: Հանգիստ ու լավ զգացի: «Մի շիշ էլ չդատարկե՞նք մեր մոր պատվին», - հարցրի եղբորս: «Հայ, բա ոնց», - ասաց նա՝ պատրաստակամորեն վեր կենալով նստած տեղից:

«Աստված իմ, ես լավ խմած եմ»: Մենք դատարկեցինք երկրորդ շիշը և դուրս եկանք միջանցք՝ ծխելու: Նստել ու գրուցում էինք: Գրքերի, կյանքի գաղտնիքների, մահվան և ամեն տեսակ անկապ բաների մասին: Հույս հայտնվեց, և հանկարծ ուրախացանք առաջին անգամ վերջին ամիսների ընթացքում, ու ամեն ինչ թվում էր պարզ, անամայ: Ուզում էի սիրել բոլորին ու վայելել կյանքը: Իսկ առավոտյան մայրիկի վիճակը վատացավ. նա խոսում էր դժվարությամբ, անհասկանալի կերպով, արդեն չէր ուտում, չէր խմում, հրաժարվեց դեղեր ընդունելուց, միայն նայում էր մի կետի, հետո սկսեց ուսումնասիրել սենյակը՝ կարծես հետևելով ինչ-որ մեկին: Նրա դեմքին հայտնվեց նույն վեր հառված, անբնական հայացքը, որ տեսել էի հորս դեմքին: Երրորդ օրը մահացավ: Ժամանեց բժիշկը, հանձնեց մահվան վկայականը: Եկավ նաև անձրևից թրջված տեղամասային ոստիկանը՝ գրելու դիարանի ուղեգիրը: Դժգոհեց. «Շաբաթ օրով՝ այսքան գործ: Սրտայինները շատ են: Մտնում են լոգարան, բացում տաք ջուրն ու մեռնում»: Ես մտա մորս մոտ: Հարևան սենյակում Իրինան գրուցում էր հեռախոսով. լսեցի՝ «Արև... այնքան ահավոր

է... տանջվեց, արի արագ...»: Ու նորից քնքշորեն. «Արևն...»: Դա երջանիկ կնոջ ձայն էր: Սրբապատկերի տակ, որը մի ժամանակ մորս էի նվիրել, մոմ էր վառվում: Մայրս մահձակալին պառկել էր՝ ձեռքերը կրծքին դրված: Նայում էի դեմքին ու մտածում, որ ո՛չ տարիները, ո՛չ մահը չի շխեցին նրան: «Ի՛նչ սիրուն է մեր մայրը», - կամացուկ ասացի ես: «Այո՛, - շնչաց քույրս: - Ու միշտ է սիրուն եղել: Նա քեզ շատ է սիրել»: Արցունքներին չէի հավատում, խոսքերին՝ վստահեցի: Ամեն ինչ ճիշտ է, մայրս ինձ սիրում էր: Ամեն դեպքում՝ վերջին ժամանակները: Մենք պետք է տառապեինք, շատ տառապեինք, որպեսզի իրար հասկանայինք, հասկանայինք նաև՝ միմյանց համար ինչ նշանակություն ունենք: (Դադար:) Դիարանից երկու անհաճո ու թուխ տղամարդ եկան, մտան մորս ննջասենյակը, մոմլաթ խնդրեցին, փռեցին, հետո ծածկոց, փաթաթեցին դին ու պատրաստվում էին տանել նրան: «Իսկ պատգարակը», - հարցրի ես: «Մենք էսպես ենք եկել, ձեր աստիճանները նեղ են»: «Ո՛նց թե, - ասացի, - մենք ձեզ կօգնենք. եկեք մարդավայել վարվենք»: Ու համբերատար, ասես գողտուկ, իջանք առաջին հարկ:

Դռան մոտ կանգնած էր թանձր, մուգ կանաչ գույնի միկրոավտոբուսը: Զգուշորեն ներս մտցրի պատգարակը: Տղամարդկանցից մեկին փող մեկնեցի: «Վայ, պետք չէ», - ասաց նա, բայց վերցրեց փողը: Միկրոավտոբուսը շարժվեց: Կանգնեցի անձրևի տակ ու տեսա, թե ինչպես են հեռանում կարմիր լույսերը: Փողոցը դատարկ էր՝ ո՛չ մարդիկ, ո՛չ մեքենաներ: Չէի ուզում տուն վերադառնալ, չէի ուզում շարժվել, չէի ուզում... ապրել: Ուրքից գլուխ թրջվեցի, անձրևը լցվում էր աչքերս, իսկ ես նայում ու նայում էի այն ուղղությամբ, որտեղ անհետացավ մորս միկրոավտոբուսը: «Գնանք», - ձեռքով թփթփացրեց եղբայրս: «Գնանք»: (Երկար դադար:) Չքնեցի այդ գիշեր ու խորհում էի. երբևէ երջանիկ եղե՞լ եմ: Ու ի՛նչ է երջանկություն կոչվածը: Աշխատանքը: Ընկերները: Թե՛ այն, ինչը հաջողություն ենք անվանում: Ընկերները գնում են, աշխատանքը հյուծում է: Տեսնում ես, որ ավելի վատ ես անում, քան կարող էիր, հաջողությունը կասկածելի է ու վաղանցիկ: Իսկ գուցե երջանկություն է, երբ կանգնում ես մի անձանոթ օդանավակայանում ու նայում նրա աչքերի մեջ, իսկ դրանց մեջ արտացոլվում է քո մոլորաշփոթ դեմքը: Երբ

սպասելով վայրէջքին՝ ամբողջ գիշեր նստում ես ինչ-որ կայարանում՝ անգամ չտեսնելով ոչ կեղտոտ պատերը, ոչ խոնավ հատակը, ոչ կիսախելագար, հարբած, հաշմանդամ ամուսիններին. չէ՞ որ մի քանի ժամ հետո դու կարող ես տեսնել նրան: Կամ էլ, երկու ժամ սպասելով ուշացած գնացքին խոնավ կառամատույցի վրա, վագոնի մուտքի մոտ տեսնում ես սիրելի, նիհար ուրվագիծը: Որտեղ է անհետանում այդ ամենը հետագայում: Մաշվում է, ջնջվում... Եվ արցունքները, և վեժերը, և երդումները, և զանգելու արգելքները... իսկ դու ամեն դեպքում էլի զանգում ես՝ ինչ-որ բանի հույս ունենալով: Հեռախոսը վերցնում է նրա ընկերուհին, և, ձայնից ենթադրելով, լսում ես նրա շշուկով խոսքը. ասում է, որ ընկերուհին փոխանցի՝ ինքն այդտեղ չէ և չի լինելու, պետք է ինչ-որ բան որոշել, չի կարելի այդպես շարունակել. այս ամենից ինքն արդեն տանջահար է եղել: Այդպես էլ կա, բայց լսափողը դնելով լսում ես, թե ինչպես է քննարկվում ձեր խոսակցությունը, ինչպիսի տարբերակներ են քննարկվում, և ինչ-որ բան քեզ ետ է պահում վերջին և ցանկալի քայլից: Ու վերջապես վրա է հասնում այն ժամը, երբ զայրա-

ցած, կատաղած որոշում եք բաժանվել: Իսկ հետո՝ մի քանի տարի անց, հանդիպում եք, նայում եք իրար՝ սառը և անկենդան հաճույքով: «Հաճելի էր հանդիպել քեզ»: Որտեղ է ամեն ինչ թռչում, անհետանում: Եվ... պե՞տք էր արդյոք: Եթե այո, ապա ի՞նձ, թե՞ նրան: Իմ ողջ կյանքը մի ծիծաղելի գիրք է, որի ամեն էջում «երջանկություն» բառն է, տեսնում եմ հետքեր, հետքեր, հետքեր... «Դու երջանիկ ես», - հարցրեց կինս: «Հա՛», - պատասխանեցի՝ հասկանալով, որ ստում եմ. այդպես եմ ասում միայն նրա համար, որ նա հենց դա է ուզում լսել: «Իսկ ես երջանիկ եմ, գիտե՞ս», - ասաց նա: Ինձ արդեն այդպես չի ասի: Հապա ի՞նչ է այդ ամենը: Եվ ո՞վ էր երջանիկ. չէ՞ որ ինչ-որ մեկը երջանիկ էր: *(Բւժիժաղ է տալիս՝ վերադառնալով առաջին մասի հնչերանգին:)* Հետաքրքիր է հնչում՝ «Երջանիկ է նա, ով երջանիկ է»: Ինքս մտածեցի այդ արտահայտությունը: Անհրաժեշտ կլինի հիշել: Այդպիսի մտքեր ամեն օր չէ, որ հայտնվում են գլխիդ մեջ... *(Հանկարծ ընդհատելով ինքն իրեն:)* Ո՛չ, հիշեցի: Ես երջանիկ էի, էի... Այն օրը, երբ մայրիկը բերեց մեծ սովարաթը արկղը, մենք այդ ժամանակ չորս հոգով մի սենյակում էինք ապրում,

ու սկսեց բացել այն: Ու նրա փոքր-ինչ խորամանկ հայացքից հասկացա: Ինձ մոտ ինչ-որ բան կփոխվի հիմա: Ու չսխալվեցի: Արկղի միջից մայրիկը հանեց մի մեծ, փայլուն կապտագույն լաքով ավտոմեքենա: Ոնց էր սիրտս խփում: Զարացա: Ոնց էի դողում՝ դեռ չհավատալով, որ դա հրաշք է. իմը, իմը: Ինչպես էի կանգնել՝ չկարողանալով մի բառ անգամ արտասանել, նույնիսկ չհամարձակվելով ձեռքերս մեկնել այդ գանձին: Իսկ մայրս՝ իմ ուրախությունից երջանկացած, գեղեցիկ, երիտասարդ, կայտառ, փոխանցեց խաղալիքը հորս, որն սկսեց գործի դնել: Նա հանեց բանալին, բռնելով անիվները՝ դրեց մեքենան հատակին ու ձեռքը ետ քաշեց: Ինչպե՞ս փոխանցել այդ զգացմունքը, այդ հիացմունքը, այդ երջանկությունը: Կապույտ ավտոմեքենա: Նա աղմկում է՝ պտույտներ գործելով, դիպչելով աթոռների ոտքերին, քիթը կպցնելով բազմոցին. և այդ ժամանակ հայրիկը կամ տատիկը կռանում են, ուղղում, ու այն

կրկին գնում է իր նախանշված և երբեք չավարտվող ճանապարհով՝ մաշված, հին պարկետի վրայով, որի ամեն մի հատվածը լուսավորում է առաստաղից կախված դեղին լամպը, իսկ մայրս, հայրս, տատիկս ժպիտով նայում են. չորսով նստած ենք լուսավոր շրջանակի մեջ, լուսամփոփի ստվերից սևացած, իսկ ավտոմեքենան գնում է ու գնում, մեկից՝ մյուսին, մեկից՝ մյուսին. կարծես մի անտեսանելի, բայց հավերժական թել մեզ ձգում է: Իսկ այդ թելը երբեք չի կտրվում, ու մենք միշտ միասին կլինենք, միշտ ու ամենուր, որովհետև այլ կերպ լինել չի կարող: Չորս ամենամտերիմ մարդիկ: Ու մեր կյանքում ամեն ինչ լավ կլինի, ամեն ինչ դեռ առջևում է: Միշտ միասին կլինենք, միշտ միմյանց կժպտանք, երբեք իրարից չենք հեռանա, չենք հիվանդանա, չենք մեռնի անգամ նույն օրը: (*Դադար:*) Բայց... այնուամենայնիվ... հարկավոր է ջանք թափել... Հա՛, ինչի՞ վրա կանգ առանք...

Վարագույր

*Ռուսերենից թարգմանեց
Էլֆիք ՉՈՐՄԱՆՅԱՆԸ*



Խաղաղ և առանց կոնֆլիկտների

«Արևավագդ-2019» մրցանակաբաժնության հաղթողները

Մարտի 27-ին, Թատրոնի միջազգային օրը, կայացավ «Արտավագդ» ամենամյա մրցանակաբաժնության հանդիսավոր արարողությունը: Այն նվիրված էր Պատանի հանդիսատեսի թատրոնի հիմնադիր, հայ ականավոր թատերական գործիչ Տիգրան Ծամիրխանյանի 120-ամյակին:



«Մրցանակի մասին ղեճք է արագ մոռանալ, որդեսզի առողջ հողի վրա բարունակես ստեղծագործել»



Տաթև Մելքոնյան

«Տարվա լավագույն դերասանուհի»

«Տարվա լավագույն դերասանուհի» ճանաչված Տաթև Մելքոնյանն արդեն մի քանի տարի նույն անվանակարգում առաջադրվել է: «Չէի սպասում, որ կստանամ: Ավելի շատ սպասում էի, որ չեմ ստանա: Էմոցիաների մասին դժվար է խոսել: Բոլոր առաջադրվածներն էլ արժանի էին ստանալ այս մրցանակը, բայց այս տարի այսպես ստացվեց», - մեզ հետ զրույցում անկեղծացավ դերասանուհին ու հավելեց. «Սա, իհարկե, հաճելի պահ է, թեև մրցանակի կարևորությունն այդքան էլ մեծ չէ ինձ համար, որովհետև այն իրականում չի օգնում գործի մեջ, ուղղակի ես հասկանում եմ, որ իմ աշխատանքը բարձր է գնահատվել մասնագետների կողմից: Բայց դրա մասին պետք է շուտ մոռանալ, որպեսզի առողջ հողի վրա շարունակես ստեղծագործել»:

Տաթև Մելքոնյանը նշեց, որ թատրոնն այսօր շատ խնդիրներ ունի, բայց հանդիսատեսի քանակը դրանից չի

պակասում, հակառակը՝ տարեցտարի ավելանում է՝ դատելով Տիկնիկային թատրոնի ցուցանիշներից: «Կուզեմ, որ թատրոնում լավ մթնոլորտ լինի, իսկ լավ մթնոլորտը ստեղծվում է միմյանց սիրելուց: Դա շատ հեշտ է իրակա- նում», - համոզված է դերասանուհին:

Ինչ վերաբերում է «Անպարկեշտ Թոմի մեկնաբանությունները» ներկայացման մեջ մարմնավորած նրա կերպարին, այն առանձ- նահատուկ է դերասանուհու համար. «Մոտե- ցումն է այլ եղել, կերպարը բարդ էր այնքանով, որ ինքս իմ մեջ ինչ-որ բաներ փնտրել ու գտել եմ, բայց երբ աշխատում ես լավ դերասանի կամ ռեժիսորի հետ, գումա- րած՝ լավ թատրոնում, բարդությունները երկ- րորդ պլանում են հայտնվում», - ամփոփեց Տաթև Մելքոնյանը:



Տաաթևն անրկայացումից

«Տարվա լավագույն երիտասարդ դերասանուհի» անվանակարգում այս տարի մրցանակ չտրվեց, փոխարենը՝ «Տարվա լավագույն երիտասարդ դե- րասան» անվանակարգում երկու մրցանակակիր ունեցանք՝ Սենիկ Բարսեղյանը և Վիգեն Թադևոսյանը:

«Այս տարի սոդատումս ավելի քիչ էր»

«Սա իմ առաջին Արտավազդն է, ինչի համար շատ ու- րախ եմ: Անցած բոլոր տարիներին, երբ առաջադրվել եմ, ավելի շատ եմ սպասել, որ մրցանակ կստանամ, այս տարի սպասումս ավելի քիչ էր», - խոստովանում է **տարվա լավագույն երիտասարդ դերասան Սենիկ Բարսեղյանը:**

Նրա կարծիքով՝ լավ է, որ յուրաքանչյուր դերասան գնահատվում է մրցանակով, թեև իր համար՝ սա պատասխա- նատու մրցանակ չէ. «Ամեն օր ես հաճելի պարտավորվածությ- յամբ բեմ եմ բարձրանում: Թատրոնում այսօր խնդիրները շատ են, բայց մենք՝ երիտասարդ դերասաններս, չենք կորց- նում մեր հույսը, մեր սերը դեպի թատրոնը ու հենց դա էլ մեզ ուժ է տալիս ավելի եռանդով աշխատել ու ստեղծագործել: Միևնույն է, թատրոնում բոլոր խնդիրները հաղթահարելի են», - վստահ է Կամերային թատրոնի դերասան Սենիկ Բար- սեղյանը:



Սենիկ Բարսեղյան

Տարվա լավագույն երիտասարդ դերասան

«Մեր երկրում արվեստագետը գնահատականիև ուշադրության կարիք լի է ունի»



Վիգեն Թադևոսյան

Տարվա լավագույն երիտասարդ դերասան

«Ինձ համար շատ կարևոր էր, երբ ինստիտուտում ստացա իմ առաջին մրցանակը որպես լավագույն դերասան: Ինչ վերաբերում է «Արտավազին», այն ինձ համար չափազանց պարտավորեցնող է»,- ասում է **տարվա լավագույն երիտասարդ դերասան Վիգեն Թադևոսյանը:**

Նրա հավաստմամբ՝ մեր երկրում, թեև երիտասարդ դերասանն այսօր ստեղծագործելու հնարավորություն ունի, բայց այս բնագավառ մտնող երիտասարդներին ավելի շատ պետք է աջակցել, ապահովել այնպիսի պայմաններ, որպեսզի ստեղծագործողն իսկապես ցանկանա ստեղծագործել, ոչ թե մտածի կենցաղի և ֆինանսական դժվարությունների մասին: «Կոչումներն ու մրցանակները կարևոր են, որովհետև մեր երկրում արվեստագետը, ստեղծագործողը գնահատականի և ուշադրության կարիք շատ ունի: Իմ կյանքում այս մրցանակը ոչինչ չի փոխի, ընդամենը կպարտավորեցնի, նոր ձգտումների կմղի»:

«Ուզում եմ ներողություն խնդրել իմ բոլոր կոլեգաներից, որ ես, լինելով դերասան, ռեժիսորական մրցանակը խլեցի նրանցից»



Արմեն Մարգարյան

Տարվա երիտասարդ բեմադրիչ

Այսպես կես լուրջ կես կատակ ասաց **լավագույն երիտասարդ բեմադրիչ Արմեն Մարգարյանը:** «Հրաշք կոլեկտիվ էր հավաքվել ներկայացման շուրջ, քրտնաջան աշխատել ենք փորձերի ընթացքում: Եվ այս հաղթանակը յուրաքանչյուրիս հաղթանակն է»: Երիտասարդ բեմադրիչը դժվարանում է հստակ մատնանշել, թե որն է ներկայացման հաջողության հիմնական գրավականը: Որպես երիտասարդ ռեժիսոր սա նրա առաջին «Արտավազը»-ն է. «Բայց ունեմ ևս մեկ «Արտավազը»՝ որպես երիտասարդ դերասան, որն ստացել եմ 2013 թվականին»,- հիշեց բեմադրիչը: Հարցին՝ ինչ է պետք այսօր Հայաստանում երիտասարդ բեմադրիչին ստեղծագործելու համար, Արմենը

նկատեց՝ ընդամենը ավելի հաճախ ընձեռել հնարավորություններ. «Ինչպես դա իմ դեպքում արեց Երվանդ Ղազանչյանը: Անչափ շնորհակալ եմ ն նրան, ն ամբողջ անձնակազմին: Ուզում եմ նաև նշել, որ որպես ռեժիսոր հիմա զուգահեռաբար աշխատում եմ Միեր Մկրտչյան արտիստական թատրոնում, նոր բեմադրության փորձերն են ընթացքի մեջ»

«Մտածելակերպն է դեռ փոխել և սովորել բիշ փողով անել լավ բաներ»

«Հաճելի պահ է, վստահություն, որ վերջին չորս տարիների աշխատանքս արժանանում է գնահատանքի: «Սասնա ծռեր» ներկայացումը ամբողջությամբ հաջողված է: Ես իմ ոչ բոլոր գործերն եմ հավանում, բայց այստեղ բոլորս հավասար լավ էինք աշխատել, ինչի արդյունքում իմ գործն էլ երևաց: Սա իմ ամենամասշտաբային աշխատանքն էր, կարծում եմ, հաջողված է, որովհետև թիմն էր հաջողված», - նշեց տարվա լավագույն բեմանկարիչ **Վիկտորյա Ռիեդո-Հովհաննիսյանը**: Նրա համոզմամբ՝ այս բեմադրության մեջ ամեն ինչ փոխկապակցված է. «Եթե դերասանները իմ մտահղացումը չսիրեին չսիրեին ու չօգտագործեին, դա կմնար որպես նկար»:

Վիկտորյա Հովհաննիսյանի կարծիքով, այսօր Հայաստանում նոր մտածող բեմանկարիչների պակաս կա: «Դերասանները հասնում են նոր տեխնիկայի, ռեժիսորները բավականին նոր մտածողություն ունեն, իսկ բեմանկարիչներին շատ հին ձևով է դասավանդվում: Առաջին խնդիրը տեխնիկան է, այսօրվա բեմանկարը զուտ նկար չէ և գեղեցիկ նկարներով դիպլոմային աշխատանք հանձնելը չէ: Բեմանկարչությունը սերտ կապված է բեմի հետ, իսկ մեր ուսանողները դասավանդման 4-5 տարիների ընթացքում չեն ստանում բեմում աշխատելու հնարավորությունը: Նրանք ավարտում են որպես պատրաստի նկարիչներ, բայց բեմանկարիչներին պետք է սովորեցնել աշխատել ռեժիսորի և դերասանի հետ, դա միասնական աշխատանք է: Նրանք ինստիտուտից հետո բախվում են ռեալ խնդիրների: Այսօրվա բեմանկարչությունը չի կարող լինել առանց տեխնիկական բազայի, չկա այդ մասնագետը, որը նրանց կփոխանցի այդ ունակությունը», - մտահոգություն հայտնեց բեմանկարիչը:



Վիկտորյա Ռիեդո-Հովհաննիսյան

Լավագույն սցենոգրաֆիստ



Տեսարան ներկայացումից

Նա հավելեց, որ չի սիրում, երբ մեղքը բարդում են ֆինանսի բացակայության վրա. «Գիտեմ, որ չկա համապատասխան գումար, բայց դա չի գլխավոր պատճառը, մտածելակերպի ուղղությունն է պետք փոխել և սովորել քիչ փողով անել լավ բաներ», - ամփոփեց մեր զրուցակիցը:

«Եթե բավարարված չեմ զգում, սարսափելի վիճակ է ինձ մոտ, անհուն գիշերներ, օտառադանո»



Վաչե Շարաֆյան

Լավագույն երաժշտության հեղինակ

«Գեղեցիկ անակնկալ էր, ես էլ անակնկալների սիրահար եմ: Ամենակարևոր մրցանակը հանդիսատեսի հետ փոխհարաբերությունն է, որ կարողանում ես բարի լույս սփռել, և եթե դա ստացվում է, երջանկության պահ ես զգում: Ներքին զգացում է, որը դժվար է բացատրել բառերով», - ասաց **լավագույն երաժշտության հեղինակ Վաչե Շարաֆյանը:**

Ըստ նրա՝ ամենագեղեցիկ պահը աշխատանքային պրոցեսն է, իսկ երբ այն ավարտվում է, վախեցնող է և ցավոտ: «Ներկայացմանը շատ համահունչ էր այս երաժշտությունը, ինքս շատ սիրեցի իմ աշխատանքը: Եթե բավարարված չեմ զգում, սարսափելի վիճակ է ինձ մոտ, անքուն գիշերներ, տառապանք և այլն: Ներկայացման համար գրել երաժշտություն՝ նշանակում է անվերջ կապի մեջ լինել բոլորի հետ, քանի որ թատրոնը սինթետիկ արվեստ է, դու միայնակ չես և քո երաժշտությունը կապ ունի շարժման հետ: Բարդ է, բայց հաճելի», - ասաց երաժիշտը:

«Չկան փոքր դերեր, կան լավ դերասաններ և լավ դերակատարումներ»

Երկրորդ պլանի լավագույն դերասանուհի Սաթենիկ Հախնազարյանը մեկ անգամ արդեն արժանացել է «Արտավազդի»՝ որպես տարվա լավագույն դերասանուհի:

«Անկեղծ, չէի սպասում, շատ հաճելի է, որ աշխատանքդ գնահատում են: Նույնքան ուրախալի է ինձ համար, որքան այն ժամանակ, երբ արժանացա գլխավոր մրցանակի: Չկան փոքր դերեր, կան լավ դերասաններ և լավ դերակատարումներ: Ծատ երջանիկ եմ, որ խաղացի այդ լեգենդար և միևնույն ժամանակ դժբախտ կնոջ դերը, փոքրիկ դերակատարում էր, բայց այնքան լիքն էր ու էմոցիոնալ, որ ես, որպես դերասանուհի, անհամբեր սպասում եմ, թե հաջորդ ներկայացումը երբ պիտի լինի», - պատմեց Ս. Հախնազարյանը: Նրա համոզմամբ՝ բոլոր դերասաններն էլ ուզում են, որ արժանի աշխատանք մատուցեն, և որևէ մեկը չի մոտենում դերին՝ մտածելով, որ հետո դրա համար մրցանակ է ստանալու: «Դերասանը երջանիկ է, երբ ստանում է լավ դեր, կարողանում է լավ աշխատանք անել և բեմում պարզապես չլինել, այլ լինելով՝ ինչ-որ բան ասել, հուզել մարդկանց սրտերը»:



Սաթենիկ Հախնազարյան

*Երկրորդ պլանի
լավագույն
դերասանուհի*

«Արժանի բասրոնում բեմադրություն անելը արդեն մեծ դժվարություն հաղթահարել է»

«Ցանկացած արտիստի համար գնահատվելը շատ կարևոր է: Առաջին տարին չէ, որ առաջադրվել ենք, միշտ սպասել ենք, որ մրցանակ կստանանք, և այս տարի ժյուրիի որոշմամբ մեր մանկական ներկայացումը ծանաչվեց լավագույնը: Առաջին «Արտավազդն էր», - ասաց տարվա լավագույն մանկական ներկայացման բեմադրիչ Արմեն Սարգսյանը:

Մանկական ներկայացումներ բեմադրելը մի քանի անգամ ավելի բարդ է, այս մասին գիտի Արմեն Սարգսյանը, բայց սիրում է ներկայա-



Արմեն Սարգսյան

*Տարվա լավագույն մանկական
ներկայացման բեմադրիչ*

ցումներ անել փոքրերի համար: Որպես ռեժիսոր «Պոչատ աղվեսը»-ը Արմենի հինգերորդ մանկական ներկայացումն է, բայց Աբովյանի թատրոնի գեղարվեստական ղեկավարի պաշտոնը ստանձնելուց հետո նրա առաջին բեմադրությունն էր: Ըստ բեմադրիչի՝ մարզային թատրոններն այսօր ավելի շատ ուշադրության կարիք ունեն: Աբովյանի թատրոնը ևս խնդիրներ ունի. «Բեմադրություն անելը արդեն մեծ դժվարություն հաղթահարել է: Մեզ համար այս դժվարությունները դարձել են սովորական, քանի որ բախտ չի վիճակվել այլ համակարգի մեջ աշխատել: Երբ Երևանում մի խումբ երիտասարդներով հիմնեցինք «Էպսիդոն» թատերախումբը, այն դժվարությունները, որ ողջ խմբով հաղթահարեցինք, արդեն մեզ կոփել են: Հիմա էլ փորձում ենք ամեն գնով խոչընդոտները հաղթահարել, որպեսզի ունենանք լիարժեք թատրոն: Այս պահին առաջնայինը թատրոնի վերանորոգման խնդիրն է», - խոստովանեց բեմադրիչը:

«Այս մրցանակից ավելի քանկ է այս մթնոլորտում լինելը»



Կոնստանտին Օրբելյան

«Լավագույն ներկայացում» Ալ. Մպենդիսարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն, «Չիպոլինո»

«Այս մրցանակից ավելի քանկ է այսօր այստեղ լինելն ու այս ջերմ ու բարի մթնոլորտում միմյանց շնորհավորելը, միմյանց հետ շփվելը: Այն, որ մեր կոլեգաները մեր աշխատանքը գնահատում են, ուշադրություն են դարձնում մեզ վրա, դա արդեն մեծ հաղթանակ է», - կարծում է **տարվա լավագույն ներկայացման** համար բեմ բարձրացած **Կոնստանտին Օրբելյանը**:

«Ծատերն էին կանխատեսում, որ «Չիպոլինո» ներկայացումն անպայման կարժանանա մրցանակի, քանի որ հանդիսատեսի կողմից բավական բուռն ընդունվեց: Ամեն անգամ նորովի եմ խաղում այս կերպարը», - մեզ հետ զրույցում նշեց օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի առաջատար մենապարող Բաֆֆի Գալստյանը: Նրա համոզմամբ՝ հաճելի է, երբ աշխատանքդ գնահատում են, բայց սա մեծամտանալու առիթ չէ:

«Երբեմն լինում են կոնֆլիկտային իրավիճակներ, այս տարի լուրջ խաղաղ էր «Արտավազը»»

«Մեր երկրում տեղի ունեցած հեղափոխությունն, իհարկե, անդրադարձավ նաև «Արտավազը» մրցանակաբաշխության վրա, որովհետև, եթե նախորդ տարիներին ունենում էինք 70 ներկայացում և ընտրում 40-ը, այս տարի 36 ներկայացում էր, որից 11-ը՝ մանկական: Թատրոնների համար ծանր տարի էր ֆինանսական առումով, և հիմա էլ բազում խնդիրներ կան, բայց մրցանակաբաշխությունը կայացավ», - տարվա թատերական գլխավոր իրադարձությունը ամփոփեց Թատերական գործիչների միության քարտուղար, թատերագետ Սոնա Մելոյանը:



Երկու մրցանակ կար, որը Ս. Մելոյանի համար շատ կարևոր էր: Մեկը «Զիպոլինո» բալետն էր. «Մենք տարիներ շարունակ բալետային ներկայացում չենք ունեցել, և այդ հեքիաթը, որ մենք տեսանք բեմում, մեզ համոզեց, որ ունենք փայլուն բալետային արվեստ, պարում էին, ինձ համար անսպասելի, լավ: Լեցուն դահլիճներն ու գեղեցիկի հետ հանդիպումը ուղղակի չի կարող հոգեբանություն չփոխել», - համոզված է թատերագետը:

Երկրորդ կարևոր մրցանակը Սոնա Մելոյանի համար Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի տնօրեն Վարդան Մկրտչյանին տրված հատուկ մրցանակն էր: «Սունդուկյան թատրոնի երկրորդ բեմի բացումը ուղղակի հրաշքի պես մի բան է՝ իր եվրոպական չափանիշներով: Համոզված եմ, որ շատ հետաքրքիր ներկայացումներ կձևվեն, որովհետև այդ տարածքը չի կարող նոր թատերական լեզու չբերել: Որքան էլ խնդիրներ լինեն, միևնույն է, տաղանդը չի մարում, կենդանի արվեստի պահանջը մարդկանց մեջ կա: Ես գոհ եմ, կարծում եմ մրցանակաբաշխության արարողությանը ներկա թատրոնի մարդիկ՝ նույնպես», - նշեց թատերագետն ու հավելեց. «Երբեմն լինում են կոնֆլիկտային իրավիճակներ, այս տարի շատ խաղաղ էր «Արտավազը»-ը, բոլորը գոհ էին»:

ԱՆԻ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ԴՐԱՄԱՍՏՈՐԳԻԱ

էլեկտրոնային

գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամաստորգիա», 2019
Պետական աջակցությամբ

Խմբագիր՝
Կարինե ԽՈՂԻԿՅԱՆ

Կազմը և էջադրումը՝
Նառա ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:
Բնագրերը չեն վերադարձվում:

**Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար
դիմեն անմիջական իրավատերերին՝ հեղինակներին:**

Խմբագրության հասցեն՝
Երևան, Օրբելի 18/6, հեռ. 22-76-08

Գրանցման վկայական՝ 01Մ 000089